Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

12961

891.99
U-15

ՄՈՒՇԵՂ

եւ

ԿԱԼԻՆԻԿԷ

Ի ՅՈՎ.ՀԱՆՆԷՍ Ս. ՄԱԹԿԵԱՆԷ

Ծ91.99
Մ-15

ՄՈՒՇԵՂ ԵՒ ԿԱԼԻՆԻԿԷ

ԿԱՄ

ՊՍԱԿ ՄԸ ՅԱՆՁՐԴԻ

ԳՐԵԱԼ

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ Ա. ՄԱԹԿԵԱՆԷ

ՄԱՇԿԵՐՏՑՒՈՑ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՔ

1875

2016

405
40

Առ Մեծապատիւ Յ. Ս. Մալթկեան.

Ազնիւ բարեկամս .

Կարդացի ձեր վէպը ծայրէ 'ի ծայր, մի հիացմամբ. եւ յափշտակութեամբ ։ Չեմ կրնար բացատրել այն զգացումն որ Ձեր գրքին տողերն իմ վրայ ներշնչեց ։

Նժդեհ մ'անձկակարօտ հայրենեաց, բազմաժամանակեայ պանդխտութեան տաղտկալի կենցաղոյս մէջ, գրեթէ անզգալապէս սրբուիլ սկսած էր այն քաղցրիկ յիշատակներն զորս մանկական նորափթիթ իմացականութեան ծաղկաքաղն է, այն յիշատակները կ'ասեմ, խամրիլ սկսած էին երբ ձեր վէպը խանդաղատելի մղմամբ մեր 'ի վայր յուզեց զայն, նոր փայլով մը գեղերփնած, նոր աւիւնով մը զօրացած գտայ զանոնք ։

Չ'է միայն ինձ՝ բարեկամդ իմ, այլ բոլոր ընթերցողաց պիտի ներգործէ այն խանդը՝ որով զիս համակեց ։ Ձեր երկը, չ'է այն վէպերէն որ մտացածին իրեր սնթեւեթներով չպարեալ, ճարտար գրիչներու տակ կը ձեւակերպին, կ'առանան Ափրոդիտեան յատկութիւն մը, գրգռելու ընթերցողին ուղեղը հաճոյք մ'ազդելով նորա զգացման ։

Ձեր վէպը փոխանակ գրգռելու կ'զմայլեցունէ. երեւակայութիւնը չ'է ձեր գրքի նիւթը, մտացածին իրերը չեն նորա պարունակութիւնը, վերացական գաղափարների վրայ հիմնեալ չեն նորա իմաստները, այլ պարզ իրողութիւններ, աշխարհագրական տեղեկութիւններ. սովորութիւններու նկարագրեր, եւ այլն, եւ այլն ։

Կը զարմանամ բարեկամ, թէ այդ անձուկ, անհաստատ վիճակիդ մէջ ինչպէս յաջողեցար փափուկ զգացումներդ ու միտքդ ինքնին մշակելով իրերը այդ աստիճանի ազդու, պարզ, եւ իրենց բնական ճամբովը յառաջ բերել. մանաւանդ ձեր տխուր ճակատագրին ենթարկուող մէկու մը համար սքանչելիք մ'է։

Աղքատ շինականի մը զաւակ, դպրոց չէք տեսած, դասատուի ձայն չէք լսած, Ա. Բ. Գ ձեզի ճանչցունելու առաջնորդ մը չէք ունեցած. ոչ ոք ձեր իմացականութիւնը մշակել խորհած է, ոչ ոք ձեզի գոնէ պարզ ընթերցմունք մը սորվեցունելու հոգ տարած է, եւ ոչ ոք ձեր բարոյական ու մտաւորական զարգացմանն համար դանկ մը զոհած է. այլ 'ի պատանեկութենէ պանդխտութեան մէջ, ընդ լծով օտարաց, ցերեկները աղքատ ծնողացդ օգնելու աշխատած ատեն, գիշերուան կազդուրիչ ժամերնիդ ընթերցանութեան եւ ուսման զոհելով, կարողացած էք ձեր միտքը մշակելով արդասաւորել, յուռթի ու բերրի ընել զայն։

Ինչո՞ւ ուրեմն կը վարանիք մի միայն ձեր ջանքովըն ու աշխատութեամբը ստացած այդ պատուական բերքերնիդ հրապարակ հանել։—«Արժան չ'է 'ի լոյս ածել» կ'սէք,—եւ ինչու. երեք պատճառ կը գտնեմ ես այսմ։ Ա. գովելի համեստութեամբ մը կը քաշուիք ինքզինքնիդ հեղինակաց կարգը դասելու։ Այս ձեր արժանիքը կ'աւելցունէ։ Բ. կը խորհիք թերեւս, թէ գիրք մը հեղինակել կարենալու համար, ուսեալ ըլլալու է, մինչդեռ դուք ուղղականն ու սեռականը բացատրող մը չէք ունեցած. այսպէս ըլլալը պատիւ է ձեզ, եւ պատճառաւ՝ որ ձեր երկն աւելի համակ-

րութեամբ ընդունուի, եւ եթէ իր մէջ թերութիւններ, տառասխալներ եւ այլն կան՝ անոնք ալ քաղցր ժպիտով պիտի ներմարուին ընթերցասէր հասարակութենէն։ Գ. անտեղի նկատում մ'է կարծեմ ձեր վարանման պատճառը, այն է թէ, թերեւս գիրքդ թըշնամիներ յարուցանէ ձեզ դէմ, նախատանաց ենթարկուիք, եւ բանադրանքներու տակ իյնաք, ինչպէս որ քանի մը բարեկամներ ալ քանի մը կէտեր եւս աւելցունելով առարկեցին. զարմանալի՜ բան. ԺԹ րդ. դարուս մէջ, գիտութեան եւ յառաջադիմութեան պաշտպան կայսրութեան մը օրով, անոր հայրական հովանւոյն տակ, տարակուսիլ թէ գաղափարաց արտայայտումը յանցանք է. թէ ճշմարիտ իրողութիւններ պատմողը թշնամեաց կ'ենթարկուի, թէ իւր հայրենեաց բարքերն ու սովորութիւնները երգող ինքնաբոյս հեղինակ մը բանադրանքներու տակ իյնայ . . . . . ըստ ինձ այսպիսի առարկութիւններէ հետեւութիւն հանելու դարն անցած է, անոնք անհիմն ենթադրութիւններ են, եւ ոչ այլ ինչ. ծն բարեկամդ իմ, մացառներու մէջ փթթած վարդն իր կոկոնները բանալու կը քաշուի միթէ, անտառաց խութերուն մէջ ծլած ինքնաբոյս մանիշակը, իրաւ թէեւ ամչկոտ, բայց ինչո՞ւ ժտի իւր քաղցրիկ բուրումները ծաւալել։ Վստահ եղիք բարեկամս, որ ձեր գիրքը կարող է պատուաւոր տեղ մը բռնել գրական աշխարհի մէջ. հրապարակ հանեցէք զայն. հասարակութիւնը ժլատ չ'է ինքնաբոյս բանաստեղծաց հանճարը պսակելու։

Ուրախ եմ յոյժ, որ ամենալաւ մասն ընտրած, եւ ձեզ գրելու նիւթ արած էք. սէրը, յորմէ ոչ ոք զերծ է, եւ չկայ մէկը որոյ ճաշակէն չ'յարմարի,

հաստատ կ'ասեմ որ, ուր որ սէր չունի, նա զգացում չունի, եւ որ 'ի սիրոյ պակասի, մարդկութենէ եւս պակասի։ Այլ եմ՝ թէ եւ ամուրի, բայց չեմ անըզգայ, մանաւանդ լաւ կ'զգամ թէ ինչ մոգական ազդեցութիւն զետեղուած է սիրոյ տակ, եւ որչափ բերկրութիւնք տաղաւարած է ամուսնութիւն բառը զգայուն սրտերու մէջ։ . . . .

Կը փափաքէի ձայնակցիլ ձեզ ինչ ինչ կէտերու նկատմամբ քանի մը խօսք ուղղել առ որ անկ էր, եւ աղաչել որ ընդունիք իբր յառաջաբան ձեր գրքին. որովհետեւ արդէն դուք յառաջաբան գրել չ'էիք ուզած, եւ սակայն նիւթոց առատութիւնը մի՛ դուցէ մղէ գրիչս երկար յառաջաբան մը գրել, որ անպատեհ թուի ընթերցողաց։ Մանուկ հեղինակ մ'ասած է, «յառաջաբանէ փախչողը վերջաբանի կը հանդիպի» ինչ պիտի ասեն ընթերցողք, եթէ յառաջաբանի եւ վերջաբանի միանգամայն հանդիպին, քաղցր ժպիտով մը պիտի մրմնջեն անշուշտ «ծաղիկք հովտաց յուռթի լինին»։

ՄԻՆԱՍ Մ. ԽԱՉԿԵԱՆ

5 Դեկտեմբեր 1874
Կ. Պոլիս

ԱՌ ԾՆՈՂՍ ԻՄ ՍԻՐԵԼԻ

ՍԱՀԱԿ ԵՒ ՄԱՐԻԱՄ

ՄԱԹՒՍԵԱՆ

ՅԻՇԱՏԱԿ

ՍԻՐՈՅ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՄՈՒՇԵՂ ԵՒ ԿԱԼԻՆԻԿԷ

ԿԱՄ

ՊՍԱԿ ՄԸ ՅԱՆՁՐԴԻ

ԳԼՈՒԽ Ա.

ՄՕՐ ՄԸ ԽՐԱՏԸ

Անւոյ գաղթականներէն (1) հիմնուած ապառաժուտն Ակնէ ութ ժամ հեռաւորութեամբ հարաւային արեւելեան կողմը բլրակի մը վրայ շինուած է Մ . . . գիւղը. Ճակատն ունի յարեւելս, յետ կոյս կողմանէ կը բարձրանայ «Բար-գլուխ» ըսուած ժայռն, որ անպաճեւ գագաթամբ, և դերբուկ սարաւանդներովն զմայլելի տեսք մը կընծայէ, զոր ի բացուստ նկատողն զՄ . . . բերդաքաղաք մը կը կարծէ: Եւ իրօք 1810 թուականին Մ . . . իւր շրջակայքը գտնուած քաղաքներէն, և աւաններէն, թէ նիւթապէս և թէ բարոյապէս յառաջադէմ էր, պերճաշուք ամիրաններով,

---

(1) Թէեւ կարծիք, այլ աւանդութեանց նայելով հաւանականագոյն կը թուի:

քաջաքալող կշերներով, հմուտ դաստիարակներով հեռաւոր տեղեր իւր համբաւը տարածած կը պարծէր, և այնպիսի բարձրաստիճան հիւրերու ասպնջականութիւնն վայելած է որ Պօլսոյ պալատական իշխանքն իսկ ի նախանձ շարժած է ։

«Ամենայն ինչ կերպարանափոխ լինի յաշխարհի բաց յԱստուծոյ»։ Այս անխուսափելի կերպարանափոխութենէ զերծ չի մնաց նաև Մ . . . ։

Ներկան՝ անցեալի հակապատկերն է ։

1871 օգոստոս ամսոյ 24 երեկոյեան ժամըն է ։ Արեւն սկսած է խոնարհիլ, բարձրաբերձ ծառոց գագաթունքը վերջալուսոյ ճառագայթներ է ողողուած՝ Մովսիսական մորենոյն օրինակը կը ներկայացունէին ։ Թթենի ծառոց լայնադիր տերեւները երեկոյեան զեփիւռէն վէտ վէտ տատանելով, արեգական կողմնակի շառաւիղներէն լուսաւորուած՝ արծաթեայ թիթեղներէ զարդարուած կերեւէին . ընտանի ճնճուղներ՝ պատերու վրայ շարուած արեգական հրաժեշտի ողջոյնը կերգեն . Անդեայք երամովին իրենց գոմը կը դառնան . կովերը սիրուն հորթերնին ետեւնին ձգած՝ բառաչելով մսուրը կը վազեն, որուն մէջ ճարակած սընունդնին կաթի փոխելով իրենց տիրոջ ընծայելու . քրտնաթոր մշակներ՝ աշխատանքնուն

դադրած ուրախ զուարթ երգելով տուներնին կը դառնան, աշխատութեամբ կորանցուցած զօրութիւննին ընտանեկան յարկին տակ վերըստին ստանալու . մանկիկներ՝ դուռներուն առջեւ կանգնած իրենց սիրական հօր կամ մօր կսպասեն, որոնք համբոյրներ նուիրելով, ծաղիկք կամ պտուղ կտանան, և որ առաւելն է որդիական սիրոյ գորովալից գիրկընդխառնութիւնը ։ Ո՛վ զմայլելի տեսարան գիւղական պարզութեան ։

Այս գիւղին վերի թաղը կրկնայարկ նորաշէն տուն մը կայ և երկու դուռ ունի՝ մին մեծ միւսը փոքր . մեծ դուռը քարէ աստիճաններով «Բար-գլուխ» ըսուած ժայռին ստորոտը կը հանէ՝ որ գիւղին վերի գլուխի պողոտան է . ուր կան միանգամայն երկու երեք ցորեն մաքրելու յատկացեալ կալեր, որք ճիշդ քարին տակովը շինուած ըլլալով այրերու ձեւ ունին . վարի դուռը գիւղին մէջ կը հանէ . այս տունն առանձին շինուած է, պատկից դրացիներ չունի ։

Սոյն երեկոյեան ժամը մէկին ատենները, այս տան երկրորդ յարկի սենեակներէն միոյն մէջ տասնեչորս տարեկան դեռափթիթ օրիորդ մ'անկողնոյն վրայ կը հանգչէր . գորովագութ մայրն ու եղբօր կինը գլուխին վերեւ նստած կը թասեն ։ Այս օրիորդը միջահասակ,

վարդագոյն այտերով, սեւ մազերով, սեւ աչերով, աղեղնաձեւ յօնքերով, երկայն թարթիչներով՝ կարմրաշուրթն կոյս մ'էր, համեստութիւնը մանաւանդ դէմքին վրայ ծրագրուած հրեշտակային անմեղութեան երկնային տիպարը կը կրէր։ Համեստութիւնն ու առաքինութիւնը միշտ գեղանի են, բայց գեղեցկագոյն ևս են՝ երբ իգական սեռի գեղեցկութեան հետ միանան։ Հոգւոյ և մարմնոյ ներդաշնակ գեղեցկութիւնը հաղուագիւտ բացառութիւն մ'է, մայրեր միայն կարող են այսպիսի արարածներ ձեւակերպել։

Այս օրիորդին մայրը կարճահասակ, կապոյտ աչերով, չէկ մազերով կին մ'էր, և իր կուրծքին մէջ ազնիւ սիրտ մը կը կրէր. յարդի բառն իր բոլոր նշանակութեամբը վրան ամբողջացած էր. սենեակը գեղջկական պարզութեամբ կահաւորած՝ թիթեղեա փոքրիկ ճրագ մը զայն կը լուսաւորէր, որ աւելի մուխ կուտար քան թէ լոյս։ Բարեսիրտ մայրը տխուր էր, և երբեմն երբեմն հարսին նայելով կը ժպտէր։

— Սիրելի աղջիկս կարծեմ այսօր աղէկ ես, եթէ քիչ մը կերակուր առնես աւելի զօրութիւն կ'ըստանաս։

— Ազնիւ մայրիկս, մարդս իր զօրութիւնը սրտէն կ'առնու, երբ սիրտը վիրաւորուած

է՝ ամենափափուկ կերակուրներն անգամ անկարող են զայն կազդուրել։

— Դա՛րձեալ այդ տխուր խօսքերը. մայրական խնամոցս սիրուն ըլլայ՝ խնայէ ինձ և մի վշտերս բազմապատկեր, կը տեսնես թէ քեզի համար ո՛րչափ սրտմաշուք կը կրեմ։

— Կաղաչեմ մի՛ մեղադրեր զիս սիրելի մայրիկս, անհունապէս շնորհակալ եմ խնամոցդ. շատ կը ցաւիմ ձեզի միշտ պատճառելուս..։ Այո՛, պէտք է իմ վշտերս ես միայն կրեմ, կը նախանձիմ եթէ ուրիշ մ'իմ վշտացս մասնակից ըլլայ... Դո՛ւք, պատուական մայրս, վեհ սիրտ մը կը կրէք, կ'ըզգաք իմ վշտացս ծանրութիւնը, և կուզէք մխիթարել ու սփոփել զիս, այլ աւա՜ղ, այլք կը ծաղրեն, կը նախատեն իմ սէրս ու կ'այպանեն զիս... ա՜հ հա՛յր իմ, հայր իմ, արդեօք ի՞նչ անիծեալ ներկատումներու զոհել կը խորհիք զիս, ի՞նչու կը բռնանաք ինծի. սէ՞րս ճնշել կ'ուզէք. սիրոյս պատեանը կրնաք խորտակել, բայց սէրս ո՛չ երբէք կորզել....։

Թշուառ մայրն, ու հարսը այս սրտաճմլիկ խօսքերէն զգածեալ՝ լալ սկսան. կարեկցին երբեմն վիրաւորել է։ Ապաբաղդ օրիորդն երբ ասոնց արտասուելը տեսաւ, յուսահատութեան ամպ մը պատեց ճակատը, աչերն իր փայլը կորսնցուց, այտերը դեղնեցան, և շըր-

Թուշքները մոխրի գոյն առին, ձեռնը մեղմիկ ճակտին տանիլ ուզեց, բայց գլուխն անզգալապէս բարձին վրայ ինկաւ ։ Օրիորդը նուաղած էր, վշտակիր մայրն՝ երբ աչքերէն արտասուքները սրբելով դէպ 'ի օրիորդն յառեց, ոտքէն մինչեւ ցգլուխ սարսուռ մը զգաց, անմիջապէս խոհանոց վազեց սոխ(1) մը բերաւ կտրեց ու օրիորդին քթին դրաւ, և պաղ ջրով սկսաւ ճակատը շփել։ Ուշիմ կին մ'էր, մակաբերեց թէ, անողոքն Երոս(2) իր կիզիչ նետը աղջկան սիրտը շատ խոր մխած էր, որուն փափուկ սիրտը չկարենալով ժուժել, մօրն արտասուքն յուսահատութիւն բերելով մարած

(1) Գեղջկական դեղերէն մին է նաեւ սոխը, որ քանի մը տեսակ ցաւերու եւ վէրքերու համար իբրեւ ամոքիչ դարման կը գործածուի, եւ մանաւորապէս նուաղմանէ զգաստացունելու զօրաւոր դեղ մը համարուած է, Սոխը մէջ տեղէն ճեղքելով կը ճզմեն, ու անոր մամուռը մարողին ռնգաց ջիղերուն կը հաղորդեն. եթէ այս դեղն անօգուտ ըլլայ, անվրէպ դեղն է մարողին, (որուն ակռայ կղպուիլ կ'ըսեն). շրթանցը վրայ եկեղեցւոյ դրան մեծ բանալին դնել, եւ նոյն միջոցին բոյթ ու ցուցամատին միջոցը ուժգին կերպով սեղմել, որուն սաստիկ ցաւէն մարողն աչերը կը բանայ, բայց ոչ միշտ ակռայները ։

(2) Որդի Աստղկան մանուկ աստուած սիրոյ եւ ցանկութեան ։

էր ։ Գլուխը ծռած, ձեռքերը խաչաձեւ կուրծքին վրայ դրած, տխուր դէմքով աղջկան անկողնոյն քով նստաւ ։

— Ի՞նչ ընեմ Աստուած իմ. ինչ ընեմ, եթէ հայրը համոզել չի կարենամ, ու իր խստութիւնը շարունակէ, աղջկանս կեանքին վընասուելէն կը վախնամ։

— Խաթուն սկեսուրս, ըսաւ հարսը, որ թխորակ, գիրուկ կին մ'էր. եթէ պատուելոյն միջամտութիւնը խնդրենք, կը մերժէ՞ արդեօք,

— Կը մերժէ՞ ըսիք, անտարակոյս, և արդէն քանիցս մերժած է. ոչ միայն պատուելոյն և քահանային, այլ և գիւղիս բոլոր երեւելեաց առաջարկութիւնքը միջամտութիւնքն թախանձանքներն 'ի դերեւ ելած են ։ Եւ ոչ իսկ իմ աղաչանքներս ու խեղճ աղջկան գաղտնի արտասուքները զինքն 'ի գութ շարժած են . . . Ո՛հ նիւթական վատ նկատումները, նախապաշարմունքն ու կրօնամոլութիւնը իւր սիրտը քարացուցած են. թերեւս աղջիկը միսիոնարի մը տալով բամբիշ մ'ընել կուզէ, թերեւս երիտասարդին բնական ձիրքերն առ ոչինչ համարելով, քաղաքացի հարուստի մը հարսնացունել խորհած է, թերեւս երիտասարդին կրօնքը խոտր համարած է . . . ։ Սակայն աղջիկս սիրած ու միանգամայն սիրուած

է, զիրար կը պաշտեն և իրարու համար կը մահանան. ոճիր մ՚է ասոնք իրարմէ անջատելը, և անհնարին իսկ . . . օգնէ՛ Աստուած իմ այս տարաբաղդ ամուրեաց: Խանդակաթ մայրը նորէն արտասուել սկսաւ, թաշկինակի տեղ կապտագոյն ճերմակ բիծերով գոգնոցը աչքերուն դրած:

Անձկութեան ժամերու մէջ մարդոյս զգայարանքները արտաքոյ կարգի ժրութիւն մը կ՚առնան, այնպիսի խորհուրդներ կը յղանան այնպիսի պարագաներու կը դիմեն, որ, անդորրութեան ժամերու մէջ եթէ ուրիշէ մը լսուէր այպանելի կը թուէր:

Գոգնոցովն աչերը սրբեց, խորունկ շունչ մ՚առաւ, երկչոտութեամբ սենեկին դուռը նայեցաւ. կասկածոտ դէմքով մը դէպի հարսը դառնալով—գիտե՞ս մաքէս ի՛նչ անցաւ. այս ըսաւ ու լռեց, դէպ 'ի աղջիկը ծռեցաւ, ուշադրութեամբ դիտեց, վստահ կերպով գլուխը վեր առաւ, անկասկած ըլլալով թէ դեռ անզգայութեան կամ խոր քնոյ մէջ է:— Գիտե՞ս ի՛նչ խորհեցայ կրկնեց, աղջիկս իւր տարփածուին հետ գիշերանց փախչելով երթալ ուրիշ գիւղի քահանայէ մը պսակուիլ, ալ ուրիշ ճար չեմ տեսներ: Այս խօսքերն այնպէս շտապաւ արտասանեց, որ կարծես լեզուին վրայէն կրակի կայծ մը նետել կ՚ուզէր:

Այս խօսքերն արտասանուելէն հազիւ տասըն րոպէ անցած էր, օրիորդին ծածկոցը թեթև կերպով ցնցուեցաւ, փափուկ ձեռնը անկողնէն դուրս հանելով ճակտին վրայ ինկած մազերը մէկ կողմ ըրաւ, կուրծքը աստիճանաբար ուռեցաւ, հառաչանք մ՚արձակեց ու աչքերը կիսովին բացուեցան: Օրիորդը մօրը խօսքերը լսած էր, և ճիշդ այն միջոցին ուշաբերել սկսած էր, երբ ծռելով կը դիտէր: Մայրն աղջկան սթափիլը տեսնելուն, փոխանակ ուրախանալու սարսափ մը զգաց. չարաչար զղջաց այնպիսի վտանգաւոր խօսք մը բերնէն փախցունելուն:

— Կեցցէ՛ սիրելի զաւակս. ահա՛ կ՚ըսթափիս, բայց աչքերդ սիրելիս բա՛ց. ո՛հ գիտե՞ս որչափ սրտդող կրեցի երբ մարիլդ տեսայ: Եւ սկսաւ կարծր ձեռքերովն աղջկան ճակատը շոյել: Աշխատասէր կին մը ըլլալուն ձեռքերուն հետ շատ խստութեամբ կը վարուէր:

— Լսեցի՞ր որչափ զանգատներ ըրի հօրդ դէմ:

— Ո՛չ մայր իմ:

— Ի՛նչ այնչափ խօսքերէս բնաւ բառ մը չե՞ս լսած:

— Եւ ինչպէս կրնայի լսել մայր իմ, երբ կ՚ըսէք թէ մարած էի:

— Ուրեմն ըսած խօսքերէս բա՞ռ մ՚ալ չե՛ս յիշեր:

Օրիորդը չի պատասխանեց, մօրն աչքերը ուրախութենէն փայլեցան, գոհունակութեան ժպիտ մը շրթունքները ձգտեց, խոնարհելով աղջկան այտերուն մէկ մէկ համբոյր դրոշմեց. ամենեւին անկասկած ըլլալով թէ, աղջիկն իր վերջին խօսքերը լսած չէր:

Երթամ քեզի աղուոր թան մը պատրաստեմ. դուն ալ ժիր եղիր տենդիդ տեղի մի տար, կարելի է հնար մը կը գտնենք հայրդ համոզելու, մի յուսահատիր սիրելի զաւակս որ նուաղում չը գայ վրադ: Կանթեղն առաւ, հարսին նշան մ'ըրաւ իրեն հետեւելու և սենեակէն դուրս ելան:

ԳԼՈՒԽ Բ.

ԵՓՐԱՏԱՅ ԱՓԱՆՑ ՎՐԱՅ ՀԱՆԴԷՍ ՄԸ

Այգուն ժամն էր: Մ . . . Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն զանգակը տխուր հնչումով քրիստոնեայք յաղօթս կը հրաւիրէր: Արդէն պառաւ կիներ, գաւազաններու վրայ յեծած եկեղեցւոյ դրան բացմանը կը սպասեն: Ասոնք ջերմեռանդ հաւատուհիներ են, որոնք մանկամարդութեան մէջ գործած մեղքերնին պառաւութեան մէջ քաւելու համար գիշերանց եկեղեցի կը վազեն. ոմանք ալ քնոյ նուաղութե-

նէ ազօթասէր ըլլալ ստիպուած են. երբեմն այնպէս կանուխ եկեղեցւոյ դուռը բաղխել կ'ըսկսին, որ ծերունի ժամկոչը քունէն արթնցունելով կը բարկացունեն:

Արշալոյսն առագաստէն դուրս ելնել կը պատրաստուի, թռչունք երամովին, զմայլելի գայլայլիկներով արեգական գալուստը կ'ողջունեն: Բաղցրասիւք զեփիւռը զով կենդանութիւն մը կը տարածէ, ծաղկանց ախորժելի բուրմանց հետ խառնուած, գեղեցիկ օրուան մը գեղածիծաղ արշալոյսն է. երկինք ջինջ կապոյտ գոյն մ'ունի, միայն Տօրօս լերան վերայ ճերմակ ամպերէ յօրինուած բլրակներ կ'ընդնշմարուին, որոնք հետզհետէ քայքայուելով կ'աներեւութանան:

Մ . . . գիւղին ծայրը հրապարակ մը կայ «խանամթլու» անուամբ ուր կը հաւաքուին առաւօտները գիւղին անասունները. երկու մասի կը բաժնուի, որոց մին խաշանց, և միւսն արջառաց յատկացեալ: Առաւօտեան ժամերու մէջ, մանաւանդ կիւրակէ օրերը այս հրապարակը ախորժելի տեսարան մը կընծայէ. ծերեր, պառաւներ, հարսներ, օրիորդներ իրենց անասունները հովուին յանձնելու կը բերեն, ձեռքերնին մէկ կամ երկու հաց(1) ունենա-

(1) Այս կողմերու գիւղացիները թարմ հաց ունելէ զրկուած են, տարին երկու, երեք կամ չորս

լով, վասն զի սովորութիւն է մէն մի անասնոյ մէկ հաց շաբաթական ընծայ կը տրուի հովուին։ Պահապան շուները հովուաց օժանդակելով հօտը կամփոփեն ու կը մեկնին. հրապարակը մարդերու կը մնայ։

Սեպտեմբեր ամսոյ գեղեցիկ առաւօտներէն մին, երիտասարդաց խումբ մը այս հրապարակին վրայ կատարուելիք հանդէսի մը նախապատրաստութեանց կզբաղէին. Հետեւաբար շատ մ'ընելիք չունեցան, հաւաքիչ մը ընտրեցին ու ցրուեցան։ Այս ընտրեալն արդէն իւր պաշտօնին ընտելացած անձ մ'էր, զուարթ բնութիւն մը ունենալուն համար ամենէն կը սիրուէր։ Շուրջ 30—31 տարեկան, կարճահասակ, թխորակ, շականակագոյն աչերով, միակողմանի երիտասարդ մ'էր. աջ կողմի սրունքն ու բազուկը հաշմած էին, որով խեղճ երիտասարդը կաղն ի կաղն կը քալէր. և աջ ձեռն անգործածելի էր, սակայն և այնպէս

անգամ միայն հաց կեփեն. հազիւ կը պատահի, որ ամիսը միանգամ հաց եփեն, այն ալ աղքատները միայն, շատ ալիւր չունենալնուն համար. այս հացերը ճիշդ կլոր սեղաններու ձեւ ունին բարակ թանձրաքարտի հաստութեամբ՝ եփուած ատեն խիստ զգուշութիւն կընեն աղէկ չորցունելով կարմրուկ գոյն մը տալու որ առանց մքլածութեան երկար ատեն դիմանայ. Հաց եփելու համար ամեն տուն իր թօնիրն ունի, որ կարմրագոյն կաւէ մը կը շինուի հետը այծի

քաջառողջ երիտասարդի մը պէս ուժեղ և ճարպիկ էր. ամեն գործ կընէր որով ընտանեաց պարէնը կը հայթայթէր։ Այսօր արտաքոյ կարգի ժրութիւն մ'ունէր, միշտ կը խնդար, և կը խնդացունէր. երկաչեայ պայուսակ մը ուսը նետած, պղնձէ սափոր մը ձեռին, փայտէ դրդալ մը և փոքրիկ կացին մ'ալ մէջքը զարկած. հովանոց մը կը պակսէր, նոր Ռօպէնսօն մը ձեւանալու. այս կերպարանօք գիւղին մէջ դուռնէ դուռն կը շրջէր, և ամէն անոնք որ նոյն օրուան հանդէսին պիտի մասնակցէին՝, անոնց տուներէն պատրաստուելիք ճաշին բաժնեբաժինը կը հաւաքէր. ձաւար, իւղ, հաց և այլն։ Երիտասարդաց խումբ մը քարայատակ ըսուած ճամբէն ուրախ զուարթ երգելով կանցնէին։ Վարի գիւղայ զբօսավայրը, ուր արդէն քանի մը յառաջընթաց երիտա-

---

մաղ խառնուած. Այս հացերն ուտելէ առաջ քառորդի մը չափ ջուրի մէջ թրջոց կը դնեն, յետոյ կըտաւի մը մէջ կը փաթթեն որ կակուղնայ. Ալուրին աճումը թօնիրին կողերուն վրայ կը թողուն, և հացին սննդարար մասն ալ ջուրին մէջ.

Շատ խրատամբ ըսած են նախնիք այն առածը թէ. «գործը չը գիտցող մարդուն տունը, եթէ շտեմարաններ լեցուն ցորեն ալ ըլլայ իր հացը կորեկ է մի ըլլայ»։

Երբ այրը կառավարել, և կինը տնտեսել չը գիտնայ, տաշտը դատարկ, թօնիրն անբոց կը մնայ.

սարդներ կրակ վառած․ գեղեցկանկար գորգեր մարգագետնին վրայ փռած, օղին և գինւոյ շիշերն առուակին մէջ զետեղած ընկերակցայ կըսպասեն։ Այս վայրն Եփրատայ ափունքն է։

«Եփրատ գետ Հայաստանի դրախտավայրէն թափ ի թափ սահելով կիջնայ, երկրին ցածնալովն, ու ջրերուն շատնալովն իր արագընթացութիւնն ու ուժը կը կրկնապատկէ և կեռապատկէ։ Անխտաւրեան բնակառոյց պարըսպաց դէմ զարնուելով ու կռուըտելով ճամբայ կը բանայ, զոր մեծամեծ ժայռք և կոշկռաք կարծես հակառակելով արգելուլ կը ջանան․ Եփրատայ ալիք ժամերով կը կռուին, փըրփրալով, քարէ քար զարնուելով, փշրուելով ու մռմռալով առաջ կը խաղան»։ Տօրոս լեռան խստապինդ շղթաներուն դէմ կռուելէն կարծես յոգնած, Քարտակոյ, և Քարամաշկերտի մէջ տեղ իւր խստութենէն պահ մը զիջանելով անդորր երեւոյթ մը կառնու․ Ալիները լայնելու ասպարեզ գտնելով ինքզինք ցոյց կուտայ․ երկխուղած հանդարտութիւնը մինչեւ սուրբ Սարգիս եկեղեցւոյ առջեւ կը շարունակէ։

Այս անձուկ հովտին մէջ ընտիր ճաշկաւ մշակուած են Մ․․․ի պարտիզաց մեծագոյն մասը․ մէկ կողմէն Եփրատայ ալիները․ միւս կողմէն Քարտակոյ ահագին ժայռերու շարքերը հորիզոնական վայրահակութեամբ պարտեզաց տարածութիւնն իրենց մէջ շրջանակած են։ Քարտակոյ լեռնակը խրոխտ դիրքէն, ահաւոր տեսքէն ի զատ, նշանաւոր է իւր մէջ պարունակած ահագին այրերու հետաքրքրական հնութեամբը։

Այս այրերէն միոյն անցքը լեռան ճիշդ մէջ տեղէն է, այնպէս որ, թէ վարէն և թէ վերէն, չըսեմ անհնարին, դէթ խիստ դժուարին է ներս մտնելը․ սակայն կերեւի թէ, ժամանակին դիւրամուտ անցք մ՚ունեցած ըլլալու է։ Վարէն նայելու ատեն կը տեսնուի քարով կիրով և փայտով շինուած պատուհաններ և կիսապատեր․ այս շէնքերը Եւրոպացի ճանապարհորդաց հետաքրքրութիւնը խիստ շարժած է․ սակայն տեղւոյն անմատչելի համարուած դիրքը պատճառաւ ոչ ոք համարձակած էր ելնելու փորձ ընել։ Ռամիկ ժողովրդեան առասպելաբանութիւնները զարհուրելի և վըտանգաւոր տեղ մը կը ներկայացունէին։

Պատմութեանս թուականէն քանի տարի յառաջ քանի մը հնասէր և կորիճ գիւղացիներ ամէն վտանգ և դժուարութիւնք առ ոչինչ համարելով այս այրն ելնելու փորձ ըրին, և յաջողեցան․ սակայն ինչպէս որ ըսինք, այս ափափայ ժայռն ի վեր մագլցելով ելնելն անհնարին է, որովհետեւ առ նուազն 18 կամ

20 հարիւրաչափ (մէթրօ) բարձրութիւն ունի գետնէն մինչեւ այրին անցքը, եւ գրեթէ նոյնչափ թերեւս աւելի, լեռան գագաթէն։ Շատ մ'երկայն եւ դիմացկուն սանդուղներ հաստատուն առասաններով իրարու հետ լաւ մը կապելով փայտէ ամբարտակ մը կանգնեցին լեռան ոտքէն մինչեւ այրին անցքը, որով յաջողեցան այրը կամ լաւ եւս այրին բակը մտնել, որուն մէջէն բացուած դռնակով մը կը մտցուի այրը, որ իրեն չափազանց ընդարձակութեանը պատճառաւ աւելի լաւ կըլլար այր ըսուելու տեղ տաշածոյ միապաղաղ քարէ դղեակ մը ըսուիլ։

Այս դղեակը նախնեաց քաջարուեստ ձեռակերտից, ճարտարութեանցն, եւ ընտիր ճաշակացը անեղծանելի մնացած առհաւատչեայն է։ Սենեակներ, խոհանոց մը, մառան մը, եւ պատուական ջրամբար մ'ունի, սենեակները կանոնաւոր չափակցութեամբ բաժնուած են, յաջ եւ ահեակ. մէջ տեղը գաւիթ մը, գաւթին ծայրերը, աջ կողմը խոհանոց, ձախը մառան, եւ խոհանոցին մէջ տեղը ջրհամբարը։ Այս ջրհամբարն՝ ամենեւին անվնաս մնացած է, դարերու եղծիչ անիւներն, երբէք ազդեցութիւն մը չ'են ըրած իր վրայ. ժամանակին քանդիչ մուրճը, գործաւորին դրուագիչ կըռանին դեռ չէ յաղթանակած, կաթի նման

ճերմակ, ապակիի պէս փայլուն վէմնիճով մը պատած է։ Խոհանոցին մէջ երկու կրակարան կայ, եւ մառանին մէջն ալ ճանկեր հաստատուած են։ Զը մոռնանք նորէն յիշեցունել թէ, այս դղեակին մէն մի յարկը, մէն մի չէնքը, բաժանումները, անցքը, գաւիթը, կըրակարանները, եւ ջրհամբարը, ասոնք ամէնն ալ կռանին, մուրճին, եւ ուռան հրաշալիքներն են, որ նախնի ագէտ մարդերու (ըստ մեծաբանութեան ներկայ լուսաւորեալ, եւ գիտուն մարդերու). գաղափարացը մէջ ծնունդ առած, եւ իրենց ձեռքերովն 'ի գործ դրուած են։ Այս այրը իրերասպան դարերու մէջ, բարբարոսաց բռնութեանցը դէմ իբր պատսպարան շինուած է, որովհետեւ այրին անցքին երկու կողմը պարսաքարի ահագին կոյտեր կան դիզուած. ըստ աւանդական պատմութեան այս այրը երկու ճամբայ ունի եղեր, մին շարժական կամուրջով լեռան ճակտի անցքէն կը մտնուի, որուն նշանները եւ ցիցերը դեռ կը ցուցնեն, եւ միւսը այրին մէջէն հեռի տեղ մը կը հանէ եղեր. եւ այս ալ շատ հաւանական է որովհետեւ այրին շէնքերը վերջացած տեղը, մառանին քովէն մարդ մը ծռելով մտնելու չափ ծակ մը կայ. սակայն ցարդ ոչ ոք համարձակած է մտնել իմանալու համար թէ՝ ուր կը հանէ այն ճամբան վասն զի օձապտոյտ ճամ-

բայ մ'ըլլալը լոյսով ծակէն նշմարուած է։

Այս հուչակաւոր այրէն 'ի զատ, կան քանի մը մեծ և փոքր այրեր ևս, սակայն հետաքրքրական հնութիւններ չը պարունակելնուն համար զանց կ'ընենք յիշատակել, և կը դառնանք հանդիսականաց,

Հանդիսականք հետզհետէ կը հասնին, և մէկ մէկ գաւաթ օղիով հանդէսն սկիզբն կ'առնու, որոյ անդամները մեծագոյն մասամբ նորեկ պանդուխտներէ կը բաղկանայ, որոնք 7-10-15 երկար տարիներ հայրենիքէ տարագիր, օտարութեան մէջ վշտալի կենօք տառապած և բիւր հառաչանօք այս վայրն յիշած, ու արտասուած են։ Հայրենեաց անձկակարօտ նժդեհներն այսօր բոլորովին անցեալը մոռցած, անպատում բերկրութեամբ իրենց փափաքելի վայրը կ'ողջունեն, զիրար եղբայր անուանելով կ'ուտեն, կը խմեն, կ'երգեն, ու կը զուարճանան. երջանիկ ժամեր։ Ամենքը գոհ են բաց 'ի երկու անձերէ, որոնց մին 40-45 տարեկան, միջահասակ, ցորենագոյն, սեւ մազերով, մանր ու կապոյտ աչերով, որոնք ակնակապճին մէջ անդիկլի նման շարունակ կը շարժին. սեւ գաղմիրէ թիկնոց մը, նոյննիւթէ տափատ մը, և յարդագոյն բաճկոնակ մը հագած էր. իւրովի խօսողի մը պէս շրթունքները միշտ կը ձկտէր ու կ'ամփոփէր։

Երկրորդը 27-28 տարեկան միջահասակ, բոլորադէմ, թուխ մազերով, սեւ աչերով, կարմրայտն երիտասարդ մ'էր. վայելուչ ձեւերուն հետ եռանդոտ սիրտ մը կը կրէր. կապոյտ կտաւէ բաճկոն մը և տափատ մը հագած՝ մէջքն ալ չորս մատ լայնութեամբ փոկ մը կապած էր, որուն վրայ հրազէնուց բոլոր պիտոյքը զետեղուած էին, փայլուն մազերը կը ծածկէին վանեցիներու յատուկ բազմագոյն դտակներէն գտակ մը. հրացանին կրունկը գետինը դրած, աչքերը պարեխի մը ծայրն յառած, անտարբեր իր շուրջն եղածներէն խորունկ մտածմանց մէջ ընկղմած էր։

Այս սրտադրաւ դիրքին մէջ զինքը նկատող վրէժխնդիր մարդիկ մը կը կարծէր. և իրօք պատերազմիկ մ'էր, բայց ոչ վրէժխնդիր. պատերազմն իւր սրտին մէջն էր, կը պատերազմէր իր էութեան ամենազնիւ տարրին, այն է սիրոյ հետ։ Սիրել ու միանգամայն սիրուիլ. սիրտ մը նուիրել, ու փոխարէն սիրտ մը ստանալ. զգալ միշտ թէ էակ մը կայ որ զինքը կը պաշտէ, որուն գոյութիւնն իւր կեանքն է, և իւր կեանքն անոր կենդանութիւնը. զգալ միանգամայն թէ սէրը կը ճնշեն, սիրտը կը յօշոտեն, և կենագրաւ ընել կապառնան... ընդունիլ այս հարուածները ճիշդ այն ձեռքէն, որ իրեն հետ հանդիսակից ու սեղանակից ե-

ղած է։ Դէմքն որ ի սկզբան վհատութեամբ համակեալ էր, հետզհետէ սպառնալից երեւոյթ մը կառնուր․ թերեւս անհաճոյ դէպքի մը տեղի տրուէր, եթէ իր բարեկամներէն մին կամաց մ'ուսին զարնելով չըսթափեցնէր զինքը։

— Ի՞նչ ունիք Պ. Մուշեղ․ քանի օրէ 'ի վեր վրանիդ զգալի փոփոխութիւն մը կը նշմարեմ։

— Շնորհակալ եմ կարեկցութեանդ բարեկամս, սակայն չեմ կարծեր թէ, ձեր ըսածին համեմատ զգալի փոփոխութիւն մ'ունեցած ըլլամ։

— Եւ ամենազգալի՛, վասն զի դուք առաջ ուրախ և զուարթ էիք, իսկ հիմայ տրտում և տխուր, հանդէսներու մէջ, մանաւանդ ձեր այս սիրելի զբօսավայրին վրայ ուրախութեան տիպարն էիք․ այսօր կը նկատեմ որ հանդէսն և հանդիսականք ձեզի տաղտկութիւն կը պատճառեն։

— Թերեւս կայ հանդիսականաց մէջ ինծի ձանձրութիւն, կամ լաւ եւս զայրոյթ պատճառող մը, բայց ոչ հանդէսն, և ոչ հանդիսականք ինձ ձանձրութիւն չեն պատճառեր, մանաւանդ թէ ուրախ եմ։

— Ուրախ չէք, սակայն կ'առաջարկեմ ուրախ ըլլալ․ օ՛ն ուրեմն օղի, կամ գինի, ըմպելիները մելամաղձութիւն փարատելու յատկութիւն ունին։

Մուշեղ ոգելից ըմպելեաց սովորութիւն չունէր․ կասկածանաց տեղի չըտալու համար, յանձն առաւ գաւաթ մը գինի խմել․ գաւաթը ձեռքն առած հանդիսականաց դառնալով, «վասն ուրախութեան և սիրոյ» ըսելով խմեց․ ցորենագոյն անձն որ Մուշեղի բոլոր խօսքերն, ու շարժումները կը լրտեսէր, երբ «վասն սիրոյ» բառը լսեց, բարձրաձայն ծիծաղ մ'արձակեց․ ծիծաղներ կան որք երկսայրի սուրէ մ'աւելի կը վիրաւորեն․ Մուշեղ, որուն սիրտն արդէն վիրաւորուած էր, կիզիչ թոյնի մ'ազդեցութիւնն զգաց իր վիրալից սըրտին վրայ։ Աչերը փայլեցան, ճակտին երակները ուռեցան, շրթունքները, նախ կարմիր, և յետոյ կապոյտ գոյն մ'առին, կարմրորակ այտերը դեղնութիւն մը պատեց, ներքին յուզման յայտարար նշանները դէմքին վրայ ծրագրուեցան․ սարսափելի վայրկեան մ'անցաւ․․ յանկարծ տեղէն ցատկեց, հրացանն առաւ, եղջերուէ մ'աւելի թեթեւընթաց ստախիտ ծառերուն մէջէն անյայտ եղաւ։

Հանդիսականներէն մեծագոյն մասը, Պ. Մ․․․ի և Մուշեղի մէջ անցածներն՝ ոմանք մասամբ լսիք, ոմանք բոլոր պարագայներովն հանդերձ տեղեակ էին․ գիտէին որ, Մուշեղ Պ. Մ․․․ի աղջիկը բոլոր սրտովը սիրած, և փոխադարձաբար օրիորդէն պաշտուելու

չափ սիրուած էր, թէ այս երկու ամուրիներու սէրը պսակելու համար մինչեւ ցարդ եղած ջանքերն անօգուտ եղած և թէ Պ. Մ...ի անողոք խստասրտութիւնը մեղմացունել անհնարին եղած է։ Ամեն առթիւ երիտասարդին սէրը ծաղրած, սիրտը վիրաւորած, և անուանարկ անել ճգնած է։ Որոնք որ այս պարագայներուն տեղեակ էին, ծիծաղին նշանակութիւնն ու Մուշեղի յանկարծ ընկերութիւնը ձգել մեկնելուն թագուն պատճառն իմացան։ Սակայն պարագայ մը կար, որ իրենց խելընհասութիւնը չէր զօրէր լուծել, և այս պարագան հետեւեալ առարկութեանց վրայ հիմնուած էր։

Մուշեղ փիզիգապէս ուժեղ և կորովի էր, միանգամայն երիտասարդական քաջառողջ հասակին մէջ կը գտնուէր, մինչդեռ իւր մարտակիցն որ չարունակ զինքը կը խոցոտէր ու երջանկութեանն արգելք կըլլար, տարիքն առած ապառողջ անձ մ'էր. Մուշեղ ամենեւին նիւթական կախում մը չունէր զինքը նախատողէն։ Ներկայ եղողներէն մեծագոյն մասը, Մուշեղը սիրելնուն համար, ի հարկին իրեն կուսակից պիտի ըլլային, քան թէ Պ. Մ...ի։

Ի՞նչ պատճառ կար ուրեմն որ, անզօր թշնամիէ մը ճիշդ սրտէն վիրաւորուելէ զկնի, փոխանակ վրէժխնդրութեամբ վէրքի վէրք

հատուցանելու խոյս տալ. բուն պատճառը թերեւս խոհեմութիւնն եղած ըլլայ, որ չուզելով կրից ամենէն դժնդակագունին տեղի տալ, յորում մարդս խուլ, կոյր և խելագար կը դառնայ, որով իրմէ մեծը, թէև հակառակորդ մ'ըլլայ, նախատել, այպանել, գուցէ նաև հայհոյել և.... որ ի զգաստութեան դառն զղջումով մը սիրտը պիտի կեղեքէր։ պատճառ պիտի տար ընկերութիւնը տակն ի վերայ ըլլալու, ու հանդէսը խանգարելու, և որով փոխանակ ուրախութեան՝ տրտմութիւն, և փոխանակ զուարճութեանց՝ անկարգութիւնք և կռիւ. կրից զսպանակը զսպելու համար, պահ մ'ընկերութիւնը թողլով մեկնած էր։ Անոնք, որ վերոյգրեալ պարագայներէն տեղեկութիւն չունէին, սովորական եղած դէպքի մը տուին, այսպէս յանկարծ մեկնելուն պատճառը։

— Տղաքնե՛ր, կրակին վրայ փայտ դրէք որ Մուշեղին զարկած որսն եփենք, գոչեց մին ի հանդիսականաց։

— Վա՛յ սատանայ, ի՛նչ սուր ականջ ունի եղեր. ես երբէք չի լսեցի ոչ կաքաւի կարկաչ, ոչ սարեակի սուլել և ոչ մի ձայն, ասաց ուրիշ մը։

— Թերեւս պահծու խրճթակ ունի, նայելու գնաց, կրկնեց երրորդ մը։

Իսկ Պ. Մ . . . . ամենեւին անտարբեր իր շուրջն եղած խօսակցութեանց, լուռ կը կենար. դէմքէն կը յայտնուէր թէ գոհ էր ըրածէն. պողպատեայ պլաքի մը նման նպատակին հասած էր, ծիծաղն իր ներգործութիւնն ըրած էր, միայն կը զարմանար թէ ինչո՞ւ փոխանակ դիմագրաւելու խոյս տուաւ. կը փափաքէր որ, կռիւ մ'ըլլար, անկարգութիւններ պատահէր, հանդէսը խանգարուէր . . . . կը ցաւէր որ այս նպատակին չի հասաւ։

Հանդէսն ամենայն կարգաւորութեամբ կը շարունակէր, թմբուկն ու փողը կը հնչեցունէին, մարգագետնի վրայ պար բոլորած կը խաղային ու կը ցաթկռտէին։ Ընթրեաց ժամը կը մօտէր. ուզեցին ընթրիքը հրացանի հանդէսով մ'ողջունել։ Գինւոյ դատարկ շիշ մը բարձր քարի մը ծայրը տնկեցին եւ սկսեցին կարգաւ ուղղաձգութեան փորձ ընել. առաջին հարուածով շիշը ջախջախողը հանդիսին դիւցազնը պիտի համարուէր. Արդէն ոգելից ըմպելիք ուղեղներու մէջ զգալի ներգործութիւն ըրած ըլլալով, հրացանի մը պայթիւնը դրդիչ տուաւ. ամեն ոք սկսաւ իր հրացանը, կամ ատրճանակը պարպել. հրազինուց ճայթմանց Շուախայի սարերն արձագանք տալով, ահեղագոչ թնդիւնը մարդուս ականջները կը խլցունէր. Եփրատայ խոխոջք պահ մ'անլսելի

եղան, թռչունք ահաբեկ իրենց բոյներէն խուճապեալ, փախուստ կուտային։ Այս բազմական զօրահանդէսը թերեւս շատ ժամանակ տեւէր, որովհետեւ ամենուն քովն ալ առատ վառօդ կը գտնուէր, եթէ դէպք մ'իրենց ուշադրութիւնն ուրիշ առարկայի մը չը դարձունէր։ Հանդիսականներէն ոմանք «Բէլէ՛կ Բէլէ՛կ» աղաղակեցին, անմիջապէս ամենուն աչքերը դէպի գետն յառեցան, եւ իրօք տկլատ մ'էր, Ականէն իջած Մատէն կերթար։ Երկու լաստավար, դրաստ մը եւ քանի մը լեցուն քուրձեր կերեւէին տկլատին վրայ. լաստավարներն երբ հանդիսականաց մօտեցան, ձեռքով բարեւներ տուին, եւ որուն «Աստուած բարի ճանապարհ տայ եւ փորձանքներէ պահէ» բարեմաղթութիւններով պատասխանեցին։

Այս տկլատներն մեր նախահարց հնարքն ըլլալուն, հաճութեամբ կը յիշատակենք, եւ որուն առթիւ ուրախութեամբ սրտի կը յայտնենք թէ, Հայոց նահապետաց այս հնարքը, 1855 թուականին Եւրոպիոյ լուսաւորութեան կեդրոնին մէջ նոր կենդանութիւն մ'առաւ, ինչպէս որ գաղղիերէն «Բրէս» անուն օրագրին հրատարակած էր, որուն յառաջաբանը այսպէս կսկսի։

«Երկու երեք օրէ ի վեր Թիւյլըրիի բաղնիքներուն քով, Սէն գետի վրայ, կը տեսնուի

հարթ նաւակներու օրինակ մը որ յիշել կուտայ այն գիրքը, զոր ինչպէս կը պատմէ Հերոդոտ, հին ժամանակի հայերը կը գործածէին Եփրատայ վրայ նաւարկելու, և իրենց վաճառքը Բաբելոն տանելու համար»:

35 էն մինչեւ 45-50 ոչխարի մորթեր տիկ հանած իրարու կը կապեն. վրան ծառոց ճիւղերով կը ծածկեն, և որոց վերայ թեթեւ տախտակներ կը տարածեն ու կ'ամրացունեն, որով կը ձեւանայ տկալաստ: Անդնդախոր գետոց մէկ կողմէն միւսը անցնելու, և վաճառք փոխադրելու կը գործածեն: Տկալաստն արդէն աներեւոյթ եղած էր, երբ պարեխի մը քամակէն հրացանի որոտնդոստ ձայն մը լըսուեցաւ, կեցցէներու աղաղակներով ողջունեցաւ, Մուշեղ ծուխին մէջէն տեսնուեցաւ ձեռքը սարեակ մը բռնած:

Հէ՛ք երիտասարդը բարկութենէն և կրից զայրոյթէն այլ յայլմէ եղած, անզգալաբար երերուն քայլերով դէպ 'ի Ս. Սարգիս եկեղեցւոյ դուռը դիմած էր. նախատանաց և զրկանաց համար բողոքելու. և «մի՛ կալ հակառակ չարի»ի համար օգնութիւն խնդրելու:

Այս եկեղեցին Եփրատայ ափունքէն 35-40 քայլ հեռաւորութեամբ, ապառաժի մը վըրայ, տեսակ մ'աւազուտ կրով, և սրբատաշ մեծադիր քարերով շինուած է. դուռը խիստ ցած

և նեղ, չորս տարեկան տղայ մը հազիւ կրնայ կանգուն ներս մտնել. նախնեաց բարեպաշտութեան մէկ օրինակն է. Ս. Եկեղեցի մըտնելու ատեն խոնարհիլ սորվեցունելու, լուսամուտները 10-15 հարիւրաչափ լայնութեամբ և 25-30 երկայնութեամբ քարերու վրայ բացուած ճեղքերէն, որք դէպ 'ի ներս հետզհետէ կը լայնան. ցերեկ ատեն կարդալու համար լոյսի կը կարօտի. պատերը պարսպի մը պատերուն պէս լայն են. առաստաղին ու տանիքին միջոցը երկու հարիւրաչափէն աւելի թանձրութիւն ունի. չի գիտցուիր թէ, այս անջրպետն ինչո՞վ լեցուած է. Ներքին շէնքը հետաքրքրական է. դռնէն ներս խոնարհելով մտնելու ատեն, միապաղաղ քարէ աստիճաններով վար կ'իջնուի. աստիճաններուն ստորոտը երկուքի կը բաժնուի. աջ կողմէն նեղ անցքէ մ'առաջ երթալով յետոյ դէպ յարեւելս դառնալով աւագ խորանն յանդիման կ'ուգայ իւր նախնակերտ կամարովը: Երկրորդ մասը զատ եկեղեցի մ'է. աստիճաններուն վերջացած տեղը, անցքին մէջէն դուռ մը կայ, ուրկէ ներս մտնելով, միաձոյլ քարէ գեղեցիկ խորան մը կը տեսնուի դէմդ, որմէ կը մակաբերուի թէ, երկու միակրօն ազգերու. (Հայ Յոյն) եկեղեցի եղած ըլլայ: Աւանդութեամբ կը պատմուի թէ, այս եկեղեցին երկուորեակ

եղբայր մը և քոյր մը հիմնած են իրենց դերեզման ըլլալու համար. և որոնց չիրիմները ահագին կափարիչներով աւագ խորանէն 4-5 քայլ հեռի եկեղեցւոյ մէջ տեղը մինչև ցարդ անեղծ կեցած է: Աւելի հաւանականը այն է թէ. հին Մ. . . ի եկեղեցին եղած ըլլայ, որովհետև Մ . . . գիւղը 'ի հնումն Եփրատայ ափանց վրայ բարձրացած ժայռին գագաթը հիմնուած էր, որուն աւերակները դեռ կեցած յայտ յանդիման կը ցուցնեն տուներուն իրարմէ ունեցած հեռաւորութիւնն ու դիրքը. սակայն ամէն տարի Եփրատայ անդուլ ալեաց շատ մը զոհեր տալերնուն, հին գիւղէն գաղթած, երեք քառորդ հեռաւորութեամբ արդի Մ . . . գիւղն հիմնած են. եկեղեցին իրրև ուխտատեղի, և կամ յիշատակ մը թողելու համար չեն քանդած. Թէև գիւղը եկեղեցիէն քառորդի մը չափ հեռաւորութիւն ունի. բայց ասիկայ փաստ մը չ'է հերքելու թէ Ս. Սարգիս, հին Մ . . . ի եկեղեցին եղած չըլլայ: Ասիոյ մէջ սովորութիւն կար, և մինչև ցարդ կայ, որ եկեղեցիները բնակութենէ բաւական հեռի կը կառուցանեն, որուն համար եկեղեցիներն ալ աւելի դղեակներու կը նմանին քան թէ աղօթատեղիներու:

Արտաքին շէնքը բազմաթիւ խաչերով զարդարուած է, դրան վրայ արձանագրութիւ

մը կայ, և կը կարծուի թէ թուականն ալ նորաշինակուած ըլլայ, սակայն ժամանակի անողոք խարտոցը եղծած է, որով անընթեռնալի եղած է, թէ հիմնողք, և թէ թուականն անյայտ է: Աւանդական հաշւով 1500 տարուան շէնք մը կը կարծուի. վերջապէս այս եկեղեցին թէ գեղեցիկ դիրքովը, թէ ամրակառուցութեամբը, և թէ արուեստակերտ դրըւագներովը, նախնեաց հանճարոյն և քաջագործութեանց մէկ կենդանի վկան է:

Մուշեղ, ինչպէս որ ըսինք, այս եկեղեցւոյ դրան առջև 'ի ծունր դրած, համառօտ աղօթքով մը սիրտն ու սէրը Աստուծոյ նուիրած, և զինքը տոչորող բարկութենէն սթափելով յետս դարձած էր, և որուն դարձը հանդիսականաց ուրախութիւնը կրկնապատկեց:

Գինին՝ մանաւանդ անիծեալ օղին, սկսած էր իւր ճիւաղային զօրութիւնը ցուցնել. բանականաց դասը, խելագարաց վոհմակ մը ըլլալու կէտին կը մօտէր. բարեբաղդաբար ընթրեաց ժամն հասած լինելով, ալ վերջ տրուեցաւ բաղոսական սակարկութեանց:

Արևն արդէն մէկ ժամ առաջ ձորամիջէս մեկնած էր, որուն յաջորդած էր մութ և մելամաղձին երևոյթ մը. գիշեր առեն այս վայրս սոսկալի տեսք մը կառնու. ամենէն քաջասիրտներն անգամ կարծես դիւ-

թական զօրութեամբ սարսուռ մը կը զգան ։

Ընթրիքն աւարտած լինելով, ամէն մարդ մեկնելու պատրաստութեանց կ՚զբաղէր ։ Երիտասարդաց խումբ մը թեւ թեւի տուած «Մամիկոնեան սուսաննեցաւ դրօշուն յայերս գոգծալ ծալ» երգն երգելով քալել սկսան ։ Ո՛ երիտասարդական աշխոյժ, ո՛ նուիրական տարիներ, որուն մէջ կարծես մարդս վեհութեան գոռոզութիւն մը կը ստանայ, փայլեցունելով ճակտին վերայ ստեղծողին սրբադրոշմ կնիքը ։ Ամեն ոք այս խանդավառ երգին ձայնակցիլ սկսան. «Հա՛պ օ՛ն արի արանց մանկունք» ն երբ բարձր ձայնով կ՚աղաղակէին կարծես իրօք սուրն 'ի ձեռին պատերազմի դաշտը կ՚արշաւէին ։ Երգին յաջորդեցին դարձեալ թըմբուկն ու փողը. կուզէին գիւղին դէմ փառաւոր ցոյց մ՚ընել. լեցուած հըրացաններ ձեռքերնին բռնած կը պարէին, պարէն վերջը, «Հայ օ՛ն» աղաղակելով հըրախաղութիւններ ընել սկսան. երբ հրախաղը լըմընցաւ, գրեթէ հանդէսն ալ վերջացաւ. ալ ամէն մարդ կամ իրարու հետ խօսակցելով, և կամ լռելեայն քալելով գիւղ մտան, և իրարու բարի գիշեր մաղթելով ցրուեցան ։

ԳԼՈՒԽ Գ.

ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Աղջամղջին գիշեր մ՚էր, խորհրդաւոր լըռութիւն մը կը տիրէր ամենուրեք, երբեմն այս լռութիւնը կ՚ընդհատէր ջղջիկանց տկար կռիններով, ու մօտակայ առուակին անհանդարտ բնակչաց կռկռուկներով ։

Երկինք՝ որ գիշերուան առաջին մասին մէջ խիստ ամպերով պատած էր, հետզհետէ հովերէ մղուելով պատառուածքներ կը յօրինուէին, որոնց մէջէն աստղերու աղօտ փայլէր կը նշմարուէր ։

Գիշերուան հրդ. ժամն է ։ Մ . . . գիւղին վերի թաղի գաղթականաց լքեալ տուներուն փլատակաց մէջէն ստուերի մը շարժիլը տեսնեմնուեցաւ. այս ստուերը անձ մ՚էր, որ գիշերուան մթութեան մէջ, ճիշդ ստուերի մը ձեւն ունէր. Եփրատայ հանդիսավայրը ճանչցած երիտասարդնիս է, սակայն բոլորովին կերպարանափոխ եղած, շագանակագոյն մանր աննըշմարելի կարմիր բիծերով տափատ մը, նոյնգոյն բաճկոնակ մը, և թիկնոց մը, որուն վրայէն մոխրագոյն վերարկու մը հագած, և խընամով կոճկած էր, օսլայաղօծեալ ճերմակ շա-

պիկ մը, և երիզի լայնութեամբ սեւ փողկապ մը կը կրէր, որուն ծայրերն երկայն ըլլալով գիշերուան հովէն վէտ վէտ կը ծածանէին. անգլիական թանձր ու փայլուն կօշիկ մը հագած, գլուխն ալ թուխ կարմիր գտակ մը դրած էր, և ձեռքն ոստալից ահագին գաւազան մը կը ճօճացունէր:

Գիշերուան ահաւոր մթութեան մէջ, աւերակաց խորշերը թափառող այս երիտասարդը տեսնող մը անշուշտ պիտի մակաբերէր, ինչ որ իրօք էր, այսինքն սիրոյ ախոյեան մը կամ զոհ մը. թախծութեամբ համակեալ, սիրտը կը տրոփէր, տեղ տեղ աչերը վերցունելով տան մը պատուհանը կը նայէր, կը հառաչէր, ու դարձեալ կսկսէր ճեմել: Տխրաքա՛յլ ճեմը, մէն մի ոտնառութեան կը թուէր տարիներու ընթացքը չափել, ժամերն ո՛րչափ երկայն, և որչափ դանդաղ կը քալէին. սակաւաթիւ կենաց օրերը տաղտկալի բեռան մը պէս վրան ծանրացած, կընկճէր կորաքամակ այս ծանրութեան ներքեւ. խորհելու գործարանները խանգարուած, միտքը խառնաշփոթ գաղափարներով կալէկոծէր, կարծես գանկէն ուղեղներն սպառելով զգայազիրկ եղած էր, միմիայն երկու զգացմունք կը կրէր, սրտին մէջ սէրը, մտքին մէջ երկիւղը, որ իր ճիւաղային ձեռներովը չարունակ կը կեղեքէր սիրտը՝ որոյ

մէջ պահուած էր սէրը, երկիւղին ազդած տաւապանաց տակ թերեւս ընկճէր, եթէ սիրոյն ներգործութենէն նոր ույժ ու կորով չըստանար. երկիւղը վհատութեան մէջ կը ձգեր զինքը, բայց սէրը կը զօրացունէր, — որո՞նք էին երկիւղին պատճառները. — խստութիւնն ու նախապաշարմունքն զինքն ահաբեկ կընէին, սիրուհւոյն հայրը հարուստ, և ազդեցութեան տէր անձ մ'էր, նախապաշարմունքն ալ ժողովրդեան բռնաւորը, պիտի կրնար իր տկար ձայնովն ու անզօր բազկաւը անոնց վիթխարի զօրութեանցը դիմակալել, պիտի կրնա՞ր իր փանաքի ուժովն անոնց ամեհի զօրութեանցն յաղթանակել. ինքզինք խիստ անզօր կզգար, կը յուսահատէր, կը վհատէր, վարանմանց մէջ կը ծփար, և անկումը կը մօտէր... սէ՛րը, այն երկնային զօրութիւնը, անմիջապէս օգնութեան կը հասնէր, կը փրկէր, քաղցրիկ յոյսով մը կսփոփէր, նոյն հետայն կզգար թէ խիստ զօրաւոր է և ամէն բռնութեանց տոկալու կարող:

Սէրը զինքը կը դրդեր, դէպ յառաջ կը մղեր, խանդը կը բորբոքէր, եռանդը կարծարծէր, և իր նպատակին հասնելու համար ամէն կարելի միջոց ի գործ դնելու կառաջնորդէր:

Այս միջոցները խիստ յուռի էին որ կը թե-

լողլուէր ի գործ դնել. բանականութիւնը հաւանութիւն չէր տար, բայց սէրը կստիպէր, կուզէր ամենուն անցած կամուրջէն ինքն ալ անցնիլ, սակայն կը փափաքէր բնական ճամբով մ'ամենուն անցնելու սահմանեալ ճամբան անցնիլ. այս ճամբայէն անցնիլ կարենալու համար հարկ կըլլար վերոյիշեալ ամբարտակները կործանել, խոչընդոտները բառնալ, քանդել այն ստուար անջրպետն՝ ու իր ուղղին հարթել: Այս յաղթանակը տանիլ իր ձեռնհասութենէն վեր էր, անոնց դէմ խիզախելու կորովը չունէր, և եթէ խիզախել փորձէր իսկ, հավին ապառաժէն առած մասնէն աւելի բան մը չը պիտի չահէր. Ուրեմն ի՞նչ պիտի ըլլար Կալնիկէ, ինչո՞վ պիտի գոցուէր սիրոյն բացած ահաւոր վէրքը, ի՞նչպէս պիտի կրէր այն ծանրատաղտուկ բեռը, զոր կեանք կանուանեն:

Այս հարցմանց պատասխաններն իր սիրուհիէն առնել կը յուսար, վասն զի բարեկամները ու ծանօթները իրենց պարտաւորութիւնքը կատարած ու անյաջող եղած էին: Ծովն ինկնող մարդը՝ ձեռքը փրփուրներուն կը կարկառէ. յուսատու պատասխաններ առնել կը յուսար, որուն համար յանչափս կաճապարէր:

Գիշերուան $4\frac{1}{2}$ ժամն էր. որոշեալ ատենն անցած էր, բայց սիրուհին դեռ չէր երևնար:

Ամենեւին չէր կասկածեր թէ, գուցէ յամելուն պատճառը սիրուհին ըլլայ, ինչպէս որ իրօք ալ չէր, այլ կը զայրանար, անհնարին ցասումմը կզգար, մտածելով թէ արդեօք ի՞նչ անակնկալ դիպուած պատահած է, և ի՞նչ խոչնդոտներ կարգիլէին զինքը. միթէ ժամադրութիւնն յայտնուելով արգելափա՞կ եղած է, արդեօք իր պատճառաւ տառապանքնե՞ր կը կրէ, արդեօք սէ՞րն ուրանալ ստիպեն.... փութանք ըսել թէ ոչ մին՝ և ոչ միւսն էր, այլ կրօնական արարողութիւն մը, ընտանեկան աղօթքի մը տեւողութիւնն էր ուշանալուն պատճառը:

Կալնիկէի հայրը, 1856 թուականին, Խըրիմի ահաւոր պատերազմին ատենը, երբ Անգղիացիք առատ ոսկիներ կը սփռէին Ասիոյ մէջ, այս մարդն ոսկիներուն փայլունութենէն շլացած, կրօնքը փոխած և բողոքական եղած էր, յուսալով որ իր շահադէտ նպատակին կը նըպաստէ, որովհետեւ այնպէս կը կարծէին թէ, կրօնքնին փոխելով ազգութիւննին ալ փոխած կըլլան. պապական եղողները իրենք զիրենք Գաղղիացի կը կարծէին, բողոքական եղողներն ալ Անգղիացի: Ինչպէս որ ըսինք, այս մարդն ալ այս դիտմամբ կրօնքը փոխած, և շահու մասին նպատակին հասած էր, բայց ոչ հայութեան արիւնը երակներէն

արտաքսել, և ոչ ալ մահտէսիութեան անունը վրայէն սրբել կարողացած էր :

Քանի մը կրօնակից դրացիներ քարոզչին հետ իւր տունն եկած էին գիշերային ընտանեկան աղօթքը հոն ընելու, և որուն պատճառաւ Կալինիկէ արգիլուած էր ժամադրութեանը գտնուելու : Քարոզիչը սենեկին պատուաւոր տեղը բազմած, և ծունկերուն վրայ Նոր-Եօրք տպուած աշխարհաբառ Աստուածաշունչ մը բացած կը կարդար. ամենուն ձեռքն ալ երգարան մը կար, նոյնպէս և Կալինիկէ երգարան մ'ունէր, սակայն ոչ կարդացուածքին, և ոչ ձեռքը ունեցած գրքին ուշադրութիւն կ'ընէր : Հէգ օրիորդը յափշտակուած էր. թէև ստուերը, կամ մարմինը հոն կը գտնուէր, բայց միտքն ու հոգին ուրիշ տեղեր կը թափառէին : Երբեմն երբեմն կը զգաստանար, կը սարսռար, և ուշադրութիւն ընողի մը դիրքը կ'առնուր. սակայն գլուխը երբէք չէր բարձրացունէր. աչերը խոնարհած ակնկոր կը մնար, վասն զի յանցաւոր էր :

Յանցանքը սէրն էր,

Սիրելն աններելի յանցանք մ'է, և պատժոյ արժանի, ըստ որում սէրը յայտնուելէն 'ի վեր տանը մէջ իբր պատժապարտ գաղտագողի կը շրջէր, և ամէն արհամարհանաց կ'ենթարկուէր :

Դէպ է կարծեմ յիշեցունել այս տեղ թէ, դեռ Ասիոյ մէջ կը շարունակուի այն ապօրինի սովորութիւնը, որով ծնողք զաւակաց ամուսնութեան իրաւունքը իրենց սեփհականած են. դեռ ամուսնութեան նուիրական օրէնքը կը բռնաբարի, ամուսնական սրբազան կապը ոչ թէ ամուսնացեալոց հաւանութեամբը կը յօդի՝ այլ ծնողաց բացարձակ կամահաճութեամբը : Այս ինչ մարդը, այն ինչին տունը քանի մը դաւաթ օղի խմելով զուարթացած միջոցին, տան տիրոջ հաճոյք մը պատճառելու, կամ իրեն աւելի յարգ տրուելու համար աղջիկը անոր տղին տալ կ'առաջարկէ, տան տէրն ալ կամ շահադէտ նպատակի մը համար, կամ աղախնոյ մը հարկաւորութեան, և կամ գրեթէ բոլորովին յանդէտս, միայն տղան կարգելու և հարս մ'ունենալու սնափառութեամբը կ'ընդունի, հետևաբար նշանտուութիւնը կ'ըլլայ, զկնի որոյ պսակն ալ անհրաժեշտ կատարուելու է. սակայն օրիորդը այն ցոփակեաց երիտասարդը չի սիրեր, և նոյնպէս երիտասարդն ալ օրիորդին քանի մը թերութիւնները նշմարած ըլլալով զայն կին ընդունիլ չի հաճիր : այս դիտողութիւնները իրենց մտքէն անցունելու ազատ են, բայց արտասանելու ամենևին արգիլեալ՝ շատ անգամ ալ (դժբաղդաբար, այսպիսի դիտողութիւններ և ոչ մէկուն

մտքէն կ՚անցնի, այլ ընդ հակառակը կ՚ուրախանան ոչ թէ զիրար սիրելնուն համար. քաւլիցի քանզի սէր ըսուած բանին ինչ ըլլալն անգամ դեռ անծանօթ է իրենց, ամուսնական օրինաց և պարտաւորութեանց բոլորովին անգէտ, տղան փեսայ ըլլալով ձի հեծնելու և աղջիկն ալ հարս ըլլալով փառաւոր հանդերձներ հագնելու փափաքանօք ամուսնութեան կը դիմեն, առանց ամուսնութեան ինչ ըլլալը գիտնալու ։

Այսպիսի ամուսնութեանց հետեւութիւնն ի՞նչ կ՚ըլլայ . . . երկար բացատրութեանց պէտք չկայ, փորձն ու ամէնօրեայ պատահած դէպքերը կ՚ապացուցանեն ։

Յանցաւոր են այն հայրերը, և պատճառ իրենց զաւակաց թշուառութեանը, որք կ՚աճապարեն ամուսնացնել զանոնք առանց դաստիարակելու, առանց արհեստ մը սորվեցունելու, և առանց ապրուստնին ճարելու միջոցներն պատրաստելու ։ Ի՞նչպէս պիտի կըրնան ընտանիք կազմել այդ թշուառ արարածներն, ու զաւակաց ծնողք ըլլալ երբ իրենց ամուսնութիւնը աղքատութեամբ և տգիտութեամբ կը պսակուի ։

Ինձ կը թուի թէ հայրերն իրենց պարտաւորութիւնը սխալ ըմբռնած են, զաւակնին դաստիարակելով մարդ ընելու մասին այնչափ

ջատագովչեն, որչափ զանոնք կանուխ ամուսնացունելով թշուառացունելու մասին. այս յոռի դրութիւնը աւելի ունակացեալ սովորութեանց հետեւութիւնն է քան թէ համոզմանց. ունակացեալ սովորութիւնք ըսինք, այս սովորութիւնները որ բուն իսկ նախապաշարումն է, ի՛նչ անողոք խաղեր կը խաղան ամուսնացելոց գլխուն ։

Հարս ըլլալն իր առաջին տարիներուն մէջ ինչ ըսել է գիտե՞ս, սիրելի ընթերցող, Ափրիկեցի գերուհի մը, անբարբառ արձան մը, շարժուն մեքենայ, և վերջապէս պատուաւոր կերպով ըսենք աղախին մը ։

Ճաբոնցւոց գրքերուն մէկուն մէջ գրուած է որ, տան մը մէջ կնիկ մարդը սպասաւորէն քիչ մը վեր է. Ասիացւոց սովորութիւններուն մէջն ալ նոր հարս մը սպասաւորէն քիչ մ՚ալ վար է ։

Քաղաքականացեալ ժողովրդոց զարմանքը շարժէ թերեւս և չափազանցութիւն համարին, սակայն նախապաշարեալ ժողովուրդները, որոնք դեռ այսպիսի անհեթեթ սովորութեանց գերի են, ամենայն եռանդեամբ կը պաշտպանեն զայն, համեստութիւն, և պարտաւորութիւն անուանելով ։ Ի՛նչ սխալ կարծիք, թերեւս յամառին իրենց որդեգրաց թիւր սկզբանց մէջ. Ներկայենք ուրեմն համառօտիւ մը,

և ապա հարցունենք թէ, համեստութիւն ըսածնին ո՞ր կէտին կը վերաբերի, և պարտաւորութիւն ըսածը բնաւորական պահանջում մը չէ՞:

Հարսանեաց արարողութեանցը վրայ չը պիտի խօսիմ այժմ, որուն մէջն ալ թէեւ հարսը շատ մը տաժանելի դերեր ունի ներկայելու, այլ հարս ըլլալէն անմիջապէս վերջը վարելու դատապարտուած կեանքը պիտի նկարագրենք:

Հարս մ'երբ երկան տանը դռնէն ներս կը մտնէ. նոյն վայրկեանէն համր ըլլալու կը դատապարտուի, պարտաւոր է յետ այնորիկ տանը մէջ գտնուողներուն, թէ մեծ՝ թէ փոքր, դրացիներուն, ազգականներուն, մինչև հեռաւոր բարեկամներուն հետ համրութիւն ընել, (համրութիւնը հարսնութիւն կանուանուի), այսինքն բնաւ անոնց մէկուն հետ չի խօսիլ, և քանի մը հարցուած առեն, համրի պէս նշաններով պատասխան տալ. հարսի մը ձայն լսուիլ մեծ ամօթ է: Այս սովորութիւնը պայմանաժամ չունի, կեսայրոջն ու կեսուրոջը կամքէն կախեալ է անոր համրութիւնը լուծել. 2-5 մինչև 10 տարի կը տևէ, շատ տեղ օրիորդ մը պահուիլ սկսելուն հետ հարսնութիւնն ալ կսկսի, երբ ծնողք աղջկան կիմացունեն նշանուած ըլլալը, յետ այնորիկ ամենայն ճգամբ պիտի ջանայ պահուիլ այն երիտասարդէն, որուն համար ըսուած է թէ խօսեցեալ է, և եթէ օրիորդ մը

այս սովորութիւնը ամենայն ճշդութեամբ ի գործ չը դնէ, ծանր քամբասանաց կենթարկուի:

Այսպէս ուրեմն դուք, պատկառելի ծնողք, համեստութիւնը հարսնութեա՞ն մէջ գտած էք. արդարև սքանչելի գիւտ: Բանական արարած մը անբանացունել, խօսուն էակ մը անասնացունել, խլել անորմէ այն պիտանի անդամը, զոր նախախնամութեան պարգևներէն ամենէն թանկագինն է, և համրութեան դատապարտել զայն: Ի՞նչ բանի կը ծառայէ այս հարսնութիւն ըսածը, եթէ հարս մ'ի բնէ չար է, լռութիւն պահելը կրնա՞յ զանի 'ի բարին դարձունել. երբ հարս մը լկտի է, չը խօսիլը կրնա՞յ զանի պարկեշտ ընել, երբ հարս մ'անհնազանդ է, լեզուն իրմէ յափշտակելը կրնա՞յ զանի հնազանդութեան բերել: Արդերբ հարս մը տգէտ է, զայն պարտուց ներքև ճնշելը կրնա՞յ իմաստնացունել: Ի՞նչ օգուտ ուրեմն հարսնութենէ, փոխանակ այս անիրաւ պահանջմանց և անտեղի սովորութեանց, աղջիկները դաստիարակելով՝ հարսնութեան, կամ լաւ ևս մայրութեան պատրաստելը աւելի օգտակար, դիւրին և պատուաւոր միջոց մը չէ՞: Դաստիարակեցէ՛ք, կաղաղակէ երևելի հեղինակ մը կիները, և ալ գանգատելու ու ընդդմանաց տեղի չէք ունենար:

Եւ ի՞նչ է այն ձեռք պագնելու զզուելի սո-

վրութիւնը, որ երկու տարեկան մանուկէ մը մինչև ամենէն անծանօթ մարդերու ձեռքը համբուրել, այո, շարունակ համբուրել, որչափ որ մարդ տեսնէ, տուները, փողոցները, հրապարակները, և այն ալ այնպիսի ծանրութեամբ մը ծռելու է, որ քառորդ մը տևէ, ապա մեղմութեամբ մը ձեռքն առնելով, նախ բերանին ու յետոյ ճակտին դնելու է: Ի՜նչ հազուագիւտ օրինակ համեստութեան:

Ա՞յս է համեստութիւն ըսածնիդ պատուական ծնողքներ, այս արարողութեանց ո՞ր կէտին մէջն է համեստութիւնը: Դեռափթիթ ծաղիկները ժանտ մարդերու ձեռքը մատնե՛լ, նուաստացունե՛լ զանոնք մինչև ի գետին, որ անխտրաբար ամենուն ձեռքն համբուրեն. ի՜նչ պժգալի սովորութիւն: Ա՛յս կե՞րպը գտեր էք ձեր հարսներուն խոնարհութիւն սորվեցունելու, չէ՞ք մտածեր անգամ մը թէ, այս սովորութեամբ անոնց սիրտը, միտքն ու զգացումները կաւերէք. կապականէք և . . . . . և ալ չեմ ուզեր առաջ երթալ:

Թողունք այն անհամար ձևերն ու արարողութիւնները, որոնք համեստութեան օրինաց կը վերաբերին, քանի մը կետէր ալ պարտաւորութիւն ըսուածէն առաջ բերենք:

Հարս մը ստորին աղախնոյ պաշտօն ունի, կեսայրոջն ու կեսուրոջը անսահման և լիազօր

իշխանութեան տակն է, անոնց ամեն հրամանաց ակնածութեամբ հնազանդելու է, կերակուրի ատեն սեղանին սպասաւորելու է, տան ծառայական գործերը կատարելու է, անկողիննին պատրաստելով ամէն երեկոյ ոտքերնին լուալու է, ապա անկողին դնելով, ձեռքերնին ու ոտքերնին համբուրելու և սպասելու է որ հաճին հրաման տալ սենեակէն մեկնելու:

Անողոք սկեսուրներ կան՝ որ խեղճ արարածները գերիի մը պէս անգթութեամբ կը չարչարեն, չափազանց կաշխատցունեն իրենց փափուկ կազմուածքին անյարմար աշխատութիւններով և շատ անգամ ալ իրենց սնունդէն կը զրկեն, և հարսներն՝ որ իբրև իրենց զաւակը ընդունելու են, օտարականի տեղ դնելով, մառանը և բոլոր ուտեստը փականքի տակ կը պահեն, ստիպելով այն անմեղ արարածներն որ գողութիւն ընեն, աշխատութեամբ սպառեալ կեանքնին ու զօրութիւննին պահելու համար:

Հարսն ասոնց ամենը լռելեայն կրելու է, քանզի հարսնութեան պարտաւորութիւնն է, և եթէ դժբաղդաբար այս պարտաւորութեանց մէկուն պարտազանց գտնուի, ծեծը զինքը 'ի զգաստութեան կը բերէ . . . : Ի՜նչ այլանդակ դրութիւն, առանց ամաչելու պարտաւորութեա՞ն անուն կը տաք այս բարբարոսական բը-

նութեանց. բարբարոսական բռնութիւն անուանեցի, մի՛ զայրանաք, եթէ ծանր կը թուի ձեզ, եթէ կը չառագունիք, և եթէ . . . . այլ աւա՜ղ, ո՛ նուիրականդ իմ հայրենիք, ո՛ սրբազան աճիւնք իմ նախահարց, ներեցէ՛ք եթէ պահ մը զձեզ նախատեցի, զայրացուցի և անհանգիստ ըրի, յանցանքը իմս չէ, դարուս՝ գաղափարաց վրայ ըրած ներգործութեանն է։

Նախնի Եգիպտացւոց արուեստները ժառանգական էին, որդին չէր կրնար հօրը արուեստը թողուլ, և ուրիշ արուեստ սորվիլ. այս օրէնքին դէմ ընողը ծանր պատիժներով կը պատժուէր։

Ասիոյ մէջ ալ ժառանգական սովորութիւնք կան, որդին իւր հօրմէն տեսածն ու լսածը զաւկին կաւանդէ, մայրն իւր սկեսուրէն ընդունածն ու վայելածը հարսին կը փոխարինէ։ Ահա՛ սովորութիւն մ'որ, թերևս 'ի սկզբան բարի նպատակաւ, և չափաւորութեամբ հաստատուած են, հետզհետէ հազարաւոր գաղափարներէ անցնելով, այնչափ այլայլած, փոփոխած, և վերադրած է որ, ծայրայեղ նախապաշարմունք մը, բարոյական, ընկերական, ընտանեկան և վերջապէս բնական օրինաց դէմ զեղծմունք մ'եղած է։

Գիտեմ պիտի հարցունես ազնիւ ընթերցող թէ. «հարսն որ այնչափ տառապանաց կեն-

թարկուի, կը գերուի, բռնութեանց, ու լըլկանաց տակ կը հեծէ, ո՞ւր է փեսան, տէրը, այրը, թագաւորը. ինչո՞ւ օգնութեան չի հասնիր, ինչո՞ւ կը թողու բռնաւորաց ձեռքը, ինչո՞ւ չի պաշտպաներ զայն, ինչո՞ւ կեանքն իսկ վտանգի չի դնէր իւր ամուսինն ազատելու. միթէ ասոնք օրինաւոր պսակաւ ամուսնացած չե՞ն, եթէ այսպէս է, միոյն վիշտը միւսինն ալ է, միոյն ցաւը միւսին ալ պիտի ազդէ, միոյն տառապանացն ու աղետից միւսն ալ պիտի մասնակցի. իսկ եթէ ասոնց հակադարձն է, ու այրը իւր ամուսնոյն կացութեանն անտարբեր է, ըսել է թէ նոր տեսակ մը գերեվաճառութիւն է, որ հայր և որդի միաբանած անմեղ կոյսեր կը գերեն։»

Փեսան . . . ողորմելի՛ արարած. եթէ մանկութենէ 'ի վեր հայրենի սեմէն դուրս չէ ելած, հայրենեացն անձուկ սահմանէն անդին չէ անցած, գրեթէ վերջի ըսածդ՝ կամ անոր մօտ բան մ'է. իսկ եթէ պանդխտութեան ելած, օտար երկիրներ պտըտած, քաղաքակրթութեան, և ազատութեան սկզբանց տեղեկացած, ու ապա հայրենիք դառնալով ամուսնացած է, կէս-այր մը կրնայ համարուիլ վասն զի կատարեալ այր ըլլալու ազատութեան ժամը դեռ չէ հնչած։

Եթէ կնկան անունը տայ՝ ցոփէ կ'ըսեն, ե-

թէ հետը խօսի կամ խնդայ՝ անտաւակ է կ'ըսեն. եթէ ամուսինն յարգել ուզէ՝ անպարկեշտ է կ'ըսեն. եթէ կնկան փշտացը դաւակցին յայտնէ՝ շըլխոի է կ'ըսեն. և եթէ մարդոց առջեւ համարձակի «կինս» ըսել՝ վա՜յ, աշխարհս պիտի կործանի կ'աղաղակեն :

Թերեւս ըսուի թէ, «տխմար չինականներէ հնարուած այլանդակութիւններ են ասոնք, և ոչ ընտանեկան ու քաղաքական կենաց սովորութիւնք». կը հաւանինք. բայց այս տխմար չինականներէ հնարուած այլանդակութիւնները, մեծ քաղաքացիներու, երեւելի անձերու, և հարուստ մարդերու ընդունած ու պաշտպանած սկզբունքներն են : Այս այլանդակութիւնները, իրենց սնունդն ու ճարակը աւելի քաղաքներու՝ քան թէ գիւղերու մէջ գտած են :

Ակն՝ Արապկեր, Խարբերդ, Տիգրանակերտ Բարաշխար և այլն, երբեմն այսպիսի սովորութեանց խանձարուրքն եղած էին :

Ժամանակն ամէն բան կ'այլափոխէ, ատեն մ'առաջ հաստատուած սովորութիւն մը, կուգայ ատեն մ'ալ որ կ'անհետի. նոյն իսկ այս տողերս գրած ատեն զգալապէս նուազած է, թերեւս պիտի գայ ատեն մ'որ յաջորդ սերունդք զարմանօք կարդան այս տողերն և անհաւատալի թուի :

Մուշեղ՝ որ աւերակաց խորշերը թողու-

ցինք, ալ հէգ երիտասարդը յուսահատիլ կը սկսէր, մելամաղձոտ տխրութեամբ պաշարուած անդադար կը քալէր. երբեմն քայլերուն կ'ընկերակցէր մեղմաձայն դեղգեղանք մը :

« Ո՛հ թէ զարտխս դու զանձկոտ
« Լըսէիր բաբախունս
« Զի՜ լոյս ըըբաց իմ աղօտ
« Ինձ աղդէր սոսափիւնս
« Մէն մի անջատ 'ի քէն վայրք
« Անձկութեանց են դարք([1]) :

Երգին վերջին վանկը դեռ շրթանց վրայ կը թրթռար՝ երբ յանկարծ պատուհանի մը բացուելուն կռինչը լսուեցաւ. բոլոր մարմինը սարսռաց, և աչքերը տարօրինակ կերպիւ փայլեցան, անմիջապէս իր նայուածքը ուղղեց հոն՝ ուրկէ «իր կենաց արուսեակը պիտի ծագէր» եւ իրօք դիմացի տան քառակուսի պատուհաններէն մին բացուելով կոյսի մը դէմքը տեսնուեցաւ, որ լուսնի աղօտ լոյսովը շրջանակուած պատկերի մը կը նմանէր : Երիտասարդը շանթի արագութեամբ պատուհանին տակը հասաւ, բայց պատուհանը խիստ բարձր ըլլալով խօսակցիլը վտանգաւոր էր. օրի-

---

([1]) Տաղք, Քերթուածք. Սրապիոն էֆ. Հէքիմեան.

որդը՝ որ շատ պատճառներ ունէր խիստ զգուշաւորութեամբ շարժելու, նկատելով այս անյարմար դիրքը որ կրնար ձախող դիպուածի մը տեղի տալ՝ նշան մ'ըրաւ կամաց մը պատուհանը գոցեց՝ ու անյայտ եղաւ. բարեբաղդաբար երիտասարդը տրուած նշանը լաւ ըմբռնած էր, վասն որոյ դողդոջ քայլերն ուղղեց դէպի տան դուռը։ Որչափ որ կը մօտենար սրտին բաբախումը կ'աւելնար, արիւնը կ'եռար, և ծունկերը կը կթոտէին, փոխանակ յառաջելու կը նահանջէր. ի՞նչ կ'զգար արդեօք այս միջոցին, ինքն ալ չէր գիտեր, մի միայն կը հոգածէր, որ չըլլայ թէ այս տեսակցութիւնը սիրուհւոյն նոր վիշտ պատճառէ։

Սէրը յորձանք մ'է, և սիրահարք յորձանաց վրայ ծփող թշուառներ, երբ երկիւղով պաշարուած են։

Սէրը քնոյ նման յաղթող է. վերջապէս բոլոր զօրութիւնն հաւաքելով մօտեցաւ դրան. Դուռն արդէն կիսաբաց սիրուհին իրեն կ'սպասէր։

— Մուշե՛ղ։

— Կալինիկէ՛։

Հազիւ կարող եղան իրարու անուն արտասանել, ուրախութենէ շունչերնին բռնուած, իրարու բազկաց մէջ անբարբառ մնացին։ Ինչպէս չափազանց տրտմութեան, նոյնպէս և չափազանց ուրախութեան մէջ, մարդուս կուրծ-

քը կը ճնշուի. զգացողութիւնը կը կապուի, և սիրտը պահ մը տրոփելէ կը դադրի։

Կալինիկէ կարտասուէր, մէկ ձեռքը կուրծքին, միւսն ալ Մուշեղի ուսին վրայ դրած, որով ըսել կուզէր՝ սրտիս տէրն, ու սիրոյս ախոյեանը դու ես։

— Կալինիկէ՛, սիրեցեալդ իմ Կալինիկէ, մի՛ արտասուէր, այդ մարգարտանման արտասուքները հալած կապարի պէս մինչև սրտիս խորերը կը թափանձէ. աւա՛ղ, սիրահարք թըշուառութեան պատկերներ ծրագրելո՞ւ համար ստեղծուած են, սիրահարաց բաժինը ողբն ու արտասո՞ւքն է միայն։

— Արտասուքներս ուրախութեան են անձկալիդ իմ, և ոչ տրտմութեան. ինչո՞ւ պիտի ողբամ, ինչո՞ւ պիտի տրտմիմ, միթէ զիս չե՞ս սիրեր, այո՛ և այս բաւ է ինձ։

— Ա՛հ հրեշտակդ 'ի մարմնի, երանի՛ թէ այդ զգացմանդ համապատասխանէր նաև հօրդ սիրտն ալ և այն ժամանակ երջանիկ կըլլայինք բարբէ՛, դիւթական բառ մ'է այս, որ զմարդիկ կը պատրէ, կը յուսացունէ, ու միանգամայն կը լքանէ. կա՞ն արդեօք աշխարհիս վրայ կատարեալ երջանկութիւն վայելող սիրահարք . . . աւա՛ղ, մենք երջանիկ պիտի ըլլայինք, և երջանիկ իսկ էինք, հայր մը խոչնդոտ մեր երջանկութեան։

— Եւ մայր մ՚առաջնորդ։

— Այո՛, կը ճանչնամ ես մօրդ ազնիւ սիրտը, բարի զգացումները, և մեր միութեան համար ունեցած փափաքը, բայց ի՞նչ օգուտ սիրելիդ իմ. երբ նա անկարող է իր փափաքներն իրականացունել, և մեր սէրը պսակել։

— Գոնէ պսակուիլ յօրդորել։

— Յորդորե՛լ, այո՛. բայց ո՞ւր է անսացող, ո՛վ է իր աղաչանքները լսողն, և ո՛վ իր արտասուախառն պաղատանացն ունկն դնող . . . էհ, ի՞նչ ընէ մայր մը երբ ազատութիւն չունի իւր թշուառ զաւկին օգնելու. Նախապաշարմունքն ամեն արտօնութիւն խլած է իրենցմէ. ցաւակցիլ, մորմոքիլ ու արտասուել միայն տրուած է ՚ի բաժին։

— Ու քաջալերել միանգամայն։

— Այո՛, քաջալերե՛լ որ սիրոյ ովկիանին մէջ չընկղմի. երբ արդէն սիրտս չոր անապատ մը դարձած աղեխորով կը տոչորի . . . . ա՛հ, դո՞ւ ալ չես գթար անձկալիդ իմ, աղաչանքներս, յորդորանքներս, դեռ կարող չեղա՞ն յաղթելու այն սին նկատմանդ՝ զոր անպատուութիւն կանուանես. ըսէ՛, սիրելիդ իմ, կը հաճիս այնպէս չէ՞. ես արդէն ամեն բան պատրաստած եմ, մեր փախուստին օգնելու բարեկամներ և զմեզ պսակելու քահանաներ չեն պակսիր. հաւանութիւնդ միայն . . . վայր-

կեաննիս խիստ թանկագին են, միշտ վտանգք մեր չորս կողմը պաշարած են, ամիսն միանգամ հազիւ կարող կըլլանք զիրար տեսնել. յամառութենէդ, զիս համբերելու յորդորելէդ ի՞նչ օգտեցանք . . . փախո՛ւստ, սիրելիս փախուստ, և կամ եթէ այդչափ անգութ ես՝ հրաման ըրէ մեկնիմ հայրենիքէս, թողում զաշխարհ, երթամ ծածկել գլուխս մութ անձաւաց մէջ՝ դժբաղդ սէրս ողբալու։

— Ի՞նչ, մեկնի՛լ, թողո՛ւլ զիս . . . բայց ինչո՞ւ չես ըսեր թաղել զիս . . . ո՛հ, ո՛չ, ո՛չ կը հաւանիմ, այո՛, կը հաւանիմ, մանաւանդ արտօնութիւն ևս ունիմ . . . օ՛ն սիրելիդ իմ ի փախուստ։

— (Այլայլմէ եղած) Վարդայեա՛ շրթունքներդ երջանկութեան կնքեցին, այո՛, երջանիկ եմք . . . բայց ի՞նչ ըսիր, արտօնութիւն ևս ունիս և ո՞ւստի։

— Ուստի՝, . . (կը վարանի) Այո՝, երազիս մէջ ստացայ։

— Երազի՞դ մէջ . . . ի՞նչ կըսես սիրելիս կը ցնորի՞ս։

Ո՛չ չեմ ցնորիր, այլև հաստատապէս կը հաւատեմ։ Այս բարի երազս այնպիսի խոր տպաւորութիւն մ՚ըրած է սրտիս վրայ, որ խօսակցութեանս մէջ գրեթէ միշտ անոր ազդեցութեամբը խօսեցայ։

— Կաղաչեմ. եթէ ըսածդ ցնորք մը չէ՝ բացատրէ զայն ։

— Ընդ հուպ պիտի բացատրեմ ձեզ ամէն բան, սակայն վայրկեաննիս սուղ է. երազն իրականացունելու միջոցներուն վրայ խորհինք. ըսէ՛ ինձ, ի՞նչ ճամբայ պիտի բռնենք, ո՞ւր պիտի երթանք և ի՞նչպէս պիտի պսակուինք... ա՛հ, հա՛յր իմ, հայր իմ ի՛նչ ըրիր...

— Ատոնց ամենուն նախագիծն արդէն պատրաստած եմ. քու հաճութիւնդ միայն կը պակսէր. հիմայ ամէն բան կատարեալ է, միայն գործադրել փութանք ։ Ե՞րբ պատրաստ պիտի ըլլաս ։

— Պատրաստ ըլլամ փախչելո՞ւ . . ։

— Այո՛ ։

— (Միրոը կը փղձկի. և աչաց աղբերակունք արտասուաց կաթիլներ կը վիժեն) չեմ գիտեր . . . երբ որ կամիս ։

— Կեցցե՛ս. գեղեցիկ ես և արի՛. ուրեմն ուրբաթ գիշեր ժամը հինգին տէր Աւետիսին կալը կ'ըսպասեմ ։

Հազիւ Մուշեղ խօսքն աւարտած էր՝ Կալինիկէ ուժգնութեամբ ցնցուեցաւ. տարփածուին փարելով, մատնուեցա՛նք, աղաղակեց. խեղճ օրիորդը աչնան տերևի պէս կը դողդղար ։ Մուշեղ այս աղաղակէն ահաբեկ եղած երկու քայլ յետս նահանջեց, բոլոր ուժն ամ-

փոփելով չորս կողմը դիտեց, բայց բան մը չը տեսաւ, շշունչ մը չը լսեց ։

— Փախի՛ր սիրելիդ իմ փախիր կրկնեց Կալինիկէ վտանգ կըսպառնայ քեզ. թշնամին որոգայթ լարած է . . . թերևս հիմայ շրջապատեն, աւա՛ղ, փախի՛ր . . ։

— Փախչի՛լ, ո՞ւր. ինչո՞ւ համար, ի՞նչ վըտանգ է այդ, և ո՞ւստի կուգայ ։

— Զեմ գիտեր, . . . տեսայ, այո՝ հիմայ տեսայ խոյնին դրան առջև կանկ առաւ, մեզ դիտեց, ու անցաւ . . . կաղաչեմ սիրոյս համար ըլլայ փախի՛ր, Մէկ ոստումով դրան սեմէն ներս մտաւ, դուռը կիսափակ ընելով, կուզէր ստիպել տարփածուն որ մեկնի,

— Ո՞ւր. կեցի՛ր, ի՛նչ կընես, երևակայութիւնդ է այն . . . ըսէ ինձ, պատմէ՝, բայց գոնէ . . . . ։

— Փախի՛ր, թերևս հիմայ . . , և դուռը կամաց մը գոցեց, անհնարին անձկութեամբ լռելեայն կ'ըսպասէր մինչև սիրելին մեկնի. կը զարհուրէր մտածելով թէ, սիրելւոյն վըտանգ կայ, ներս ընդունիլ անհնարին էր, դուրսը թողելով թշնամւոյն մատնելն անտանելի կերևար, ծունկերը կը դողդոջէին, աչքերուն լոյսը կը նուաղէր, մարխը մօտ էր, բոլոր ճիգն ամփոփելով դրան կրթնած կ'ունկնդրէր ։

— Կալինիկէ՛, դու զիս կը վշտացունես, դէթ ըսէիր զո՞վ տեսար, և երկիւղդ ո՞ւստի էր կը մրմնջէր բերանը բանալէն ծակին դըրած, որովհետեւ կ'ըստիպես, վտանգ մ'ըլլալ կ'երեւակայես, որ շատ հաւանական է, կը մեկնիմ, միաս բարեա՛ւ. քու սիրոյդ համար կը մեկնիմ, գոնէ վերջին համբոյր մը . . . բայց ո՛չ, ուրեմն, ողջամբ կացջիր: ուրբաթ գիշեր ժամ վեց . . . գիշե՛ր բարի՛ :

Կալինիկէ ուժաթափ եղած էր. տարփածուին համար երեւակայած վտանգէն ինք պիտի ենթարկուէր, նուաղիլ կուզար վրան, և աչքերը կը մթագնէր . . . արտասուախառն հեծեծանօք հազիւ կարող եղաւ ըսել, Տէ՛ր ընդքե՛ղ:

ԳԼՈՒԽ Դ.

ՋԵՐՄՈՒԿԱՑ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

Գիշերային մթութիւնը, աստեղազարդ գըմբեթը, լուսնոյ շառաւիղներուն ցոլացումը՝ որ իր տկար լոյսովը հազիւ ստուերներ կը ծրագրէ, այն տխուր լռութիւնը՝ որ համայն տիեզերքը թմրութեան ու անշարժութեան կ'են-

թարկէ, 'ի մի բան, Փիբէի (1) անդորրաւէտ ժամերը բաց մնացող աչերու յանկուցիչ հըրապոյրներ կ'ազդեն, հրապոյրներ՝ որոյ չնորհիւ ոմանք մինչեւ յերկինս բարձրացան և ոմանք մինչեւ դժոխոց յատակն իջան:

Այն սիրտն՝ որ վսեմ գաղափարներով տոգորուած կը մտէ միշտ դէպ 'ի վեր բարձրանալ, գիշերային տեսարանը խորհրդաւոր առաջնորդ մ'է, որ առաձգական զօրութեամբ կը մղէ յառաջանալ դէպ 'ի այն երանաւէտ աշխարհը, որ հոգիներու իսկական բնակարան ըլլալու սահմանուած է:

Այն սիրտն՝ որ վատ խորհուրդներով և սեւ գաղափարներով պարաւանդած, կը ձկտի միշտ տղմսկիլ չարութեան ոլորապտոյտ բաւիղներուն մէջ, խաւարն առաջնորդ, և մթութիւնն օգնական կը գործէ, մինչդեռ գիշեր է: Խաւար իւր սիրտը, խաւար խիղճը, խաւար՝ բոլոր զգացումները, գիշերային մթութիւնը կը խաւարեցունէ նաև աչերը, մոլորաքայլ կը թա-

(1) Փիփէ, կամ Տիկլին երկնից, Արամազդայ եւ Ղետոլայ դուստրն է, երկուորեակ քոյր Ապողոնի, ըստ առասպելաբանից երեք անուամբ կը յորջորջի այս չաստուածուհին: Երկրի վրայ Անահիտ, կամ Արտեմիս, յերկինս՝ Լուսին կամ Փիբէ եւ դժոխոց մէջ Եգատէ:

փառքի այն աղետաւոր վհին եզրը, որուն յատակն է մահ, և ելքն 'ի կորուստ :

Որդի՛ք գիշերոյ, դադրեցէ՛ք 'ի մթան գործելէ. խաւարի մէջ գործողը՝ խաւարի մէջ կը կորսուի :

Խաւարը կը մեկնի, մթութիւնը կը փարատի, աշխարհ իր սև պատանքէն կը մերկանայ, արուսեակը կը ծագի, լոյսը կը ճառագայթէ, արեգակն ակնախտիղ վեհափառութեամբ կը փողփողէ երկնից կապոյտ կամարին վրայ :

Ամէն ուրե՛ք լուսաւորութի՜ւն :

Սակայն վատը, կը շարունակէ իր խաւարային գործերը. ինչպէս 'ի գիշերի, նոյնպէս և 'ի տուընջեան : Գիշերուան մէջ առաջադրած պիղծ խորհուրդները ցերեկը գործադրել կըսկսի : Բարեպաշտութեան կեղծ դիմակով հրապարակ կուգայ, կը սողոսկի, շարունակ կը սողոսկի կործանելու անմեղին տունը, քանդել որբոյն բնակարանը, յափշտակել, աւարել և գողնալ :

Այն աւազակն որ, գիշերային մթութենէն քաջալերուած, անտես 'ի մարդկանէ, խաւարի մէջ պատեր կը ծակէ, դուռներ կը խորտակէ, փականքներ կը բանայ, միշտ լռելեայն, միշտ երկիւղիւ. սարսափներէ պաշարուած հոգին բերանը կուգայ աւար մ'ընելու, կամ գողնալու : Այն աւազակը կ'ըսեմ՝ չ՛է

այնչափ վտանգաւոր, չ՛է այնչափ անողոք, քան այն՝ որ ցերեկը կը գործէ, բազմութեան առջև, հրապարակներու վրայ, և տուներու մէջ, աղօթատեղիները կը յաճախէ, բարեսէր, Աստուածասէր բարեպաշտ մը կը ձևանայ, ամէնուն վշտացը ցաւակցիլ կը յայտնէ, թշուառաց օգնելու փափաք կը ցուցնէ, աղքատներու առատ ողորմութիւնք կը բաշխէ, ի ցոյց մարդկան, քաղցրութեամբ կը խօսի, երբէք չի զայրանար, բնաւ մեկը չի յանդիմանէր, և որով ամենուն սիրտը կը գրաւէ, կը գիւթէ, կը յանկուցանէ, որպէս զի գիշատէ . . . փախի՛ք, հեռի փախի՛ք այն կեղծ առաքինիներէն որոնց բերանէն կիզիչ շոգի մը կ'ելնէ, և ամէն ինչ կը լափէ :

Օրէնքն իր բոլոր խստութեամբը կը ծանրանայ առաջնոյն վրայ. իսկ երկրորդն ազատ կը թողուի . առաջինը կը պատժուի՝ երկրորդը կը վարձատրի, առաջինը անարգանաց և անպատուութեանց կ'ենթարկուի, իսկ երկրորդը պատուօք և յարգանօք կը փառաւորուի :

Ծովասպատակ մ'ինքզինքն Աղեքսանդր Մակեդոնացւոյն կը համեմատէ. համարձակութեամբ մը բացատրելով անոր թէ, ինչ որ դու կ'ընես աշխարհակալ անուամբ, նոյնը կ'ընեմ ես աւազակ անուամբ. սա՛ տարբերու-

թիւնը միայն կայ մէջերնիս՝ որ ես ծովահէն կը կոչուիմ, ու դուն թագաւոր ։

Գիշերուան խաւարն հետզհետէ կը թանձրանար. ամէն ինչ հանդարտութեան մէջ, և ամէն ոք քնոյ կենսատու բազկաց մէջ ընկողմնած կը ննջէր ։

Մուշեղ և Կալինիկէ իրարմէ զատուելէն հազիւ մէկ ժամ անցած էր, աղիողորմ ձայն մը լսուեցաւ որ, կաղաղակէր. «օգնութեան հասէք գող կայ» ։ Ձայնը լսողներն անմիջապէս անկողնէն կը ցատկեն, ոմանք կիսամերկ, ոմանք բոկոտն, ոմանք գլխեբաց, զէնքերնին առած շտապաւ դէպի ձայնը կը դիմեն. գիւղին ծայրի տուներէն մին աւազակներէ կողոպտուած էր ։ Սովորական եղած դէպք մ'է այս որ միշտ կը պատահի, գետնին հաւասարութեամբը, պատին վրայ ահագին ծակ մը բացուած էր, որ տեսնողներուն սարսափ կ'ազդէր ։ Օգնութեան հասնողներէն՝ ոմանք զէնքերնին պատրաստած դուրսը պահապան կը մնան. այլք տան անկիւնները խուզարկել կը սկսին աւազակները ձերբակալելու, այլ 'ի զուր, անոնք արդէն աւարնին ըրած, տան տէրոջ արթըննալուն շշնկոցը լսելնուն՝ մտած ծակերնէն ելած, և փախած էին ։

Ընթերցողն անշուշտ մակաբերեց թէ, սիրահարաց տեսակցութիւնը վրդովող, և Կալի-

նիկէի այնչափ երկիւղ պատճառողն այս աւազակաց մին էր. որ տուներն հետազօտելու թափառած ատեն, Կալինիկէի հօրը տանն առջևի փողոցէն անցած միջոցին, զայն տեսնելով լրտես կարծած էր ։

Աւազակներն հալածելու, և կամ հետքերնին խուզարկելու որոշում կը տրուի. թէև ամենևին հետք մը, կամ նշան մը չը կար հաստատելու թէ, այս ինչ կողմէն, կամ այն ինչ ճամբէն փախած ըլլան ։ Տարաձայնութիւն մը կայ թէ, այս աւազակները Տօրոս լերան ստորոտը բնակող քիւրտերն են, թէև բոլորովին հակառակն ըլլայ և այնպէս գողութիւն մը պատահած ատեն աճապարանօք Եփրատայ անցքը [1] կը դիմեն աւազակաց ճամբան կտրելու. որուն համար այս անգամ ևս եօթ սրտոտ երիտասարդներ լաւ մը զինուած, գիշերային չարագոյժ մթութեան մէջէն լեռնային ճամբով Եփրատայ անցքը պաշարել փութացին ։ Տաժանելի և վտանգաւոր ճամբոր-

[1] Անցք, (կէչիտ) կ'ըսուի այն տեղւոյն, որ գետին երկու կողմերն հարթ ըլլալով ջուրերը կը տարածին, կը լայնան. ու կը սղանան ։ Ամառ ատեն ձիով, լողալով կամ ոտքով ալ կրնայ անցնուիլ. ոտքով անցնողները բոլորովին կը մերկանան հանդերձնին գլուխնին կապելով, տեղ տեղ քալելով, տեղ տեղ ալ լողալով կ'անցնին ։

դութիւն մ՚է այս․ անտեղի, և ապարդիւն․ է՛հ, եթէ երիտասարդները իրենց եռանդը չափաւորել գիտնային, եթէ իրենց աշխոյժն ու կորովը պատշաճի բարւոյն և օգտակարին 'ի գործ ածէին, ինչո՞ւ համար ազգերնիս նըկուն և իրենք թշուառ ըլլային ։

Գիշերուան եօթերորդ ժամն էր․ արագ քայլերով երկու ու կէս ժամէն հազիւ պիտի կարենային հասնիլ 'ի Բոկուկ․ որ է Տօրօս և անտի Տօրօս լերանց անցքը ։ Երբ Բոկուկն արտասանեցի դարձեալ զձեզ յիշեցի ո՛ դըժբաղդ հայուհիք, ձեզ՝ որ խեղճութեան, ու թշուառութեան կենդանի տիպարն եղած էք․ կը յիշեմ միշտ, և երբէք չը պիտի մոռնամ այն աղետալի օրը, երբ առաջին անգամ արտասուալից աչերով ականատես եղայ ձեր վշտակրութեանց աղեխարշ մէկ տեսարանին, որ ինձ անհնարին կը թուէր ։

Նոյեմբեր ամսոյ վերջերը․ չորս մանկամարդ կիներ, առաւօտեան ութերորդ ժամուն, գիշերային ցրտէն սարսռալով խաւարին մէջէն ստուերներու պէս պատուհանիս առջեւէն սահելով անցան․ —ուր կ'երթային, —չ'էի գիտեր ։

Կէս օրին ատենը տեղատարափ անձրեւ մը սկսեց, որ մինչև երեկոյ տեւեց ։ Այս միջոցին մարդերու խումբ մը ծածքերու տակ բազ-

մած, սիկարնին վառած, հեղեղին նայելով կը զուարճանային, կը շաղակրատէին, ու բարձրաձայն կը ծիծաղէին ։ Կամաչեմ ըսելու թէ․ այն չորս կիներուն երկուքին այրերը այս խումբին մէջն էին ։

Երեկոյեան տասներորդ ժամուն սենեակս քաշուած Տելեմաք կը կարդայի, ճիշդ այն տեղը, որ Տելեմաք Եւխարիսի սիրահարելով ալ Մենտորի խրատուցը չէր անսար ։ Ներքին մղմամբ մը աչքերս գրքին վրայէն լեռան ճամբան դարձան, Չորս մեծադեզ փայտի բեռներու շարժիլը տեսայ, սակայն գրաստներու վրայ բեռցուած չէին․ և ոչ ալ մարդիկք կ'երեւային, հետաքրքրութիւնս շարժեցաւ․ սպասեցի՝ և մօտեցան . . . ի՛նչ աղեդալար տեսարան էր այն Աստուած իմ ։

Կաղնոյ ոստերու, և վայրի հաճարներու ահագին բեռներ կռնակնին շալկած կորաքամակ կը քալէին, կամ սանկ ըսենք, դողդոջ քայլերով կը գլորէին, ու մերձ ընկճիլ այն խոնաւ փայտերու դեզին տակ, զոր անձրեւն առաւել ևս ծանրացուցած էր․ և ըստ իւրեանց պարծանաց, քթերնին գետին կը կպչէր, բեռան ամէն կողմերէն ջուրեր կը վազէին, անձրեւախառն քիրտը դէմքերնին ողողած՝ ուղխորէն կը հոսէր, թուխ կապոյտ, կամ ճիշդըն ըսենք, փոկիգոյն առած էին, պատառա-

տուն ցնցոտիները. որոնց ձեւն՝ ու գոյնն որո՞շել անհնար էր, ոտքերէն բզկտուած մերկութիւններն կ'երեւէր, բոկոտն կը քալէին. անպիտան տրեխներն որոնք անգործածելի եղած էին, բեռան կողմնակի առասաններէն կախուած կը ճօճէին. մինչեւ սրունքնին ցեխերու մէջ թաթխեալ քայլ առնելու շատ նեղութիւն կը կրէին, ոտքերնուն տակը այտուցներով ծածկուած էր, տեղ տեղ քարերէ եւ փուշերէ վիրաւորուած արիւն կը հոսէր, չարաչար հոգնած կերեւէին, ուժերնին սպառած՝ վատակարեկ եղած էին, թէեւ քայլերնին փոխել կը ճգնէին, բայց չէին կրնար յառաջել . . . :

— Որո՞նք են այս եղկելիները:

— Այն չորս մանկամարդ կիներն, որ առաւօտեան ութերորդ ժամուն անցնելնին տեսանք:

— Ո՞ւստի կուգային:

— Լեռնէ՛ն, ծառերու ոստեր հաւաքելէն, հողերը բրելով խոտերու արմատներ ժողվելէն, որպէս զի իրենց. եւ իրենց զաւակաց սրտահար մարմինը տաքցունեն ձմրան խստաշունչ եղանակաց մէջ, եւ իրենց հանապազօրեայ սնունդը, անժուր ապուրն եռացունեն:

Այս գիւղն փայտի կտրուանքն ստանալու համար, ի՛նչ տաժանելի աշխատանաց եւ վտանգաւոր ճամբորդութեանց կենթարկուին. եր-

բեմն Եփրատայ բարձանց շաւիղներէն, երբեմն ափափայ ժայռից ոլորտներէն, սարաւանդաց գերբուկներէն քալել՝ որ անզգոյշ քայլ մը. սահիլ մը բաւական է գլինք Եփրատայ անողոք ալեաց ծոցը կենդանւոյն թաղելու, կամ մարմնոյ բեկորները չեշտաւոր սարերաց վրայ տարածելով ագռաւաց կերակուր ընելու:

Աւա՜ղ, վէպ մը չէ այս, այլ ճշմարտութիւն մը, դժբաղդաբար կատարուած իրողութիւն մ'է . . . . : : Եղբա՛յրք իմ, խնայեցէ՛ք ձեր ամուսնոյ. գթացէ՛ք:

Միայն կենաց վտանգն ըսի, սակայն ուշիմ ընթերցողն անշուշտ մակաբերեց թէ, անմարդի լերանց մէջ ուրիշ վտանգներ ալ կրնան պատահիլ, վտանգներ՝ որոնք բացատրելու ոչ կամք ունիմ եւ ոչ հաճութիւն, այսչափը միայն կըսեմ թէ, կան աւազակներ, քրդեր, որսորդներ, ծերպարնակ գազաններ, եւ վերջապէս լերանց խոռոչներն իրենց բնակարան ընտրած զարմանալի գայլեր . . . . կը մատնենք անմեղ եւ անզօր գառներն գիշատիչ գայլոց ճիրաններուն:

Աւազակաց անցը արգիլելու աճապարող երիտասարդաց խումբը, մէկ ժամ տաժանելի ճամբորդութեամբ, Միտառուն գիւղի դիմացը հասնելով, տխրութեան քիչ մը հանգչելու համար դադար առնուլ:

Թէև չենք կրնար առանց Եփրատայ սպառնալից դողօջներէն ակնածելու Միատուն մըտնել. սակայն և այնպէս մեր բարձր դիրքէն կրնանք զայն ուշի ուշով դիտել, մինչև իսկ տուներուն ներսն, ու սենեակներուն մէջ նայիլ: Այս գիւղը Զմշկածագ գաւառին կը վերաբերի, Տօրօս, և անտիտօրօս լերանց շըղթայներուն մէջ Եփրատ գետէ շուրջ 30 քայլ հեռաւորութեամբ, Բաց բերան լեռնակին զառիվայրին վրայ հիմնուած է:

Քանի տարիներ առաջ այս գիւղը արգահատելի կացութեան մը մէջ կը գտնուէր, քրթերուն հարստահարութեանցը տակ ճնշուած ըլլալով, բռնութեամբ ծանր տուրքեր կառնէին այս աղքատ գիւղացիներէն, և գրեթէ քրթերուն սեպհական կալուածը դարձած էր:

Իր անուանն անյարմար դիրք մ'ունի, այսինքն գիւղ մ'ըլլալով, երկրագործութեամբ ապրելու միջոցներէն զուրկ է. իր շուրջը պատած են ահագին լեռներ, գերբուկ սարեր, և ափափայ ժայռեր: Այս գիւղին տեղն այնչափ խոր է, որ ծովուն անդունդին հետ կըրնայ համեմատիլ, որուն համար կէս օրէն առաջ, և ետինքէն յետոյ արև չեն տեսներ: 55 տուն հայերէ կը բաղկանայ 372 բնակիչներով, որոնց 207 արական և 165 իգական սեռէ են: Փոքրիկ քարուկիր եկեղեցի մ'ունին

Տիրամայր անուամբ, և երկու քահանայ. ունին նաև դպրոց մը և դասատու, ուր կուսանին 65 երկսեռ աշակերտներ, կարդալ, գրել, թուաբանութիւն ևայլն: Գիւղացւոց նիւթական վիճակը ոչ լաւ է, ոչ յոռի, կերթան քաղաքներու մէջ շահելու, կուգան գիւղին մէջ վատնելու:

Այս գիւղին մօտն է Եփրատայ[1] Նաւահանգիստներէն մին, սակայն գիշեր ատեն նաւագնացութիւն չըլլալուն համար, առանց նաւահանգիստն իջնելու, կեթկտուկ ըսուած այրին ստորոտէն անցնելով ուղղակի անցքը դիմեցին, գիշերուան տասներորդ ժամն էր երբ

---

[1] Նաւահանգիստ, նաւագնացութիւն բառերէն ընթերցողը չի սխալի կարծելով թէ, իրօք նաւահանգիստ կայ, եւ կամ օրինաւոր նաւագնացութիւնք. նաւահանգիստ ըսածս, երկու թթենի ծառոց շուքերն են. եւ նաւակ ըսուածն ալ տաշտաձև վարքա մ'որ ոչ զեկ ունի, եւ ոչ կարգաւորեալ թիէր, ձող մ'եւ եւ ցորենի թի մ'ունի. մէկ կողմէն միւսն ուղղակի ջուրը կտրելով չը կրնար անցնիր. աջ կողմէն կը թողուն վարքան՝ որ քառորդ ժամ ջուրն 'ի վար երթալով ձախ կողմն ելնէ. որով շատ անգամ վըտանգներ, կենաց կորուստներ կը պատահին. նաւավարները չի կարենալով ձողը գործածել, հոսանքը կը յափշտակէ զվարքան կը տանի, կամ կը շրջէ՝ կամ քարերու զարնելով կը խորտակէ:

անցքը պաշարեցին, ամէն կողմ հետազօտեցին, մարդ չը տեսան, հետք մը չի նշմարեցին։ Սիպտիկու դիմացէն դէպ ի Բոկուկ դիմեցին. Սիպտիկին խեղճ կանանց ուխտատեղին է, երբ լեռնէն փայտ տանել կուգան, այս ժայռէն իրենց հառաչանաց արձագանքը կը լսեն։ Այս արձագանք տուող ժայռը այր մ'է. հեռուէն նայելու ատեն այրին բերանը որրանի ձեւով քար մը կը նշմարուի. արձագանքը խիստ մաքուր և երկարատև է։

Մինչդեռ Կապոյտ Ջուր կոչուած գետակին դիմացէն կ'անցնէին, Ջերմուկայ բաղանեաց աւերակացը մէջէն ոտից քարերու բաղխման ձայն մը լսեցին, ուշադրութեամբ ունկնդրեցին աչքերնին անքթիթ ձայնին յառած, տեսան հսկայաձեւ ստուերի մը շարժումը՝ որ փլատակաց խութերուն մէջէն երբեմն կ'երեւէր, երբեմն կը ծածկուէր։ Սարսուռ մը պատեց զիրենք, հուժկու բազուկնին թուլցաւ. հօտին մէջ գայլ տեսնուելուն նման ասոնք ալ իրարու քով խմբեցան. Նախապաշարումն երեւակայութիւննին վրդոված էր. ուրուական կարծեցին զայն, և սարսափեցան, զարմանալին այս է որ. զգացումնին իրարու յայտնելէ կամաչէին, թէև ամենքն ալ միևնոյն զգացմամբ, այն է երկիւղի համակեալ էին։ Ծանրաքայլ կը յառաջէին, առանց բառ մ'արտա-

սանել համարձակելու, բաւական մօտեցան, ուրուականին մարդ մ'ըլլալն որոշակի տեսնուեցաւ, որով երկիւղնին փարատելով ազատ շունչ առին. կուրծքերնին ճնշող ծանրութենէն թեթեւցան. զարմանալի՛ բան. թշնամոյ դէմ խիզախելու համար սրտերնին կ'եռար, ու կը բորբոքէր. մտացածին ուրուականի մը երեւոյթէն, եռանդնին կը մարէր, զօրութիւննին կը սպառէր, ու արիւննին կը սառէր։ Եթէ նախապաշարմունքն աւելորդապաշտութեամբ չի սնանէր, իւր ազդեցութիւնը շուտով կը սպառէր։ Տգիտութիւնը աւելորդապաշտութեան ծնողն է, նախապաշարմունքն ալ դայեակը։

Ընկե՛րք իմ, ըսաւ ամենէն սրտոտը, բընտրուածնիս գտանք. ահա՛ աւազակաց որջը, և ինչպէս որ կը տեսնէք, անոնցմէ մին ալ՚ի փախուստ կ'աճապարէ, բայց բարեբաղդաբար այնպիսի խորտուբուրդ տեղ մ'ինկած են, որ փախչիլ կարենալու համար արեգական կը կարօտին, օ՛ն պաշարենք ամեն կողմէն, կենդանի կամ մեռեալ ձերբակալենք։

Այս համառօտ խօսքերը խորին տպաւորութիւն մ'ըրաւ ամենուն վրայ, սիրտ առին քաջալերուեցան, օ՛ն պատենք ըսելով իրարմէ զատուեցան, և ճիշդ զինուորական դրութեամբ բաղանիքը պաշարեցին։ Այս հանքա-

յին բաղանիքը որ Ջերմուկ կը կոչուի, տաք ջուրի աղբիւր մ'է, որ քարի մը տակէն կը բղխի, որոյ վերայ նախնիք փառաւոր շէնք մը կառուցած են եղեր ինչպէս որ աւերակները կը ցուցնեն. և որուն քարափոր աւազաններէն մի քանին դեռ կեցած են. կ'երևի թէ ժամանակաւ Եփրատ գետ Ջերմուկէն բաւական հեռաւորութեամբ կ'անցնէր, որով կարողացած են բաղնիքն հիմնել: Այժմուս Եփրատայ ալիքները աւերակաց կը բաղխէն. և մնացորդները ալ հետզհետէ կը քայքայեն, և աղբիւրն հազիւ երկու քայլ հեռաւորութիւն ունի գետէն. շատ հաւանական է թէ քանի մը տարիէն բոլորովին անյայտ ըլլայ Եփրատայ ջուրերէն ծածկուելով:

Մարդն ամենայն հանդարտութեամբ կը քալէր, թէև զէնքը պաշարողներ կը տեսնէր, բայց և այնպէս ամենևին անվրդով հարթ տեղ մ'ընտրեց և կեցաւ. կ'երևար թէ նստիլ կուզէր, վասն զի ծռելով գետինը դիտեց. զի մի անհանգիստ ընող իր մը գտնուի, բայց չի նստաւ. ոտքի վրայ կ'սպասէր. պաշարողները կը յուսային թէ աւազակին ընկերները վերջապէս պիտի ստիպուին յարձակում տալ, կամ փախչիլ. և ոչ մին պատահեցաւ, քարնկեցի մը հեռաւորութիւն հազիւ մնաց իրենց. և աւազակին միջոցը: Զայրոյթնին կը դրդուէր տեսնելով եօթ մարդոց դէմ մարդ մը միայն կանգնած, իր անխռով երևոյթովը զիրենք կը ծաղրէր:

— Ո՞վ ես դու աղաղակեց վերջապէս առաջին անգամ ընկերները քաջալերող անձը. մա՛րդ՝ թէ ոգի, բարեկա՞մ թէ թշնամի:

— Բարեկամ, պատասխանեց:

— Մենք այդ բարեկամութեան պատիր անունէն խաբուողներէն չենք. ճշմարիտն ըսէ մեզ եթէ անձդ ազատել կուզես, ո՞ւր են ընկերներդ, և ո՞ւր պահած էք գողցած աւարնիդ:

Հինգ վայրկեան լռութիւն տիրեց, կերևար թէ մարդն այս խօսքերէն յուզեցաւ:

— Կարծեմ կը սխալիք որդեակներս. ըսաւ, ես աւազակ չեմ, այլ բարեկամ մը, և եթէ կ'ընդունիք հիւր մը:

Իր արտասանութեանը մէջ այնպիսի քաղցրութիւն մը, և այնպիսի խանդաղատանք մը կար, որ երիտասարդները պահ մը շուարեցան և կարծես զղջացին այնպիսի խիստ հարցում մ'ուղղելնուն վրայ:

Այս տպաւորութիւնն երկար չի տևեց, վասն զի գիտէին թէ շրջակայ գիւղացիներէն ոչ ոք կը յանդգնէր նոյն պահուն հոն գտնուիլ. նոյնպէս ճամբորդ մ'ալ անհնարին էր այս ահաւոր աւերակաց մէջ ապաստանիլ,

մինչդեռ կրնար մօտակայ գիւղերէն մին եր-թալ. ուստի մէկերնին գոչեց «Այդ խաբեբայ խօսքերուն չենք կրնար համոզուիլ. քաղցրաբանութեամբ զմեզ որսալ կուզես որպէս զի ժամանակ շահիս ընկերներդ փախցունելու. մ՛հ, թշուառակա՛նդ դո՛ւ, օ՛ն ընկերք, պատենք»: Մարդն ամենայն հանդարտութեամբ նստաւ :

Արեգն ու լուսինն իրենց առօրեայ շրջանին մէջ, մէկ ժամ միայն հազիւ կըհաճին լուսաւորել այս ծանրատաղտուկ հովիտս, որով միշտ տխուր և սգատեսիլ երեւոյթով մը պատած է :

Լուսնի վերջին քառորդ մահեակը, Տօրոս լեռան գագաթէն հինաւուրց ծերունւոյ մը նման տժգոյն դիմօք կը դողդոջէր, իր աղօտ շառաւիղներու ցոլմամբը կը ջանար ամոքել այն թանձր խաւարն, որ կարծես յամառելով արշալուսոյ տեղի տալէ, հետզհետէ կը թանձրանար : Լուսնի այցելութեան ժամն էր :

Առաւօտեան աստղը, զայրացած լուսնի պարտազանցութենէն, անոր դանդաղ ընթացքը կշտամբելու համար կը փութար պաշտօնազիրկ ընելով, հալածել զինքն այն ընդարձակ ասպարէզէն, որուն մէջ ստեղծչին հզօր ձեռամբը կարգուած էր «լուսատու գիշերոյ»:

Արշալոյսը կը մօտէր :

Թշուառներու հեղինակին բամբին նման,

«իրիկունին պէս առաւօտն ալ ճիւաղներ ունի» ձորամէջ վայրս արդէն ճիւաղներու տարտարօսներ : Քանի որ երեւակայութիւնն է ճիւաղներու ստեղծիչը, չենք վարանիր ըսել թէ, լեռանս զառիթափները, սարաւանդները, ճեղքերը, այրերը. խոռոչները, խութերը, խաւերն ու ծալքերը ճիւաղներով լի էին, քար մը, թուփ մը, մացառ մը, վիթխարի ուրուականներ էին. Ջղջկանց կռինչը, թռչնոյ մը ճիկը, ճագարի մը մայիւնը, առուակի մը կարկաչը, զեփիւռի սօսափիւնը «մենէ աղեկ» ներու սարսափեցուցիչ գոչիւններն էին :

Ո՛ անհեթեթ վիժածք մարդկային երեւակայութեա՛ն :

Մի և նոյն տեղը, մի և նոյն դիրքը, նոյն տեսարանը, նոյն առարկաները, ցերեկը զըւարճալի և ակնահաճոյ, իսկ գիշերը սոսկալի և ահագնատեսիլ կերեւէին :

Երիտասարդաց երկիւղը մասամբ իւիք փարատած, երեւակայութիւննին հանդարտած, եռանդնին մեղմած, և զայրոյթնին ամոքած էր : Անծանօթին անխռով երեւոյթը, քաղցրութեամբ խօսիլը, հանդարտութեամբ նըստիլը, և պատկառելի դէմքը իրենց վրայ խոր տպաւորութիւն մ'ըրած էր. վստահութեամբ մօտենալով յարգութեամբ ողջունեցին :

—Աստուած օրհնէ զձեզ որդեակներս,

ըսաւ. Օտարականը, որ շուրջ 40 տարեկան անձ մ'էր. սակայն իր ալեխառն մազերը, երկայն մօրուսը. վշտահար դէմքը, խորշոմեալ այտերը, կնճռեալ ճակատը, այնպիսի տխրալի երեւոյթ մը կուտային, որ տեսնողը 70 տարեկան ծերունի մը կը կարծէր. Վիշտերէ ընդունած այս դիմական պատրանքը ուղղել չուզելով սակայն երիտասարդները «որդեակներս» կ'անուանէր: Երիտասարդք իր շուրջը խմբած տեսնելով սիրտը փղձկեցաւ, սեւ, եւ տխրութեամբ համակեալ աչքերէն քանի մը կաթիլ արտասուք մօրուսին վրայէն սահելով քարերու վրայ ինկան եւ անյայտ եղան. Կծու հառաչքով մը նայուածն երիտասարդաց դարձունելով.— Թերեւս այս դիպուածն ձեզ կը զարմացունէ որդեակներս ըսաւ, անշուշտ հետաքրքիր էք իմանալու թէ, ի՞նչպէս այս ժամուս այս աւերակաց մէջ կը գտնուիմ, եւ թէ ո՞վ եմ: Ձեր հետաքրքրութիւնը գոհ պիտի ընեմ պատմելով ձեզ իմ արկածներս, որով թերեւս տխուր սիրտս քիչ մը սփոփի, եւ ձեզ ալ գուցէ օգուտ մ'ընէ, սակայն նախ կը խնդրեմ ըսէք ինձ թէ, դուք ի՞նչ պատճառաւ այս լեռները կը թափառիք, խօսքերնիդ եւ շարժմունքնիդ կը յայտնեն թէ աւազակներ հալածելու կամ գտնելու ելեր էք. կաղաչեմ ըսէք ինձ թէ այս աւազակներէ ո՞րչափ վնաս կրած էք:

— Գրեթէ հինգ հարիւրի չափ, չարագործները աղքատի մը պատը ծակելով բոլոր պղնձեղէններն ու հանդերձեղէնները կողոպտած են:

Օտարականը մեղմութեամբ գլուխն օրօրեց, անլսելի ձայնով մը, միայն ա՞յդչափ, ըսաւ, եւ յետոյ ձայնը բարձրացունելով:

— Եւ դուք ալ գողցուած ինչքերը յետս դարձունելու համար այս լեռներն ինկած աւազակները կը փնտռէք:— Այո՛. ըսին:— Կարծեմ սխալած էք. թէեւ ոչ ձեր գիւղը, եւ ոչ ալ աւազակաց ուստի գալերնին, եւ ո՛ւր երթալնին գիտեմ, սակայն քանի որ կ'ըսէք թէ կարասիներ են գողցուածները, չեմ կարծեր թէ այն կարասիներովը բեռնաւորուած ճամբորդութիւն ընել համարձակին. ինչ որ է, կրնամ վստահացունել ձեզ թէ, երկու օրէ 'ի վեր այս կողմերը մարդ տեսած չեմ. բացի քանի մը խեղճ կիներէ, որոնք երեկ արշալուսոյ ատենները դիմացի զառի վայրին վրայ, տխուր երգ մ'երգելով փայտ ճարելու կաշխատէին:

— Եւ ո՞ր կողմը կարծէք երթած ըլլան ըսաւ երիտասարդաց մին միամտաբար:

— Այդ հարցմանդ չեմ կարող պատասխանել, քանի որ այդ մասին տեղեկութիւն չունիմ. այս միայն կրնամ ըսել թէ, այդ աւա-

զակները կամ ձեր գիւղի բնակիչներէն են, և կամ ձեր գիւղին վրայ աղէկ ծանօթութիւն ունեցող անձեր, որոնք գողցած ինչքերնուն համար արդէն պատրաստած տեղ ունենալու են: Այդ տեսակ գողերուն «սեւ գողեր» կըսեն, որոնք շատ անգամ կը յաջողին տուն մը մտնել, և հազիւ կրնան 40 փարանոց բան մը գողնալ. ասոնք գիշերը, 'ի խաւարի միայն կըրնան գործել, և այնչափ վնասակար չեն. եթէ մարդիկ զգուշութիւն ընեն կրնան զերծ մընալ ատոնց հասուցած չնչին վնասէն:

Է՜հ, որդեակներս, այս տեսակ աւազակները տեսակ մը թիթեռանց կը նմանին, որոնք միշտ պտղատու ծառոց վերեւը կը թեւարկեն. ըրած վնասնին կամ պտղոց վրայ ծակ մը բանալ, և կամ կեղտ մը միայն թողուլն է: Ծառոց արմատին տակը սողոսկող որդերէն վախցէք, անոնցմէ զգուշացէք որչափ որ կրնաք. անոնք ծանր ծանր կը շարժին, կը դալարին, կ'երկայնան, իբր բարեկամ մեղմաբար ծառերըն 'ի վեր մագլցելով կ'ելնեն, ա՜հ, անոնք են որ արմատը, բունը, ոստերը, տերեւները, ծաղիկներն, ու պտուղները միանգամայն կը կրծեն, կը լափեն, կ'ապականեն, ու վերջապէս կը չորցունեն:

Աւա՜ղ, ես ալ այս չարաճճի որդերուն զոհերէն մին եմ: որուն համար աւելի աղէկ կ'ըրնա-

րեմ գիշատիչ գազանաց հետ լեռանց այրերը բնակիլ, քան թէ անոնց դժոխային չարահնար մեքենաներովը շրջապատեալ ընկերութեանց մէջ: Այս պիղծ զեռունները գուն կը գործեն գտնելու, ակար, դիւրաթեք և մատղաշ բոյսերը, որոնցմով իրենց դիւական անյագ քաղցըն յագեցունելու համար, անխղճաբար անոնց արիւնն ու հիւթը միանգամայն ծծելով կենազրաւ կ'ընեն:

Գիշերը բաւական յառաջացած է. արեգը մէկ ժամէն զմեզ կը բարեւէ. դուք արդէն հոգնած ըլլալովնիդ, քաղցր է ձեզի ձեր ընտանեկան յարկին տակ վերադառնալ. իսկ ես՝ դժբաղդ ուղևոր մ'եմ, տխուր ճամբորդութիւն մ'ընելու դատապարտուած:

Նստէք ուրեմն որդեակներս, և հաճեցէք պատմութեանս ուշադրութիւն ընել:

ԳԼՈՒԽ Ե.

ԳԱՌՆԱԶԳԵՍՏ ԳԱՅԼ

Հայրենիքս է Տ . . . այն երբեմն բարգաւաճ և փառաւոր, այժմ նսեմ և անշուք քաղաքէն հինգ ժամ հեռի Թ . . . գիւղին մէջ

ծնած եմ, հայրս միջին կարգի գիւղացի մ'էր․ ես ծնողացս անդրանիկն եմ, քոյր մը և եղբայր մ'ունէի, քոյրս 14 տարեկան հասակին մէջ ամուսնացած, և եղբայրս դեռ պզտիկ էր, հայրս բաւական արտեր ունէր և պատուական պարտէզ մը, զորս մշակելով գոհ և երջանիկ կ'ապրէինք: Ես հօրս հետ անդաստանները մը-շակելու կ'օգնէի, բայց մայրս տնական գործերով կ'զբաղէր, և փոքրիկ եղբայրս նորածին խաշինքը կ'արածէր, կա՞յ արդեօք աշխարհիս վրայ աւելի փափաքելի վիճակ մը, քան գիւղական համեստ և պարզ կեանքը: Հայրս և մայրս կաթոգին զիրար կը սիրէին, նոյնպէս մեր վրայ գորովագութ սիրով կը գուրգուրային․ փոխադարձաբար և մենք մեր ծնողքը խորին ակնածութեամբ կը յարգէինք:

Մեր այս բարեբաստ վիճակը երկար չի տեւեց․ տարի մը երկինք իր պարգեւը զլացաւ, երաշտութեան պատճառաւ բերքերնիս խիստ նուազ եղաւ․ Տէրութեան հարկը վճարելու և ընտանեաց պարէնը հոգալու համար, հայրս ստիպուեցաւ հազար դահեկանի պարտք ընել, իր մէկ բարեկամէն որ շատ անգամ մեր տունը կը ճաշէր, և իբրեւ առաքինի անձ ամենէն կը յարգուէր: Յաջորդ տարին թէեւ բերքերնիս բաւական առատ եղաւ, սակայն պար-

քերնիս վճարելու չափ հասոյթ չունեցանք․ հայրս թէեւ շատ ջանք ըրաւ այս պարտքը վճարել, սակայն անհնար եղաւ․ հազիւ կրցանք մեր տարեկան տուրքը վճարել և ուտեստնիս ճարել, պարտքին պայմանաժամը լրացաւ, պարտատէրնիս զմեզ նեղել սկսաւ․ շահը կրկնապատկեց, և եռապատկեց, հետեւաբար պարտէզնիս և մէկ կտոր արտ իւր առնելիքը փոխարէն գրաւ պահանջեց․ այս առաջարկութիւնը մեզի խիստ ծանր երեւցաւ, սակայն ստիպեալ էինք ընդունել: Վերջապէս ի՛նչ երկարեմ՛ որդեակներս, այս չարամիտ մարդը վճարելու անկարող ըլլալնուս վրայ յանչափ կ'ուրախանար, թէեւ արտաքուստ յայտնել չէր ուզեր՝ բայց ի ներքուստ կը բերկրէր: Հետզհետէ պահանջքները բարձրացուց, տակոսը բազմապատկեց, շահը գլուխի վերածեց, գումարը ստուարացուց, և օր մ'ալ անխղճաբար յայտարարեց թէ, մեր բոլոր ստացուածքն իր առնելեաց հազիւ կը փոխարինէ, և միանգամայն կ'ստիպէր խեղճ հայրս որ, կառավարութեան ներկայութեամբ վաւերացնէ իր գրաւը, իմացանք թէ, շահամոլի մը գիշատիչ ճիրաններուն զոհ եղած ենք: Հայրս խըստիւ բողոքեց այս անիրաւութեան դէմ, և առաջարկեց որ կալուածներէն մաս մը ծախելով պարտքը վճարէ, և այս առաջարկութիւնն

անմիջապէս ի գործ դնել ուզելով, պարտէզը ի վաճառ հանեց, որն որ առ նուազն երկու հազար դահեկանի արժողութիւն ունէր։ Ա՛հ, չեմ կրնար բացատրել այս վատ կենդանիներուն արարքները։ Ասոնց ի՛նչ տեսակ արարածներ ըլլալն աղէկ հասկնալու համար, պէտք է երեւակայել մարդ-գայլի, մարդ-աղուեսի և մարդ-օձի խառնուրդը։ Հօրս պարտէզը ծախելով պարտքը վճարելու ջանքերն ի դերեւ ելան. պարտատէրնիս ոմանց սպառնալով, զոմանս համոզելով, զայն շողոքորթելով կ'արգիլէր պարտէզնիս ծախելու, և հրապարակաւ կըսէր թէ, «չեմ ուզեր, խղճիս ծանր կուգայ որ այն բարի մարդը իր պարտէզը իմ առնելեացս համար վաճառէ». որոնք որ այս խօսքերը կը լսէին բարի համարում մը կունենային իր վրայ։ Աւա՜ղ, ո՞րչափ կը խաբուէին ամէն անոնք որ, այս խօսքերուն թագուն նպատակը չէին հասկընար։

Երեկոյ մը հայրս տրտմութեամբ վառարանին քով նստած կը մտածէր, մենք ալ իւր շուրջը բոլորած զինքը մխիթարել կը ջանայինք, և մեր խստասիրտ պարտատէրոջ բռնութենէն ազատելու հնար մը կը խորհէինք, այն է ունեցած բոլոր շարժական ստացուածքնիս գաղտնի կերպով ուրիշ գիւղ մը, կամ քաղաքը տանելով վաճառել։ Այս միջոցին ուժգնութեամբ

դուռը բաղխեցին, կայծակէ զարնուածի պէս ամէնքս ալ սարսռացինք, մինչդեռ առաջ ուրախութեամբ կը վազէինք դուռը բանալ, թէ դուցէ օտարական մը, կամ հիւր մ'է զինքը ասպնջականելու շնորհն ունենանք, ես աճապարեցի դուռը բանալ, սակայն բոլոր ընտանիքս ալ ետեւէս դէպի դուռը կը յառաջէր, կարծես ներքին աղետալի բնազդմամբ յուզեալ։ Դուռը բացի, ոստիկանութեան երկու տեսուչներ որոնց խիստ դէմքէն ահարեկ՝ երկու քայլ յետս նահանջեցի, հայրս առաջ անցաւ, գալուստնին ողջունելով ներս հրաւիրեց, սակայն անոնք խստութեամբ պատասխանեցին թէ, իրենք ներս գալու համար եկած չեն, այլ զինքը ներս տանելու համար. այս պատասխանը լսելուն մայրս և եղբայրս լալ սկըսան. Հայրս անոնք հանդարտեցունել ջանալուն հետ՝ կաղաչէր միանգամայն տեսուչներուն, որ բարեհաճին սուրճ մը խմել և հանգստանալ, որոնք պատասխանեցին թէ չեն կրնար հրաւէրն ընդունիլ, այլ պէտք է անմիջապէս առջեւնին իյնալով քաղաք երթալ, եթէ ոչ բռնութեամբ տանելու հրաման ունին, և միանգամայն շարայարեցին թէ, այս ինչ մարդուն պարտք ունենալնուդ համար դատի հրաւիրուած էք։ Հայրս քանիցս առաջարկեց որ գիշերը մեր տունը հանգչին, և հետեւեալ

առաւօտուն պատրաստ է իրենց հրամանին հը-
նազանդելու բայց չ՚ընդունեցին . ոչ մօրս ա-
ղաչանքները , ոչ եղբօրս արտասուքները , և ոչ
իմ համոզիչ խօսքերս ազդեցութիւն մ՚ըրին .
այլ աւելի զայրանալով քաշեցին սեմէն դուրս
ծերունի հայրս , և կալանաւորելով տարին .
Ես ուզեցի հօրս ընկերակցիլ , սակայն հայ-
րըս խստիւ արգիլեց երթալս , և հնազանդե-
ցայ :

Կէտ մը կայ որդեակներս , որուն վրայ ձեր
մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրեմ . այն է
աղքատութիւնը . վասն զի հայերս տէրութեան
օրինաց վրայ բնաւ տեղեկութիւն չունենալով ,
չը կրցաւ իրաւունքը պաշտպանելով չահամելին
անիրաւ յափշտակութիւնները խայտառակել ,
հետևաբար երկչոտ ըլլալով , և ոչ իսկ ար-
դարութիւն պահանջելու և տէրութեան օրի-
նաց համեմատ դատուելու սիրտ ըրաւ . որով
նենգաւորը քաջալերուած , դատաւորաց սխալ
տեղեկութիւններ տալով , և իրողութիւնը ի
նպաստ իւր մեկնելով նենգած էր օրինաց . . . .
այս կէտը կըսեմ , որ աւա՜ղ շատ ուշ տեղե-
կացայ . լաւ ըմբռնեցէք , տիրող օրինաց սկըզ-
բունքներուն տեղեկանալու , անոնց վրայ հա-
սուն ծանօթութիւններ ունենալու մեծ փոյթ
ունեցէք . ժողովրդեան կենսական խնդիրնե-
րէն մէկն է այս , միթէ ասոր պակասութենէն

չէ՞ , որ անխիղճ խորամանկներ կը յանդգնին
չարչարել , ու հարստահարել բարեմիտ , կամ
ճիշդն ըսենք , միամիտ ժողովուրդը , հակա-
ռակ տէրութեան արդարադատ օրինաց , եւ
հակառակ բարեգութ Կայսեր ժողովրդասէր
կամաց :

Կրնաք երեւակայել որդեակներս թէ այն
գիշերը մեր ընտանեաց համար ի՜նչ տխուր
գիշեր մ՚եղաւ . երկրորդ օրը մայրս մեր պար-
տատիրոջ տունը գնաց հօրս համար միջնորդե-
լու . սակայն տունը չի գտաւ . իւր կինն ալ ,
կանանց յատկութեանը հակառակ այսինքն ա-
նողորմաբար խեղճ մայրս կը վռնտէ ըսելով
թէ . «պարտքերնիդ տուէք , ապա դէմս ելէք
խօսելու » : Ամէն կարելի միջոց ՚ի գործ դը-
րինք անիծեալ պարտքերնիս վճարելով հայրս
բանտէն ազատելու , բայց մեր պարտատիրոջ
դժոխային հնարքները մեր բոլոր ջանքերն ՚ի
դերեւ հանեցին , որոյ մի միայն նպատակն էր
մեր ստացուածքը յափշտակել :

Տասներկու օր կ՚ըլլար հօրս մեկնիլը , և
դեռ լուր մ՚առած չէինք . աղաչեցի մօրս հը-
րաման տալ հօրս քով երթալու , թերեւս
պէտք մը , կամ հրաման մ՚ունի տալու ըսե-
լով . մայրս հաճեցաւ , և մինչդեռ կը պատրաս-
տուէի ճամբայ ելնելու , եղբայրս շնչասպառ
վազելով եկաւ , թէ դէպի մեր տունը ձիա-

ւորներ կուգան․ և իրօք հայրս սանող անտունջներէն մին, և քարտուղար մը. ներս հրաւիրեցի զանոնք սուրճ բերել տալով սկսայ քարտուղարէն հօրս համար տեղեկութիւնք խնդրել, քաղցրութեամբ, և կարեկցութեամբ պատասխանեց, այլ աւա՛ղ, ի՞նչ էին իւր պատասխանները․ թէ հայրս քիչ մը տկար է․ թէ իւր բոլոր ստացուածքը պարտատիրոջ վաճառուած է—վաճառուա՛ծ. թէ իրենք կուգան ստացուածքը իր նոր տիրոջ վրայ դարձնելու, և թէ ինքը շատ կը ցաւի այս բանին վրայ․ սակայն պաշտօնին պարտաւորութեանը հնազանդելու համար, ստիպեալ է ծանուցանել թէ, այն վայրկեանիս պատրաստուին տունէն ելլել, և բոլոր ինչքերնին թողուլ․ և յաւելցուց ըսելով թէ, անխիղճ մարդու մը ձեռք մատնուած էք, և թէ ցաւօք սրտի կուգայ ստացած հրամանները 'ի գործ դնելու ։

Ամբարիշտը յաղթանակե՛ց, իր չար նպատակին հասա՛ւ ։

Երեք օրէն հայրս գերեզման դրի, և մայրս ալ ծանր հիւանդութեամբ մ'անկողին ինկաւ ։ Այս միջոցին կրած վիշտերս աննկարագրելի են․ ամենայն ճգամբ կ'աշխատէի մօրս վիշտերն սփոփել, նորա տխուր սիրտը մխիթարել, և ենթարկուած դառն վիճակին մէջ զինքը զօրացունել․ այլ աւա՛ղ, պարտաւորու-

թիւնս ասով չէր լմննար․ մայրս պնակ մը թանի, և եղբայրս պատառ մը հացի կը կարօտէին․ յօժարակամ պատրաստ էի ամենածանր աշխատանաց իսկ տոկալ, եթէ փանաքի վարձ մը տային․ բայց գործ չկար, ակամայ կամօք աչերս դարձուցի դէպ 'ի Բիւզանդեան, մայրս մահուան անկողնոյ մէջ, և եղբայրս որբ ու անտէր թողելով, արտասուալից աչերով հայրենիքէս մեկնեցայ ։

Հազիւ երկու ամիս կար Կ. Պօլիս հասնելս, հայրենիքէս նամակ մ'առի որով կ'իմացունէին թէ մայրս մեռած է, եղբայրս, որ նոյն միջոցին հազիւ 11 տարեկան կար, անոք մնացած է ։ Մինչեւ այս վայրկենիս բարի մարդ մ'էի․ չարութեան զգացումները սրտիս մէջ դեռ մուտ գտած չ'էին․ բայց այս նամակը կարդալէս ի վեր տարօրինակ կիրքեր կը յուզուէին սրտիս մէջ․ չարունակ ներսս պատերազմ մը կար, ստէպ ստէպ կը հառաչէի, և երբեմն ալ տղու մը պէս կուլայի, առանց գիտնալու թէ՛ ինչո՞ւ կուլամ ։ Այս դժնդակ կացութեանս մէջ չարունակ հայրենիքս կ'երազէի, այն հայրենիքն, որ ինձի համար ալ ամեն բան վերջացած էր․ բոլոր այն նուիրական կապերը որովք հայրենեացս հետ կապուած էի, խզած էր մէկ թել մը միայն կը մնար, այն է եղբայրս, զոր կրնայի նամակ մը գրելով քովս բերել ։

Ի՞նչ էր ուրեմն այս բուռն կրիցս շարժառիթը՝ որ կը մղէր զիս հայրենիքս վերադառնալ։

Երբեմն ժամերով սենեակս քաշուած կը խորհրդածէի, կացութեանս բոլոր պարագաները յիշողութեանս մէջ ամփոփելով կը ջանայի բացատրութիւն մը գտնել այս անտեղի զգացմանս, այլ ի զո՛ւր, առաւել եւս կը զայրանայի, անհնարին ցասում մը կզգայի, և բարկութենէս ակռաներս կը կրճտէի. է՛հ, եթէ կարելի ըլլար նոյն միջոցին թեւեր ունենալ, կը թռչէի, անմիջապէս հոն՝ ուր չեմ գիտեր ի՛նչ ընելու համար պիտի երթայի։

Փիլիսոփայք ի զուր կը ջանան նրբին զգայութեանց աղբիւրը գտնել, ի զուր կը յօշոտեն մարդոց գործարանները, անոնց մէջ հետազօտելու, ի զուր կը ճգնին հաստատել թէ, մարդոց զգացումները նրբին գործարաններէ կը բղխին, ինչպէս Արիստոտէլ կը դնէ սիրտը, Պլուտարքոս՝ ուղեղը, Պղատոն՝ արիւնը, Զենոն՝ ջիղերը, Ակմեոն՝ ձգանքները, Սոփոկլեանք՝ մանրաթելք, Լեւկիպպոս՝ մաշկ, Պլինիոս՝ երակք, Դիմոկրատես՝ ոգի, Թեոնոփանես՝ նեարդ, Աւերրոն՝ լեարդ, իսկ ես՝ փորձառութեամբս պիտի համարձակիմ հաստատել թէ, նրբին զգացմունք արտաքին պատճառներէ կը ծնին, և թէ չարութեան զգացման աղբիւրը թշուառութիւնն է,

այն թշուառութիւնը՝ որ տկարը՝ հզօրէն, աղքատը՝ հարուստէն, և ռամիկը խորագէտէն կ՚ընդունի, Բազմադարեան աղէտ մ՚է այս, ժողովրդեան ուսոյն վրայ ծանրացած։ Այս աղէտը բառնալու համար էր ահա որ Քրիստոս աշխարհ եկաւ. այս երկու հակառակ մարմինները հաշտեցունելու համար էր, որ նախատալից խաչը յանձն առաւ. տկարը զօրացունելու, զրկեալը պաշտպանելու, ագահին սորվեցունելու համար էր որ, իւր սուրբ արեան մինչեւ վերջին կաթիլը քամեց։

Պանդուխտ ընկերակիցներս զիս մխիթարելու, վիշտերս սփոփելու համար ամէն ջանք կ՚ընէին, կարեկցութեան բոլոր նշանները կը յայտնէին։ Աղէտալի խումբ մ՚էինք մենք դըժոխ սենեակներու մէջ խռնուած, որոնք ստորերկրեայ բանտերէ աւելի վատառողջ, այրերէ աւելի յոռի նկուղներ էին. անտանոց գոմերը մեր բնակարաններէն նախապատիւ էին, սակայն ստիպեալ էինք այս կենսասպառ որջերուն մէջ բնակիլ, վասն զի մեր վաստակի օրականը հազիւ այսպիսի բնակարան մը վարձելու կը ներէր։

Իմ վիճակս հետզհետէ կը ծանրանար, ոչ գործելու կամք, և ոչ խօսելու ախորժ ունէի, տապուշ մը և կամ հիւանդ մը, այս երկուքէն խառն բան մը կար վրաս. բոլոր մտային ըմ-

բռնումներս, բոլոր խորհրդածութիւնքս մէկ կէտի վրայ միայն ամփոփուած էր, այն է հայրենիքս վերադառնալ, վերջապէս օր մը առանց զգալու, առանց ըրածս գիտնալու, առանց ընկերակցացս հրաժեշտի ողջոյնը տալու, և առանց ճամբու պաշար պատրաստելու յուշակորոյս նաւ մտած եմ:

ԳԼՈՒԽ Զ.

ԾՆՈՂԱՑ ՅԻՇԱՏԱԿԸ, ԿԸ ՓՐԿԷ ՄՈԼՈՐԵԱԼ ՈՐԴԻՆ

Պօսֆորի Դիւթական կառքը ծովուն ալիքները պատռելով, փրփրադէզ կոհակաց վրայէն սահելով կը սլանար. իսկ ես խորշ մը կըծկուած առանց չորս կողմս նայիլ համարձակելու յանցաւորի մը պէս կը դողայի. և թերևս իրօք յանցաւոր մ'էի. բնազդումս մղած էր զիս թէ՝ «գնա՛» բանականութիւնս ըսած էր «կա՛ց». ես բնազդմանս հետեւած էի. ուրեմըն բանականութեանս առջև յանցաւոր էի:

Թէ ծովային թէ ցամաքային ճանապարհորդութիւնքս, առանց դիպուած մը պատահելու լմնցան. և վերջապէս հայրենեացս ան-

չուք տուներուն հողակոյտ տանիքներն երեցան: Այս երեւոյթը ելեքտրական կայծի մը պէս բոլոր ջիղերս սարսեց, նա մանաւանդ հետըզհետէ տեսնուիլ սկսան գերեզմանատան ծառոց նսեմաստուեր սաղարթունքը, որոնք իրենց արմատներուն հետ հողուն մէջ երկնցած այնչափ դիականց աճիւններովը սնած, կարծես կարեկցութեան ոգիէ մը ներշնչեալ սըգատխուր երեւոյթով ոստերնին յերկիր խոնարհած երկիւղածութեամբ կ'արտասուէն:

Ո՛հ, այս ծառոց միայն տակ կը հանգչէին նաև իմ ծնողքս, ծնո՛ղքս, որոնք անգթաբար մեռուցին, որոնց վրէժը լուծելու համար, ծովերն ու ցամաքները, անտանելի խեղճութեամբ ճամբորդեցի. խղճիս հետ պատերազմեցայ՝ ու զայն մեռուցի, որ գորովագութ հայրս այնչափ խնամով 'ի բարին առաջնորդած էր. կրօնքիս սուրբ պատուիրանքները՝ որոնք հօրս ձեռամբ սրտիս տախտակներուն վրայ դրոշմուած էր՝ քանդեցի, եղծեցի, ամբարըշտացայ՝ որպէս զի նոցա վրէժը լուծեմ. ա՜հ, հա՛յր իմ, սիրելի ծնողք իմ, թո՛ղ ձեր ոսկերքը հրճուին, կ'ուգայ ահա ձեր որդին վրէժ պահանջել այն անգգամէն՝ որ ձեր ստացուածքը յափշտակելով տարաժամ մահու մատնեց զձեզ:

Որչափ որ դէպ ի գիւղ կը մօտենայի կերպս

այնչափ կը սատկանար, վրէժխնդրութի՛ւն կը մռնչէի, կորիւններն յափշտակուած առիւծի մը պէս, մեծաքայլ կը յառաջէի վայրկեան մ՚առաջ վրէժխնդրութեանս չանթերը թափել այն ամբարիշտ գլխուն վրայ՝ որ մեր թշուառութեանն հեղինակ, և ծնողացս դահիճն եղած էր։

Գերեզմանատան ստորոտէն կը բաժնուի գիւղին ճամբան, երբ այս տեղն հասայ՝ կանգ առի, ծնողացս յիշատակը, և անոնց խեղճուկ մահը սիրտս կը տրորեր և աղիքներս կը գալարէր. քայլերս ուղղեցի դէպ ի ծնողացս շիրիմը. ո՛հ սրտաճմլիկ տեսարան, հայրս և մայրս իրարու քով ամփոփուած ցրտասարսուռ հողուն տակ կը հանգչէին. սիրտս փղձկեցաւ, աչքերէս արտասուքներ թորել սկսան. ծունր դրի շիրմաց ստորոտը աղօթելու. բայց ո՛ արհաւրա՛ցս, աներեւոյթ ձեռք մը գլխս յետ կը մղէր, հօրս շիրմէն սոսկալի ձայն մը լսեցի որ կ՚ըսէր. «մի՛, մի՛ մերձենար մեր շիրմաց, մի խռովեր մեր ոսկերքը, չար խորհուրդներով պղծեալ սրտովդ մեզ համար աղօթե՞լ կը համարձակիս, մարդասպանութեան վատ գաղափարով աղտեղեալ երեւակայութեամբ մեր նուիրական շիրմաց այցելե՞լ կ՚ուգաս, հեռի՛ . . . .» Ո՛հ որդեակներս, ինչպէ՛ս բացատրեմ այն վայրկեանին կրած սոսկումս,

մազերս քստմնեցան, արտասուքներս ականողիս մէջ ցամքեցան, սիրտս տրոփելէ դադրելով երակացս մէջ փոխան արեան՝ սարսուռ կը քալէր, բոլոր մարմնովս կը դողդողջէի՝ մերձ էի նուաղիլ. ձեռքերով երեսս ծածկած փախչիլ կուզէի՝ սակայն քայլ մ՚առնել անկարող էի. ձայնը կը շարունակէր. «Այդպէս ուրեմն, իմ բոլոր ջանքերս 'ի դերեւ ելան, այնչափ տարիներ զքեզ բարեպաշտութեան առաջնորդելովս, մանկութենէդ 'ի վեր տուած բարի խրատներովս, զքեզ առաքինութեան ճամբուն մէջ կարծած ատենս մարդոց չարագոյնն եղած ի՞նձ կը ներկայանաս, մի՛ որդեակ իմ մի՛, եթէ խղճիդ բարի զգացումները մարեցիր, յիշէ գոնէ հօրդ խրատները. ի՞նչ կը կարծես, մարդ մը մեռցունելով, տուն մը հրդեհելով, ամբողջ ընտանիք մը մոխրոյ տակ թաղելով, մեզի զո՞հ մը, նուիրմո՞ւնք մ՚ըրած կ՚ըլլաս. մեր վրէժը լուծա՞ծ կը համարիս, յիշէ՛ որդեակ իմ, որ միշտ կ՚ըսէի թէ. «իմ է վրէժխնդրութիւն, ես հատուցից ասէ Տէր.» դադրէ որդեակ իմ այդ չար ընազդման հետեւելէ, ամենայն ճգամբ զսպէ այդ վատ կիրքը որ, զքեզ ոճրագործութեան կ՚առաջնորդէ։ Մեզի չարիք ընողներն օրհնէ որդեակ իմ, բարի ըրէ անոնց որ զմեզ թըշուառացուցին, համբուրէ այն ձեռքերը եթէ

կրնաս, որ զմեզ մահացուցին . . . , . . . » Գուցէ անհաւատալի թուի ձեզ. գերեզմանի մը խորերէն, ոսկերց անզգայ կոյտերէն այսպիսի ձայներ լսուիլ, և սակայն լսեցի ։ Ծնողացս ներկայ յիշատակը խղճիս յարութիւն տուած էր,

Երեսներս հողուն քսելով շնորհակալ եղայ նախախնամութեան որ զիս վրէժխնդրութեան չար ոգիէն ազատեց, շնորհակալ եղայ նաեւ ծնողացս որ, իրենց նուիրական շիրմաց ազդեցութեամբը զերծ պահեցին զիս առաջադրեալ եղեռնական նպատակէս ։

Կիրքերս ամոքած՝ սիրտս թեթեւցած ։ բոլորովին նոր մարդ մը եղած հանդարտութեամբ դէպի գիւղ ուղեւորեցայ այն դիտաւորութեամբ որ, գիշեր մը միայն հայրենեացս հիւր մնամ, երկրորդ օրը վերջին ողջոյնս տալով եղբայրս առած մեկնիմ։

Գիւղէն քառորդ մը հեռի, սաղարթադեղ ծառոց հովանւոյն տակ, աղբերակի մը գլուխը հանգչեցայ, սպասելով որ գիշեր ըլլայ, վասն զի ցերեկ ատեն գիւղ մտնելէ կը խորշէի ։ Գիշերուան ժամը երկուքին ազգականացս մէկուն տունն օթեւանեցայ, և անմիջապէս եղբայրս հարցուցի աղաչելով որ քովս բերեն զայն. սակայն քանի՛ մեծ եղաւ զարմանքս, երբ ոչ ոք հարցմանցս պատասխանեց, ամենքն

ալ գլխեկոր առջեւնին նայիլ սկսան. —Ի՞նչ միթէ եղբա՞յրս ալ մեռաւ. — Ո՛չ, պատասխանեցին, — ո՞ւր է ուրեմն ինչո՞ւ չերեւնար, — Քանի օրէ ի վեր անյայտ եղած է ըսին. ա՜հ Աստուած իմ Աստուած իմ, աղաղակեցի մոլեգնաբար գլխուս մազերը փետելով, եթէ այս աղէտն ալ ինձ պատրաստած էիր, աւելի լաւ չէ՞ր ծովուն խորերը թաղուէի, կամ վայրի գազաններէն բզկտուէի, քան թէ տեսնէի իմ միակ սիրելոյս ալ կորուստը ։ Աշխարհս դըժոխք կը թուէր ինձ, և մարդիկ սատանան էր ալ կեանքէս զզուած էի. ա՜հ, երանի թէ՛ ծընողացս գերեզմանին այց եկած չըլլայի, որմէ բղխած այն ահաւոր խօսքերը դեռ կը հնչէին ականջիս, «համբուրէ այն ձեռքերը եթէ կըրնաս որդեակ իմ, որ զմեզ մահացուցին» բաբէ՛, ի՛նչ կրանիթէ սիրտ կրելու է մարդ որ, այսչափ աղէտից տոկալ կարենայ ։

Ամեն կողմ հետազօտեցինք, ամեն կարելի միջոց ի գործ դրինք եղբայրս գտնելու, կամ գոնէ տեղեկութիւն մ'առնելու, բայց ի զուր, ոչ ոք գիտեր ի՛նչ ըլլալը, բարեկամիս մէկուն տունը կը բնակէր, առաւօտ մը եկեղեցի կերթայ, և ալ չի վերադառնար ։ Արդէն ըսի թէ, քոյրս ամուսնացած էր, սակայն մոռցայ ըսել թէ մեր գիւղէն 14 ժամ հեռաւորութեամբ ուրիշ գիւղ մը կը բնակէր, մեր ա-

ղեալի օրերուն մէջ, իւր այրն ալ ձախորդութիւններու հանդիպած ըլլալով, մեզի օգնելու անկարող կը գտնուէին. յուսոյս վերջի ապաստանը քրոջս տունը միայն կը մնար, պատրաստուեցայ հոն երթալ եղբայրս գտնելու, և կամ քոյր և եղբայր ի միասին ողբալու. Նոյն միջոցին, որ ճամբայ ելնելու վրայ էի, գիւղին պահակը եկաւ ինձ իմացունել թէ, «Գ... աղան ձեզ տեսնել կուզէ, կարեւոր ըսելիք մ'ունի». այս պիղծ անուան արտասանութիւնը լսելուս սոսկացի, ես որ միշտ զգուշացած էի զինքը տեսնելէ, իւր դրան առջեւէն անցնիլ անգամ չէի ուզած, լրբաբար մարդ կը խրկէ զիս կանչել թէ, կարեւոր խօսելիք ունի. ա՜հ, վատը դեռ չի յագեցա՞ւ այնչափ աղէտք մեր վրայ կուտելէ, մեր բոլոր ստացուածքը կողոպտեց, խեղճ հօրս, հազար գահեկանի փոխան, այնչափ տարիներէ ի վեր ճակտին քրտինքովը գոյ ածած քսանեւհինգ հազար գահեկանի արժողութեամբ ստացուածքը յափշտակելովը, կաթուածահար մեռուց. հէգ մայրիկս, հօրս ողորմելի մահուան կսկիծովը, և յետին ծայր թշուառութեան ենթարկուելով ծիւրական տխուր մահացուց, եղբայրս աներեւոյթ, և զիս տարագիր ըրաւ. ալ ի՞նչ կուզէ ինձմէ. — ըսէք թէ չի գար պատասխանեցի պահակին։ Անոնք որ, սոյն միջոցին քովս կը

գտնուէին, սկսան մեղադրել զիս, և յորդորել միանգամայն որ երթամ. աւա՜ղ խեղճ ու տգէտ ժողովուրդ. ի՞նչ կըսէին ասոնք, — թէ այն քրիստոնեայ բարեպաշտ մ'է, թէ առաւօտ երեկոյ միշտ եկեղեցի կը յաճախէ, թէ բարի սիրտ մ'ունի և բոլոր գիւղացիները կը սիրէ, թէ՛ աղքատաց ողորմութիւն կը բաշխէ, թէ՛ խոնարհ և առաքինի անձ մ'է, թէ կամաւ մէկուն չարիք չի հասուցանէր, ևն. ևն.

Կեղծ ու պատիր երեւոյթներով, այս ամէն առաքինական ձիրքերով զեղեալ կը ներկայացունէր ինքզինք ժողովրդեան առջին, որոնք պարզմտաբար խաբուելով, իբրեւ բարեպաշտ մը կը յարգէին, և կը վստահէին, չը գիտէին թէ, այն անմեղ կարծեցեալ գառնը, գառնազգեստ գայլ մ'է որ, չողոմաբար զիրենք շոյելով հետզհետէ կը գիշատէ։

Քրիստոս գիտնալով այսպիսի չարագործ անձանց բարեգործի երեւոյթով անմեղներու հասուցած չարիքները, զանոնք հրապարակաւ խայտառակելով, կը պատուիրէ չը խաբուիլ այնպիսիներէ, կը խրատէ միանգամայն աղաւնոյ միամտութեան հետ, օձի խորամանկութիւնն ունենալ։

1874 տարիէ 'ի վեր ժողովուրդը դեռ չի գիտցաւ այս երկու յատկութիւնքն իւր վրայ կեդրոնացունել. վասն որոյ միշտ աղաւնոյ մի-

ամուլթիւնն ունեցողները՝ օձի խորամանկութիւնը ունեցողներէն խաբուելով չարաչար վընասուած են ։

Պահակը ճամբեցի, առանց զիս յորդորողներուն ուշադրութիւն ընելու տրեխներս կը գնէի, յանկարծ ձայն մը.—սիրելի պարոնս բարի եկեր ես, հազար բարի. եկու զքեզ համբուրեմ, ա՛հ զաւակիս պէս կը սիրեմ ըսելով՝ դէպի ինձ կը մօտենար. ճանչցայ այս ձայնը տեսայ այն դէմքը որմէ անհնարինս կը գանէի ։

— Հեռո՛ւ. աղաղակեցի ճիրաններէն ազատելու համար քանի մը քայլ յետս ընկրկելով, հեռո՛ւ անօրէն ։

— Այս աշխարհիս ընթացքն այսպէս է պատասխանեց ամբարիշտը, սիրոյ փոխարէն ատելութիւն կը հատուցանեն. բայց հոգ չէ ես դարձեալ զքեզ սիրեմ. եկուր տունս երթանք սուրճ մը խմէ հանգստացիր, կ'երեւի թէ հանգստութեան պէտք ունիս ։

Համբերութիւնս սպառեցաւ, սիրտս կ'եռար, երակներս ուռան պէս կը բաղխէին, աչքերս կը մթագնէր. այն աղետալի վայրկեաններուն մէկուն մէջ կը գտնուէի, որ մարդս ինքնուրոյնութիւնը կը մոռնայ, զգայարանքները կը կապուին, հետեւաբար ամէն տարակոյս մութ քօղով մը կը ծածկուի, եթէ այս

վայրկեանը քիչ մը աւելի երկարէր ամեն բան պիտի լմննար ։ Բուռն կերպով ցնցուեցայ, «հա՛յր իմ, հայր իմ աղաղակեցի համբոյրը մերձ է» ։ Անմիջապէս թեւս ցնցեց ամբարիշտը. «Սիրելի պարոնս ի՞նչ կըլլաս» ըսելով ։ Այս համառօտ խօսքը թունաւոր սլաքի մը պէս սրտին խորը մխուած էր ։

— Ո՛չինչ պատասխանեցի ։

— Ուրեմն որ չես հաճիր մեր տունը գալ շնորհ ըրէ քիչ մը առանձնանանք քեզի ըսելիք ունիմ ։

— Առանձնանալու պէտք չունիմ, և ոչ իսկ ըսելիքդ լսելու, մնաք բարեաւ բարեկամներ, և սկսայ հեռանալ ։

— Կեցի՛ր, գոչելով շտապաւ ետեւէս վազել սկսաւ ։

— Բայց ինձմէ ի՞նչ կուզէք ըսի բարկութենէս ակռայներս կրճտելով ։

— Պօլիսէն կուգաք այնպէս չէ՛ ։

— Է՛յ ի՞նչ կայ ։

— Յուսամ գործերնիդ յաջող գնաց ։

— Թերեւս ։

— Թէեւ կը ցաւիմ ըսել, սակայն ի՞նչ ընեմ այսպիսի հաշիւները եթէ չի փնտռեմ ինքզինքս կը կործանեմ ։

— Ի՞նչ ըսել կուզէք ։

— Ըսել կուզեմ թէ, հօրդ պարտքէն մը-

նացած թերէհաշիւ մը կայ զանիկայ մաքրենք։

Եթէ զիս թնթանօթի բերան կապէին այսչափ սարսափ չէի զգար, այլ բարկութեանս թափը չի կրնացի զսպել, յարձակեցայ անօրէնին վրայ և ոտքերուս տակն առի։ Բոլոր ուժովը օգնութիւն կաղաղակէր, ամէն կողմէն վրաս թափեցան զիս բռնեցին, դողդղալով ելաւ կանգնեցաւ, իր մշակներէն մին, որ նոյն միջոցին հոն կը գտնուէր քովը կանչեց, ականջին բան մը փսփսաց մշակը շտապաւ գիւղ գնաց. քանի մը րոպէէն ոստիկանութեան երկու զինուորներ վազելով եկան, առանց բան մը հարցունելու զիս անխնայ ծեծել սկսան. յետոյ ձեռքերս յետևս կապելով դէպի գիւղ տարին, ըսելով թէ, այս սրիկան այն բարի մարդը մեռցունելու դիտաւորութիւն ունէր պէտք է պատժուի։

Ներկայ եղողներէն շատերը զիս ազատելու ամէն ջանք կընէին, և անմեղութիւնս հաստատելու համար թէ կը բողոքէին, և թէ կաղաչէին։ Այս բարեմիտ գիւղացիները նապաստակներուն նման երկչոտ, զինուորներուն սպառնալից ձայները կահաբեկէր զիրենք, լեզունին կը կարկէր խօսելու ատեն կը թօթովէին, հետեւաբար ասոնց ոչ բողոքները, ոչ աղաչանքները արդիւնք մ'ունեցան, և զիս կալանաւորելով բանտ տարին։

Երեք ամիս անտանելի խեղճութեամբ բանտարկուած մնացի, 'ի սկզբան յուսալից էի թէ՝ քանի մ'օրէն թերևս կազատիմ. սակայն սկսան օրերը շաբաթներու, շաբաթներն ամիսներու յաջորդել, ո՛չ դատի հրաւիրուեցայ, ո՛չ հարցաքննութեան ենթարկուեցայ, ո՛չ վճիռ ընդունեցայ, և վերջապէս համոզուեցայ թէ, այն չարը ինչպէս ժողովուրդը, նոյնպէս դատաւորները խաբած էր, եղելութիւնը այլայլելով և զիս իբր չարագործ մէկը ամբաստանելով։ Կը սոսկայի մտածելով թէ, այս բանտը թերևս գերեզմանս պիտի ըլլայ, և թէ այն անօրէնը մեր ստացուածքը անարգելք վայելելու համար անոր ժառանգորդները անհետացնել խորհելով այս միջոցը 'ի գործ դրած էր, և թերևս խեղճ եղբայրս ալ ուրիշ բանտի մը մէջ կը հեծէր, կամ արդէն իսկ արեւէն զրկուած էր։ Քանի որ դեռ կը շնչեմ պարտիմ ազատութիւնս խնդրել ըսելով, սկըսայ բանտէն փախչելու միջոցներուն վրայ խորհիլ, խորհածս 'ի գործ դնելու համար ոչ երկար ատենի, և ոչ տաժանելի աշխատութեանց պէտք կար, Բանտս միայարկ շէնք մ'էր, քանի մը մասերու բաժնուած, և բանտ ըլլալէ առաջ ախոռ եղած էր, անասնոց քակորները դեռ դիզուած կը կենային, դուռը տախտակէ էր և խարխուլ, երկու պատուհան միայն

ունէր փայտէ բարակ ձողերով վանդակած ։ Դռնէն փախչելը դիւրին էր, բայց վտանգաւոր, որովհետեւ բանտապահաց բնակարանին մէջ կը հանէր. պատուհանէն փախչիլ որոշեցի. կէս գիշերէն մէկ ժամ յառաջ, պատն 'ի վեր մագլցելով պատուհանին ձողերը բռնեցի, մէկը ամենայն դիւրութեամբ տեղէն հանեցի, երկրորդը գամուած ըլլալով կտրել հարկ եղաւ, ուստի ձախ ձեռքով կտրուելիք միջոցը պատեցի, աջ ձեռքովս ալ ուժգին կերպով դալարեցի, որպէս զի կտրած ատեն շառաչիւն չի հանէ, ուզածս կատարուեցաւ, ինքզինքս պատուհանէն վար նետեցի, բարեբաղդաբար մէկ տեղս չի վնասուեցաւ կակուղ հողերու վրայ ինկած էի. ոտք ելայ դէպի յերկինք նայելով շնորհակալ եղայ Աստուծոյ, և արագ ու զգուշաւոր քայլերս ուղղեցի քրոջս գիւղը տանող ճամբան. գիշերները կը ճամբորդէի, ցերեկները այրերու մէջ կը պահուէի։

Ազատութեանս երրորդ օրն էր, Սաղարթոտ ձորին մէջ պահուած էի, նոյն օրը անօթութենէ շատ նեղուելով պտղատու ծառեր կը փնտռէի քաղցս յագեցնելու ։ Նոյն միջոցին ծառերուն մէջէն ձայն մը, պարոն Ռուբէն, պարոն Ռուբէն կը կանչէր. երկիւղէս բոլոր ոսկերքս դող ելան, երբ փախչիլ կը մտաբերէի, նոյն միջոցին մեր գիւղին բարի հովիւը

երեւցաւ որ զուարթ դէմօք ինձ կուգար ։

Բարի մարդ մ'էր այս, ձեռքէն եկած աջակցութիւն մը ամենայն սիրով կընէր, երբ իմ բանտէն փախչիլս իմացած էր, մտաբերելով թէ բռնուելու երկիւղէս, անշուշտ անմարդի տեղեր ապաստանած ըլլալու եմ, երեք օրէ ի վեր զիս գտնելու ջանացած, եւ ահա նոյն օրը Սաղարթոտ ձորին մէջ յաջողեցաւ գտնելու, ուր յայտնեց թէ, եղբայրս Բերեա գնացող կարաւանի մը հետ խառնուելով նոյն կողմերը գնացած է, և թէ եղբայրս բնտռելու միջոցին գիւղը չի գտնուելով չէ կարողացած այս տեղեկութիւնն ինձ հաղորդել, և հետեւաբար ուրիշներու ալ յայտնել չէ ուզած ։

Խորին շնորհակալութիւնս յայտնելով իրմէն բաժնուեցայ. ուրախութեամբ ճամբաս շարունակելով, քրոջս քովս հասայ, քանի մը օր իր տունը պահուած մնալով, նորէն ճամբայ ինկայ եղբայրս գտնելու համար Բերեա երթալու ։

Այսօր ուղեւորութեանս 14 դ. օրն է, որ հո՛ս, Եփրատայ ափունքը ձեզի դիպելու բաղդըն ունեցայ. երկու օր է որ սա՛ փոքրիկ այրին մէջ կ'ապաստանիմ, ո՛չ առ երկիւղի՝ զի չեմ յուսար թէ մինչեւ այս տեղերը զիս փընտռել գան, մինչդեռ քաղաքին քովերն եղած ատենս իսկ զիս հալածողներն չընշմարեցի, ո-

րոնք կ'երեւի թէ աւելի գոհ են փախչելէս քան թէ բանտ մնալէս :

Այլ այս տեղի դիրքը մելամաղձոտ բնութեանս ախորժելի գալով՝ խոնջութիւնս կազդուրելու, և հանդերձներս չորցունելու յարմարագոյն դատեցի, որոնք գետը անցնելու միջոցիս թրջեցան :

Արշալուսոյ մերձենալը նշմարելով ուղեւորելու վրայ էի երբ զիս դիմաւորեցիք. Առաջին անգամ զձեզ տեսնելուս բաւական երկիւղ կրեցի, կարծելով թէ զիս ձերբակալելու համար խրկուած զինուորներ էք. բայց երբ զիս աւազակ կարծեցիք, երկիւղս փարատեցաւ. յետոյ ալ ձեր սիրալիր բարեկամութիւնն ու ազնուախոհ կարեկցութիւնը վայելելով, գոհութեամբ կը մեկնիմ :

ԳԼՈՒԽ Է.

ՓԱԽՈՒՍՏ

Հարաւային Արեւելեան կողմէն Մ. . . գիւղը մտնելու համար ծառազարդ աղբիւրի մ'առջեւէն անցնելու է : Այս աղբիւրը տասը քարափոր աւազաններով զարդարուած, ու

ռամիկ ժողովրդոց ուխտատեղի մը համարուած է. ջերմ ախտիւ տանջուողներուն այս երկրորդ Պրոբատիկէն տեղացիներէն «վեր աղբիւր» անուամբ կը յորջորջի. սակայն աւելի ճիշդ անունը տրուած կ'ըլլար, եթէ աղբիւր արտասուաց կոչուէր : Այս աղբիւրին կիսաբոլոր հրապարակը բաժանման վերջին կայանն է, հոս տեղի կ'ունենայ միշտ այն տխուր տեսարանը որ, արտասուքով կ'սկսի, ու հառաչանքով կը վերջանայ: Հո՛ս կ'ընդունի սիրուհին իւր սիրելիէն վերջին համբոյրը, հո՛ս, ծերունի ծնողք վերջին անգամ իրենց կուրծքին վրայ կը սեղմեն դեռափթիթ զաւակունքը, հոս՝ եղբայրն իւր եղբօր, բարեկամն իւր բարեկամին, դրացին՝ իւր դրացւոյն հրաժեշտի ողջոյնը կուտայ. հո՛ս քահանան «Տէր ողորմեա» ով կը կնքէ սրտերու վրայ այն ցրտասարսուռ կափարիչը՝ զոր գերեզմանի մը խոնաւ հողերէն աւելի կը ճնշէ վտարանդիկ տարագրելոց վրայ, հո՛ս վերջապէս կը կատարուի այն դառնակսկիծ հանդէսը, որ մեռեալի ուղարկաւորութենէ աւելի սրտաճմլիկ է. մեռեալք 'ի հանգիստ դիմեն, իսկ պանդուխտք 'ի տանջան :

Այս արտասուաց աղբիւրէն Մ . . . գիւղը երթալու ճամբուն վրայ կ'իյնայ գերեզմանատունը, որուն ստորոտէն ճամբան երկու չաւ-

ղի կը բաժնուի . մին «քար գլուխ» ըսուած ժայռին գագաթէն, միւսը «խանաթլու» ըսուած հրապարակէն ։

1871 Դեկտեմբեր ամսոյ 16 ։ Գիշերուան ժամը 4 ին. Մ . . . էն վեր աղբիւր տանող քար գլխու ճամբէն զոյգ մ'ամոլք ձեռք ձեռքի տուած խորին լռութեամբ, և արագաքայլ կ'անցնէին ։ Երբ վերաղբիւր հասան, ատոնցմէ մին՝ այն է՝ օրիորդը կծու հառաչանք մ'արձակեց, որուն ներգործութենէն աչքերէն երկու կաթիլ արտասուք բղխելով կարմրորակ այտերէն վար սահեցան, և ջուրերուն խառնուելով անյայտ եղան, ջուրին շառաչիւնէն, գիշերուան մթութենէն, թէ՛ հառաչանքն, և թէ՛ արտասուքը իւր ընկերէն գաղտնի մնացին ։

Կ'երեւար թէ, ասոնց մի միայն նպատակը քալել էր, վասն զի ոչ կը խօսակցէին, ո՛չ որ և է առարկայի մը ուշադրութիւն կ'ընէին, այլ շտապաւ կը քալէին ։ Աղբիւրին առջեւէն անցան, հասարակաց ճամբայէն քանի մը քայլ առին յետոյ դէպ 'ի արեւմուտք դառնալով մացառներով ցանգապատեալ արհետի մը մէջ մտան ։

Խոնա՛ւ և անաստղ գիշեր մ'էր . ցուրտ հով մ'օդուն մէջ գտնուած շոգիները եղեամի փոխելով բացօթեա մնացողներուն մարմի-

նը կը թացէր . մթութիւնն այն աստիճան թանձր էր որ, աչքերն ալ իրենց պարտաւորութիւնը կատարելէ դադրելով յաջորդաբար ոտքերն՝ ու ձեռքերը աչքի պաշտօն կատարել ստիպուելով կը խարխափէին ։

Մանկամարդ ուղեւորները, քառորդի մը չափ մացառախիտ արահետէն քալելով ընդարձակ դաշտի մը մէջ ելան . կերեւար թէ՛ կուրծքերնին սեղմող պաղ ձեռքը պահ մը թող տուած էր, ալ ազատ շունչ կառնէին, կամաց կամաց խօսակցելով հանդարտութեամբ կը քալէին, 'երբեմն խանդաղատանօք իրարու ձեռք սեղմելով ոգեւորեալ և իրերօք զօրացեալ կը հրճուէին, տատրակի նման թեւաւորեալք խայտալով թեթեւակի կը սլանային, արտօրէից վերայէն յանդէաս հսկայաքայլ կը յառաջէին ։

Ընթացքնուն ուղղութենէն կերեւար թէ Խոռոչ գիւղը կ'երթային ։ Այս գիւղը իւր դիրքը, անուանը համապատասխանող տեղ մ'է, այսինքն խոռոչ մը ։ Չորս լերկ գագաթներով լեռնակներու ստորոտը, որոնք իրենց անհարկու երեւոյթովը բնութեան կմախքը կը թուին ։ Ձորակի մը մէջ ցիր և ցան քանի մը տըձև չէնքերով եռեսուն տունէ բաղկացեալ գիւղ մ'է, որոնց քսան և մեկ տունը հայ, և ինը տունը թուրք են . ժողովրդեան վիճակը

կարի արդահատելի է․ նիւթապէս աղքատ, և բարոյապէս ոչինչ ունին։ Եօթանասուն ոսկւոյ թէ ստացուածք, և թէ դրամ ունեցող հազիւ երկու ընտանիք կան, որոնք հարուստ կ'անուանուին, իսկ մնացած մասը իւր օրապահիկը կէս մը պանդխտութեամբ, և կէս մ'երկրագործութեամբ կը ճարեն։ Երիկ մարդոց մեծագոյն մասը իրենց կեանքը պանդխտութեամբ անցնելնուն, ծնունդ խիստ նուազ, և կանայք իւրեանց կազմուածքին անյարմար աշխատութիւններով կ'ըսպառին առանց իրենց կոչման ծառայելու։

Մաքրասիրութիւն և ճաշակ չ'ունին, մնափառ, կամակոր, և միանգամայն դիւրահաւան են, նաև հիւրասէր և ժուժկալ, մանաւանդ կանայք, զգաստ և պարկեշտ են։ Բարոյականութեան և կրօնի մասին անտարբեր, զգացումնին թիւր, և եռանդնին պաղած է, թէև եկեղեցի մ'ունին, որ գիւղին միակ զարդը, և աչքի զարնելու միակ առարկան է, բարեպաշտ քրիստոնեաներու ջանիւք կառուցած, բայց եկեղեցին ալ ժողովրդեան նման թշուառ եղած է, իւր կենաց մեծագոյն մասը այրի մնացած, այսինքն առանց քահանայի, առանց ժամերգութեանց, և առանց պաշտամունք կատարուելու դոց մնացած է, ոչ դպրոց և ոչ դաստատու ունին, որոնց տանէն

երեքը հազիւ աղաւաղ կերպով գրել կարդալ գիտեն։

Անցեալ միջոցին քանի մը ջերմեռանդ գիւղացիներու ջանիւք քահանայ մը կը գտնուէր գիւղը, որով եկեղեցւոյ տանիսը փայտէ կոչնակ մը կախուած կը ճօճէր․ ամէն անգամ կոչնակը ճնչելուն, կրօնասէր գեղջկուհեաց սիրտը բերկրութեամբ տրոփելով, երկիւղածութեամբ երեսնին կը խաչակնքէին․ իսկ ընդհակառակն տարիքն առած բաւական հարուստ կծծիի մը սիրտը կը փեռեկէր՝ յիշեցունելով թէ՛ գիւղը քահանայ մը կայ, և թէ ինքն ալ պիտի պարտաւորի ժում մը կերակուր, և քանի մը դահեկան տալ։

Անողոքելի՛ ժլա՛տ։

Այս գիւղին Արևմտեան հարաւային հորիզոնը կազմող կոպճային լեռնակներու ստորոտէն, անձուկ հովտի մը մէջէն դդջալով կը սահի Ոսկեգետակ, իւր բեղմնաւորիչ ալիները, աջ և ահեակ ոռոգելով աւազուտ անբերրի հողերը պտղալից արգասաւորութեամբ կը զարդարէ․ Սաղարթախիտ ուռենիք, հաստաբուն կաղամախք, բարձրաբերձ բարտիք․ ակնապարար կանաչութեամբ գեղեցիկ անտառակներ ձևացունելով, բազմատեսակ թռչնոց բոյն, օրրան, և առագաստ կը կազմեն, որոնց սրտագրաւ ճռուողումները, ջա-

ղացից անիւներուն բերա կուխը, Ջուրերուն հոսանաց շառաչիւնին հետ միանալով, վսեմ տեսարանիս զմայլելի ներդաշնակութիւն մը կը յօրինեն. քաղցրաբոյր ծաղկունք, բազմերանգ գոյներով պճնեալ, առուակաց սնարները, թումբիկներու գագաթները, սիրագեղ յաւերժահարսերու նման սամարելով տեսարանին շքեղութիւնը կը պսակեն:

Եթէ հետաքրքիր ընթերցողն ոսկեդետակայ ընթացիցն հետեւելու աշխատանքն յանձն առնու, երկու ժամէն հիասքանչ տեսարանի մը առջեւ պիտի գտնէ ինքզինք, ուր հազիւ երբեմն մարդիկ կերպաղեն. այս վայրն է, Եփրատայ և Ոսկեդետակայ խառնարանը: Յիշեալ երկու յոխորտ գետերը հակառակ ուղղութեամբ զիրար բաղխելով իրարու մէջ կը փշրին. փրփրադեղ կոհակները արծաթափայլ ցնցուղներու պէս երփն երփն կը ցոլան, արեգական շառաւիղներէն ակնախտիղ երանգներով կը փայլփլին, ափանց վրայ զարնուելով բարկաճայթ շառաչմամբ կը խորտակին:

Եփրատայ ալիները, յանդուգն յարձակմամբ վերջապէս նուաճելով ոսկեդետակայ սպառնալից զօրութեան, բռնաշունչ ջրերուն խառնելով սրարշաւ կը տանի իւր դաշնակցին նուիրելու:

Մեր հէգ ուղեւորները Մ . . . է բուսա-

կան հեռացած են արդէն, ալ ազա՛տ, բաց օդի մէջ, միայնակ, առանձին, առանց արգելքի, առանց խոչնդոտի սէրերնին ու սըրտերնին իրարու հաղորդելով, նոր ոյժ ու կորով կ'ստանան: Ո՛ սիրային ելեքտրականութի՛ւն:

Բայց ի՞նչ է այս սէրը, ի՞նչ յատկութիւն, ի՞նչ զօրութիւն, և ի՞նչ կարողութիւն է որ իւր մէջ կը պարունակէ: Ի՞նչ բանէ այս անփորձ երիտասարդաց սիրուն յուզողը, ո՞ւստի ծընունդ կ'առնու այս բուռն իղձը, ո՞վ զիրենք կը թելադրէ, ո՞վ կ'արծարծէ այս ջերմ եռանդը իրենց սրտերուն մէջ: Այս երկչոտ երիտասարդին դիւցազնական կորով ազդողն ո՞վ է, այս տկար, ամօթխած օրիորդը, որ իւր ընկերակցաց երեսն 'ի վեր նայիլ հազիւ կը համարձակէր, ո՞վ ներշնչեց իրեն այս անձնապաստան քաջարտութիւնն ու համարձակութիւնը, որ գիշերուան սոսկալի մթութեան մէջ, անծանօթ երիտասարդի մը ձեռքէն բռնած, լեռներուն, ձորերուն, դաշտերուն վրայէն անվեհեր կը քալէ կ'անցնի, ամեն վտանգ կ'արհամարհէ, ամեն նեղութեանց կը տոկայ, դըժուարութեանց դէմ կը խիզախէ, վերջապէս ամէն բան իւր զօրութենէն կը սոսկացունէ.

. . . . . Սէրն է՛. այն իտէական զօրութիւնը, ա՛յն երկնային ճառագայթն, որ հոգիներու մէջ հրաշալիքներ կը գործէ:

«Ո՛հ, սէրն առաքինութիւնը որչափ դիւրին, ու զոհերը որչա՛փ հեշտ կ'ընէ կ'ըսէ Նժէ Մարթէն։ Ան ո՛ր կը սիրէ՛ հզօր է, ան որ կը սիրէ, ամէն բանի կը ձեռնարկէ, ամէն բանի կը համբերէ. Ճշմարիտ սիրողի մը հոգին սուրբ տաճար է, ուր խունկն անդադար կը ծխի, ուր ամէն ձայն Աստուծոյ վրայ կը բարբառի, ուր ամէն յոյս անմահութեան վրայ է»։

Սիրոյ նեկտարին արբեալ այս նորատի ամոլները, զիրենք իրարմէ անջատելու համար 'ի գործ դրուած խստերախ բռնութիւններէն վհատած համակամութեամբ կ'որոշեն փախչիլ, մօտակայ գիւղ մ'երթալով, կրօնական սրբազան կապովն իրարու հետ միանալ, իրենց միութիւնն օրհնել, և ամրապնդել տալ, հեդերն այնպէս կը յուսային թէ, բռնութիւնը, ատելութիւնը, թշուառութիւնը, և բոլոր տառապումները մինչեւ եկեղեցւոյ դուռը կրնան զիրենք հալածել, և թէ՛ խորանին պատուանդանն ամէն վշտակրութիւնք զկայ պիտի առնուն, վարագուրը պիտի փոխուի, նոր կենաց նոր տեսարան 'ի հանդէս պիտի գայ, անդորրութիւն, երջանկութիւն, յարատեւ միութեամբ բարեկեցութիւն, Բարէ՛ . . . . . ։

Ամէն մոլութիւն, իւր վնասակար ներգործութիւնն ունի, ինչպէս նաեւ սիրամոլութիւնը իւր վտանգաւոր հետեւութիւններն։ Այս

վտանգն արդէն բաւական մօտեցած էր, խեղճերը դէպի թշուառութիւն կը դիմէին, բայց երջանկութիւն կը յուսային։ Ո՛ խաբուսիկ յոյս, ո՛ երեւակայական պատրանք, ո՛ մտացածին ցնորք, քանի՛ զօրաւոր են ձեր ազդեցութիւնքը սիրով արբշիռ անփորձ երիտասարդաց վերայ։

Կէս գիշեր էր։

Խուռչի մօտակայ պարտէզներուն օձապտոյտ շաւիղներուն մէջէն երկու ուղեւորներ հանդարտութեամբ դէպի գիւղ կը յառաջէին։

Երկինք, որ ի սկզբան տխրութեամբ համակեալ էր, այս միջոցին պահ մը իւր ամպրոպային վարագուրը պարզելով լուսնի աղօտ լուսով մը բոլոր առարկայները լուսաւորեց, և որով ուղեւորաց երկու սեռէն, երկու նորատիներ ըլլալնին որոշակի տեսնուեցաւ։ Ասոնք յոգնած կերեւէին, դէմքերնին կապտախառն կարմիրով ներկուած, ճակատնին քրտինքով ողողած էր։ Այս քիրտն աւելի ներքին յուզմունքներէ, քան թէ յոգնութենէ առաջ եկած կերեւէր։

Ասոնցմէ աւելի կրտսերագոյնն ու աւելի գեղեցկագոյնը յանկարծ թուխ աչերը դէպի յերկինս դարձունելով, լուսնի վրայ ակնարկ մը նետեց, քանի մը վայրկեան անքթիթ դիտեց, տխրութեամբ ժպտեցաւ, յետոյ ակ-

նարկն յամրաբար լուսնէ բաժնելով, իւր ընկերոջ ճակտին վրայ դարձուց, և յետոյ գըլխէկոր առջեւը նայիլ սկսաւ ։

Հէ՛գ օրիորդ, լուսնի մելամաղձոտ երեւոյթը զինքը խռովեց, սիրտն ահաբեկ և խիղճն յուզեալ յանցաւորի մը պէս դողդողեց, երակացը մէջ սարսուռ մը խաղաց, լուսնի դիմաց վրայ տեսնել կարծեց իւր վճռագիրը, որով զինքը մեղապարտ կը դատէր ։

Ճակատագրին յուռութեանը համակերպող պատժապարտի մը պէս տխրութեամբ ժպտեցաւ ։ Ցանցանքին պարագայները թեթեւ զեփիւռի մը պէս երեւակայութեան մէջէն սահեցան, սիրած էր միայն . . . . աչքերն անմիջապէս իւր սիրոյն առարկային դարցուց, հոն ալ խորհրդաւոր ծալքերու տակ սեթեւեթներ միայն նշմարեց, և շառագունեցաւ ։

Շինականաց արթուն պահապաններն իրենց ահռելի հաչիւններովը կազդարարէին երկու օտարականներու գիւղ մտնելը ․ օտարականներն, ոչ անոնց ազդարար հաչիւններուն, ոչ սպառնալից յարձակումներուն ուշադրութիւն կընէին ․ մաքերնին՝ անձկութեամբ գրաւեալ, և զգացումնին յուզեալ ըլլալով, արտաքին առարկաները իրենց վրայ ազդեցութիւն չէին ըներ ։

Աղտոտ և տձև ծածքէ մ՚անցնելով գիւղին

կեդրոնը փոքրիկ հրապարակ մ՚ելան, որուն ճակատը կիսաքանդ աղբիւր մը կար, առուակին քովերը քանի մը թթենի ծառոց մորչեր տնկուած էին, որոնց բուները անասուններէն չը վնասուելու համար փուշերով պատած էր ։ Թեթեւ քայլերով հրապարակը կտրեցին, տըղմալից առուակէն ցատկելով, աղբիւրին ձախ կողմի փողոցը մտան, քանիկեցի մը չափ յառաջելով, սեւ քարերով շինուած կրկնայարկ տան մը դուռը բաղխեցին, անմիջապէս բացուեցաւ, և ներս մտան ։

ԳԼՈՒԽ Ը․

ԱՅՑԵԼՈՒՀԻՆ

Աշնան ցուրտ երեկոյ մը, պարզապէս զարդարուած սենեակի մը ճակատը, տեսակ մը կարմրորակ կաւէ շինուած լայնադիր վառարանի մէջ, քանի մը փայտի կտորուանքներու վրայ պախրէից քակորէն շինուած ափսէի ձեւով դշկուր մը զետեղուած, երբեմն կը մխար, երբեմն կը գիգլար ։

Վառարանին շուրջը կիսաբոլոր շարուած էին պառաւ հանի մը, մանկամարդ մայր մը,

և գեղեցիկ տղեկ մը. որուն խարտեաշագեղ հե-
րաց խոպոպիկները կարակնաձև ճակտին վրայ
յիրեար պլլուելով, մանկական շնորհաց փայլը
կաւելցունէին, և երկնային գեղով մը կը պը-
սակէին: Կայտառ աչուըներուն հայեցուածքը
գրքի մը վրայ սեւեռած ուշադրութեամբ կը
նայէր, կը հեգեր, կը թոթովէր ու կարդալ կը
ջանար: Երջանիկ արարա՛ծ:

Գթութեան Աստուծմէն խրկուած այս ա-
ռաքեալները, ամենավսեմ պաշտօն մը կատա-
րել կուգան յաշխարհ, իրենց անմեղ ու հրա-
պուրիչ տեսքով, սուրբ ու անարատ հոգիով,
զմայլեցունելով ու յանկուցանելով զմարդիկք
կը հրաւիրեն յերկինս, իրենց վրայ պատկե-
րացունելով երկնաքաղաքացի ըլլալու յատկու-
թիւնքը:

«Թող տուք մանկտւոյդ գալ առ իս, զի
այդպիսեաց է արքայութիւնն Աստուծոյ» ը-
սաւ աշխարհիս Մեծ Փրկիչը: Աստուծոյ Թա-
գաւորութիւնը ժառանգելու համար ճամբու
դրուած այս ընտրեալ հոգիները արդեօք ան-
խոտոր ընթացիւք իրենց ուղին աւարտելով,
նոյն սրբութեամբը կը հասնի՞ն իրենց համար
նախասահմանեալ օթեւանը, կը մնա՞ն նոյն ան-
մեղութեամբը, կա՞պրին նոյն արդարութեամ-
բը, կը մեռնի՞ն նոյն մանկական անարատու-
թեամբը . . . . . . աղէ՜, ո՛ կարէ այս հարց-

ման պատասխանել, ո՞վ կը յանդգնի հաս-
տատական վճիռ մը տալ: Աստուծոյ գթու-
թեան գործքերը խիստ զարմանալի են:

Մինչդեռ նորածին մանուկը խանձարրոց
մէջէն ընկղա՛յ գոչելով կենաց սկիզբն կառնու,
պառաւ հանին, իւր կենաց ասպարէզն աւար-
տած, յաւիտենականութեան սեմին վրայ դող-
դոջելով կոխելու առեն իւր սիրասուն թոռ-
նը կը դիմաւորէ. գորովաշա՛րժ դիպուած:

Ծերութիւն, և մանկութիւն, երկու տկար
հասակ, որոնց երկուքն ալ ուրիշի օգնութեան
պէտք ունին. երկուքին ալ մտաւորական ու
ֆիզիգական զօրութեանց պակասութիւնը խը-
նամակալի մը կարօտ կընէ զիրենք: Մայրն այս
խնամող հրեշտակն է, մին կը սնուցանէ, միւ-
սը կազդուրէ, մին կը գրգուէ, միւսը կը մը-
խիթարէ, մեկուն մայրն ու միւսին զաւա-
կըն է:

Մահուան կամուրջին վերայ ծերն ու մա-
նուկը զիրար դիմաւորելու առեն, պահ մը
կանկ կ'առնուն, խորհրդաւոր կերպով իրա-
րու հետ կը խօսին, առանց զգալու փոխա-
նակութիւն մը կ'ընեն, որ մեկէն միւսին կ'ա-
ծանցէ: Հանին մանկէն բան մը կ'ըստանայ,
և փոխարէն բան մը կը շնորհէ մանկան. մա-
նուկն արդարութեան ու արքայութեան գա-
ղափարը կ'ուտայ իւր հանոյն, և փոխարէն

մարդկային կենաց, և աշխարհի աղետից գաղափարը կ'ընդունի։

Կենաց երկու ծայրերը գիրար կցող նուիրական գործին մայրն է. մայրն, որուն ինչ ըլլալը ժողովրդեան մեծագոյն մասը դեռ լաւ հասկցած չէ, և որուն համար աշխարհս աղետից տեսարան մը դարձած ըլլալով, մարց որդիներն ալ, այս տխուր դերերը ներկայացնող դերասանները կը կազմեն. եթէ ժողովուրդը մարց յարգն, ու նոցա պաշտօնը ըստ արժանւոյն ճանչցած ըլլար, աշխարհիս վրայէն հալածական պիտի ըլլար թշուառութիւնը, անհետանար բոլոր չարիքները. քանզի մայրերն են ժողովուրդ յօրինողը, երբ մայրերըն ազնուանան, ազնիւ ծնունդներ կ'արտաբերեն, ալ մանուկը վտանգէ ազատ կ'ըլլայ. բնութիւնն արդէն նախախնամելով այնպիսի ծնամածուի մը յանձնած է մանուկը, որ կաթոգին սիրով կ'ընդունի, կը գգուէ, կը սնուցանէ, կը մեծցունէ, ու ընկերութեան կը նուիրէ զայն։ Այսպիսի տաժանելի, ու միանգամայն փափուկ պաշտօն մ'ըստանձնող արարածը, արարածոց պատուականագոյնն համարելու է։

Ի՞նչ է այն տձեւ ու տգէտ արարածը Աստուա՛ծ իմ, ի՞նչ բանի կուգայ այս տխեղծ զանգուածը, այն արևնաթաթաւ գիւղը, որ

կենդանութեան ինչան իւր ճաշն է միայն . . . . . ։ Այս է՞ միթէ երկնից թագաւորութիւնը ժառանգելու պատրաստուած արարածոց դերագոյնը . . . ո՛վ մեծի Հրաշալեաց ։ Որի՞ միջոցաւ կարող պիտի ըլլայ այս տկար մահկանացուն, այն անմահական կենաց հասնելու. ո՞վ պիտի ձեւակերպէ այն տձեւ էակն, ու իւր կոչմանը բարձրացունէ. ո՞վ պիտի հրահանգէ, իմաստնացունէ այն տխմար ու անուս մանուկը. ո՞վ պիտի առաջնորդէ իրեն, ճանչցունելով կատարել պարտաւորութիւնքը և պաշտպանել իրաւունքը . . . — մա՛յրը. այն գեղաժպիտ առաջնորդը, այն քաղցրաձայն խնամածուն, այն խանդակաթ դաստիարակը, որ, փութաջան խնամօք, անխոնջ անձնուիրութեամբ, համբերատար եռանդեամբ կը խնամէ, կը ձեւակերպէ, և միանգամայն կը յօրինէ, դրօշմելով իւր էութեան կաղապարը մանկան սրտին վրայ։

Ուրեմն ինչ որ է մայրը՝ նոյնն և զաւակը։ Մանուկն երբ երկրորդ տարւոյ շրջանին կը թեւակոխէ, հետաքրքրութիւնը կը զարթնու, ուշադիր հայեցուածքով ամեն տեսածը կը զննէ, փափկիկ միտքը կ'սկսի հետազօտել այն ամէն իրերը որ իւր շուրջը տեղի կ'ունենան. յիշողութիւնը կ'ըսկսի գործել, որով կը ջանայ ըմբռնել ինչ որ տեսնէ, և ընել՝ ինչ որ

ուրիշները կ՚ընեն ։ Հո՛ս կը բացուի ընդունա-
կութեան դուռը, որմէ պիտի մտնէ մանուկը
կենաց ասպարիզին մէջ. Աշխատաւոր մօ՛ւոք ։
Սկիզբն յաւիտենական Թշուառութեան, եթէ
զինքն առաջնորդողք անուս, իրենց կոչմանն
անդէտ, և պարտաւորութեանցն անտարբեր են։

Մայրե՛ր. դուք ձեր պարտաւորութիւնքը
շատ լաւ կը կատարէիք, եթէ զանոնք գիտ-
ցած ըլլայիք, երբե՛ք չը պիտի ուզէիք երկին-
քէն ձեզի շնորհուած, և ձեր խնամոցն յանձ-
նուած դեղանի հրեշտակները գիշերադէմ հը-
րէշներու փոխելով սանդարամետը խրկելու ։
Բաբէ՛, ի՛նչպէս կրնային մայրերն իրենց զա-
ւակունքը դէպի յերկինք առաջնորդել, մինչ-
դեռ մարդիկք կանանց հոգւոյն անմահու-
Թեանը վերայ իսկ կասկածելով, երկնից դուռ-
ներն անոնց առջեւէն փակել կերեւակայէին ։

Երկրագնտիս Թուականին ունեցաւ այնպի-
սի աղետալի դար մը որ, «չնորհափայլ վար-
դապետք, բազմահմուտ փիլիսոփայք» ժողո-
վեցան վճռել թէ, «կինը մարդ չէ». անասնոց
կարգը դասեցին զանոնք, կիներն անասուն
ըլլալէ առաջ, այրերն արդէն անտառաց խո-
րերը ցրուած ըլլալու են ։

«Արք միշտ այնպէս պիտի ըլլան, կըսէ
Ռուսոյ, ինչպէս որ կանայք ուզեն, եթէ կու-
զէք որ, արք ըլլան մեծ և առաքինի, սորվե-

ցուցէք կանանց թէ ինչ է մեծութիւնն ու ա-
ռաքինութիւնը» ։

Ընկերութեան հիմունքը կազմող այս ըն-
տանեկան ակումբը, բարոյական վսեմ ներ-
դաշնակութեան մը հետ, ֆիզիգական կարո-
ղութեանց, հասակի և կերպարանաց խառ-
նուրդի հակապատկերը կը ներկայացնէր ։

Հանի՛ն տարիներու հասանքէն մաշած, կե-
նաց և մահու ընդդիմադիր զօրութենէն մըղ-
ուելու տեղն, փոխանակ կատարելագործուե-
լու հինցած, և փոխանակ յղկուելու քերուած
էր, թէև երիտասարդութեան, մայրութեան,
հասունութեան շրջաններէն անցած էր, բայց
միշտ տուժած, աճել կարծած տեղն կոլած
էր. աշխարհս իրեն դէմ վարանջած տեսնե-
լով, զայրոյթը կը բորբոքէր, դեգ բնութիւն
մ՚ըստացած էր, ճակատը կնճռած, լեզուն
միշտ շարժման մէջ էր ։

Ծերոց սփոփանքը խօսիլն է ։

Հնախոյզին զարմանքը գրաւող կերպարան
մ՚ունէր, երիտասարդութիւնը գեղեցիկ ըլ-
լալու էր, զի պառաւութիւնը կարի վայելուչ
էր, սակայն այս վայելուչ դէմքը տձեւ փաթ-
տոցով մը պատատեալ ըլլալով, խիստ այլան-
դակ երեւոյթ մ՚առած էր ։ Այս փաթտոցը,
որ՝ տեղացիները «գլխու կապոց» կ՚անուա-
նեն, վայրենութենէ մնացած հնութիւն մ՚է.

հնութիւն մ'որ, արհեստից և քաղաքակրթութեանց յառաջադիմութեամբը, ճաշակաց ազնուութիւնն ու ախորժակաց ընտրութիւնը ջատագովող ժողովրդեան մը թանգարանաց զարդըն ըլլալու շնորհին կրնայ արժանանալ, կարժէ ուրեմն որ, համառօտիւ մը նկարագրենք զայն, թերեւս պիտի գայ ատեն մ'որ, իրօք հազուագիւտ հնութեանց կարգը դասուի։

Մազերուն վրայէն անմիջապէս նախ քառակուսի ճերմակ կտաւ մը կը կապեն՝ որուն կ'ըսուի «մազլաթ» մազլաթին վրայէն կը դընեն «Ֆէսը» որուն ճակտի կողմը հարուստներըն ոսկի, և աղքատները ոսկեզօծեալ արծաթէ զարդեր կը կախեն։ Այս ոսկեղէն, կամ արծաթեղէն զարդերը, նիւթական կարօղութեանց համեմատ երեք կարգի կը բաժնուի. երեւելի հարուստներուն կիները, «լման ճակատ և խլթիկ» ունին. Մահմուտիէ ոսկիներէ շրջանակ մը անցուցած դէմքերնին։ Երկրորդ կարգի հարուստները, «Ռուպիէ ոսկիներէ ճակատ, և զազի ոսկիներէ վարդեր» ունին, որ է՛ դէմքին երկու կողմերէն կախուած ոսկիներու շարոյներ, որոնք բոժոժաւոր դրաստներու նման քալած ատեննին իրարու բաղխելով կը հնչեն։ Երրորդ կարգը «Զախմայէ ճըռներ» ունին, որ է՛ դրամի ձեւով ոսկեզօծեալ դրոշմուոր արծաթ, թէ՛ «ճակատը, և թէ

վարդերը» իսկ, ստորին կարգի աղքատները ասոնց և ո՛չ մին ունին, ո՛հ, խեղճերն երկնից վերայ փայլող աստղ չ'ունին, երկրի վերայ փայլուն կին կրնա՞ն ունենալ։ Ֆէսին վրայէն ճակատն ու պարանոցը պարուանդած ուրիշ թխագոյն քառակուսի լաթ մը կը կապեն որուն կ'ըսուի «թուխլաթ». գագաթէն ծնօտին տակովը կը կապեն միակտուր լաջակ մը, որուն կ'ըսուի «Ներքեւնոց»։ Այս ներքեւնոցի վրայէն կ'ըսկսի բուն գլխու կապոցը, որ կը բաղկանայ երեք տեսակ գոյնզգոյն քառակուսի լաջակներու երեքական կտորներու միութենէն, որոնք երեք երեք ծայրերէն իրարու կցելով, երեքական լաջակներէ, երեք կարգ կը կազմեն, որոնց երեքին եռանկիւնի ձեւ մը տալով, ճակտին ու այտերուն կիսովը՝ դունչին տակովը, պարանոցը, ականջները, ծոծրակը, ու մինչեւ ուսերուն կէսը կը ծածկեն. միւս վեց լաջակներէն երեքը աջ, և երեքը ձախ կողմէն կռնակնուն վերայ կը կախեն, որոնք ուռած տկերու նման չարունակ կը լողան. լաջակներու ծայքերուն մէջ քուրջերու կտորուանքներ թխմելով գագաթէն դէպի յաջ հակած եղջիւր մը կը ձեւացունեն. այս եղջիւրներն աւելի սրածայր, աւելի կոկիկ ընելու մասին իրարու հետ մրձում մ'ունին,

Գլխու կապոցին ամբողջացուցիչ մասերն են

«չալման» ու «թերնի կապոց»ը, մէկ քառակուսի լաչակը մէջ տեղէն եռանկիւնի կտրելով, մէկ կտորը ոլորելով ճակտին վրայէն կը կապեն, որուն կ'ըսեն «չալմա» կամ «չէմպէր» և միւս կտորը ստորին շրթունքէն կզակին կէտովը դունչերնին կը պատեն, և որուն կ'ըսեն «թերնի կապոց» կամ «կզակակապ»։

Կարծեմ ընթերցողը թուաբանական գործողութիւն մը կատարելու հետ է. օգնենք իրեն։ Ահաւասիկ սիրելի ընթերցող, թէ կապոցն և զարդերը իրարու վրայ միջին հաշուով 680 տրամ, որ մէկու կէս հօխայ և ութսուն տրամ կ'ընէ, Այս տաղտկալի բեռը պարտաւորած են գիշեր ցերեկ գլուխնուն վերայ կրել։ Ֆիզիգական ահռելի կորուստին բաղդատմամբ, այս կրած բեռներնին բան մ'ըսել չէ դեռ։

Իգական սեռի գլխաւոր զարդն, այն է փայլուն մազերու գեղեցկութենէն բոլորովին զրկուած են, թէ աղւոր մազեր ունենան, և թէ տգեղ ըլլան մի և նոյն բանն է։ Այս թշուառ արարածները, երբ քիչ մը տարիքնին առնեն, տխուր աւերակ մը կը դառնան, գլխաւոր գործարաններէն թանկագին անդամներէն կամ բոլորովին կը զրկուին, և կամ ցաւերով կը տառապին, մազերնին կը թափի, ականջնին կը խլանայ, աչքերնին կը կուրանայ, և այն կեն-

սաբաշխ գործարանին մարգարտանման գործիքներէն բոլորովին կը զրկուին, և շատ անգամ հարբուխի շարունակութենէն ասոնց հետ կը միանայ նաև կուրծքի հիւանդութիւնը, ողորմելի՛ արարա՛ծք, աղիողո՛րմ կացութի՛ւն...։

Հազիւ երիտասարդութեան քաղցրաբոյր կենաց կը թեւակոխեն, ինքզինքնին գերեզմանի արհաւիրքներէն պաշարուած կը գտնեն. ցաւալի՛ իրողութի՛ւն։ Սակայն ասոնք մայրեր են, ընկերութեան հիմն, ու ժողովրդեան տածիչներն են։ . . . . . .

Այս անճոռնի ու վտանգաւոր գլխանոցին սովորութիւնը թէև հետզհետէ նուազելու վրայ է, սակայն աւելի յոռեգոյն, ու աւելի ապառողջը յաջորդած տեսնելու դժբաղդութիւնն ունենալովս, ցաւ 'ի սիրտ պարտաւորած ենք այս նորաձեւ գլխանոցին վրայ ալ գաղափար մը տալ։

Այս գլխանոցը «Փոլլիկ գլուխ» անուամբ կը յորջորջի. թէև միւսին նման լաչակներու շեղջակոյտ մը չէ, սակայն, այն խեժաւոր թաղիքը, այն երկաթի նման կարծր գտակը, որ ո՛չ օդ, ո՛չ լոյս, ո՛չ ջուր, և ոչ իսկ սուր ու գնտակ կը թափանցէ. այն տանջանարանաց գործիքին նման խոշտանգիչ մեքենային մէջ գիշեր և ցերեկ կամահաճութեամբ գլուխը բանտարկելը, արդարեւ նախապաշարմանց ճի-

բաններուն տակ ստրկացեալ ժողովրդեան մը յատկանիշն է ։

Մարդ կը փորձուի հաւատալ թէ , այս անհեթեթ սովորութեանց , թէ նիւթապէս , և թէ ֆիզիգապէս մեծամեծ չարեաց և վնասուց պատճառ ըլլալը գիտնալովին հանդերձ , դեռ անտարբեր աչօք կը դիտեն այն անմեղ զոհերը , անհոգութեամբ կը նկատեն այն թօշնած դէմքերը , ճռպռտած ու պլշած աչերը , սեւցած ու թափած ակռաները , փտած ու խլացած ականջները . . . . . առանց և ոչ իսկ պատճառը փնտռելու հետամուտ կըլլան , և ոչ դարմանը գտնելու միջոցներուն վրայ կը խորհին . ցաւալի՛ անփոյթութի՛ւն ։

Մինչդեռ դարմանը պարզ և դիւրին , հաճելի և վայելուչ , ու օգտակար միանգամայն թէ նիւթապէս , և թէ՛ ֆիզիգապէս ։

Տիկին Վ . . . (հանին) եղջիւրաւոր փաթտոց կը կրէր . տիկին Մ . . . (Տ. Վ . . . ի աղջիկը , և Պետիկայ մայրը) Քօլլիկ գլուխ դըրածէր , իսկ Պետիկ առանց և ոչ մէկուն պէտք ունէր , գանգրաւոր մազերը յուսերուն վրայ վէ՛տ վէ՛տ կը ծփար ։

Տիկին Վ . . . յօրօնջելով ունելին ձեռքը առաւ , կրակ եղած դշկուրը երկու կտոր ընելով ձեռքերը վրան կարկառեց , ու դէպի աղջըկանը դառնալով,

— Չեմ գիտեր թէ ի՛նչ պատճառ ունի մեր այս անքուն սպասելը , զաւակս ալ մեզի հետ անհանգիստ եղած է . . . ե՛լ տղաս ե՛լ , քեզ անկողին տանիմ ։

— Հապա հօրեղբայրս գայ նէ , ըսաւ Պետիկ աչքերը հանոյն վրայ սեւեռած ։

Ե՛լ , այդ մօրդ երեւակայութիւնն է , եթէ իրօք յաջողին ալ , կարծէք թէ այսչափ շուտ կրնա՞ն վերադառնալ . . . Խոռոչի քահանան երկչոտ մէկն է . . . ո՛հ , ալ աչքերս չեն բացուիր , ե՛լ տղաս ե՛լ ։

— Բայց ինք կըսէր թէ , զօրաւոր ազդեցութեան տէր բարեկամներ ունի ի Խոռոչ , թէ անոնց միջամտութեամբը անվրէպ գործն ի կատար կը հասցունէ ։

— Երանի՛ թէ այդպէս ըլլար , թէև չեմ յուսար , սակայն եթէ այդպէս ալ ըլլայ , արշալոյսէ առաջ չեն կրնար վերադառնալ ։ Ա՛խ , ինչ որ ալ ըլլայ դէշ եղաւ դէշ . հետեւութիւնն աւելի դէշ կը գուշակեմ . . . արդեօք ի՛նչեր պիտի կրենք . . . քալէ՛ տղաս քալէ , եթէ քիչ մ'ալ խօսիմ ,քունս պիտի փախչի ։

Մինչդեռ Տ. Վ . . . թոռանը ձեռքէն բռնած սենեակէն դուրս կելնէր , դրան մեղմ բաղխիւն մը տրուիլը լսեցին . Պետիկ թռչունի արագութեամբ սանդուղէն վար սլացաւ , անմիջապէս դուռը պիտի բացուէր , եթէ հանոյն

սպառնալից ձայնը զինքը չը կասեցունէր ։

— Ձե՞մ պատուիրած թէ գիշեր ատեն դուռը զարնողին առանց ո՛վ ըլլալն իմանալու չեն բանար ։

— Ո՞վ ես դու , պոռաց Պետիկ ,

— Բա՛ց , սիրուն Պետիկս ըսաւ դուրսէն ծանօթ ձայն մը , և կամաց մը ինքնին չարայարեց , այս ատեն ամենքն ալ դեռ ոտքի վրայ կասկածներս իրականալու կերպարանք կառնեն։

Տիկին Վ. . . . այցելուհւոյն ձայնը լսելուն աճապարեկ աղջկան սենեակը վազեց , ինչ պատասխան տալու համար տատամսած իրարու երես նայելու ատեն , Պետիկ դուռը բացած ըլլալով , այցելուհին սենեակէն ներս մտաւ ։

ԳԼՈՒԽ Թ.

ՄՕՐ ՄԸ ԴՈՐՈՎԸ

— Ինչ մեծ պատիւ Տիկին , այս ժամուս մեզ այցելե՛լ , ըսաւ Տ. Վ. . . . թոթովելով ։

— Զարմանալի կը թուի այնպէս չէ՞ , և առաւել զարմանալի է ինձ ձեր այս ատեն ընկողմած չըլլալը ․ գիշերուան եօթներորդ ժամն

է , մինչդեռ համայն տեղերը կը ննջէ , դուք հսկողներու պէս արթուն էք և կսպասէք ։

— Սպասելու բան մը չունինք Տիկին , անկողին կերթայինք ։

— Թերեւս . . . . այլ թողունք այս սրտամաշուք խօսքերը , կաղաչեմ ըսէք ինձ , ո՞ւր է Մուշեղ ։

— Մուշե՛ղ , . . . դեռ տուն չը դարձաւ ։

— Ո՛ւստի ։

— Թերեւս իւր բարեկամներէն մէկուն տունն է ։

— Ո՛չ , մի՛ խաբէք զիս կաղաչեմ , ըսէ՛ք ո՞ւր է Մուշեղ․

— Ներեցէք , չեմ հասկնար ինչ ըսել կուզէք , այս ատեն ի՞նչ պիտի ընէք Մուշեղը Տիկին ։

— Ի՞նչ պիտի ընե՞մ , ո՛հ աղջիկս պիտի ուզեմ աղջիկս , ո՞ւր է աղջիկս ։

— Միթէ տուի՞ք որ կը պահանջէք խաթուն , ըսաւ Տիկին Մ . . . բարկալից աչերը վրան սեւեռած , խեղճ երկտասարդը տանջելէն կարծեմ հաճոյք կզգար , ցերեկուա տանջանքները բաւ չի համարելով գիշե՞րն ալ զինքը տանջել կուզար ։

— Ո՛հ , վշտացեալ սրտիս վէրքերը մի՛ աւելցունէք կաղաչեմ , մի՛թէ ինձի հետ այդպէս խստութեամբ խօսելու իրաւունք ու-

նի՞ք, կարծէի թէ, ցարդ համոզուած ըլլալու էք անոնց միութեանն ոգւով չափ փափաքող ըլլալուս, բոլոր ջանքերս սպառած եմ անոնց սէրը պսակելու, բայց ի՞նչ ընեմ սիրելիս; ի՞նչ ընեմ, միթէ ես աղջկանս բացարձակ տէ՞րն եմ, ա՛խ Աստուած իմ։

— Ներեցէք Տիկին կաղաչեմ, ներեցէք անխոհեմութեանս, մենք ձեր ազնիւ սիրտը կը ճանչնանք, քաջ գիտենք թէ, արդէլքը միմիայն հօրը կողմանէ է, թէ դուք հաճ էք այս մասին։

— Այո այս, ըստ ամենայնի հաճ և հաւան, սակայն ի՞նչ օգուտ, մինչդեռ ես նոցա միութիւնն օրհնելու համար, ամէն զոհողութիւնք յանձն առնուլ յօժար էի, մինչդեռ ես երկանս խստութիւնը մեղմացունելու համար, ամեն միջոցներու կը դիմէի, և Աստուծոյ օգնութիւնը խնդրելու համար ձեռքերս յերկինք կը կարկառէի, ահա՛ իրենք անխոհեմ ընթացքով ծայրայեղ միջոցներու դիմելով ամեն բան ոչնչացուցին, բոլոր ջանքերս ապարդիւն, և բոլոր յոյսերս ի դերեւ ելան. մեր ընտանեաց պատիւը, իրենց պարկեշտութիւնը, ամեն բան կորուսինք . . . . . ա՜հ թշուառք։

Խեղճ մայրը ներքին բնազդմամբ ամեն բանի տեղեկացած, ամեն բան գիտցած ըլլալով՝ ո՛չ Տ. Վ. . . ի համոզիչ խօսքերուն, ո՛չ Տ. Մ. . .

ի բացատական պատասխաններուն ուշադրութիւն կընէր. «աղջիկս» մրմռաց հեգը և արտասուել սկսաւ։

Մինչդեռ երկու կանայք, զՏիկին Օ. . . հանդարտեցունել կը ջանային, փողոցէն անցնող ճեպնթաց մարդու մը ոտնաձայնը լսուեցաւ. Տ. Օ. . . խռովայոյզ դէպի գաւիթ աճապարեց անցորդին ո՛վ ըլլալն իմանալու, սարսափահար ճիչ մ'արձակելով յետս ընկրկեցաւ։

Անցորդը իրենց տաճիկ ծառան էր։

Կալինիկէի «յանցանքը» յայտնուելէն ի վեր, բարեգութ մայրը անհնարին անձկութեանց ենթարկուած էր. սիրոյ և ատելութեան, տկարութեան և բռնութեան մէջտեղ կանգնած, մեկէն յարգանք, միւսէն սէր կը խնդրէր, մեկէն քաջալերութիւն, միւսէն գութ կը հայցեր. աղջիկն զգաստութեան, և այրը կարեկցութեան կը հրաւիրէր. մեկին ողոգանք միւսին վստահութիւն կը ներշնչէր, մէկուն կրից խարիսխը, միւսին առաջնորդ աստղն եղած էր։

Կալինիկէի անկողնոյ սնարը, անոր նուաղած միջոցին, արգահատութենէ և յուսահատութենէ ներշնչեալ բառերն արտասանելէ ի վեր, անոր վերայ նշմարած զգալի փոփոխութենէն կ'ահաբեկեր, երկիւղախառն տագնապաւ սիրտը միշտ յուզման մէջ էր։

Աղջիկն ալ չէր հառաչեր, գաղտնի չէր արտասուեր, հօրմէն չէր գանգատեր, տարփածուին վերայ չէր խօսեր. անդորր երեւոյթ մը, հանդարտ դէմք մ'ունէր, մայրը ասոնք ուշի ուշով կը դիտէր, կը զարմանար, միանգամայն կը խռովէր, կը զգար թէ, ծածկուած հրաբուխ մ'է այն, որուն ընդերացը մէջ սիրոյ կիզիչ լաւան հրաբորբոք կ'եռար։

Սիրահարաց փախուստին նախնթաց օրը, մայր և դուստր ձեռք ձեռքի տուած պարտէզըն ռոոգել կերթային. այն միջոցին գնչուներու (չինկեանէ) խումբ մը, իրենց կարասիները էշերու վրայ բեռնաւորած, այրերն իրենց քերիչն ու «տամպուրան»· կիներն, իրենց զաւակունքը շալկած կը չուէին։

Այս թափառական ցեղը, որ Ասիոյ մէջ «բոշա» կ'անուանուին, տարին մէկ երկու անգամ գիւղերն այցելութեան կ'ելնեն, իրենց բնակարան կ'ընտրեն բացօդեա տեղեր, աղբերց քով, գետերու, առուակներու եզերքը, և կալերը։ Արհեստնին է մաղ շինել, բաղդ գուշակել, և գողութիւն ընել. գողութիւն ընելու մասին կիները խիստ յաջողակ, և ճարպիկ են. և այս իսկ է առաջին պայման իրենց ամուսնանալի կանանց հետ. դուռներ կղպակներ բանալու համար փայտէ և մաղէ շինուած այլ և այլ ձեւերով բանալիներ կը կրեն գրպաննին։

Ողորմելի կացութիւն մ'ունին. բայց իրենց վիճակէն խիստ գոհ են։ Բարբառնին սնունդնուն նման խառնակութիւն մ'է. ոչ մասնաւոր նախահայր, և ոչ յատուկ լեզու ունին։ Կրօնքնին իրենց գտնուած երկրին տիրող կրօնքն է. Գաղղիոյ և Իտալիոյ չինկեանէները պապադաւան են. Անգղիոյ, և Գերմանիոյ մէջ բողոքական, Ռուսիա և Հելլադա Յունադաւան, Տաճկաստանի մէջ Մուհամմետական են։

Մայր և դուստր, այս թշուառ ընտանիքներու արտաճմլիկ տեսարանէն զգածեալ, կարեկցաբար անոնց ապրելու միջոցներուն և կացութեանցը վրայ խօսակցելով կը քալէին։

Բոշաներու կարաւանը բաւական հեռացած էր արդէն, բլրակի մը գագաթէն զառիվայրը սահելով հետզհետէ անտեսանելի կ'ըլլար։

Երկու չինկեանուհիք իրենց խումբէն բաժնուած յամրաքայլ կը յետնէին, առանցմէ մին յղի կին մը, և միւսը մանկամարդ օրիորդ մ'էր. պարկեշտութեան հրամայածին չափ միայն՝ արեւակեզ մարմիննին ցնցոտիներով պատսպարուած, բզկտուած լաչակաւ մը գլուխնին քօղարկուած, բայց ոտունքնին մերկ, ու բոկոտն կը քալէին։

Կարաւանն արդէն աներեւոյթ եղած էր, երբ ասոնք ուղիղ ճամբէն խոտորելով ցանգի

մը խրամատէն ագարակ մը մտան, որուն ընտորոտը սաղարթախիտ ծորակի մը կը յանգեր, դէպ ի ծորակն առաջնել սկսան. ծորակին խորը հասնելու դեռ բաւական միջոց կար՝ երբ յանկարծ յղի կինը կանկ առաւ, ծառի մը բունին փարելով ողորմագին կողկողանօք գալարեցաւ. մանկուհին անմիջապէս յղւոյն քով վազեց նորա օգնելու, զի խեղճ կինը, ծննդաբերութեան երկանց մէջ էր: . . . . .

. . . .

Բառորդ մը յետոյ մայրն ու մանկուհին, նորածին երախան փայփայելով կարաւանին գնացած ճամբէն կ'անցնէին:

Այս խեղճուկ տեսարանը Տ. Օ . . . ի, և կալինիկէի վրայ մեծ ազդեցութիւն ըրած էր, կալինիկէ արտասուած, և Տ. Օ . . . ցերեկը գրգռեալ գիշերն ալ անքուն մնացած էր: Անկողնոյ մէջ տապալական մնալէ ձանձրացած, համառօտ աղօթք մ'ընելով ոտք կ'ելնէ կալինիկէի սենեակն ուղղուելով. ինքն ալ չէր գիտեր թէ, այն պահուն ինչո՞ւ համար հոն կերթար, միայն թէ, սովորութիւն ըրած էր իրեն չըքնացած ատեն զաւակացը քունն հսկել, որով շատ անգամ գիշերներն անոնց սենեակն այցելութեան կ'ելնէր: կալինիկէի սենեակին դուռը կիսաբաց էր. «անզգո՛ւշ» մրմռաց քըթին տակէն և ներս մտաւ. կայծակէ զարնը-

ուածի պէս անշարժ մնաց. սիրասուն աղջիկը անկողնոյ մէջ չ'էր, և ոչ ալ նոյն գիշերն ընկողմած էր, անկողինը պատրաստուածին պէս կը կենար. մարմարեա արձանի նման աչքերն անքթիթ անկողնոյ վրայ սեւեռած, ո՛չ քայլ մ'առնել, և ոչ ճիկ մ'արձակել կարողացաւ. հուսկ ուրեմն ձեռներն յերկինք բարձրացունելով. «Տէ՛ր Աստուա՛ծ, աղջիկս փախած է» մրմնջեց, արտասուք չունչին հետ դուրս զեղան:

Սենեակէն ելաւ, կամաց մը բակն իջաւ, փողոցի դրան նիգը դրուած չէր, այլ պարզունակով միայն գոցուած. պարզունակը դարձուց ու փողոցն ելաւ, գողգոջ քայլերը աղջկան տարփածուին տունն ուղղելով:

ԳԼՈՒԽ Ժ.

ՀՕՐ ՄԸ ԶԱՅՐՈՅԹԸ

Տիկին Օ . . . իրենց ծառային փողոցէն անցնելէն անմիջապէս յետոյ տուն դարձած էր, երբ դուռնէն ներս կը մտնէր, երկանը անհեղագոչ ձայնը ականջին զարկաւ որ կաղաղակէր:

— Անպիտաններ, տունս դատարկացած է և դուք դեռ կը խորդա՞ք։

Այս ահաւելի գոչիւնէն տան մէջ գտնուողները սարսափահար իրենց ննջարանէն դուրս կը ցատկեն։

Գ. Մ . . . բարկութենէն դունատեալ, ուժգին քայլերով գաւթին երկայնքին կերթեւեկէր. անդրանիկ որդին որ, ուշիմ, և սրամիտ երիտասարդ մ՚էր, հօրը այս տարօրինակ շարժմունքներէն առանց վարանելու իրողութիւնը գուշակեց. ասի թէեւ իւր քրոջ սիրոյն հաւանութիւն ցոյց տուած չէր, սակայն նոյնպէս ալ հօրը անողոք խստասրտութեամբ հաճութիւն յայտնած չէր։

Երբ քրոջը սենեակը մտնելով զայն թափուր գտաւ, ականողիք պղտորեցան, յանցանքին յաջորդող մեղամաղձոտ զղջումի պէս բան մը յուզեցաւ սրտին մէջ, հանդարտութեամբ հօրը մօտենալով ամոքիչ քաղցրութեամբ մը։

— Հա՛յր, բաւ, մեր ընթացքին անհրաժեշտ հետեւութիւնն էր այս, վշտանալու հարկ չկայ, «քիթը եթէ ճմլես արիւն կը հոսէ» կըսէ առածը։

— Լաւ՛, անիմաստ առակացդ լսելու պէտք չունիմ, քիթը եթէ ճմլես արիւն կը հոսէ եղեր, ո՞ր մարդարէն է այդ պատգամի որոտացողը, միթէ մարդ իւր քիթը ուզածին չափ ճմլելու իրաւունք չունի, ի՞նչ փոյթ թէ արիւն կը հոսէ։

— Բայց ներէ հայր, խոհեմութիւնը կը պահանջէր չը ճմլել, կամ գոնէ արիւնելու չափ չը ճմլել։

— Ո՛ւֆ, երկան ըրիր, մռնչեց բարկութեամբ ոտքերը գետին զարնելով. ճոռոմաբանութիւններդ վարի թաղեցւոց պահէ, հիմայ հնազանդէ ինծ միայն որ, վրէժնիս լուծենք, և պատիւնիս ազատենք . . . . . ա՛հ ելուզակ դո՛ւ. աւարդ շատ սուղի պիտի նստի քեզի։

— Մարգա՛ր, Մէմէտը դարձա՞ւ։

— Ո՛չ հայր։

— Շուտ ուրեմն տղայոց սենեակը մտիր, և մայրդ ինծ խրկէ, դու ալ Թ . . . ճամբայ ելնել պատրաստուէ; հիմայ Գ. Ս. և Գ. Մ. կուգան. դու Մարգարին հետ Եհնեցիք. Մէմէտ պատաուչին (չունը) հետ Խօռուչ, Գ. Ս. և Գ. Մ. ալ Սաղմկոյ ճամբէն Անջրդի պիտի խրկեմ. ցուցունեմ այն արիկային աղջիկ մը յափշտակելուն ձեւերը, ճանչցունեմ այն չլմտիին հօր մը դէմ վտարանջելուն դառնութիւնները . . . . . օ՜ն տղայք, շարժեցէք, իրենց նողկալի նպատակին չի հասած ձերբակալենք։

Տիկին Օ . . . որ սոյն միջոցին կթոտ քայ-

չերովսանդուղն ի վեր կելնէր, անհնարին սարսուռ մը զգաց երբ երկան սպառնալից գոռչիւնին վերջին վանկերն ականջին հնչեց։ Շատ լաւ կը ճանչնար նորա քենախնդիր, և վրէժալաւ բնութիւնը, ամեն պարագայի տակ, ամեն միջոցներով, առանց դեդևելու իւր նպատակին դիմել կը ժտեր։ Լիսանդրի խորամանկ դրութեանը քաջավարժ ըլլալով, ուր որ չի հասնիր առիւծէնին, հոն աղուէսէնին կը կարկտեր, բաւական էր թէ յաղթանակէր։

Մարգար, (Պ. Մ․․․ի երկրորդ որդին) մայրը տղայոց սենեակը չի գտնելուն վրայ զարմացած, հօրը քովը դառնալու առեն, սանդուղին գլուխը մայրը կը դիմաւորէ։

— Ա՛հ մայր, ո՞ւր էիր, գիտե՞ս ինչ պատահած է։

— Գիտեմ պատասխանեց տխրութեամբ, ու դէպի երկան կողմն ուղղեցաւ։

— Պ. Մ․․․ իւր հեզաբարոյ կինը տեսնելուն, փոխանակ զայրոյթը մեղմելու, առաւել ևս բորբոքեցաւ, յօնքերը պռստելով բիրտ ձայնով մը։

— Խաթո՛ւն, աղջիկդ ո՞ւր է ըսաւ հեգնաբար։

— Չեմ գիտեր պատասխանեց մեղմութեամբ, աչքերը գետին խոնարհած.

— Չե՞ս մի գիտեր, զարմանալի բա՛ն,

դո՛ւ որ, աղջկանդ պաշտպանը, մխիթարիչը, քաջալերիչը, և թերևս թելադրիչն իսկ եղած ես, ի՞նչպէս կրնայ ըլլալ որ կորսնցունես զայն, առանց ուր երթալը գիտնալու։

— Ձեր ըսածները ճշմարիտ են, բայց իմ ըսածս ալ ճշմարիտ է. ո՛ւր ըլլալը չեմ գիտեր,

— Ի՛նչ. ըսածներուս ճշմարտութիւնը կը խոստովանիս, ու միանգամայն կը համարձակիս ժխտել թէ՛ ո՛ւր երթալը չես գիտեր. ի՛նչ յանդգնութիւն է այդ կի՛ն դու, որ աղջկդ ցոփութեան կ՚առաջնորդես, կը թելադրես անառակի մը սէր տալ, կը խրատես զիրենք փախչիլ, յետոյ ալ անպատկառ լրբութեամբ զիս խաբել կը ժպրհիս․․․ ալ բա՛ւ է, ալ բաւ, այրական իշխանութեանս դէմ ա՛յսչափ անարգա՛նք․ կանանց ազատութիւն տալը այրերը նուաստացունել է, ո՛հ, ես ասիկայ քաջ գիտէի, բայց ապականեալ դարուս նորաձևութիւնները զիս ալ պատրեց. կիները ազա՛տ ընե՛լ, զանոնք ստրկութենէ ապահարկ ճանչնա՛լ, բայց ահաւասիկ հետևութիւնը, եթէ քիչ մ՚ալ աւելի արտօնութիւն տաս իրենց, պիտի յանդգնին իրենք զիրենք իբրև մարդ հրատարակել։ այլ ո՛չ, ջախջախեալ եղեգ մը, իշխանական գաւազանի մը չը կրնար համեմատիլ․․․․․ օ՛ն, պատասխանէ

հարցմանս, աղջիկդ ո՞ւր է, ի՞նչ ըրիր զայն։

— Ես բան մը չըրի, ես ալ քեզի պէս իւր կորուստը կուլամ, ես ալ իւր անխոհեմութիւնը կը կշտամբեմ, ես ալ արտասուալից աչերով զինքը կը բնտռեմ։

— Ա՛ ա՛, կը բնտռե՛ս, շատ լաւ. շուտ ուրեմն գտնելու, խրկած տեղդ դուն միայն գիտես, անոր տափական կրիցը օժանդակ ըլլալդ գուշակած էի արդէն, յայտնէ իրողութիւնը, ըսէ՛ ուր երթալնին, արտասուքներդ անկարեկիր են, յայտնէ՛ կ'ըսեմ եթէ ո՛չ. . . . . «եթէ ոչ» ի՞նչ արդեօք. — ինչ որ զօրագունէն առ տկարն. . . . ։

Պ. Ց. . . . ինչպէս ըսինք, ուշիմ երիտասարդ մ'էր, այս անհաճոյ տեսարանէն յուզեալ միջամտութիւն ընելու պատրաստուած միջոցին, ուժգին կերպով դուռը բաղխեցին, Մարգար անմիջապէս բացաւ. երկու բարձրահասակ պարմանիներ ներս մտան։

Այս երկու անձերը փիզիգապէս իրարմէ կը տարբերէին, մին արիւնային, միւսը ջղային խառնուածք ունէր. Պ. Ս. բարձրահասակ յաղթանդամ, թուխ գոյնով, սև աչերով, սուր պեխով, լեցուն այտերով կորիճ մ'էր. իսկ Պ. Մ. արոյրագոյն, ցանցառ պեխով, խորշոմ այտերով, նիհար մարմնով անձ մ'էր. աւերուն դէմքին վրայ երկու փայ-

լուն աչեր կը կրեր, որոնք կապոյտ գունով, դեղին ակնակապճով ականողեաց մէջ կը դալարէին, այս աչքերը զննող գանկաբանը ձախող գուշակութիւն մը պիտի ընէր, որ աչքերուն տէրոջը նպաստաւոր չը պիտի ըլլար. բայց բարեբաղդաբար, կամ դժբաղդաբար խորադիմայի պատահած չըլլալուն այս կէտն աննըշմարելի մնացած էր։

Այս երկու հակատիպ կազմուածները իրենց լանջաց մէջ համատիպ սրտեր կը կրէին, որոնք թէև տարբեր բաղխմամբ, բայց անտարբեր զգացմամբ համակեալ էին։

— Բարի գիշեր հաճի աղա, ի՞նչ է այս, ի՞նչ պատահած է ըսաւ Պ. Ս։

— Ինչ որ հաւանական է եղեր ըլլալ, ու ես չէի յուսար պատասխանեց. այն սրիկան, որ աղջիկս կնութեան առնել կ'առաջարկեր, չը կարենալով զիս համոզել յաջողիլ, աղջիկս հրապուրելով փախած են։

— Փախա՛ծ. . . ։

— Այո՛, երկու ժամէ ի վեր կը բնտռեմ, անհնարին եղաւ գտնել, որով պարտաւորեցայ գիշեր ատեն զձեզ անհանգիստ ընելով կանչել. չեմ կարծեր թէ գիւղիս մէջ ապաստանած ըլլան, որուն համար հարկ պիտի ըլլայ դուրսերը բնտռել։ Այս մասին ձեր օգնութիւնը կը խնդրեմ։

— Ցօժա՛ր սրտիւ Հաճի աղա, պատասխանեցին միաբերան. ի՛նչ ըսել է, քանի որ մեր գործը ձեր, ուրեմն ձերն ալ մեր է, անհոգ եղէք, մենք անշուշտ կը գտնենք զանոնք։

— Շնորհակալ եմ, ձեզ տեսնեմ ուրեմն, նա սրիկային աղուոր դաս մը տաք։

— Ուղածիդ պէս։

— Ի՞նչ ընթացք պիտի բռնենք։

— Ինչպէս որ դուք տնօրինէք։

— Ես կ՚ըսեմ որ, դուք երկուքնիդ Սաղմըկոյ ճամբով Անջրդի երթալու էք. Ց. Մարգարի հետ Եհնեցիդ, Մէմէտ ալ պատառչին հետ Խոռոչ։ Այս չորս գիւղերէն մին գընացած ըլլալու են, ուրիշ մօտակայ գիւղ քահանայ չըկայ։

— Քահանա՛յ ըսաւ Պ. Մ. ծաղրական շեշտով մը. խենդերը քահանան ո՞ւր պիտի գըտնեն, այս մութ գիշերուան մէջ. բաւական է որ զիրար գտած են, իրենց ուզած արարողութեամբը թող պսակուին։

Այս անհամ կատակը ընդունելութիւն չի գտաւ, թէև խօսքերը, «ի յաւելուածոյ սըրտի» և ոճը իւր կենցաղավարութեան մեթոտէն բղխած էին։

Պարո՛ն, ըսաւ, Պ. Մ . . . (ասոնք տարբեր անուններ են) բարկութիւնը զսպել ջանացողի մը շուրթերը կծկելով, պարոն, կաղա-

չեմ կատակնիդ ուրիշ ատենի պահէք. այս պարագայիս մէջ ձեր գործակցութեանը պէտք ունիմ և ոչ ծաղրածութեանը։

— Ուրեմն հրամայեցէք ըսաւ մեքենատիպ գործակալը որ գործենք։

— Արդէն ըսի։

— Բայց թերի։

— Հետեւութիւնն յայտնի է, ձեռքերնին յետին կապելով ինձ բերել։

— Օ՛ն, ուրեմն ըսաւ ընկերոջը ուսին զարնելով, դասերնիս առինք, մնացածը ճամբան կը սերտենք։

Երկու «գաղտնի վրիժառուները» ծանրութեամբ ոտք ելան, իրենց գործքին կարեւորութիւնը ճանչցնել ուզող ստորին նուիրակներու պէս գլուխնին տնկած, աչքերնին անձնապաստան սնափառութեամբ գետին սեւեռած։

— Հաճի աղա՛ մեզի մէկ մէկ բեր, ըսաւ Պ. Մ. ինչպէս որ կը տեսնէք, անզէն ենք։

— Մարգար կ՚ուտայ։

— Երթանք ուրեմն։

— Բարի յաջողութիւն։

Տեսակ մը յատկութեան տէր մարդեր կան, որոնք ինչպէս չարը, նոյնպէս և բարին անխտրաբար կը գործեն։ Առաքինութիւն և մոլութիւն երկու համանիշ բառեր են, սա՛

տարբերութեամբ, որ մէկուն յարգի, և միւսին անարգ անունը կ'ուտան. այսօր մէկուն անձնուէր բարեկամ, վաղն ոխերիմ թշնամի կ'ըլլան. երբեմն բարեբարոյ զգօնութեամբ հասարակաց համարումը գրաւելու չափ կը բարձրանան, այս բարձրութեան մէջ հազիւ նշմարելի կէտ մը կերեւայ, յանկարծ չարատենչ մղմամբ գահավէժ կը վերսուզին մոլութեանց անդունդին մէջ:

Այս անհաստատ բնութիւնը, անկատար բանականութիւնը, թերի կամեցողութիւնը, բնական սկզբո՞ւնք մ'է արդեօք, թէ՛ ըստացական ունակութիւն մը. թէ սկզբունք ըլլայ, և թէ ունակութիւն, երկուքին ալ ծագումը մէկ է. այսինքն ազատութեան ատենի վարժած, և ընտելացած սովորութիւնք:

Մարդերու ձուլարանը ընտանեկան յարկն է. այս գործարանին մէջ կը կաղապարին, կը ձեւակերպին դիւրաթեք արարածներ. ըստ կամաց, ըստ գաղափարի, և ըստ ընդունակութեան ձուլողաց իւրեանց:

Արապացի հեղինակ մը, տղայք երկու մասի կը բաժնէ, կէսը ծնողաց, կէսը իրենց անձանց. այս բաժանումը չափահասներու համար, պարտաւորութեանց կատարման մասին կրնայ ուղիղ ըլլալ, բայց անչափահասներու վերայ չենք կրնար այս բաժանումը գործել,

բաժանել ուզած ատեն պիտի յուշատենք: Միթէ չափահասները բոլոր իրենց կենաց, բոլոր իրենց գործողութեանց մէջ չե՞ն կրեր այն նախնական տիպարը, զոր ընդունած են իրենց տղայութեան ատեն: Այն զգացմամբ չե՞ն ապրիր ինչ որ մանկութեան հասակին ծնողք ներշնչած են. կրնա՞ն եղծել այն սովորութեանց չարքերը իրենց սրտին վրայէն, զոր դրոշմուած է մատաղ հասակնուն մէջ: Մեղադրելի՞ են արդեօք անոնք, որ իրենց ժառանգ տրուած դրամագլխոյն գործածութեամբը կապրին, կրնա՞նք յանցաւոր դատել այն զաւակները, իրենց ծնողաց կտակը գործադրելնուն համար:

Որդւոց յանցանքը ծնողաց, ինչպէս որ ժողովրդեան յանցանքը կղերին, ռամկին յանցանքը գիտունին, աղքատին յանցանքը հարուստին, ծառայից յանցանքը տէրոջ, և կանանց յանցանքը երկանց վրայ կը ծանրանայ:

Հայ հեղինակի մը յետագայ տողերը, ազդու փաստ մ'է մեր ըսածին, թէ մարդոց բարի՝ կամ չար, երջանիկ՝ կամ ապերջանիկ ըլլալուն պատճառ ծնողք են:

«Քաղաքական ատեաններու մէջ մահապարտ դատապարտեալ, և յանցանքնուն տոյժը կախաղանին վրայ վճարող այն անարգ եղեռնագործները, որոնց վրայ մարդիկ զզուանօք

և ատելութեամբ կը նայէին , երբեմն հրեշտականման դառնուկներու պէս մայրական սիրոյ հաւատարիմ բազկացը մէջ , նորա սրտաբուխ գգուանքները կը վայելէին ։

Ի՞նչ բան արդեօք անոնք այս վիճակին բերաւ . — Թէ որ քննելու ըլլանք թերեւս պիտի գտնենք որ անոնցմէ պինտ շատերը միայն ծնողական անհոգութիւնը այդ ցաւալի վիճակին մէջ բերաւ ։ Բարոյական կրթութեան պակասութիւնը , աշխարհիս չար ներգործութիւնները , և պիղծ ու գէշ օրինակները իրենց գործը լռելեայն կը կատարէն , ու մեր սրտակցորդ անուշիկ գառնուկները , վայրենի գազաններու կը փոխարկեն , որոնք իրենց լիրբ ու զազիր չարութիւններովը մէյմէկ այլանդակ հրէշներ կըլլան , այնուհետեւ ծնողք իրենց դատապարտելի թմրութենէն կսթափին , և կսկծին իրենց անփոխարինելի կորուստը ողբալ . » այլ ՚ի զո՛ւր ։

Մառախլապատ հորիզոնէն կախուած մեգեղէն ծածկոցները հարաւային տամուկ հովեն առնելով հետզհետէ դէպ ի յերկիր կը խոնարհէին . կապարագոյն ամպեր ծանրատաղտուկ օդէն յուղեալ ալեաց նման գլորար բաղխելով իրարու հետ կը միանան . հսկայաձև լեռներ և բլուրներ յօրինելով ։ Աշնան յետնորդ ծաղիկները կանխագուշակ մօտալուտ

փոթորկին , սուր և ազդու բուրմամբ կարծես բնութենէ գթութիւն կը հայցէն ։ Մըրրկալից մթնոլորտին տակ ամեն ինչ տխուր թախծութեամբ սքօղեալ է , երկինք աղջամղջին և յերկիր խաւարաւ կը սարսռեր ։

Հալածչաց խումբը առանց նկատելու տարերց սպառնալեաց , իրենց վարչէն տրուած հրամաննուն համեմատ , իրարու հակառակ ճամբաներու մէջ մտնելով իրարմէ զատուեցան , խոր մթութեան մէջ ցրուելով անյայտ եղան ։

Տարաբաղդ Տիկին Օ . . . աղջիկը վտանգներէ պաշարուած տեսնելով մայրական գորովոյ յոյզէն աղիքները կը գալարին , այլ ուստեքէ օգնութիւն չը կար , բարեկամները թըշնամացած , պաշտպանները հալածչութեան պաշտօն կը վարեն , յուսահատ և լքեալ աչքերը չորս կողմը դարձուց , երբեկը տեսաւ որ նարկիլէն կրակած սենեակը կը մտներ , այլ իմացաւ թէ , ամէն ջանք անօգուտ է . ուղղակի տանիմն ելաւ , արտասուօք ողողեալ աչերը դէպ ի յերկինք դարձունելով , ծնրադիր և բազկատարած , լուռ ու անմռունչ աղօթել սկսաւ ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՀՈՒՆՁՔ ԲԱԶՈՒՄՔ ԵՆ, ԵՒ ՄՇԱԿՔ ՍԱԿԱՒՔ

Հազարաւոր տարիներէ հետէ, մարդկային ընկերութիւնը իւր գլուխը կղերին դիւթիչ լուծին տակ դրած, նորա ոտքերուն խոնարհած, հրամաններուն հնազանդած, անոր ազդեցութեամբը ապրած, գործած և մեռած է: Կռապաշտութեան խաւարամած դարերէն 'ի վեր, ուր ժողովուրդ ազգեր, և վայրենի, լոկ բնազդմամբ կապրէին՝ կրօնն իշխած՝ և խուժանն հպատակած է: Այս կրօնքը թէև ժողովրդեան օգտակար ըլլալէ հեռի, մանաւանդ թէ աւելի վնասակար եղած է. սակայն և այնպէս կղերը, այն է կրօնից պաշտօնեաները միշտ իրենց բարձր դիրքը ժողովրդեան վրայ բռնացած, իրենք զիրենք պաշտել տալով իրենց կամքը իբրև օրէնք երկնից ակնածու հնազանդութեամբ ընդունել տուած են:

Քերթող կղերը շատ ճարպիկ է իւր արհեստին, գիտցած է բանաստեղծական լեզուաւ զժողովուրդս հրապուրել, սպառնալից պատգամներով ահաբեկել, ողոքիչ ճարտասանութեամբ առ ինքն յանկուցանել:

Այս սեւաքօղ դարերուն մէջ, ուր ժողովրդեան բաղդը քուրմերու կամքէն կախեալ էր, եղած են երբեմն այնպիսի վսեմ պաշտօնեաներ, որ, ճշմարիտ առաքելութեան պաշտօն վարելով ջանացած են վայրենի, անընտել, և անկրօն խուժանին, ընկերականութեան, կրօնի և ազգայնութեան գաղափարներ ներշնչելով, բանական արարածի արժանավայել հանգամանքներով դաստիարակել, զարթուցանել նոցա մտքերը, կրթել նոցա սրտերը, սիրոյ բոցը արծարծելով նոցա խաւարապատ հոգոյն վրայ, առաջնորդելով մարդկութեան և ընկերականութեան իսկական կենաց:

Տգիտութեամբ և մոլորութեամբ վարակեալ ժողովրդեան մը համար այսպիսի վեհանձն մարդոց երեւումը չէր այլ ինչ, բայց եթէ գիշերուան խոր խաւարին մէջ վառուած ճրագ մ'որ, հազիւ կը զօրէ աղօտ լոյսով մը իւր շուրջը միայն լուսաւորել: Եթէ այս ճրագը տեւական ըլլար, այն ալ մեծ բաղդ մ'էր ժողովրդեան համար, բռնաշունչ հողմունք յաճախ կը մարէին: Մէկ կողմէն Արամազդայ շանթերը, միւս կողմէն բռնաւորաց սրերը, արեամբ և արհաւրաւ աշխարհ համայն կը դողացունէին:

Հէ՛գ ժողովուրդ, մարտիրոսութեան բաղ-

նին վրայ տարածուած, յանուն կամածին կը-րօնի, յանուն քմահաճ օրինաց, հոգւով և մարմնով օրհասական կենօք կը տառապէր . . . :

Մինչդեռ կիսամեռ ժողովրդեան խաւարեալ աչերը մերձ էր 'ի փակիլ, յանկարծ Բեթղեհեմի վրայէն լոյս մը ծագեցաւ, որուն կենսատու ճառագայթներուն ցոլմամբը քուրմք և բռնաւորք սարսափահար դողդոջեցին, և մահամերձ ժողովուրդք գերընական զօրութեամբ ոգեւորեալ խայտացին :

Այս լոյսը՝ արդարութեան արեգակն էր :

Ո՛հ, այն օ՛րը, մեծ յեղաշրջում մը կատարուեցաւ յաշխարհի, երբ Բեթղեհէմի մսուրին մէջ խանձարուրով պատեալ մանկան վերայ գիսաւոր աստղը շողշողաց :

Սպառնալից շանթերը դադրեցան, բռնաւորաց սրերը փշրեցան, թագաւորաց գաւազանները ջախջախեցան, անոնց թագերը գլորեցան, իշխանք իրենց աթոռներուն վրայ սասանեցան, մեծք իրենց բարձրութենէն սուզեցան, վասն զի Սաղիմայ աշտարակաց վրայ հաւասարութեան և եղբայրութեան դրօշը բարձրացած կը սաւառնէր :

Ազգաց հարստահարիչները, ինչպէս ժողովրդեան ազատասէր որդւոց, նոյնպէս և մարդկութեան մեծ բարեկամին դէմ զինեցան. «Այս այս մոլորեցուցանէ զժողովուրդն պար-

տէ. բառնալ ի միջոյ» կաղաղակէին :

Քառորդ դար յետոյ՝ փրկութեան քառաճաճանչ նշանը Գողգոթայ լեռան վրայ կանգնած տեսնուեցաւ :

Արդարին արիւնը ժողովուրդը փրկած էր :

Սակայն փրկութեան հաւատքը, լուսաւորութեան ճաճանչը, ժողովրդեան աչուց մէջ դեռ չէր թափանցած. այս մեծ պաշտօնը կղերին առանձնաշնորհումն եղաւ, որ մեծ վարդապետը իւր աշակերտաց կտակեց. «երթայք յաշխարհ ամենայն և քարոզեցէք» :

Ո՛հ, եթէ կտակակատարք կտակարարին կամացն համեմատ շարժէին, Աւետարանի ըսկըսած մեծ գործը կատարուած կըլլար ցարդ :

Քրիստոնէութեան օրէնքը, որ սիրոյ և եղբայրութեան օրէնքն էր, թիւրեցին, կղերը որ այս սուրբ օրինաց ընտրեալ պաշտօնեան էր, անարժան վարմունքներով տեղի տուաւ ապօրինաւորութեանց, և որով հետզհետէ զեղծմունքներ մուտ գտնելով այլայլեցին այն երկնային կրօնը որ, Քրիստոսի փրկարար արեամբ նուիրագործեալ էր, ապիկար ընթացքով գայթակղեցուցիչ օրինակներով սառուցին զժողովուրդս յինքեանց :

Կրօնի պաշտօնը, ոմանք դիմակ մ'ըրին, ոմանք գործի մը, ոմանք արհեստ մը, և ոմանք միջոց մը իրենց զգայական ցանկութեանց յա-

գուրգին համար ։ . . . .

Օր մը Խարբերդու գաւառէն եկած քահանայ մը հիւրընկալեցի. խեղճուկ շինական մը, պարզամիտ գիւղացի մը, և զուտ ագէտ մարդ մ'էր. սակայն եկեղեցականաց յատուկ ողջոյնով կը բարևէր, մօրուս ունէր, քահանայական հագուստ և գլխարկ կը կրէր ։

Խօսակցութեան միջոցին, ինչպէս որ սովորութիւնս էր, խօսքերս յաճախ իր պաշտօնին և պարտաւորութեանց կ'ուղղէի. ինք կը շառագունէր, և ոչինչ կը պատասխանէր, որով հետաքրքրութիւնս գրգռուելով աղաչեցի որ՝ յառաջիկայ կիւրակէ մեր եկեղեցին պատարագելով քարոզ մ'ալ տալու շնորհն ընէ. անյարմար պատասխանով մը, առաջարկութիւնս մերժեց աչքերը գետին խոնարհած, որով գուշակեցի թէ, անկարող կը գտնուէր մեր եկեղեցւոյ բեմն ելնել, քարոզելու այնպիսի ժողովրդեան մ'որ պերճաբան եպիսկոպոսներն իսկ քարոզելու համար կը քրտնին ։ Ակնածութեամբ ձեռնը բռնելով ։

— Տէր հա՛յր ըսի, ձեր պաշտօնն ո՛ւսկի առած էք ։

— Վարդապետէ մ'որ, մեր քաղաքին առաջնորդն էր ։

— Ժողովրդեան հաւանութեա՞մբը քահանայ ընտրուած էք ։

Այս հարցումս կերևար թէ անհասկնալի թուեցաւ, պահ մը վարանելէ յետոյ,

— Այդպէս ըլլալու է պատասխանեց ։

— Ուրեմն ըսի ձեր արժանաւորութիւնը վկայեալ է, ինչո՞ւ չէք հաճիր խնդիրս ընդունիլ ։

— Չեմ կարող, չեմ կարող ըսաւ տխուր հառաչքով մը, և յետոյ շարայարեց. պարոն, կերևայ թէ բարեսիրտ երիտասարդ մ'էք, և հետևաբար չպիտի քաշուիմ ձեզի իմացունելէ թէ, ես կարդալ չեմ գիտեր ։

— Կարդալ չէ՞ք գիտե՛ր, զարմանալի՜ բան, ուրեմն քահանայ չէք ։

— Այո՛, քահանայ եմ միայն արտաքին երևոյթով, մօրուս, գլխարկ, վերարկու կը կրեմ, և որով քահանայ մ'եմ։

— Բայց ատոնք չեն քահանայի մը կարեւոր հանգամանքները ։

— Ո՛հ, այդ ըսած բառերդ անգամ չեմ հասկնար պարոն, ներէ որ համառօտիւ պատմեմ ձեզ քահանայալուս պարագաները որոնց այնչափ հետաքրքիր էք. միայն կաղաչեմ որ, խօսք տաք մեկու մը չըյայտնել, վասն զի գործուս արդելք կըլլայ ։ Խօստացայ նոյն միջոցին մեկուն չի յայտնել, և շարունակեց ։

«Ես Ց . . . գիւղէն եմ, իրարու մօտ ըլլալովնիս հարկաւ անունը լսած էք, մեր գիւ-

ղը երեսուն և ութ տուն՝ հայ բնակիչներէ կը բաղկանայ, փոքրիկ եկեղեցի մ'ունինք, որ գիշեր ցերեկ կերոն և կանթեղ վառել կը պարտաւորինք սակաւ ինչ լուսաւորելու համար. առ աչս աւազակաց լուսամուտ չունի։ Հայրս քսան և հինգ դահեկան ամսականով, մեռելոց կողոպուտով, մկրտութեան, և պսակի ընծայներով այս եկեղեցւոյն ժամկոչութիւնը իւր վրայ առած էր. երկրագործութիւն չունենալնուս համար ես ալ միշտ ստիպուած էի հօրս հետ եկեղեցին ըլլալ. սուր յիշողութիւն մ'ունենալով տասն և վեց տարեկան եղած ատենըս, մաշտոցը, շարականը, ճաշոցը, և ժամագիրքը գոց գիտէի, մեր ծերունի քահանային օգնականն էի. դպրութիւն, սարկաւագութիւն, տիրացութիւն, ամեն բան կ'ընէի, և եկեղեցւոյ վերաբերեալ ամեն բան գիտէի, բաց ի կարդալէն։ Մեր կողմերը կարդալու կարեւորութիւն չը տալնուն համար կարդալ չի գիտնալը ոչ ամօթ է, ոչ յանցանք, և հետեւաբար, թէ քահանան թէ հայրս, թէ ժողովուրդը և թէ ես բոլորովին անտարբեր էինք այս մասին։ Եւ գիտե՞ս անմտաբար ինչ կ'ըսէի. — գրել կարդալ գիտցողներն ինչ կ'ըլլան, — Տիրացու. — ահա՛ ես կատարեալ տիրացու մ'եմ առանց գրել կարդալուն պէտք ունենալու։ Եւ վերջապէս ինչ երկարեմ, հա-

զիւ 23 տարեկան էի երբ մեր ծերունի քահանան վախճանեցաւ. պարզամիտ գիւղացիներէն ոմանք, «Տիրացուին աչքը լոյս, քահանայութեան կարգն իրեն եկաւ» կ'ըսէին. հայրըս այս խօսքերէն գրգռեալ օր մը մեր գիւղին առաջակալին կը ներկայանայ, տասն և հինգ օր ձրի բան բանել, (մշակութիւն ընել) կը խոստանայ եթէ զիս քահանայ ձեռնադրել տայ, առաջակալը հաւանութիւն կուտայ, բայց միայն տասն և հինգ օր ձրի մշակութիւն ընելուն գոհ չ'ըլլար, ութ հարիւր դահեկան ալ սակ կը պահանջէ, հինգ հարիւրը տէրտէրցուին հետ առաջնորդին խրկելու, և երեք հարիւրն ալ ծախքի անունով գրպանը դնելու. հայրս ասոր ալ կը հաւանի, մեր փոքրիկ տունը գրաւ դնելով ութ հարիւր դահեկան պարտք կ'ընէ, և կ'ուտայ. հետեւաբար երկու ամիս յետոյ նորընծայ Տէր Գ... կոչեցին զիս. քառասուն օր բանտարկեալ մնալէ զկնի, հօրս ժամկոչ ըլլալուն պէս ես ալ քահանայ եղայ։

Նորընծայութեանս առաջին ամիսները շատ գոհ էի պաշտօնէս, ժողովուրդը կը պատուէր զիս, առատ առատ նուէրներ տալով. ես ալ եկեղեցւոյ մէջ պայծառ պայծառ կը կարդայի, և այնպէս ուշադրութեամբ գրոց վրայ կը նայէի, որ զիս չի ճանչցող մը չէր կրնար

կասկածիլ թէ կարդալ չէի գիտեր ։

Դէպքերը շատ յաջորդեցին, կամաց կամաց սկսայ համոզուիլ թէ, սխալ դուռնէ մը մտած էի, որուն մէջ որչափ յառաջէի անել խորխորատներու մէջ պիտի մոլորէի ։

Հայրս մեռաւ, ժողովուրդն հետզհետէ զիս լքանեց, մուրհակ մը գրել, ստորագրութիւն մը դնել չէի գիտեր, գիւղացւոց ալ կարեւոր պէտքը այս էր ։

Քահանայանալէ առաջ ամուսնացած ըլլալով զաւակներս բազմացան, ծախքերս շատցան, պարտքերս դիզուեցան, և աղքատութիւնը զիս պաշարեց. ժողովրդեանս դոյզն նուէրը ծախուցս անբաւական կ'ըլլար, որով ստիպուեցայ եկեղեցին գոցել, ընտանիքս ու ժողովուրդս թողուլ, ու ի դրունս հաւատացելոց շրջիլ ։ . . . .

Զը կարծես սիրելի պարոնս թէ, ես բացառութիւն մ'եմ, հայրենեացս դաշտերուն մէջ, ինծի նմանող ընկերներ շատ ունիմ. սակայն անոնցմէ ոմանք աւելի բարեբաղդ ըլլալով, մինչև ցմահ հանգիստ և երջանիկ կ'ապրին ։

Զարմանալի չէ, վասն զի բարեկամներէս մին ևս կը պատմէ թէ, Իէրապօլսոյ գիւղերէն մին գտնուելով, կիւրակէ օր մը եկեղեցի կերթայ, այն միջոցին որ, իւղաբերից Աւետարանը պիտի կարդացուէր, բարձրահասակ սպիտակահեր, պատկառելի դիմօք քահանայ մը, երկու կերոնակիր տղայոց, և բուրվառակիր սարկաւագի մ'առաջնորդութեամբ աւանդատունէն ելնելով ծանրաքայլ դէպ ի խորան կ'ընթանայ. բեմին վրայ ոսկեզօծեալ արծիւ մը, թաւշապատ, արծաթազրուագ Աւետարան մը թեւերուն վրայ տարածած կը կենար, եկեղեցական զգեստը խիստ փառաւոր, թանկագին, և հրապուրիչ էր ։

Եկեղեցին փառաշէն, և գեղեցկազարդ խորանները ոսկեզօծ դրուագներով քանդակեալ էր, որուն վրայի հարուստ զարդերը, ընտիր ճաշակաւ զետեղուած, ակնախտիղ պայծառութեամբ կը փողփողէին. ի մի՛ բան, այս եկեղեցին նկատողութեան առնողը, նորա շինողաց և զարդարողաց վրայ բարձր համարում մը կ'ըստանար, վերջապէս քահանան Աւետարանի մօտելով սկսաւ կարդալ. քանի՛ մեծ եղաւ զարմանքս, երբ այս քահանայի արտասանութիւնը լսեցի. բոլոր բառերն աղաւաղելով սրնթաց կ'երթար. օրինակի համար «ի վաղիւն» բառը «ի վավիղն» կարդալը, «մինչ մեք ի քուն էաք» բառերը, «մէջ մենք ի քուն էաք» արտասանելը ։ Ես այս սխալները արտասանութեան վրիպակներ համարեցի, բայց երբ ասպնջականիս տունը վերադարձայ,

այս մասին խօսք բացուելով իմացայ թէ, այս քահանան 30 տարիէ ի վեր Աւետարան կը կարդայ, միշտ «վաղիւն» «վալիղ» արտասանելով. թէև քանի անգամներ ազդարարութիւն եղած, ու սխալը շտկուած է, բայց ինք կամակորութեամբ «Նախնիքներէս այսպէս լըսեցի» ըսելով կը շարունակէ եղեր։

Այս քահանան իւր պաշտօնը ժառանգութեամբ ստացած էր, Ղևտական ցեղէ ըլլալուն համար, երբ ասոր քահանայ հայրը կը վախճանի, ինքը մաճ ի ձեռին դաշտեր կը հերկեր, մաճը կ'առնեն ձեռքէն Աւետարանը կ'ուտան, ինքն ալ մաճ բռնելու պէս Աւետարանը կը բռնէ. ինչ որ երկրի խաւերը շըրջելով կ'ստանար, նոյնը պիտի ստանար Աւետարանի թուղթերը շրջելով, սա՛ բարեբաղդ առաւելութեամբ՝ որ փոխանակ տապակէղ ցըրտահար ըլլալու, ծանրակիր աշխատութեանց տոկալու, փափկակեր, փափկակեաց, հանգիստ և անգործ պիտի ապրէր, յարգանքներէ շրջապատեալ կեանք մը պիտի վարէր. և ո՞վ չընդունիր այսպիսի պաշտօն մը երբ կը շնորհուի, ինչ փոյթ թէ՛ ստանձնած պաշտօնին արժանաւորութիւնը, և զայն վարելու կորովը չունի, քանի որ իրմէն չի պահանջուիր։ Ուրեմն պարոն Յ. Տէր Ա. ըլլալով այս բարեբաստութեան արժանացաւ։ Երանի՛ իրեն։

Խուռոչի քահանան որու դիմած էին Մուշեղ և Կալինիկէ պսակուելու համար, այս կարգի եկեղեցականներէն մէն էր, այսինքն երջանիկ ապրելու համար, աշխարհականութեան կապան հանած, եկեղեցականութեան վերարկուն հագած էր։ Ասի Խուռոչցի չէր, ոչ ալ Խուռոչի վրայ ձեռնադրուած, Հ...ցի էր, Կ..ի քահանան եղած։ Այս կարգի եկեղեցականները Ցուրիխի ձեռնածուաց կը նմանին. կարասինին ամփոփած ճամբորդելու պատրաստ, ո՛ւր տեղէ աւելի շահաւէտ հըրաւէր ըլլայ հոն կ'երթան։

Այս քահանան ալ արդէն քանի մը գիւղեր իւր արհեստն 'ի գործ դրած, ու անյաջող գտնուած էր. պատմութեանս միջոցին խուռոչցիներէ հրաւիրուած, անմիջապէս ընդունած ու հոն գաղթած էր, ինչպէս որ ատենէ մը յետոյ ալ Ս... գիւղը գաղթեցաւ։

Մուշեղ քանի մը բարեկամաց միջնորդութեամբ արդէն գործը քահանային իմացուցած հաւանութիւնն ստացած էր, որուն համար ամենայն վստահութեամբ Կալինիկէի հետ Խուռոչ դիմեց։ Խե՛ղճ երիտասարդ, չէր գիտէր թէ՝ շահադէտները ամէն ձևերու տակ կրնան ապաստանիլ, առիթները չի փախցունելով պարագաներէն օգտելու համար, եր-

բեմն կը խոստանան ստանալու գլխամամբ։ Ինչ որ է, այս համառօտ տեսութիւնն ընելէ զկնի դառնանք մեր պատմութեան։

Երբ Մուշեղ և Կալինիկէ Խոռոչ մտան. Տէր Խ... երէց կնոջ փափուկ բազկաց մէջ ընկողմնած կը ննջէր. յերկնից ստացած ձրի պաշտօնը, երկրի վրայ չհաւետ պայմանաւ վաճառել նրաղելով։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԱՆՅԱՋՈՂ ԵԼՔ

Ժամերը կը սահին, գիշերը կը յառաջէ, ազդարար հաւն արդէն իր առաջին ներդաշնակութիւն նուագած է։ Սիրատարփ ամոլք, անհամբեր ոգւով այն խորհրդաւոր պահուն կ՚սպասեն, յորում երկու անձ 'ի մի ձուլեալ իսկական կենաց վերածնունդը աւետէր։ Քահանայն կը յամէ գալ, ամուրեաց սիրտը անհնարին տագնապաւ կը յուզի, ասպնջականք կը զայրանան խոստումնադրուժ քահանայի դէմ ցասմնալից։ Սակայն վայրկեանները կը գլին, ժամացոյցի ճօճանակին մէն մի բաղխումը, կռանի հարուածներէն սիրահարաց սրտերուն։

— Վերջին փորձ մ՚ալ ըսին ամենը մեկէն յոտին կանգնելով, խմբովին քահանային ներկայանանք, խոստումը ճակտին զարնելով կատարումը պահանջենք. և սկսան քահանային բնակարանին կողմն ուղղիլ։

Այս խումբը հինգ անձերե կը բաղկանար, Մուշեղ և Կալինիկէ ձեռք ձեռքի տուած մէջ տեղէն կը քալէին. Պ. Թ. և Պ. Ց. երկու կողմէն կ՚երթային. Պ. Պ. ետեւնուն կ՚երթար, զոր տեսնողը խումբին պետը կը կարծէր։ Այս երեք անձերը Խոռոչի բնակչաց պատուաւոր մարդերէն էին, որոնք յառաջակալութեան և յետակալութեան պաշտօն միանգամայն կը վարէին։ Խաւարին մէջէն ծանրաքայլ կը յառաջեն, կղերի քաջագործութիւնք իրենց խօսակցութեան նիւթ ընելով՝ կը վիճէին ու վճիռներ կ՚արձակէին։

Քահանային քունը վրդոված էր արդէն, թէև ջանացած էր անուշիկ քունը մինչև ցյագուրդ վայելել, սակայն երկու սնգամիբարու վրայ անկողինէն հանելով անհանգիստ ընելնուն ալ չ՚էր կրցած քնանալ, հետեւաբար քունը բոլորովին փախած էր։ Մրմռալով անկողինէն ելաւ, կէս մը հագուած սենեակին մէջ ճեմել սկսաւ. Երեցկինը երեցի կէսն ըլլալով ինքն ալ պարտաւորած էր մասնակցիլ այն անհանգստութեան, յորում երիկն են-

թարկուած էր, կապան վրան առած յորանջելով անկողնին մէջ նստաւ աչքերը կարմրելու չափ շփելով, որ կարծես մութին մէջէն տեսնել կը ճգնէր։

— Ի՞նչու չի՛ պսակեցիր ըսաւ կէս քնով արթնցողի մը խռպոտ ձայնովը։

— Վախցայ, պատասխանեց անհոգութեամբ առանց նկատելու թէ, այս բառը իւր «հովիւ քաջ» ութեանը և կնոջն ալ սնափառութեանը կը դպչէր։

— Վախցա՛ր․ ի՞նչ կար վախնալու, միթէ ստա՞կ չունէին։

— Ստակ չունենալնուն համար չէր, անտարակոյս որ աղեկ պիտի վճարէին, բայց աղջկան հօրմէն վախցայ։

— Զարմանալի՜ բան, քանի որ աղէկ վճարելնուն վստահ էիր, վախ փախ չի նկատելով պսակելու էիր։

— Վերջն ալ վճարածնուն կրկնապատիկը տուժէինք հէ՜։

— Պա՜հ, ինչո՞ւ պիտի տուժենք եղեր, աղջիկը կոյս, տղան ամուրի, քանի որ զիրար կը սիրեն, պսակուիլ կուզեն, ու աղէկ ալ կը վճարեն «առեալ զձեռն Եւայի, տուեալ յաջըն Ադամայ» ըսէիր կը լմնար․ որով թէ բարիք մ՚ըրած կ՚ըլլայիր, թէ պաշտօնիդ պարտաւորութիւնը կը կատարէիր, թէ գիւղացւոց

հաճոյք մը կը պատճառէիր․ թէ դրամ կը շահէիր, և թէ նորէն քաղցրիկ քունդ կը շարունակէիր․ ի՞նչ զօրաւոր երկիւղ է որ, այսչափ աղեկութիւններ մեր ձեռքէն կը խլէ, և միթէ կարող պիտի ըլլա՞յ այդ երկիւղն այս կորուստները փոխարինել. եթէ կրնայ, լաւ, վախցիր ու մի պսակեր, տեսնենք ի՞նչ բարիք պիտի ստանանք։

Քահանան կը հիանար կնկան ճարտասանութեանն ու կորովամտութեանը վրայ, որ այսչափ բաներ իրարու ետեւէ շարելով խօսիլ գիտեր, չէր ժխտէր պատասխանել, զի մի գուցէ աղմկէ այն բեղմնաւոր խելապատիկը որմէ այս հանճարը կը բղխէր․ և սակայն տեսնելով թէ խօսելէ դադրած է պատասխանեց։

— Գիտե՞ս սիրելի երեցկին, իմ երկիւղի գլխաւոր պատճառ ի՞նչ է.

— Արդեն ըսիր։

— Ո՛չ, այն կատակի համար ըսի այնպէս չէ՛։

— Ի՞նչ համով կատակ, է՛յ ի՞նչ է ուրեմն ըսէ նայինք։

— Կը վախնամ թէ՝ առանց վճարածէն աւելի վճարող մը կը կորսունցունենք։

— Մի՞թէ։

— Անշուշտ։

— Բացատրէ նայիմ։

— Երբ այս երիտասարդն ինծ դիմելով աղջկան մը հետ պսակուիլը խնդրեց, ընդունեցի, նկատելով թէ այսպիսի պարագայի տակ կատարուած պսակ մը, ամենէն շահաւետ պսակն է. և հետեւաբար քանի մ՚ անտեղի դժուարութիւններ ցոյց տուի որ ինքն ալ անոր համեմատ վճարելիքը գիտնայ, զիրար հասկցանք, ես ալ հաստատապէս խօսք տուի զիրենք պսակել: Առջի օրը ինչպէս որ գիտէք Մ... գնացի Տէր Ա...էն մեղայ առնելու, իմացայ այս պաշտօնակցէս թէ այդ երիտասարդին սիրուհին, որուն հետ ինծմէ գիշերը գաղտնի պսակուիլ խնդրեց Գ. Մ...ի աղջիկն է եղեր:

— Ա՛, ա՛, իրա՞ւ կ՚ըսէք աղաղակեց երեցկին անկողնէն կիսամերկ դուրս ցատկելով, զարմանալի՛ բան:

— Մտիկ ըրէ՛ Գ. Մ... բաւական հարուստ, բանդետ, և ազդեցութեան տէր պատուաւոր մարդ մ՚է, եթէ այս մարդուն բարեկամութիւնն ստանանք աւելի շահաւոր չե՞նք ըլլար:

— Ա՛հ, լոկ բարեկամութիւնն ի՞նչ ընեմ երբ հետն ստակ չկայ:

— Անոր բարեկամութիւնն ստակ ըսել է. նախ որ՝ պսակէն առնուելիք վարձքին կրկինը կը վճարէ երբ չի պսակեմ. երկրորդ անոր միջնորդութեամբ մեր եկամտին վրայ աւելումներ կրնայ ըլլալ. երրորդ հզօր պաշտպան մ՚ունենալովնիս զօրաւոր ազդեցութիւն կունենանք. չորրորդ, ճշմարիտը խօսելով իրօք ալ կը վախնամ, պատմուածին նայելով, ուղղակի կամ անուղղակի այդ մարդուն ջիղերուն դպչողը, ուշ կամ կանուխ, յայտնի կամ ծածուկ ելեքտրիկի հոսանք մը կ՚ընդունի, որով բոլոր անդամները սարսելով կը կարկամին. նա՛ մանաւանդ կալելքի առենը եթէ յաջողինք կերպով մը գիւղս բերել, առատ ցորեն, գարի՝ վարսակ, ոսպ, սիսեռ և այլն կը հաւաքէ մեզ. ալ ի՞նչ գիտնա՛մ, շատ մը բարիքներ կրնանք յուսալ:

— Աղէ՛կ աղէ՛կ, շատ աղէկ ըսաւ երեցկին գոռոզ ծանրութեամբ մը որ, կարծես երեւակայեալ բարիքները արդէն վայելել կը սկսի, ի՛նչ անմտութի՜ւն, երկու անառակներ իրարու հետ պսակելու համար այսչափ բարիքներէ զրկուիլ, օխակալ մարդու մը թշնամութեանն ենթարկուի՛լ... կրողը տանի իրենք ալ վճարած ստակնին ալ. ո՛չ, մի՛ պսակեր մի՛ ինչ ալ ըլլայ մի՛ պսակեր. այդ մեծ մարդուն ծառայութիւն մ՚ընելը մեզի օգտակար կրնայ ըլլալ:

Մինչդեռ այր և կին ապագայ բարօրութեանց նախագծեր կը պատրաստէին, յանկարծ փողոցի դրան երկու հարուած տրուիլը լսե-

ցին. Երեցկին ձեռնը սրտին դրած անհանգստութեամբ երիկան նայեցաւ:

— Անոնք են ըսաւ քահանան, աչքերն յօնքերով կէս մը ծածկած, և դէմքը թթուեցուցած:

— Ուրեմն ի՛նչ պատասխան տանք ըսաւ երեցկին անհամբերութեամբ:

— Բա՛ց. տրուելիք պատասխանն արդէն պատրաստ է:

— Այսինքն չի պսակել այնպէս չէ՞. հաստատամիտ եղիր ըսաւ ու դուռը բանալ գնաց:

Քահանան ալ լուցկիք մը բռնկցունելով հողէ կանթեղի մը պատրոյգը վառեց, որով սենեակն աղօտ լոյսով մը լուսաւորուեցաւ:

Փոքրադիր, բարձր պատուհաններով, բաւական ընդարձակ սենեակ մը, աջ կողմը ահագին լայնութեամբ ծխնելոյզով, կաւէ շինուած կիսաբոլոր վառարան մը կար, տախտակաչէն գմբեթով պատած, որուն ճակատը հաստատուած ճրագկալին վրայ հողէ կանթեղ մը դրուած կը պլպլար: Սենեակին մէջ ամէն տեսակ նիւթէ խառն 'ի խուռն ցրուած պժգալի տեսարան մը կը ներկայացնէր, որուն վրայ առաջին անգամ ակնարկ մը ձգողը, պիտի համոզուէր թէ անհոգ և անկիրթ ճաշակի տէր մարդերու բնակարանը կը գտնուի. մէջ տեղը գետնին վրայ փռուած խեղճ անկողին մը

կար՝ որ հիւրերուն ներս մտնելու ատեն երեցկին ծալլելով մէկ անկիւն դրած էր. քահանան հապճեպով սենեակին պատուաւոր տեղը բազմեցաւ, մի՛ դուցէ այցելուք զինքն ոտքի վրայ գտնեն: Այս ձեւերը փառասիրութեան տեսակ մը յայտարար նշան են, իրենց բարձր դիրքը ճանչցունել ուզող անձեր յատկանիշ ընտրած են.

Այցելուք խոնարհելով քահանան ողջունեցին:

— Աստուած օրհնէ պարոններ պատասխանեց վերարկուով ծունգերը ծածկելով. իսկ Կալինիկէ յառաջելով քահանային ձեռն համբուրեց:

Պ. Թ. յառաջաբանն յանկարծ սկսեց, առանց սպասելու որ, գեղջկական բնակարաններու մէջ քաղաքավարական ձեւեր կատարուին:

— Տէր հա՛յր, ներեցէք գիշեր ատեն ձեր պատուական քունն ընդմիջելով զձեզ անհանգիստ ընելնուս, սակայն գործուն ստիպողականութիւնը պարտաւորեց զմեզ երրորդ անգամ անձամբ ներկայանալ ձեր հայրութեան աղաչելով որ բարեհաճիք այս երկու ամուրեաց սէրը պսակել:

— Արդէն լուր խրկած եմ ձեզ թէ՝ չեմ կարող այսպիսի ապօրինի ամուսնութիւն մը կատարել:

— Զարմանալի բա՛ն, ի՞նչպէս կրնայ ըլլալ որ, երկու օր յառաջ օրինաւոր ճանչցուած ամուսնութիւն մը, երրորդ օրն ապօրինի կը համարուի, ի՞նչ է պատճառն որ, երկու օր յառաջ հաստատամտութեամբ կը խօստանաք, և այսօր պատրուակաւ մը կը մերժէք ։

— Ըսածներս ոչ պատրուակ է, ո՛չ պատճառաբանութիւն, և ոչ ալ տուած խօստումս մոռցած եմ, այս գործուն նկատմամբ՝ 'ի վերջոյ ստացած տեղեկութիւնք կը պարտաւորեն զիս խոհեմութեամբ վարուիլ, անձս բամբասանաց, և պաշտօնս անարգանաց չենթարկելու համար ։

— Ի՞նչ տեղեկութիւն է այդ, և ո՞ւստի ստացած էք ։

— Ձեզ գիտնալ հարկ չէ ։

— Շատ լա՛ւ, եթէ տեղեկութիւն ստացած էիք որ այս ամուսնութիւնն անվաւեր է, և հետեւաբար չը պսակել որոշած էիք, ինչո՞ւ համար նոյն միջոցին ձեր որոշումը չը հաղորդեցիք պարոնին, մինչդեռ գործուն կերպին ու պարագաներուն տեղեակ էիք, ինչ միջոցաւ ձեզի դիմեցին ալ քաջ գիտէիք, զուր վըստահելով ձեր խօստման ամէն դժուարութիւն, անպատուութիւն, վտանգ յանձն առնելով, գիշերային արհաւրալից ժամերուն մէջ ձեր առը դիմեցին, և հիմա՛յ, ներեցէք համարձա-

կութեանս, և հիմա՛յ, այս վճռողական կէտին ձեր յամառ մերժումը բարոյապէս մահացումն է այս ապաբաղդ երիտասարդաց, որոնց հոգեւոր հայրը, բժիշկը, և խնամակալը կարգուած էք . . . ։

— Ներեցէք յանդգնութեանս Տէր հայր, ըսաւ Պ. Ց. որ ինքն ալ աստիճանաբար խռովիլ կսկսէր, ստացած տեղեկութիւններդ երիտասարդի՞ն թէ՛ օրիորդին կը վերաբերին ։

— Օրիորդին ։

Պ. Ց. դէպի Պ. Թ. ծռելով ականջին ի վար. — Պ. Մ . . . ի աղջիկն ըլլալը իմանալով պսակել կը վախնայ ըսաւ ։

— Ճիշդ է պատասխանեց Պ. Թ. լսելի ձայնիւ, յետոյ խօսքը քահանային ուղղելով, Տէր հայր, խնայեցէք խեղճ երիտասարդաց, ողորմեցէք, ձեր կարեկցութիւնը կը խնդրեն, հէգերն առանց պսակուելու չեն կարող Մ . . . վերադառնալ, եւ այս պսակը մինչեւ արշալոյս անհրաժեշտ կատարուելու է. Տէր հայր, ի սէր ձեր սրբազան պաշտօնի, ի սէր միակ որդւոյդ, և ի սէր ժողովրդեանդ մի՛ մերժեր մեր խնդիրքը որ արդէն խոստացած ալ էք, պսակեցէք այս երկու ամուսինները որ զիրար կաթոգին կը սիրեն, և որուն վաւերականութեանն համար, ահա մենք երեքնիս իբրեւ վկաներ կերաշխաւորենք . . . . . . հայր, ե-

թէ արշալոյսը ծագի, եղկելիներուն յոյսն ու լոյսը կը մարի, ասոնց թշուառութեանը պատճառ պիտի ըլլաք . . . . . . ։

Քարէ սիրտ մը կարելի է ամոքել, բայց փայտէ խիղճ մը արգահատանք չզգար ։

Պ. Թ. ի հանդիսաւոր կերպով արտասանած ամոքիչ խօսքերը, Պ. Ց. ի վստահեցուցիչ համոզումները, Պ. Պ. ի միջնորդիչ ջանքերը, Մուշեղի աղերսաւոր ճիգերը, Կալինիկէի նկուն կեցուածքը, անբարբառ աղաչանքը, ողոքիչ հայեցուածքը գթութեան պաշտօնէին փոխանակ խիղճը յուզելու բարկութիւնը բորբոքեցին. քինհատութենէ ուռած աչերը կնոջը վերայ դարձունելով կ'ուզէր այս խօսքերուն նորա վրայ ըրած ազդեցութիւնը գուշակել. բայց երեցկին դաժան դիմօք ստէպ ստէպ կը յօրօնջէր. որով երիկան քինն ալ աւելի գրգռելով, վայրկեան մը յառաջ ձանձրալի հիւրերուն ճամբու դրուիլը կը փափաքէին.

— Պարոններ ըսաւ դժգոհ դէմքով ու խռպոտ ձայնով, ժամավաճառ մի ըլլաք, թէ զձեզ, և թէ զմեզ անհանգիստ մի՛ ընէք, եթէ խօսք հասկցող մարդեր էք արդէն ըսի թէ չեմ կարող, և այս բա՛ն է. որոշումս տրուած է արդէն, ստեղծող Տէրն անձամբ գայ չէ կարող որոշումս փոխել ։

Բազմականաց մէջ տրտունջ մը, խոր շշունջ

մը լսուեցաւ, Մուշեղ և Կալինիկէ արձանացած մնացին, արմատէն կտրուած բոյսերու նման թալկացած գլուխնին խոնարհեցուցին. Նուիրական սարսափով մը համակեալ ոտք ելան, յուզեալ, վշտահար, լուռ ու անմռունչ մեկնեցան ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՄՕՐ Մ'ԱՂՕԹՔԸ ԶԱՒԱԿԸ ԿԸ ՓՐԿԷ

Գիշերուան թագուհին, կապարեա գաւազանաւ իր շրջանի երեք քառորդը չափած է արդէն ։

Հարաւային հովը մռնչելով կը սուլէ, խարխուլ դուռերն ու անփակ փեղկերը տարուբերեալ կը ճռան ։

Սպիտակագոյն ամպեր, թափանցիկ կոհակներու նման, ոսկեզետակայ ամայի լեռանց կատարներուն վրայ կը ծփան ։

Սօսկալի մշուշին մէջէն, մերթ ընդ մերթ օձապտոյտ փայլակներ սողոսկելով ամպեղէն քօղը կը ճեղքէ, որով պահ մը, նսեմ փայլով մը երերը կը լուսաւորուին ։

Խորոչի ձորամէջը տխուր վայր մը կերեւի ։

Ծաղկանց թագուհին քաղցրաբոյր նազանքներով հուսկ ողջոյնը տուած է արդէն, աշնան

ցրտասարսուռ եղանակը միգապատ քօղ մը տարածած է բնութեան գեղոց վերայ. տըժգոյն կաղամախք, թօշնած ուռենիք, նկուն և թալկահար տերեւաթափի վերադարձը կը գուժեն. Ծաղկունք իրենց բոյրէն զրկուած են, դալարագեղ մարգագետինք, ալ իրենց թարմութիւնը չունին : Ազազուն ծառոց սաղարթունքը, բռնաշունչ հողմեն յուղեալք, իրարու ծոց կընկղմին գոգցես զիրար պաշտպանել ջանալով, այլ թալկահար տերեւներն, իրենց հայրական զարմէն կանջատին անդարձ,

Հասկաքաղը լմնցած է, դաշտերը մերկ, խոպան և ամայի, խօղաններու մէջ խուզուած գլուխներու նման, ցորենի փնջոց ճղակոտոր արմատներ միայն կը նշմարուին. այլ ոչ ո՛ք կը խորհի այն արդաւանդ դաշտերուն վրայ, այլ եւս մէկուն հոգը չէ այն կենսաբաշխ հողուն համար՝ յորմէ քանի օր յառաջ մարդկանց ոգեպահիկը, ոսկեցօղուն հասկեր հնձուեցան. ալ փոյթ չէ թէ, պախրեից երամակներ կը ճախրեն նոցա վերայ, մինչդեռ քանի մ՚օր յառաջ, ուլան մը մօտիլը ոճիր կը համարուէր :

Բաբէ՛, այսպէս եղած է մարդկանց վարմունքն աշխարհի վրայ, մինչդեռ կը յուսան, կը յարգեն և կը խնամեն, իսկ երբ յոյսերնին ցրի՛ կամ օժտի՛ նոյն հետայն ամէն ինչ կը մոռցուի :

Ամպերը կը գոռան, հողմը սանձարձակ կը պտոյտկի տեղատարափ անձրեւ մը, սեւորակ և երաշտահար հողերուն վերայ բաշխելով, բարակ փոշիներէ կազմուած սիւնակներ ուրուականներու պէս լռին, և երերուն դէպ ի յօդս կը բարձրանան :

Մինչդեռ պասքեալ և հերձոտեալ երկիրն անյագաբար կը ծծէ երկնից զովարար ջուրը, թշուառ շինականք իրենց կազդուրիչ քունէն ընդոստ, լողփայտ ի ձեռին կը ջանան միաւորել տանիքներու վրայ բացուած ճեղքերն, որոնցմէ սպրդած անձրեւի կաթիլները, չիթ առ չիթ իրենց անկողնոյն վրայ իյնալով կը թացէ, և անուշիկ շուակնին քաղցրի՜կ նիրհէն կահարեկէ :

Լողփայտերն լողի ծանրութենէն կը ճռնչեն, ողորմելի կիներ կիսամերկ, բոկոտն անձրեւահար, գլուխնին քուրձէ շինուած վեղարներ անցուցած, տանիսին երկայնքին ու լայնքին ծանրութեամբ լողերնին կը քարշեն, անիծելով նախնեաց տգիտութիւնն ու իրենց յոռի դրութիւնը

Պատկից դրացի երկու կիներ, որոնց երկուսին ալ այրերը բազմաժամանակեա՛յ պանդխտութեամբ իրենցմէ բաժնուած ըլլալով, թշուառութեան ծանրութեանը հետ՝ լողին ծանրութիւնն ալ իրենց վերայ բեռնաւորուած,

երկերն արօրադրելու համար, գլուխնին սամեաց մէջ ինքնակամ գնելու վարժ դրաստուց նման, լողփայտի կապը բռնած կ'երթեւեկէին :

— Քուրուկ, (քոյր իմ) տուներնիս կաթելէն աւերակ դարձեր է, տանիսին հողը դընացած տաշեղները մնացած են, մեր մարդը (էրիկը) ստակ ալ չի խրկեր որ, կտրած գերանները նորոգենք... է՛հ, նորոգելն ի՞նչ պիտի ընէ. չարայարեց հեգնական տխուր ժըպտով մը, մեր տուներն ալ մեզի բաղդակից են քուրուկ՝ այն որ՝ ոչնչութեան դատապարտուած է, այն որ՝ անպիտան համարուած է, և այն որ՝ երեսի վրայ ձգուելու անողորմ ճակատագրին ենթարկուած է, միթէ՛ անոր բարւոքում կրնա՞յ ըլլալ, միթէ՛ նորոգում հնարաւո՞ր է, և միթէ՛ բարեկեցութեան կըրնա՞յ արժանանալ... ա՛հ ըսէ՛, քուրո՛ւկ. կրկնեց աղեկէզ շեշտով մը, մեր վիճակն անտանելի չէ՞ մեր կացութիւնն արգահատելի չէ, և միթէ՝ մեր կեանքն անմտութիւն չէ՞ :

Վշտերու. և տառապանաց տակ ճնշուած սրտերը, երբեմն քարանալու չափ կը պնդանան, և երբեմն ալ լուծուելու չափ կը նրբանան : Այս նուրբ սրտերն ուրեմն, ամենաթեթեւ յուզմամբ ուժգին կը թրթռայ, և բոլոր կենսական կարողութիւնք անըմբռնելի զօրութեամբ մը կը սարսին. լռին, և թալկադէմ,

սրտախոշոշ հառաչանքներ իրենց ոսկրուտ և նիհար կուրծերը կը բարձրացունէ, գլուխնին լանջաց վրայ կը ծանրանայ, և լողփայտի կապերը ձեռքերնէն կը թողուն արտասուաթոր աչքերնին սրբելու.... :

Այլկիէրի բանաստեղծին պէս, աղետալի դռան մ'առջեւ կը գտնուինք. իցի՜ւ թէ Հիւկօյի հանճարն ու քաջարութիւնն ունենայինք. այլ սակայն ի՞նչ օգուտ աղետաւոր դուռը բաղխելէ, երբ ամոքել աղէտներն անկարող ենք. և ի՞նչ օգուտ վէրքերը պեղելէ, մինչդեռ զայն պատելու պաստառ, և բուժելու բալասան չունինք :

Պինդորա բազմաղէտ տուփը դատարկուած է, յո՛յսը միայն, և ա՛յն ալ, բարէ՛, վախ և թալկադէմ կը նշմարուի անդ, 'ի խորն հերցուտեալ սրտից....

Երկնա՛յին էակներ, այս վշտաց հովտին մէջ ձեր տառապումները շատ խիստ է, ձեր զըրկումներն անփոխարինելի, թշուառութիւնն, ու աղխտութիւնը ձեր սիրոյ, և հաճոյից օրերը, արտասուաց, ու հառաչանաց մէջ խեղդեցին :

Գիշերուան 6րդ ժամն է : Անձրեւի սաստկութենէն, և հողմոց բռնութենէն, անասունք իրենց որջերն, ու թռչունք իրենց բոյները կը ապաստանին : Խուռչի ժայռուտ ձորակէն դէ-

պի յԱրքունի պողոտան տանող սարաւանդէն տորոտը երկու աղեւորներ կը նշմարուին, որոնք տաժանելի աշխատութեամբ յառաջել կը ջանան, քայլերնին անհաստատ է, ստէպ կը սահին, ու յետ կ՚ընկրկին, բոլոր ուղիները հեղեղներով պատած է, ալ ճամբան չ՚որոշուիր, հետքեր չ՚նշմարուիր, շաւիղներն անյայտ եղած են, որուն համար ստէպ ծռելով գետինը կը դիտեն, թէ՛ մի՞ գուցէ ուղիղ ճամբէն խոտորած ըլլան :

— Որո՞նք են արդեօք այս եղկելիները, և ո՞ւր կը դիմեն :

— Մուշեղ, և Կալինիկէ, սիրատարփ ամոլք. իրենց սէրը պսակելու յուսով Անջրդի կը դիմեն, երբ յոյսն ու սէրը իրարու միանան ի՞նչ չ՚են կարող գործել աշխարհի վերայ : Երիտասարդական աշխոյժ, սրտաբուխ, և անապակ սէր՝ յանձնապաստան եռանդ, ո՞վ կը նկատէ սարսռաւ հեղեղները, ո՞վ կ՚երեւակայէ գիշերային բազմադիմի փորձանքները, միթէ կ՚ընկրկի՞ն վտանգներէ, նեղութիւններէ, տառապանքներէ, կորկօններու սոսկալի դէմքը կարո՞ղ է ահաբեկել զիրենք, գորգոնեայ ժանտ երեւոյթէն կը զարհուրի՞ն միթէ . . . :

Ճգնաժամեր կա՛ն, որուն մէջ մարդս աննիւթ էակ մը կը դառնայ միտքն ու հոգին պահ մը զիրենք պարունակող հողեղէն պատ-

եանը մոռնալով կարծես հրեղինաց սահմանները կը դեգերին, մինչդեռ իրենց փշտահար մարմինը ժեռուտ դարաւանդաց վրայ ընդքարշ կ՚ուգայ : Մարդուս բնութեանը մէջ չ՚կայ այնպիսի զօրաւոր կարողութիւն մը, ինչպէս սիրոյ կիրքը, կիրք մ՚որուն ազդեցութեամբը մարդս անմահութեան տիպարը կը կրէ :

Այնչափ զարմանալի «հրաշագործութիւնք» նկատողութեան առնելով, մարդ կը փորձուի հաւատալ թէ, «մահկանացու էակներ՝ հողեղէն որդեր, վաղաթարշամ բոյսեր, ջախջախելի եղեգներ» ըլլան զանոնք գործողները :

Եւ ի՞նչ արդեօք շարժառիթ այսչափ ճգանց :

— Մարդս իւր կենաց պահպանութեանն համար սնունդի կը կարօտի, երբ սնունդը պակսի, մարմինը կը տկարանայ, կը թօշնի, և բոլոր գործարանները խանգարուելով կը լքանեն մարմինն, որով ամբողջ շէնքը կործանելու վտանգէն կ՚ենթարկուի. ուրեմն սնունդը անհրաժեշտ է կենդանեաց, ստամոքս իրենց կերակուրն ունենալու են, երբ այս գործարանը իւր պաշարէն զրկուի, մարդս ամէն միջոցներու կը դիմէ զայն հայթայթելու համար : Սիրտն ալ սնունդի կը կարօտի, սրտին սնունդը սէրն է, սէրն ալ ստամոքս մ՚ունի, զոր իւր յագուրդը կը խնդրէ, սէրն ալ կ՚ա-

նօթենայ ու իւր ճարակը կը փնտռէ․ ինչպէս որ մարմինը առանց կերակրոյ, նոյնպէս ալ սիրտը առանց սիրոյ չ՚են կարող կեալ։

Աստուած, ինչպէս պահապան հրեշտակ մը՝ նոյնպէս ալ սիրոյ հրեշտակ մը տուած է մարդուն.— պահապան հրեշտակը խիղճն է, սիրոյ հրեշտակը կինը։ Այն որ խիղճ չունի, գազան մ՚է, այն որ կին չ՚ունի հրէշ մը։ Խիղճը մարդուս հոգին կը կառավարէ, իսկ կինը անոր կիրքերը։ Երբ մարդս զգայուն խիղճ մը, և բարի կին մը չունի, կեանք ալ չունի։ Աշխարհիս ալեծուփ ծովուն վրայէն անվտանգ նաւարկելու համար, խիղճը ղեկն է, կինը խարիսխը, մարդս զգօն նաւապետի մը պէս կը պարտաւորի կանոնաւորութեամբ անիւները շարժել, և ահա՛ երջանիկ նաւահանգիստը կը գտնէ անվրէպ։

Հովերէ յուզուած աշնան չոր տերևներու նման հէգ սիրահարք ձորերը՝ բլուրներն, ու հովիտները մոլորաքայլ կը թափառէին։ Անձրևը մինչև ոսկրերնին թափանցած է, ինչպէս որ ամպն ու մառախուղը երկրիս վրայ ծանրացած կ՚արտասուեն, նոյնպէս ալ վիշտն ու անձկութիւնը երկիւղալի սարսափներով իրենց սրտին վրայ ծանրացած կը ճնշեն։ Կէս գիշերն անցած է, բայց ազդարար հաւուն ձայնը չը լսեցին, զի չէնքերէ հեռի կը գտնուէին, վտան-

գաւոր զառիվայրերու վրայ կը թափառէին։

Մինչդեռ այս միջոցիս հասարակաց պողոտային մերձիլը նշմարելով սակաւ ինչ ոգի առած քիչ մը հանգչիլ կը մտաբերէին, յանկարծ բաւական մօտէն լսուած գոփիւնի մը ձայնէն սարսափահար մնացին. պաղ քրտինք մը, մարմնոց ծակտիքներէն դուրս ժայթքեց, ելեքտրական հոսանքէ բռնուածի պէս երկուքն ալ սարսեցան. դէմքերնին որ հոգնութենէ և անձկութենէ վարդեգոյն ներկուած էր, կտրուած կաթի նման դեղնորակ սպիտակութիւն մը պատեց։ Երկիւղնին անհիմն չէր, ուղղակի լսուիլ սկսաւ գրաստուց պայտից չաչիւնն, և մարդոց վշշուկներ, որք յանդուգն ցեղի մը մարդոցը խօսակցութեան յատուկ ոճով, խառն ի խուռն իրարու հետ կը խօսակցէին։

Մարացիներու (Քուրթ) կարաւան մ՚էր այս, եօթն զինեալ տիտանեան մարդեր չորս դատարկ ջորիներ առջևնին ձգած կուգային։ Ակնէն ցորեան վաճառելէ կը դառնային, դիտմամբ իրենց ճամբորդութիւնը գիշերուան թողուցած էն, առևտուրին վրայ շահաւէտ յաւելումներ ընելու յուսով։ Ասոնց համար աւազակութիւնը առևտուրի ճիւղ մը համարուած է, այս պայմանաւ որ, առանց փոխարինելու կատանան. երբեմն եթէ աւարնին հարուստ ըլլայ, ուրախութեան ցոյցերով կո-

ղոպտեալին քաջալերութիւն մը կուտան իբր փոխարինութիւն ։

«Բարեկամս կըսեն մի՛ վշտանար, դարձիր նորէն վաստկելու և «կունենաս.» ինչպէս երկրագործութիւն, նոյնպէս յափշտակութիւն, ինչպէս հովութիւն, նոյնպէս ալ գողութիւն անխտրաբար կը գործեն, սա տարբերութեամբ որ, առաջին երկուքին մէջ խիստ յոռի, և յետնեալ, մինչդեռ երկրորդականներու մասին խիստ յառաջադէմ, և ճարպիկ են ։ Թէև ճամբորդները զանոնք ուրախացունելու չափ աւարներ չունէին, բայց հռչակաւոր հեղինակի մը ըսածին պէս, «կատուն նաւ նիհար մուկ մը բռնած ատեն կուրախանայ» նա՛ մանաւանդ որ, Թանկագին գանձ մը կար Մուշեղի հետ, Պարթենեան աւազակաց կարի հրապուրիչ գանձ մը, մի՞թէ զայն յափշտակել չը պէտի ջանային, կողոպուտ մ՚որ, իւր յանկուցիչ գեղովը աւելի պիտի գրգռեր վաւաշոտ գայլոց ջիլերը ։ Սոսկումնին արդարացի էր, և վըտանգը վերահաս, ի՞նչ ընեն երկու անզէն մանկամարդեր, մի՛թէ անոնց հուժկու բազուկներուն դիմակալել կարո՞ղ են, և եթէ դիմադրելու խիզախեն ի՞նչ հետեւութիւն պիտի ունենայ. — Մուշեղ տապատ, և Կալինիկէ գերի պիտի լինան, և մի՛թէ քաղցրաբանութեամբ, աղաչանօք, ողոքանօք, կարելի՞ է

մեղմել և ի գութ շարժել այն վայրենասիրտ բիրտերը, մինչդեռ իրենց բնուածը գտած են, և այն ևս յետ երկարատև, անձրևահար, և տաժանելի ճամբորդութեամբ մը ստացած — Ամենևի՛ն ո՛չ ։ — Ուրե՞մն . . . — զարմանալի՛ զուգադիպութի՛ւն ։ Այս դէպքը, ճիշտ այն միջոցին տեղի կունենայ, երբ Կալինիկէի առաքինուհի մայրը, իւր սիրասուն աղջկանն համար, բազկատարած և ջերմեռանդ կ՚աղօթէր ։ Աւազակք դեռ ուղևորները չեն նշմարած, իրենք բարձրէն կը գան, ուղևորները զառիվայրի մը գերբուկներուն վրայ կը գտնուէին ։ Մշուշը խիստ թանձր է, — թերևս վերին հրամանաւ . և սակայն քարընկեցի մը հեռաւորութիւնը հազիւ կայ որ, աւազակք ալ նոյն զառիվայրն իջնեն ։ Սոսկալի՛ վայր, որուն երկու կողմը ահագին ժայռեր, և բոլոր շուրջը մթութիւնով, խաւարով, մառախուղով պատած է, մօտակայ գիւղ, կամ հիւղ չկայ, ո՛չ ոք կը լսէ ձայներնին, ո՛չ ոք պիտի փութայ օգնութեան դիմել, յուսահատի՛չ վայրկեան ։ Այլ սակայն չեմ գիտեր նոյն միջոցին ի՞նչ երկնային զօրութիւն մը ներշնչեց իրենց սրտերուն, որք անխռով, առանց յուսահատական ճիգերու ուշադրութեամբ չորս կողմերնին կը դիտեն, յանկարծ Կալինիկէ կալվանական շարժում մը ըրաւ, ճամբէն 7-8

քայլ հեռի քարակոյտ մը նշմարած էր, նշանածին ձեռքէն բռնելով դէպ ի քարակոյտը դիմեց. քարակոյտը այնպիսի ձեւով մը բարձրացած էր որ, մարդաձեւ անդրիի մը կը նմանէր, նոյն ձեւով արձանացած անշարժ կանգնեցան, շունչերնին բռնած, ակամայ վհատութեամբ մ'աչքերնին գոցած, իբրեւ թէ զիրենք բռնելնին չը տեսնեն, եւ ձեռքերնին ուժգին կուրծքերնուն վրայ սեղմած, որպէս թէ՝ սրտին բաբախումն ալ պահ մը արգիլել ուզեն: Հազիւ աւազակաց կարաւանը քարակոյտի առջեւ հասած էր, յանկարծ անհուն շառաչմամբ անդրիաձեւ քարակոյտը կործանելով յերկիր տապալեցաւ, ջորիները այս յանկարծադէպ շառաչիւնէն խրտչելով ճամբայէն դուրս ցատկեցին, ու դէպ ի զառ ի վար ամենայն արագութեամբ փախչիլ սկսան, աւազակները ջորիներու կորուստէն սարսափահար՝ առանց չորս կողմերնին նայելու շտապաւ ջորիներուն ետեւէն սլացան, մութին եւ մշուշին մէջէն անյայտ եղան:

Անձրեւը դադրած է, ամպերը հիւսիսային պաղ հովերէն մղուելով Եթովպիոյ տապակէզ սահմանները կը դիմեն, մառախուղը հետզհետէ դէպ ի հորիզոն կը բարձրանայ, եւ երկինք տակաւ առ տակաւ կը պարզի:

Ուղեւորները Անջրդոյ մօտեցած են, ու-

րախութիւնը ճակտից, եւ ժպիտը շրթանց վրայ կը փայլի. վերահաս վտանգէն ազատած ըլլալու բերկրութենէն, պահ մը բոլոր իրենց վիշտերը, ճամբու յոգնութիւնները, անձրեւէն թրջիլը մոռցան. երկնից վրայ տժգոյն աստղեր, սիրահարած սրտերուն մէջն ալ աղօտ յոյսեր պլպլալ սկսան:

Արշալոյսը կը մօտի: Թէեւ չարաչար յոգնած են, բարոյապէս, եւ ֆիզիգապէս կրած վիշտերէն պարտասեալ, բոլոր զօրութիւննին սպառած է. վերջին ջանադրութեամբ մը, սիրոյ, եւ յուսոյ անխոնջ թեւերով, վերջապէս առաւօտը չը ծագած Անջրդի մօտն, եւ անտես 'ի մարդկանէ, Մուշեղի ազգականաց մեկուն տունն ապաստանեցան, համառօտիւ իրենց արկածներն ու նպատակը պատմեցին, եւ բռնելիք ընթացքնուն առաջին ծրագիրը պատրաստեցին: Կալինիկէ ստորերկեայ մառանի մը մէջ պահեցին: Տիկին Մ... (սիրահարաց ասպնջականը.) յուսադրեց եւ քաջալերեց զիրենք, առաջադրելով որ, առանց պսակուելու իւր տունէն չը պիտի մեկնին, որով տառապեալ ամոլք քիչ մ'ոգի առին, եւ կազդուրեցան. Տիկին Մ... եւ Մուշեղ եկեղեցի գնացին, թողելով Կալինիկէ առանձին իւր անողոք բախտին վրայ խոկալու:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ա Ն Ջ Ր Դ Ի

Անջրդի բարձրադիր, գեղեցկաշէն, և հովասուն գիւղ մ'է. ջրոյ նուազութենէ առնելով, անունը Անջրդի դրուած է. և իրօք ջուրը խիստ նուազ է, սակայն և այնպէս գիւղը զարդարող ծառերէ, և պարտէզներէ բոլորովին զրկուած չէ. հետզհետէ գիւղացւոց ջանիւք ջրհորները բազմանալով հաւանական է որ, քիչ ատենէն ջրոյ նուազութիւնը բոլորովին անզգալի ըլլայ:

Փոքրիկ ու մթին եկեղեցի մը, ընդարձակ և գեղեցկաշէն դպրոց մը, նաև հասարակաց համար հիւրանոց մ'ունին. յիսուն և վեց տուն հայ կայ, հինգ հարիւր վաթսուն և հինգ բնակիչներով, որոնց հարիւր յիսուն երեքը արական, երեք հարիւր տասն և վեցը իգական սեռէ են, և յիսուն և վեցն ալ տղաքներ: Երկու քահանայ ունին, ուսմանց մէջ բաւական յառաջադէմ են, 100 էն 5, հազիւ կայ գրել կարդալ չը գիտցող:

Նիւթական վիճակնին այնքան փայլուն չէ, բայց բաղդատմամբ իր դրացի գիւղակցաց առաւելութիւն մ'ունին: Երկրագործութիւնը թէև կը յարգեն, բայց յարատեւութիւն չեն

ըներ առանց նախնեաց դրութենէն մազի չափ շեղելու, որով երկրագործաց վիճակը բարւոքելու նշան մը չը կայ, բայց յոյս կայ:

Եկեղեցւոյ դրան, և իւր յարակից շրջապատին դէմ, մեծադիր, կրկնայարկ մութ կարմիրով ներկուած տուն մը կայ, որ նաև գիւղին առաջին փողոցի անկիւնը կը կազմէ: Այս տանը, փողոցին վրայ նայող, երեք կիսաբոլոր պատուհաններով ամառնային սենեակի մը մէջ, բարձր ձայնով խօսակցութիւն մը կ'ըլլար, որ թէև բոլոր եկեղեցի մտնողները այս ձայները կը լսէին, բայց ո՛չ ոք ուշադրութիւն կ'ընէր, վասն զի բոլոր գիւղացիք վարժուած էին այս տունէն միշտ բարձր ձայնով խօսակցիլ լսել: Սակայն կերեւար թէ այսօր արտաքոյ կարգի նիւթ մը կար, և վիճաբանութեան ենթարկուած կարեւոր խնդիր մը:

Գ. Մ . . . ի լրտեսները ըստ իւր հրամանի գիշերուան երրորդ պահուն Անջրդի հասնելով, իրենց պաշտօնը անթերի կատարած, և անյաջող եղած էին. Սիրահարաց հետքը չը կարենալ գտնելնուն վրայ զայրացած, և իրենց առաւօտեան սուրճը Գ . . . աղայի տունը խմել որոշելով ուղղակի հոն դիմած էին:

Գ . . . աղան վերոյիշեալ տան տէրն է, հիւրասէր բնաւորութեամբը, պժգալի հայհոյութեամբը, ծանծաղամիտ շատախօսութեամ-

ըը, հաչակաւոր անձ մ'է, և միանգամայն գիւղին առաջին կարգի հարուստներէն մին։ Չը կայ բարեբաստութիւն մը աշխարհիս վերայ որ, դառնութեամբ համեմեալ չըլլայ։ Այս անձը ինչպէս ըսինք, բաւական հարուստ էր, պատուական կալուածներ, գեղեցիկ տուն, ազնիւ ամուսին, տղաքներ, աղջիկներ, հարսեր, թոռներ, և գրեթէ ամէն բան ունէր, բայց ընաւ բան մը չ'ունէր, ուրիշները թերևս զինքը երջանիկ համարէին, սակայն ինք ամենայետին թշուառ մ'էր, վասն զի անդամալոյծ էր, սրունգներն ու բազուկները կարկամեալ էին, շարժելու և տեղափոխելու համար ուրիշի օգնութեան կը կարօտէր, և այն եպերելի երկու յատկութիւնքը, այսինքն, հայհոյութիւնն ու շատախօսութիւնը, թերևս այս ախտին յաջորդական հանգամանքներէն ծնունդ առնելով սովորոյթ մը եղած էին։

Մուշեղ Գ... աղայի որդւոյն բարեկամն ըլլալով գաղտնապէս զինքը տեսած, Անջրգի գտնուելուն գաղտնիքն հաղորդած, իր աջակցութիւնն ու հօրը միջամտութիւնը խնդրած, և ստացած էր։

Երիտասարդք սիրոյ մասին դիւրագրգիռ, և նախանձախնդիր են, ինչպէս կաթոլիկ կղերը քրիստոնեայները պապադաւան ընելու մասին։

Եկեղեցիէն արձակուողները հետզհետէ Գ... աղայի սենեակն ենելով բազմամարդ ակումբ մը կազմուած էր։ Մուշեղ ի ժողով հրաւիրուեցաւ, անվեհեր քաջութեամբ մը ներկայանալով յանցանքը չ'ուրացաւ. Կալինիկէի փախուստը խոստովանեցաւ, բայց ո՞ւր պահած ըլլալն յայտնել ժտեց. Ժողովի բոլոր ճիգերն 'ի դերեւ ելան Կալինիկէի ուր պահուած ըլլալն իմանալու։

Ուղտը պայտարին նայելուն պէս՝ Պ. Մ..ի գործակալները խոժոռ և չարագուշակ նայուածք մը կ'արձակէին Մուշեղի վրայ։ Ժողովականք երկու մասի բաժնուած էին, մին 'ի նպաստ Պ. Մ...ի, և միւսն 'ի նպաստ Մուշեղի. բաւական ատեն ժողովն յուզուեցաւ, և վերջապէս Մուշեղի կուսակցութիւնն յաղթանակեց։ Ժողովը ցրուելէն երկու ժամ յետոյ, Գ... աղան. Տէր Պ.. քահանան, և ուրիշ երկու երեւելի անձինք, ձիերու վերայ հեծած Մ... մտան, և ուղղակի Պ. Մ...ի տունը դիմելով հոն իջեւանեցան

Ընտանեկան յարկերու տակ, երբեմն այնպիսի սրտագրաւ տեսարաններ տեղի կունենան, որ՝ ո՛ և է անզգայ անձ մ'անգամ չ'կրնար անտարբեր աչօք, և առանց յուզուելու հանդիսատես ըլլալ. և սակայն՝ խիստ քիչերն այսպիսի տեսարանները նկատողութեան կ'առնուն,

բանաստեղծք, և քերթողք մեծաւ մասամբ երեւակայութեան թեւոց վրայ բարձրացած՝ իրենց տեսութենէն կը կորսնցունեն աղքատին հիւղակը, չինականին տնակը, և ընտանեկան յարկը· արծւոյ նման ժայռերու վրայ կ'ապաստանին, թագաւորաց պալատները, իշխանաց դահլիճները՝ և ազնուականաց ապարանքները կը ճեմեն, անոնց ոճիրներն ու հաճոյքները իրենց քերթելու նիւթ ընտրելով։

Այն հայրը, որ օր մ'առաջ առիւծի պէս կը մռնչէր, այն մայրը, որ պահապան հրեշտակի մը պէս թեւերը բացած ընտանեաց վրայ կը սաւառնէր, այն եղբայրն՝ որ պերճախօս ճարտասանութեամբ զամենքը կը զմայլեցունէր, և վերջապէս հարսերը, տղաքները, մանկիկները տան բոլոր անհատները բարեբաստ կենօք, ուրախ և զուարթ, իրենց հաճոյից օրերը կը շուայտէին.— Ի՞նչ պատահեցաւ սուղ ժամերու մէջ, ի՞նչ փոփոխութիւն կրեց, ի՞նչ արկածից դիպեցաւ այս թշուառ ընտանիքն. և ինչո՞ւ թշուառացած կ'երեւի։— Բաբէ՛, առիւծն ալ չի մռնչեր, հեզ գառնուկի մը պէս կը մրափէ. հրեշտակն այլ եւս չի շարժէր իւր փափկիկ թեւերը, կարծես անգութ սրոյ մը հարուածներէն յօշոտեալ է, պերճախօսն ալ չի ճառատէր, լեզուն 'ի քիմս կպած է, հարսերն ալ չ'են շաղակրատէր, մանկիկներն ալ

չ'են փողփողեր, ամէն դէմք տխուր, ամէն սիրտ տրտում, և ամէն աչ արտասուս համակեալ է........։

Պահ մ'յառաջ թերեւս յանցանք մը գործեցինք, հօր մը խստաբարոյութիւնը բռնութիւն անուանելով. թո՛ղ ներուի մեզ այս յանցանքը. հայր մը, և մայր մը նուիրական անձեր են, արժան է որ՝ ծնողաց թերութիւնք կարեկցաբար նշմարուին.

Երբ պատգամաւորք Գ. Մ...ի տունը մըտան, վերոյիշեալ տեսարանն իրենց առջև պարզուած տեսան, յորում պատրաստուած ծրագիրը, պահ մ'իւր նպատակէն շեղեցաւ։

Չենք ուզեր մանրամասնաբար նկարագրել ինչ որ տեղի ունեցան Գ. Մ...ի և պատգամաւորաց մէջ, մի՛ գուցէ մեր խնդրած ներումը զլացուի մեզ, և կրկին մեղադրանաց տակ գտնուինք, այլ այսչափ միայն կ'ասենք թէ՝ Գ. Մ... խիստ անողոք գտնուեցաւ, բնաւ ո՛ր և է զիջում չ'արաւ, հաւանութեան նշան մը չը յայտնեց, կարեկցութիւն չ'ունեցաւ։

Տիկին Օ... լռելեայն կ'արտասուէր, մըտովի կ'օրհնէր իւր զաւակն՝ և կը ներէր նմա. իսկ Գ. Ց... չէզոք դիրք մը բռնած էր որ, աւելի կողմնակցութիւն, և ակնածութիւն, քան թէ համոզում կ'արտայայտէր, եթէ հօր-

մէն չակնածէր, իւր ներումն ու հաւանութիւնը տալ չը պիտի ըլլար։

Պատգամաւորաց բանակցութիւնը երեք ժամ տեւած էր, առանց յաջող արդիւնք մը ունենալու, միայն խօսակցութեանց միջոցին, Գ. Մ...ի արտասանած անորոշ խօսք մը հաւանութեան նշան համարելով որ, ըսած էր Գ... տղայի, «իմ տեղս դու եղիր հայր, ներէ՛, և պահէ...»։ Այս երկդիմի խօսքը պատրուակ մ'ընելով մեկնեցան, Մ...ի Տէր Ա... քահանան հետերնին առնելով։

Մինչդեռ պատգամաւորք Մ...ի մէջ կը բանակցէին, անդին Անջրդոյ երիտասարդք հանդիսի դրօշակները պարզած, հարսանեաց հանդերձներն հագած, գրեթէ պսակի արարողութեան սկզբնաւորութիւնն ըրած են։ Ասոնք իրենց եռանդալից շարժմանց մէջ այնչափ յառաջ երթալէ զկնի, ալ զանոնք արգիլելը, կամ իրենց ձեռնարկէն կասեցունելը թէ՛ ոչ անհնարին, գէթ խիստ դժուարին և վտանգաւոր էր։ Ալ պսակն անհրաժեշտ կատարուելու է եթէ հաւանութիւնն ուշանար, բռնութիւնն առաջ պիտի անցնէր։ Թողունք որ, պահ մը ծերք երիտասարդաց հետ դաշնակցին, երկու ամուրի հիւրերու պսակը փառաւորապէս կատարելու, դառնանք գտնել ողորմելի Նալինիկէն որ, ստորերկրեայ մառանին մէջ, իբրև

կալանաւոր մի բանտի, սրտաճմլիկ հառաչանքներով կ'արտասուէր։

Ինչպէս որ տեսանք, սիրահարք Անջրդի մտնելէ անմիջապէս Մուշեղի առաջին գործն եղած էր, Նալինիկէ անմատչելի տեղ մը պահել որ՝ եթէ ուստեքէ պաշտպանութիւն չը գտնէ, գոնէ իւր սիրելին աներէն խրկուած լրտեսներուն ձեռքը չի մտնէ. թէև պաշտպանութիւն գտած, և ձեռնարկն ալ յաջողած էր, սակայն դեռ չէր վստահացած թաքստոցէն հանել զայն, մինչև այն վայրկեանին, յորում բազմութենէ շրջապատեալ ձեռք ձեռքի տուած եկեղեցի տան։

Նալինիկէ հառաչանօք կ'արտասուէր ըսինք, հէգ օրիորդը շատ մը պատճառներ ունէր արտասուելու. իւր հայրենի տունէն դուրս, մայրական գորովէ զուրկ, օտարներու խնամքով, անշուք կերպով իբրև շնորհ մը գաղտագողի պսակուիլ, պսակ մ'որ, խոցոտիչ փուշերէ բոլորած կը թուէր իրեն, թէև դեռ զայն դըլուխը դրած չ'էր։

Պսակուիլ առանց ծնողաց հաւանութեան, առանց անոնց ներկայութեան.... մինչդեռ ինքը իբրև իւր կենաց ամենէն երջանիկ և նուիրական օրը, իւր փեսայի հետ եկեղեցի կը դիմէր, անդին, իւր հայրական տան մէջ, հայր, մայր, եղբարք, ազգականք և բարե-

կամք, 'ի սուգ և 'ի թախիծ համակեալ իւր ապաշնորհութիւնը կ'ողբան, կը պարսաւեն, կը բամբասեն, կը մեղադրեն և Թերեւս կ'անիծեն։

Բայց՝, բարեբաստութիւնը անուանարկութեան հետ լծորդուած էր, կամ Թշուառ ըլլալու էր, կամ անուանարկ. եթէ հօրը հնազանդէր Թշուառ պիտի ըլլար, Թէև պերճաշուք տիկին մ'ըլլար, իսկ եթէ չի հնազանդէր, նոյնպէս ողորմելի պիտի ըլլար, անոնց երեսէն ձգուած, նախատուած, արհամարհուած, ժառանգութենէ զրկուած, և իբրեւ ցոփակեաց մ'առակ նշաւակի եղած . . . . . :

Կսկծալի բան մ'է այս, խորհող էակ մ'ըլլալ, և կամք չ'ունենալ, խորհրդածելու, գաղափարելու, որոշելու տրամադրութիւնն ունենալ՝ և զանոնք 'ի գործ դնելու արտօնութիւն չ'ունենալ. կամք, զգացում, յօժարութիւն, և բոլոր մտաւորական կարողութիւնք, զորս Ստեղծիչն առանց սեռի զանազանութեան անխտրաբար ամենուն շնորհած է, յափշտակել, զսպել, բռնանալ, կը նշանակէ դերութեան պժգալի պայմանաց լիուլի կատարումը։

Ի զո՛ւր ուրեմն կը պարծի քրիստոնէական աշխարհը Թէ, գերութիւնը ջնջուած է, Թէ ալ մարդիկ ազատ են։ Անտեղի բարբաջում մ'է այս, զորս ապագան «անիրաւութիւն» պիտի անուանէ։

Զենք համարձակիր կալինիկէի զգացումները մի՛ առ մի հրապարակել, համոզուած ըլլալով Թէ, ժողովրդեան մեծագոյն մասը դեռ այնպիսի գաղափարներէ կը խրտչի, և Թէ իրենց ականջներուն խորթ բառեր կը Թուին անոնք, Թողունք ուրեմն որ, ապագան իւր հունտերը բողբոջէ։

Մուշեղ և կալինիկէ պսակադիր ըլլալու վայրկեանին կը մօտին, տեղն է կարծեմ, որ դեռ պսակը չի կատարուած, Հարսանեկան արարողութեանց համառօտ նկարագիրը տանք ընթերցողաց, Թէեւ մեր նորատի պսակեալք դժբաղդաբար այս արարողութիւններէ զուրկ մնացին։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՔ

Գեղջկական հարսանիք մը, արքայազուն իշխանաց հարսանեացը նման քառասուն օր կը տեւէ. բարեխիղճ շինականք այս մասին բացառութիւն չեն ճանչնար, գերակայութիւն չեն ընդունիր, գոնէ այս մասին հաւասարութեան սկզբունքը պաշտպանելու քաջարտութիւնն ունեցած են. ինչ փոյթ Թէ՛ Թագաւորաց հանդէսները աւելի փառաշուք, աւելի

բազմածախ, աւելի հրապուրիչ և գեղեցիկ ըլլան, մինչդեռ աղքատ չինականը իւր պարզ, համեստ, և անշուք հանդէսը, բերկրութեամբ, գոհունակութեամբ և անթերի ուրախութեամբ կը վայելէ։

Հարսանեաց սկզբնաւորութիւնը «խօսք առումն» է, որ պսակէն եօթն օր առաջ տեղի կունենայ։ Փեսին կողմէն քահանայ մը, կնքահայր, կնքամայր, քանի մը բարեկամք և ազգականք հարսին տունը կերթան, ըստ չափու կարողութեան հետերնին հարսնցուին ընծայ մը տանելով։

Հարսին տունէն աղէկ ընդունելութիւն կըլլայ «խօսք առնումնորաց» երբեմն բազմածախ հացկերոյթներ, երբեմն պարզ նախաճաշիկ մը, կամ սուրճ և անուշեղէններ կը մատուցուին։ Երբ խօսք առնումնորք դառնան, հարսանիքը սկսուած կը համարուի։ Սոյն շաբթուն մէջ մասնաւոր հաց կեփեն, բաջուկներ կը շինեն, որուն վրայ ծաղկենկար դրօշմներ, և կամ այլևայլ նկարներ կը յօրինեն. մասնաւոր հացեր են ասոնք մէծկակ նշխարքի ձևւով, որ հրաւիրագրի տեղ կը գործածուի։

Փեսայի ազգականներէն երկու մանկամարդ կիներ, իրենց փառաւոր հանդերձներն հագած, երկ-կոյս պայուսակներ (հէյպէ) ուսերնուն վրայ ձգած, որուն մէկ կողմը

«Թուլուճան» (վերոյիշեալ մասնաւոր հացերը) միւս կողմը մանր մուեր դրուած կայ, իսկ միւս պայուսակը դատարկ է. հաւաքած ընծաներն մէջը դնելու կը գործածուի, և կսկսին գիւղին մէջ պտըտիլ։

Հրաւէրը երեք տեսակի կը բաժնուի. առաջին կարգի հրաւիրելոց «Թուլիճայ» մը, և մոմ մը միանգամայն կը տրուի. երկրորդ կարգին «Թուլիճայ» մը միայն. իսկ երրորդին մոմ մը միայն։

Այս գեղեցիկ հրաւիրակուհիք, աշխոյժ և շատախօս հէրանե՛ր. հրաւիրելու մտած տուներէն առանց ընծայ մ'առնելու չեն մեկնիր. այս ընծաներն ալ, իրենց նուիրածին համեմատ փանաքի բաներէն, այսինքն կտոր մը պաստեղ, (փեստիլ) նուռ մը, խնձոր մը և կամ բուռ մը նուշ, ընկոյզ են։ Խօսքառումի եօթնեկին հինգշաբթի երեկոյին փեսին տունէն թմբկին ու փողին ձայները լսելի կըլլան, ի մեծ ցնծութիւն քաղցրաժպիտ պատանեաց, և գեղադէմ օրիորդաց, որոնք մանկական պարզմտութեամբ առանց ո՛ և է նկատման, յախուռն կը դիմեն ի տուն հարսանեաց, պարելու, ցատկելու, և զուարճանալու համար։ Այս օրէն սկսեալ «հարսնետան» դուռները կը բացուին, հասարակաց տեղի մը կըլլայ կայն. հրաւիրեալ ըլլայ թէ ո՛չ, ծանօթ թէ անծա-

նօթ, բնիկ թէ օտարական, թէ հայ, թէ այլազգի, ամէն ոք անխտրաբար կրնայ մտնել, ո՛չ ոք կը հարցունէ թէ ո՞վ ես դու, և ինչո՞ւ եկած, ոչ ոք կը յիշէ Քրիստոսի առակը որ, այս առթիւ ըսած է, «ընկե՛ր, որ ոչ ունէիր հանդերձ հարսանեաց, զի՞ արդ մտեր այսր.» այն ժամանակ շատ մ'անտեղութիւնք կը վերնար, որ յաճախ կը պատահի աղմուկներու, խռովութիւններու, կռիւներու և վնասուց պատճառներ տալով:

Բագոսի բարեկամները կը խմբէին Աստղկան տօնախմբութեան նաւակատիկը կատարելու: Այս հեշտասէր դիցուհին, կռապաշտութեան դարերու մէջ, սահմանեալ տեղեր, որոշեալ օրերու մէջ միայն պաշտօն կ'ընդունէր, ինչպէս Կիպրոսի Իդալոս լեռը և Ապրիլ ամիսը Աստղկան նուիրեալ էր. Նոյնպէս Զերեկօ կղզւոյն բնակիչները ծովային խեցեմորթի մը համար հոյակապ տաճար մը կանգնած էին՝ որուն մէջ անառակութեան պաշտօններ կը մատուցուէր վաւաշոտ դիցուհւոյն:

Ռամիկ ժողովուրդը քուրմերէն պատրեալ, իբր Աստուածային, և փրկաւէտ նուիրմունք մը արբեցութիւն, անառակութիւն, խենեշութիւն, ամէն տեսակ լրբենի ցոփութիւնք անպատկառ կը գործէր:

Աստուածազդեցիկք (քուրմք) պատուոյ և

հարստութեան տենչանօք այս եպերելի մոլութիւնները կը քաջալերէին, արբեցութեան, սեղխութեան մէջ աւելի յառաջադէմները բարեպաշտօն և երկիւղած Աստուծոյ համարելով:

Քրիստոնէութիւնը՝ որ կռապաշտութենէ բան մը չունենալ կը կարծէ, և հեթանոսական խմորէն ինքզինքն անմասն կը համարի, շատ պարագաներու մէջ, սովորութիւններու և արարողութիւններու անուան տակ պահած է, և կը սնուցանէ եղ մը դիցապաշտական այլանդակութիւններ, որ ճշմարիտ քրիստոնէութեան սրբութիւնն աղարտած, և նորա վսեմութիւնը նսեմացուցած է:

Մեր նպատակը պարզ և համեստ զուարճութիւնները արհամարհել չէ, հարսանեկան հանդէսները պարսաւել, կամ իբր անտեղի սովորութիւնք դատապարտել չէ, այլ սա միայն յիշեցունել կուզենք թէ, պսակի սրբազան արարողութիւնը, որ խորհուրդ եկեղեցւոյ ընդունուած է, աւելորդապաշտութիւններու, նախապաշարումներու սեթեւեթներով չպարեալ, իւր բարոյական ազդեցութիւնը նուազած, սկզբունքը կարի իմն վնասուած, և տեսակ մը զբօսեցուցիչ հանդէսներու կերպարանք առած է, ի մեծ հաճոյս հեշտասէր անձանց, և ի մեծ նախատինս շահասէր և անզգայ կղերաց:

Հինգշաբթի երեկոյեան նուագահանդէսը նախերգանք մ'է միայն որ, ուրբաթի «չարագուշակ» պահքը կընդհատէ զայն: Այս միօրեայ զինադադարը մեծ կարեւորութիւն ունի հարսանիքի տէրոջն, որպէս զի պատրաստուի ընդունիլ այն մեծ բազմութիւնը որ, իւր աղքատիկ տունը ի հիմանց կը սարսէ: Շաբաթ առաւօտուն նորէն լսելի կըլլան թմբկին ու փողին անճոռնի ձայները: Այս նուագարանները (կամաչեմ նուագարան անուանելու) չեմ գիտեր ո՞ր դարէն ժառանգ մնացած այլանդակութիւն մ'է. սա միայն հաւանական է թէ, բացօդեա տանջանարաններու մէջ, և մարդախօշոշ կուռքերու զոհագործութիւնք մատուցուած ատեն կը հնչեցունէին այս տարտարոսեան նուագարանները, որպէս զի ահռելի դռնջիւնը արդելք ըլլայ լսելու անմեղ նահատակներու սրտաշարժ հառաչները:

Կիւրակէ առաւօտուն «ժողովրդասէր քահանան» եկեղեցւոյ բեմէն հարսանիքը ժողովրդեան կը ծանուցանէ, հրաւիրելով երթալ (հարկը) շնորհաւորելու: Եկեղեցւոյ արձակմանէն յետոյ կսկսի «շնորհաւորումը»:

Այս սովորութիւնը տեսակ մը օգնութիւն է հարսանիքի տէրոջը · մէն մի թաղի կինէր, շնորհաւորման նուէրնին ձեռքերնին բռնած, վրան գոյնզգոյն թաշկինակներով ծածկած,

խմբովին հարսնետուն կերթան նուէրնին մատուցանելով «հարկը շնորհաւորելու»: Այս նուէրները ըստ տաճկական առածին «չօպան արմըղանի, չամ սադըղի» է, ոմանք հարիւր տրամի չափ չոր լուբիա, ոմանք հոխայի չափ սոխ, այլք կէս հոխայի չափ դդումի չերտէր եայլն: Ամենէն գլխաւոր նուէ՛րը ողջ գառն մ'է, երկրորդը շիշ մը օղի և տասնի չափ հաւկիթ, երրորդը թեւ մը ոչխարի միս եայլն:

Շնորհաւորումի նուէրները փոխադարձ է, և անհրաժեշտ կատարելի օրէնք մը դարձած. շնորհաւորում գնացողներու օշարակ կը մատուցուի, պատիւ կը հրամցուի, և կամ թեթև նախաճաշիկ մը կը տրուի, ընծային և ընծայողին արժանապատուութեանն համեմատ: Կիւրակէ երեկոյեան մօտ հարսնեւորները խմբելով, թմբկով և փողով փեսին տունէն կը մեկնին ծանրաքայլ, հարսին տունն երթալու, անուղղակի ճամբայներէ պտոյտներ ընելով, պարելով, ցաթկելով, խմելով, զուարճանալով և հրացաններ պարպելով:

Մինչդեռ հարսնուորք ուրախութեան զեղխանքը բարձրանալու համար ճամբան հանդիպած տուներէն, գինի և օղի հաւաքելու կզբաղին, անդին հարսընցուին տունը, «հարսեղբայր» անուանեալ Տօն Քիչօթները հարսնուորաց զօրաւոր ընդդիմութիւններ ընելու

կը պատրաստուին։ Թէև հարսնցուին տան դուռը բաց կըլլայ, բայց հարսեղբայրները ձողերով, նիգերով և ջղապինդ բազուկներով կամրապնդեն զայն, պաշտպանողական դիրքով կը հսկեն, հարսնուորներէն ոչ ոք կը թողուն ներս մտնել. Տրէտոնեան թափորը երբ դրան առջին խուժի, բանակռիւը կսկսի, հեգնական և ծաղրական բացագանչութիւններով. հարսնուորները յարձակողական հարսեղբայրները պաշտպանողական դիրքով թատերական պատերազմ մը կը ներկայացունեն։ Հարսնուորները նախ հարսեղբայրներուն կաղաչեն դուռը բանալու, և զիրենք ընդունելու. աղաչանքնին անընդունելի կըլլայ, կըսկսին հրամայական կերպով բռնանալ, ճիգերնին ապարդիւն կը մնայ, ապա կսկսին մեծ մեծ խօստումներ ընել, անլսելի կըլլայ. հուսկ ուրեմն հարսնուորաց առաջընթացները, հարսնցուին և հարսեղբայրներուն մէկ մէկ ընծայներ տալով դուռը կը բացուի, աղաղակներով գոռում գոչումներով ներս կը խուժեն։

Կարգը կուգայ հարսնուորներուն գոռոզանալու, և հարսեղբայրներուն խոնարհելու, հարսնուորները կը հրամայեն, կը խնդրեն ինչ որ ուզեն. հարսեղբայրները հլու և կամակատար կը ծառայեն ակնկոր, բոլոր տրուած հրամանները անթերի կը կատարեն, ակռաներ-

նուն մէջէն մրմռալով միայն թէ «վաղը կը տեսնուինք»։

Խստերախ երիտասարդներ, խիզախ պատանիներ, արբշիռ մարդեր, շաղակրատ կիներ, ամօթխած կոյսեր, ծերեր, պառաւներ, մանկիկներ, ամեն սեռէ, և ամէն հասակէ իրար խառնուած կը պարեն, կը ցատկեն, կ'երգեն, կ'աղաղակեն, և հարսնետունը կը փըլցունեն։ Գեղեցի՜կ զուարճութի՜ւն . . . ։

Կը խմեն՝ չարունակ կը խմեն, գլուխնին տաքցած, դէմքերնին կարմրած՝ աչքերնէն կայծեր կը ցայտէ, գինւոյ և ցքոյ շոգիներու անդարամետական զօրութիւնը խորտակած է բանականութեան զսպանակը, դատողութիւնը մոլորած, խելքը գինաթափ եղած է, անսանձ կրից լայն ասպարէզ, ո՞ կարէ դիմակալել . . . ։ Հրա՜շք. — ի՜նչ պատահեցաւ, ո՜վ զարմանալեա՜ց, լռութի՜ւն, խաղաղութի՜ւն, անդորրութիւն, մոլեգնեալ խուժանը դիւթական զօրութեամբ արձանացած կը թուի, երկիւղած հանդարտութեամբ, դէմքերնին լուրջ, աչերնին խոնարհ, զգաստ և պարկեշտ կը մտախոհեն, — ոստիկանին սո՞ւրը, զինուորին սո՞ւինը արդեօք շողշողաց. — ո՛չ, քահանային շուրջառը, Մաշտոցին վարշամակը, խաչին փաղփիւնը այս հրաշքը ներգործեց . . . . երջանի՜կ ժողովո՜ւրդ, որ կրօնական իրերէ

ա՛յսչափ կը պատկառի. որ, կրօնականի մի սեւ փակեղէն այսչափ կ՚ակնածի, ի՜նչ աքանչելի պատեհութի՜ւն, ի՜նչ զօրաւոր առիթ ժողովուրդ մը ձեւակերպելու. — և ո՞վ պիտի ձեւակերպէ, մի՞թէ տձև կաղապարէն բարեձև իրեր կ՚արտադրի ։

Հանդարտութիւնը տիրած է. քահանային առջև մի փոքրիկ սեղանի վրայ դրուած կայ հարսին «հալաւը» և խօսքառնումի ջօրը փեսին կողմէն խրկուած նշանը ։ Բուրվառի մէջ քաղցրաբոյր խունկը կը ծխի, թերևս մաքրելու այն ապականեալ օդը, զորս հարսնուորք արտաշնչած են ։ Տիրացուներու խումբ մը քահանային կը ձայնակցին «հալաւ օրհնէքը» կատարելու ։ Քահանան հալաւ օրհնէքի սկսելէ առաջ, կապոցը կը շօշափէ իւր բաժինն որոնելու և անվրէպ կը գտնէ զայն՝ ու ծոցը կը թխմէ, որ է երկու քուլիճաներու (վերոյիշեալ հրաւիրագրի տեղ գործածուած մասնաւոր հացէն,) մէջ դրուած պնակաձև «հէլվայի» կտոր մը, որ, կը շինուի ալիւրով, իւղով, շաքարով կամ մեղրով ։

Երբ հալաւ օրհնէքի արարողութիւնը լրանայ, հարսնուորաց տիրապետութեան պայմանաժամն ալ գրեթէ կը վերջանայ, այնուհետեւ գլխաւոր հետղհետէ կը չուեն ։

Սոյն երեկոյեան ժամը մէկին տանեանները

«Թագաւորը» սափրելու, և փեսին լաթերն հագցունելու արարողութիւնը կ՚ըսկսի, Թագաւորը իւր գահին վերայ կը բազմի, բազմութիւնը չորս կողմը կը խռնի, մանկամարդ հարսեր, և օրիորդներ երկու դասի բաժնուած թափորաձեւ կը շարուին. երջանիկ սափրիչը ածելին փոկին քսելով գոռոզութեամբ կը յառաջէ, ծանր քայլերով Թագաւորին առջին կանգ կ՚առնու, և կ՚ըսկսի ուշիկ ուշիկ մորուքը չըյել. հուսկ ուրեմն շատ մը նաղանքներով թրջել, և աճառել կ՚ըսկսի ։ Սոյն միջոցին գեղանի Արտեմիսք քաղցրալուր աւաչներով երգել կ՚ըսկսին յետագայ տաղը ։

Ելիր բազմէ Թագւոր (1) ախպար
Որ, քեզ գովեմք գլխուդ 'ի վար
Անկէց դքու մազերդ ըսեմք
Որ, սրումայի թել նմանի ։

Անկէց դքու երեսդ ըսեմք
Որ՝ լուսունկի կաղ նմանի.
Անկէց դքու աչերդ ըսեմք
Որ՝ հրեղէնի բալ (2) նմանի ։

---

(1) Թագաւոր ։

(2) Փայլ ։

Անկէց ըսեմք ակռաներդ,
Որ, մարգարտի շար նմանի․
Անկէց զքու պօյըդ ըսեմք
Որ, չընարի տալ նմանի։

Սափրիչը կ՚ըսկսի ածիլել, բայց հազիւ մէկ ծնօտը կէս կըլլայ, յանկարծ ածելին կը թողու, «ըթացեր է չի կտրեր» կաղաղակէ․ հանդիսականները ածելին կտրել տալու համար կ՚ըսկսին կոնքին մէջ նուէրներ տեղալ, և վերջապէս մի քանի անգամներ այսպէս ածելին ըթելով, սրելով սափրելը կը լմննայ․ «Աստուած շնորհաւոր ընէ՛ աղաղակներով գահէն վար կիջնայ։ Խե՛ղճ թագաւոր, դահակալութիւնը որչա՞փ ալ կարճատև եղաւ։

Հանդիսականները անմիջապէս մի ուրիշ տեսարանի կը վազեն, և թագաւորը մի սենեակ հանուեցունելոյ կը տանին։

Լայն սրահ մը, բազմութեամբ լեցուած է, քահանան «գլուխն անփակեղ շուրջառօք գունեղ» մէջ տեղը կանգնած է, առջևն ունենալով մի փոքրիկ աթոռակի վրայ փեսին հանդերձները, որ «լաթ օրհնեքի» կարգ կը կատարէ։ Մաղթանքին վերջին բառը չի պըրծած բաղուկները կը կառկառէ «հէլվան» խլելու, զայն կը տեղաւորէ, և կը շակի․ աչերը փայլուն, գլուխը ձիգ, «Աստուած օրհնէ՛ ղձեղ

ժողովուրդ, ձեր բարի սովորութիւնները գիտէք արդէն․․․ շարժեցէ՛ք, շարժեցէք որ փեսան չի մնի․» բազմութեան մէջէն ձայն մը․ «Տէր պապա՛ փեսին փէսը 5 ղրշ․ իմ վրայ․» — «Աստուած օրհնէ՛, բարձրապատիւ այս ինչեան այս ինչ աղան (խե՛ղճ մարդ, թերևս ուրիշ ատեն ծօ՛ անգամ չէր․) փեսին փէսը գնելու համար 5 ղրշ․ տուաւ․ Նախախնամողը վարձահատոյց ընէ, իւր զաւակն ալ այս օրին հասցունէ, չունի նէ տայ ու հասցունէ․․․ ևայլն ևայլն։

Այս եղանակաւ փեսին բոլոր հանդերձները աճուրդի կը հանուի, մինչդեռ քահանան աճուրդը ոգևորելու, ժողովրդեան զգացումները յուզելու, շահը բազմապատկելու համար այս «բարի սովորութիւնները» գովաբանելով մինչև յերկինք կը բարձրացունէ, ողորմելի փեսան մերկ և բոկոտն ցրտէն սարսռալով կը դողդոջէ, բայց ի՞նչ փոյթ, բարի սովորութիւններ է, բարի պտուղներ քաղելու պատեհութիւնը կորսունցունելու չը գար։ Զգօն մարդե՛ր ո՛րչափ ալ գործունեա՛ էն։

Երբ այս «բարեսովորոյթ» աճուրդը լմննայ, մէն մի կտոր հանդերձի, «Աստուած շնորհաւոր ընէ՛» աղաղակներով կը հագուեցունեն։ Խեղճ թագաւորը, մարմարոնէ արձանի, կամ

շարժուն մեքենայի տիպարը կը կրէ, խօսիլ, խնդալ, մինչեւ անգամ ժպտիլ մեծ ամօթ է։ Երբ Թմբկին առաջին բոմբը լսելի ըլլայ, փեսան կը պարտաւորի ծանրաբարոյութիւն պահել; քիչ և կամաց խօսիլ, բնաւ չի «քնծրունիլ» (ժպտիլ) հարսանիքի վրայ բնաւ չի խօսիլ, տունէն դուրս չելնել, զուարճութեանց հակամիտութիւն չի յայտնել, եայլն, եայլն։ Ոմանք ալ փեսին այս բռնազբօսիկ համեստութիւնը գովաբանելով կըսեն. «Երանի թէ՛ այս սովորութիւնք բոլոր երիտասարդաց վերայ մշտատեւ յատկութիւն մ'ըլլար». բայց մի՛ աճապարէք, քըլթուն ըսածին պէս «հէլէ հօ՛» թող մէյմը պսակի վարշամակը վզէն իյնայ, անմիջապէս ընձառիւծի նման գոյնն ալ կը փոխէ սովորութիւններն ալ, (բացառութիւնք չը մոռնանք)։

Երբ Թագաւորն զգեստաւորի, քահանան կը չուէ. անմիջապէս մաղթանքներուն կը յաջորդէ Թմբուկն ու փողը, որ կը հրաւիրէ հարսնուորները «փեսին հինան խաղցունելու». Կնքամայր խաթունը ձեռքի մատերուն վրայ պնակ մը շաղուած հինայ առած, որուն չորս կողմերը մանր մոմեր կը պլպլան, ծանրութեամբ առաջ կուգայ և կսկսի պարել։ Փեսին ազգականներն ու բարեկամները կարգաւ կնքամօր ձեռքէն հինան առնելով իրենք ալ կսկսին պա-

րել, որով պարողներու թիւը հետզհետէ կը բազմանայ։

Հանդիսականք, (այր մարդերը) քսակնուն բերանը կը բանան, և կսկսին պարողներուն ճակատը ստակ փակցունել։ Այս մասին նախանձոտ մրձում մ'ալ առատաձեռն պարոններուն մէջ կսկսի, ի ցնծութիւն փողահարաց։ Այս նախանձայոյզութիւնք երբեմն այնչափ կը սաստկանայ, որ ունեցածնին սպառելէ զկնի կսկսին ասդիէն անդիէն փոխ ստակ առնել յուշկապարկաց նեղ ճակատները փայլեցունելու։

Հինան խաղցունելուն կը յաջորդէ տուսերամարտութիւն մը։ Թա՛չ Աքիւլլէանէ՛ր։

«Եւ ընդ ճամուկ ձեր գարշապար»
«Վառէ զորտեր»
«Եւ ջերմ իղձեր»

մրմնջելով հրապարակ կը գան։ Թմբկին ու փողին եղանակը կը փոխուի. երկու ախոյեաններ ձեռքերնին մէկ մէկ սուր, կամ եթէ սուր չը գտնուի, մէկ մէկ գաւազան առած մենամարտիլ կսկսին. վահանի տեղ ձախ ձեռքերնին հին կօշիկներ անցուցած, կը ծռին, կը շտկին, կը դառնին, երբեմն գաւազաններն իրարու կը բաղխեն, երբեմն կօշիկին, նորէն

կը պըկին, կը սողոսկին, կը յոգնին, կը քըրտնին. ըրածնին է ոչի՛նչ։

Կեցցէ՛ք, Ողիմպեան մանեակներու արժանի դիւցազնե՛ր։

Երբ այս խաղերն աւարտի, ամուրի երիտասարդք, որոնք «աղապ պաշի» կանուանուին, փեսին շուրջը բոլորած մի առանձին սենեակ կը տանին զայն, ուր արդէն կնքամայր խաթունը սեղան մը պատրաստած կըլլայ թաղաւորին և իւր պաշտօնակալացն յատկացեալ։ Թողունք պահ մը փեսան երեւակայութեան թեւոց վրայ հեշտալի երազներով օրօրուիլ, դառնանք մի ուրիշ տեսարանի հանդիսատես ըլլալու։

Ինչպէս որ թմբկի ձայնը լսելուն փեսան կը պարտաւորի ծանրաբարոյութեամբ շարժիլ ըսինք, նոյնպէս հարսնցու օրիորդը անմիջապէս գլուխը ծածկոցով մը գոցած տան մէկ անկիւնը ամփիլ կը պարտաւորի, որուն շուրջը բոլորած կը նստին շատ մը դեռահաս աղջկունք, որ «աղջիկ պահել» կըսուի, և աղջիկ պահելու գնացող օրիորդք հետերնին հարսնցուին դոյզն նուէր մը կը տանին։ Այս սովորութեան նշանակութիւնը չը կարացինք ըմբռնել, սակայն սա յայտնի է թէ, այս շաղակրատ հիւրերը իրենց ասպնջականը կարի իմն կը ձանձրացունեն, խառնագոյն վվլուկներով, անհանդարտ

ելեւէջներով և վառեակներու պէս շարունակ սեղանը կոցելով,

Կիւրակէ երեկոյեան աղջիկ պահողաց թիւը կը բազմանայ, (հարսնցու օրիորդը բնաւ փախչելու յօժարութիւն չի ցուցնէր, չեմ գիտեր թէ ի՞նչ հարկ կայ զայն պահելու) օրիորդաց հետ կ'ընկերակցին նաև նորատի հարսեր, և կիներ, հարսեղբայրներուն պէս, անոնք ալ «հէյպէորաց» զօրաւոր ընդդիմութիւններ ընելու, և խաղակռուոյն մէջ յաղթող հանդիսանալու կը պատրաստուին։ «Հէյպէորք» գիշերուան ժամը մէկին ատեններ փեսին տունէն կը մեկնին։ Այս հիանալի թափօրը կը բաղկանայ նորապսակ հարսերէ, օրիորդներէ, տղաքներէ և այլն, որոնք ջահերով, կերոններով, գոռում գոչումներով ճամբայ կ'ելլեն հարսնցուին տունն երթալու։ Թափօրապետուհին ուսին վրայ ձգած ունի երկաչք պայուսակ մ'որուն մէկ կողմը ազդր մը խաշած ոչխարի միս, և միւս կողմը քանի մը հատ խոշոր սոխեր դրուած կան։ Այսպէս ահա՛ «հէյպէորաց» կատարելու մեծ գործը պիտի ըլլայ, այս կտոր մը խաշածը, և քանի մը հում սոխերը նոր փեսայի կողմէն հարսնցուին տանել, որով թերեւս ըսել կ'ուզէ «թէ և քեզ պիտի սնուցանեմ, բայց կծութիւնն ու դառնութիւնն ալ չի մոռնաս։»

Երբ հէյպէորք գուռնէն ներս մտնեն կ՚ըսկսին տաճկաբարբառ խաղեր երգել, որուն անմիջապէս աղջիկ պահողք կը պատասխանեն բուռն յարձակմամբ, մէկ մը հէյպէորաց վըրայ կը խուժին, մէկ մը հարսնցուին վրայ կը լեցուին անմատչելի և անտեսանելի ընելու համար։ Տաճկաբարբառ խաղերուն կը յաջորդէ հայերէն խաղերն ի գովեստ օրիորդին, որոնց վերայ գաղափար մը տալու համար յետագայ քանի մը տողերը կը դնենք հոս,

Ման եկուր աղուոր ման եկուր
Դէպի մեր տունն 'ի դան եկուր։
Աղջի՛կ, քեզ ո՞ր մարնէ բերեր,
Ան թուխ աչվի մարնէ բերէր.
Մարն է բերեր մեղի համար,
Մենք ենք եկեր քեզի համար։
Ման եկուր աղուոր . . . և այլն. և այլն։

Այս միջոցին, պայուսակը որուն բերանները կարուած են, շարունակ օդուն մէջ կը թաւալի, հէյպէորք, հարսնեքոյրերուն, և հարմնքոյրք հէյպէորաց կը նետեն զայն, երկու կողմէն ալ յամառութեամբ պայուսակը ընդունիլ չեն ուզեր. կը պատահի որ, ճարպիկ պատանիներ, և կիներ խաժամուժին մէջէն կը խլեն զայն, և որով այս ծիծաղաշարժ զաւեշ-

տին տեսարանն ալ տխուր արարուածով մը կը վերջանայ։

Գիշերուան ժամը մէկ ու կէսին ատենները, կնքամայր խաթունը իւր խաղցուցած հինայի պնակը ձեռքն առած, «նուիրական» սենեակը կ՚երթայ, ուր «աղապ պաչիք» փեսին հետ առանձինն կը զուարճանան. (Այս աղապ պաչիները գիշերը փեսին հետ մէկ սենեակի մէջ կը ննջեն).

Կնքամօր տալու նուէրը, որ մէկ ղշ. էն մինչեւ մէկ ոսկի կրնայ ըլլալ, փեսան աջ ձեռքին մէջ սեղմած կը նստի, կնքամայրը պարտաւոր է բռնութեամբ ձեռքը բանալով ընծան առնել և հինայել, եթէ չի կարողանայ բանալ ու թողութիւն խնդրելով փեսան ինքնին բանայ, «քաջ փեսայ է», իսկ եթէ կարենայ բանալ «ապիկար փեսայ է»։ Կնքամայր խաթունը ինչպէս փեսին, նոյնպէս հարսին ձեռքերը հինայել պարտաւոր է, շատ անգամ հարսին ձեռքերն ու ոտքերը միանգամայն կը հինայեն, որ է նշան ծայրայեղ ուրախութեան։

Երբ հինայելու դերն ալ լմննայ, գրեթէ այս կատակերգութեան առաջին առարուածն ալ կը վերջանայ, ալ այնուհետև ամէն մարդ հոգնած ու լլկած վերմակնէրու տակ կը մըխըլճըկին։ Քեզ ալ բարի գիշեր սիրելի ըն-

թերցող, վաղն առաւօտ հարսնետուն հրամել չի մոռնաս ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՊՍԱԿ

Երկուշաբթի կէս օրէն երկու ժամ առաջ հարսնուորները կը խմբին հարսը տունէն հանելու, կնքամայր խաթունը արդէն երկու ձի պատրաստած է մին փեսին, միւսը հարսին համար ։ Թմբուկն ու փողը հարսնուորաց առաջնորդութեամբ հարսին դրան առջին կանգնած, սրտաշարժ եղանակներ կը նուագեն հարսին ծնողքն ու հարսը լացունելու ։

Խե՛ղճ արարա՛ծ, յորդառատ արտասուքներով իւր հարսնութեան «կապան» կը թացէ, պարտաւորած է հայրական տունէն բաժնուիլ, ստիպուած է տալ ձեռքը երիկան մը, զորս այլք ընտրած են. բռնադատուած է ըլծակցիլ այնպիսի անձի մը հետ որ, թերեւս բնաւ չի ճանչնար զայն, կ՚երթայ կապուիլ ցըմահ ամուսնութեան անխզելի կապովը ամուսնոյ մը հետ, որուն ո՞վ, և ի՞նչ բնութեան տէր ըլլալուն անգէտ է. ի՞նչ կ՚զգայ արդեօք այն նըկուն արարածը որ, անողոքելի բռնութեան մը

ռելեայն զոհ գնալու դատապարտուած է, ի՛նչ կ՚զգայ արդեօք այն խոհուն էակը որ, հակառակ իւր կամաց, ընդդէմ իւր հաճութեան պարտաւորած է խոնարհիլ այն վճռոյն որ կ՚ըսեն «հարս պիտի ըլլաս» ։

Ցուի դրութիւն մ՚է այս, որուն գործադրութեանը դաշնակցած են կղերք, և աշխարհականք ։ Կինը փոխանակ ազնուացնելու կ՚անասնացնեն. կի՛նը որ, ընտանեկան յարկին պահապան հրեշտակը, կղերին աշխարհականին, գիտունին և սուրբին նախախնամողն է, կինը՝ զոր գեղեցիկ սեռ կ՚անուանեն, չեն խղճիր անոր ամենագեղեցիկ զգացումները վիրաւորելու, կը նուաստացնեն զանոնք իբրեւ գրաստ մը մսուրին կապուած, և առանց շառագունելու ճակատ կը բարձրացունեն, առանց թոթովելու կը համարձակին ըսել թէ,
«կինը մարդուս գործիքն է, իւր ուզածին հա-
«մեմատ կը գործածէ զայն, թէ կինը հընա-
«զանդելու, և այրն իշխելու սահմանեալ են;
«և թէ կինը մարդոց ծառայելու, և անոնց հա-
«ճոյքը գոհացնելու սահմանեալ է ։

Աւա՛ղ, հայրենեաց թշուառութեան գըլխաւոր պատճառներէն մին, և հայրենակցաց պսպղուն ճակատներն արատող կէտերէն մին եղած է, ծնողք կարծես իրենց անխոհեմութիւնը այն միջոցին կ՚զգան, երբ ալ ամէն բան

լմնցած է, հարսանիքի փողը գաբրիէլեան փողին նման իրենց խղճին մինչեւ խորերը կը թափանցէ, կը փղձկին, կ'արտասուեն, սգաւորաց նման ողբ ու ճիչերով կը կոծեն։ Այո՛, կ'արտասուեն, բայց այս ապաշաւին նախապաշարումն ուրիշ մի անուն տուած է, այն է «հարսը գովել» (գովասանել բառը սգալ իմաստով կըմբռնեն)։

Մինչդեռ ծնողք և ազգականք հարսին երթը կը «գովեն» կնքահայրը խոնճաւոր դեղին կօշիկն, (ճիղմէ) հագցունելու, և գօտին պինդ քաշելու համար զանոնք մէկ կողմ հրելով, Գօնկրատայ յօշոտիչ մեքենային նման բազուկները կը կարկառէ, արտասուելէն, հեծկլտալէն կիսամեռ եղած խեղճ հարսին գօտին պինդ քաշելու, ցախ պեխին տակէն մռմռալով «հա՛րս, պնդեա՛ զմէջ քո»։ Այո՛, տոկալու շա՛տ մը տառապումներու . . . ։

Բիրտ մարդեր երբեմն այնպէս ուժգին կը պրկեն հարսին մէջքը, որ ողորմելին կամ արիւն կը փսխէ, և կամ ճնշարգել կ'ըլլայ։

Կարմիր գոյնը, նոր հարսի յատկացեալ գոյնն է, եթէ ներելի է, կ'ըսենք թէ՝ հրէութեան և հեթանոսութեան գոյներուն մէջ, քրիստոնէութեան գոյնը խիստ նուազ է, այն է ճերմակը, որ բաց 'ի շապիկէն, ուրիշ ճերմակեղէն չի գտնուիր հարսին վրայ։

Հարսին հանդերձներն ալ գրեթէ տեսակ մը տանջանք է, իրարու վրայ կը հագցունեն քանի մը բաճկոն, (էնթարի) վրայէն թանձր կապան, կապային վրայէն կարմիր վերարկուն (պինիշ), գլուխին վրայ փայտէ քառանկիւնի թագ մը կը ձեւացունեն, շատ մը լաջակներով փաթաթած, որուն վրայէն քօղ մը, քօղին վրայէն ալ փայլուն չղաշատեռը։

Երբեմն փափկակազմ օրիորդներ չը կարենալով սրտին յուզմանն, ու հանդերձանքներու ծանրութեանը տոկալ՝ կը հիւանդանայ, բայց ո՞վ նկատողութեան կ'առնու հիւանդութեան պատճառները։

Հարսնեքոյրները հարսին երկու կողմէն բռնած լալով տունէն կը հանեն, նոյն միջոցին հարսնուորներն ալ թմբկի և փողի ընկերակցած յատագայ տաղը կ'երգեն։

Եկուր աղուոր աղջիկ հարս եղար մեզի,
Նազուտ, զմրուխտ անգին քար եղար մեզի։
Ջեռք մի լաթ եմք բերեր վրեկդ անցուր,
Քեզ տանել եմք եկեր ծնողքդ լացուր,
Ոտքդ խետեմովէ դուն մեզ խնտացուր,
Եկուր աղուոր աղջիկ հարս եղար մեզի։

Աղջիկ մը կը տանին ալով ու լալով,
Գլուխն ալ է փաթտած վարդեգոյն շալով,

Մազերն ալ հիւսած սըռմայի թելով,
Ձեռքերն ալ կարմրած հինայի հինայով։
Մի՛ լար աղուոր մի՛ լար, կ՚ուլաս ի՞նչ կընես
Սի՛րուն, դուն մօրմէտ չի զատվիս հայ՝ ինչ ընես։

Եւ այլն. և այլն. և այլն։

«Հեռի սուրբը զօրաւոր կ՚ըլայ» կ՚ըսեն, գրկանք մ՚է պսակելոց եթէ շրջակայքը եկեղեցի կամ մատուռ գտնուի, և փեսան ու հարսը մօտակայ եկեղեցին պսակուին։ Այս մասին նախանձելի է Մ . . . գիւղը, իւր «Ճերմակ ձիաւոր սուրբ Սարգիսովը», որ եփրատայ ափանց վրայ կառուցեալ է, գիւղէն կէս ժամ հեռաւորութեամբ. ինչպէս որ պատմութեանս սկիզբներն յիշատակուած է։ Բարեմիտ կիներ կը հաւատեն թէ, սուրբ Սարգիս իր օդաչու ճերմակ ձիովը շատ մը կիներ գիշեր ատեն վտանգներէ ազատելով, իւր ձիուն գաւակն առած Մ . . . բերած է, որուն համար այն կողմերի կանանց պաշտպան սուրբըն է, և սուրբ Սարգիսեայ մէջ պսակուիլը ամուսնոց բարեբաստութեան առհաւատչեայն համարուած է։ Հեռաւոր եկեղեցի դիմելնուն պատճառներէն մին ալ փեսային, և հարսնուորաց ձի խաղցունելու ասպարեզ կարենալ ունենալն է։ Փեսան կտրճութեան երկրորդ

փորձը կը տայ 'ի ներկայութեան իւր հարսին, և առաջին պատեհութիւն իւր ամուսնոյն ծածկուած երեսը տեսնելու, որ ձին դարձունելու առթիւ աննշմար ակնարկ մը կը ձգէ առ հարսն։ Այսչափ միայն արտօնութի՞ւն . . ։

Երբ պսակադիր ըլլալու եկեղեցին հասնին, քահանան դասին մէջ կսպասէ փեսան ու հարսը խոստովանցունելու. ի՛նչ գովելի միջոց, ի՛նչ բարեդէպ յարմարութիւն, առաքինութիւն, բարեպաշտութիւն, պարկեշտութիւն ուսուցանելու, իրարու փոխադարձաբար ունեցած պարտաւորութիւննին բացատրելով, ըստ այնմ ընթանալ յորդորելու։ Քահանան իւր այս պարտաւորութիւնը ամուսնոց պսակուելէն գոնէ 15 օր առաջ կատարելու էր, և ոչ պսակելու վայրկեանին։ Ի՞նչ կրնան օգտիլ նորատի ամուսինք այս խոստովանութենէ. խեղճերն այնպիսի վիճակի մը մէջ կը գտնուին որ՝ ոչ ըսածնին գիտեն, ոչ լսածնին կըմբռնեն. չփոթութիւն չփոթութեան ամենայն ինչ չփոթութիւն է։ Ինչ որ է, փեսաներն ու հարսերն ալ այս տեսակ խոստովանական խրատներէ օգտելով «փը՛ռռ» եղած չեն ա՛ . . ։

Մանրամասնութիւն չորոնենք, «Առեալ զձեռն Եւայի, տուեալ յաջն Ադամայ» . . . . , «Որդեակ իմ փեսայ, մինչև ի մահ տէ՛ր ես» . . . ձայն չկայ, վասն զի փեսին խօսելու հը-

րաման չկայ․ Թեթեւ գլխու շարժումմը կ'ըլլայ, որ, ստորասական պատասխանի տեղ կը ընդունուի ։ «Եւ դո՛ւ որդեակ իմ հարս, մինչեւ 'ի մահ հնազա՞նդ ես»։ լռութի՛ւն, և ոչ իսկ թեթեւ շարժում մը կը նշմարուի․ շաղակրատ կիներ իրարու մէջ կը մրմնջեն, «ինչո՞ւ չ'է, ինչո՞ւ չ'է»․ Հէգերը փորձառութեան քուրային մէջ թրծուած են, հնազանդութիւննին տարապայման է ։

Պսակուելու միջոցին երբ փեսան ու հարսը գլուխ գլխի, ձեռք ձեռքի տուած, հանդիսաւոր արարողութեամբ երկու անձ 'ի մի կը ձուլին, նուիրակա՛ն վայրկեա՛ն ։ Երկու գլուխ մի քօղի տակ ծածկուած է․ կնքահայրը մերկ թուր մը, և խաչ մը անոնց գլուխին վրայ դըրած կը հսկէ․ պսակուողաց ձեռքերը իրարու մէջ կը դողդոջէն, փեսան իւր մատանին հարսին մատը, և հարսը իւր մատանին փեսին մատը կը դնէ ։ Այս փոխանակութիւնը աննըշմարելի կերպով քօղին տակ կը կատարուի ։

Պսակի սրբազան արարողութիւնը կատարուած միջոցին, փեսան իւր աջ ոտնը հարսին ոտին վերայ դրած պիտի ըլլայ ։ Երբ «Թագպարծանաց» շարականն երգել սկսին, քահանան եռակարգ շղթաներով երկու փոքրիկ արծաթէ խաչեր կը բերէ, որոնց շղթաներուն հետ կարմիր և ճերմակ թելեր հիւսուած են,

ամուսնոյ գլուխը կը բոլորէ․ փեսին գլուխը շատ անգամ ծաղկէզարդ կ'ըլլայ, կամ գոնէ «փեսածաղիկ» ըսուած կարմրագոյն ծաղկէն փունջ մը գտնուելու է ։

Երբ պսակն աւարտի, պսակեալք իրարմէ կը զատեն, հետեւաբար հանդիսականք ալ երկու մասի կը բաժնուին․ հարսնուորք փեսին, հարսնեղբայրք ու հարսնեքոյրք հարսին հետ կերթան ։ Նոյն միջոցին քահանան փեսին վիզը վարշամակ մը կը կապէ, ձեռքը խաչ մը, և վրան շուրջառ մը կը տայ․ փեսան շարունակ խաչը քթին դրած պիտի ըլլայ մինչեւ որ տուն ժամանէ ։ Այս մասին անհոգութիւն ընող փեսան ծանր հարբուխի կը պատժուի կըսեն ։ Բաժանումը հազիւ քառորդ մը կը տեւէ, քիչ մը հանգստանալու, և նախաճաշիկ ընելու ։

Փեսան ու հարսը «ծոմ բերնով» պսակուելու են, պսակէն առաջ ուտել խմել չըլլար․ Թմբուկը կը հնչէ, հարսնուորք կը խմբին, գալու ատեննին փեսին հեծած ձին հարսին, և հարսին հեծած ձին փեսին կը տրուի ։ Երբ փեսան ու հարսը իրենց ձիերն հեծնան, ալ իրարմէ անբաժան պիտի ըլլան մինչեւ որ պառաւք զանոնք խնկարկեն, փեսան առջեւէն հարսը ետեւէն կերթան․ հարսին ձիուն սանձը, փեսին ձիուն ագին պրկուած է որ չըլլայ

թէ , մէջտեղէն մարդ անցնի , որուն հետե-ւութիւնը խիստ գէշ է կըսեն ։

Կարգը կուգայ հարսնուորներուն խանար-հելու , և հարսեղբայրներուն բարձրանալու . կիւրակէ երեկոյին հարսնուորք ի՛նչ չափով որ չափեցին հարսեղբայրներուն , նոյն չափովը զե-զուն և թաթաղուն կատանան ։ Հարսնուորք կը-սէին, «մենք ձեր աղջիկն առնել կուգանք , պէտք է զմեզ հնաւորցունէք .» (գոհ ընել ։) Այսօր ալ հարսեղբայրները կըսեն , «մենք ձեզի փայ-լուն շղաշատեաւով նազելի հարս մը կը բերենք , դուք ալ պէտք է զմեզ հնաւորցունէք .» Հարս-եղբայրներուն նազանքը երբեմն չափազանց կըլլայ , երբ արքենան , անտանելի կըլլան . այն-պիսի խեղկատակութիւններ կընեն որ , համ ու հոտ չունենար . երբեմն ճամբան հարսնուոր-ները կը մերկացունեն , երբեմն գրաստին հա-կառակ կողմը կը նստեցունեն զանոնք ագին ձեռքերնին տուած , երբեմն ալ նեղութիւն տալու համար , այնպիսի բաներ կը պահանջեն որ , նոյն միջոցին դժուարագիւտ է ։

Երբ փեսին տանը մօտենան , ծնծղաներու ձայնն , ու չարակնի մեղեդին կը լռեցունէ թմբկին ու փողին ահռելի դռնչիւնը , ու խա-ժամուժին խառնագոչ աղաղակները ։ Սոյն մի-ջոցին փեսին առջեւ դառն , կամ ուլ մը կը զոհուի , ծնողք , և կամ ազգականք բարձր տե-

ղէ մը ամուսնոց վրայ մանր դրամներ կը ցա-նեն , զոր փոքրիկ տղաքներ զիրար հրմշտե-լով կը ժողվեն , դռնէն ներս մտնելու ատեն պառաւ կիներ փեսան ու հարսը կը խնկարկեն , խունկամանն երեք անգամ անոնց գլուխին վը-րայէն դարձունելով , շատ մը բարեմաղթու-թիւններով բարեբաստիկ ամուսնութիւննին կը դովաբանեն ։

Խնկարկութենէն անմիջապէս յետոյ ամու-սինք իրարմէ կանջատեն . հարսնուորք փեսին , և հարսեղբայրք հարսին հետ զատ զատ սեն-եակներու մէջ իրենց ուրախութիւնը կը շա-րունակեն , հարսն ալ սենեակին մէկ անկիւնը կանգնած , մտնող ելլողին ձեռները կը համ-բուրէ ։

Երբ չոր-թանէ[1] ապուրը գայ, երգն ու պա-րը կը դադրի , կեր ու խումը կսկսի . կերակրէն յետոյ բազմութիւնը կը ցրուի . հարսին քով պառաւ կին մը միայն , որուն «մամա» անունը կուտան , կը մնայ ։ Այս մամին քով ծրար մը խաղողէ և թութէ չինուած պաստեղներ , նուշ ընկոյզ , նուռ , խնձոր ևն . կայ , որ , հարսը տեսնել եկողներուն կը բաժնէ , որուն «նա-վալայ» անունը կուտան ։

---

(1) Որուն տեղացիները ԹԱՌԽԱՆԷ ՉՈՐՊԱՑ կը-սեն .

փեսան իր ծնողացը ձեռքերը համբուրելէ, և փոխադարձ համբոյրն ընդունելէն զկնի. կնքահօր թուրը մէջքը կապած հարսին տեսութեան կերթայ. սոյն միջոցին մամմն դուրս կելնէ դրան քով կսպասէ, երբ փեսան ներս մտնէ, հարսը ծանր ծանր առաջ կուգայ երիկան ձեռքերն ու ոտքերն համբուրելու. ձեռքը կը համբուրէ, երբ ոտքն ինկնալու կըլլայ, փեսան չի թողուր, կը վերցունէ զայն, և կը նստին:

Հարսը գրպանէն մեխակով, և շաքարով զարդարուած խնձոր մը կը հանէ փեսին կը նուիրէ. փեսան զայն մէջտեղէն թրովը կը կտրէ, կէսը ինք կուտէ, կէսը հարսին կուտայ: Այս տեսութիւնը խիստ կարճատեւ կըլլայ:

Սոյն երեկոյին, հարսնուորք, և հարսեղբարք նորէն կը խմբին «փեսան խաղցունելու»: Այս հանդէսը երբեմն խիստ փառաշուք կըլլայ, փեսին բոլոր ազգականներն, բարեկամները, և ծանօթները կը փութան այս հանդէսին ներկայ գտնուելով փեսին ճակատը փարայ փակցնելու. փակցուած ոսկի և արծաթ դրամները մինչեւ խաղին վերջը մնալու համար, կպչուն հիւթ մը կը քսեն փեսին ճակատըն ու այտերը:

Երջանիկ փեսան, իր «աղապ պաշի» նե-

րովը գիւղէն դուրս կ՚ելնէ փշատոյ ճիւղ մը կտրելու, զոր խաղալու (պարել) ատեն մանր մոմերով զարդարած ձեռքը կը բռնէ: Երբ պարըն աւարտի, ալ ամէն մարդ հարսանիքը շնորհաւորելով կը մեկնի: Հարսին հետ եկող մամմն երեք գիշեր փեսին ու հարսին մէջ տեղը կը պառկի:

Պսակէն երեք օր յետոյ, քահանան կուգայ, փեսին ու հարսին ազգականները կը հաւաքուին «պսակաբարձի» արարողութիւնը կատարելու, փեսին գլուխին խաչն, ու վզին վարշամակը, նոյնպէս և հարսին փայտէ թագըն՝ ու խաչէ պսակը վար կ՚առնեն, գովաբանական բարեմաղթութիւններով:

Սոյն երեկոյին օժիտաբերք, հարսին ազգականներէն, բարեկամներէն տաս, տասներկուքի չափ տարեւոր կանայք, օժիտը բեռնակրի մը տուած, իրենք ալ առջեւէն շարուած կը գան. նաեւ փեսին նուիրելու ընծայներ կը բերեն, մամային բաժնած նավալայի նիւթերէն, մասնաւոր «աղապ պաշի» մը փեսին քով կանգնած, այս նուէրներն կ՚ընդունի:

Փեսան, պսակուելէ տասնեհինգ օր յետոյ «փեսատուն» կ՚երթայ, այն է՝ առաջին անգամ աներոջը տունն այցելել: Երբ դրան մօտենայ՝ զոքանչը ոստախիտ կոճղ մի կը ձգէ փեսին առջին, և ձեռքը տապալ մը կուտայ

որ, այն կոճղը ճեղքէ, այսինքն, «օտուն եառըճի» ութիւն ընէ, իւր քաջութիւնը յայտնելու համար, փեսան գոռոզութեամբ մը, տապարը կ'առնէ, երկու հարուած կուտայ, երրորդին տապարը կոճղին մխուած թողլովներս կը մնէ ։ Մեծ յարգ կուտան, և փառաւոր ընդունելութիւն կ'ընեն թէ՛ փեսին, և թէ՛ իւր ընկերացը, բազմախորտիկ հացկերոյթներով, և պատուական գինիներով կը պատուեն զանոնք ։

Ներակրէն յետոյ, զոքանչը տանը մէջ գտնուած բոլոր կղպանքներուն բանալիները սըրձակ մ'ըրած կը բերէ փեսին առջը կը դնէ, հասկցունել ուզելով թէ՝ բոլոր ստացուածոցս բացարձակ տէրն ես. փեսան շնորհակալութեամբ կ'ընդունի, և երթալու ատեն նորէն զոքանչին կը յանձնէ ։

Ամիսէ մը յետոյ «հարսհրաւէր» կըլլայ, նախ հարսին ծնողքը, և ապա փեսին ու հարսին բարեկամները այս հրաւէրը կը շարունակեն, հարսը հրաւիրելու համար «հէյպէ» կը խրկուի, երկու թարմ հացերու մէջ գունտ մը «հէլվայ» դրուած, և ճարպէ մոմ մը մինչեւ կէսը կարմիր ներկուած հարսին տունը կը խրկուի, որ է նշան հրաւիրանաց ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՎԵՐԱԴԱՐՁ Ի Մ· · ·

Ամոլը պսակուած են, երեք քահանաներու և խուռն բազմութեան ներկայութեամբը ամուսնութեան արարողութիւնը կատարուեցաւ ։ Մ. . .ի սիրահարք Անջրդոյ մէջ ամուսինք եղան, կրօնից վեհապետը, հրամանաւն Աստուծոյ զուգեաց, ալ մարդիկք չեն կարող մեկնել զնոսա, իղձերնին լեցուած, փափաքնին կատարուած է, երկու կէսեր միանալով ամբողջացան, իրենց կոչմանն համաձայն ընտանիք կազմելով, անհատներ արգասաւորելու, ուխտեցին անդառնալի՛ ըլլալ մի, և կեալ անանջատ,

Երջանիկ եղա՞ն արդեօք, իրենց ուխտն ու դաշինքը անխախտ պիտի մնա՞յ մինչեւ ցմահ, իրենց սէրն ու գորովը պիտի յարատեւէ՞ մինչեւ գերեզման ։

Անողո՛ք ճակատագի՛ր, վայերէ ո՛րչափ կը հրճուիս. ի՛նչպէ՛ս ալ կը չյես, ու կը յաջողիս համոզել զմարդիկ աւազոյ վերայ շէնքեր կառուցանելու ։

Ո՛ Սիրեննեան(1) դիւթութիւնք, հմայելով

(1) չ'Աստուածուհի գեղեցկութեան.

կը պատրէք, որպէս զի արտասուքներ կորզէք, ողորմելի՛ մարդկութիւն, արբշի՛ռ երիտասարդութիւն, հաճոյից ցնորքէն ի՛նչ շուտ կը խաբուիք, չպարեալ կեղծիքներէն ի՞նչ հեշտ կը գրաւիք․ երջանկութի՛ւն, գեղապաճոյճ երազներո՛վ, վայելից հպտանքներո՛վ, ո՛հ, ցընո՛րք․ մերկ է ա՛յն, և ո՛չ իսկ շապիկ մ՚ունի․

Ասպնջականք կը խմբին․ եռանդուն երիտասարդներ, աշխոյժ կիներ, կիւրակնօրեայ հանդերձնին հագած, ճերմակ քօղերով գըլուխնին ծածկած, գրասաններու վրայ աշտանակած եկեղեցւոյ հրապարակը կ՚ըսպասեն։ Թմբկին ու փողին ձայնը կը լսուի, որ հարսնուորք մեկնիլ կը հրաւիրէ, հուսկ ուրեմն նոր հարսը ձիու մը վրայ նստած՝ շղաշատեռով դէմքը գոցած, քանի մը կիներու, և փեսայի ընկերակցութեամբ կը խառնուի հարսնուորաց կարաւանին և ճամբայ կ՚ելնեն։

Անջրդիէ Մ . . . երթալու համար քանի մը ճամբաներ կան, որոնցմէ մին՝ ալ Սաղմկայ գիւղին մէջէն կ՚անցնի, այս ճամբուն երթալ կ՚որոշեն, հանդէսն աւելի փառաշուք ընելու կայան մ՚ունենալու դիտմամբ։

Ընթերցողն հարսանեաց արարողութեանց տեղեակ ըլլալուն համար, աւելորդ կը համարինք նշանակել, ինչ որ հարսնուորաց ուղեւորութեան միջոցին ճամբան տեղի ունեցան․

սաչափ միայն կ՚ըսենք թէ՛, հարսնուորք «փեսին ու հարսին ճիտը ծուռ չը թողելու համար» բան մը չը խնայեցին․ հանդէսին աւելի փառաւորութիւն տալու համար, քանի մը հոխայ վառօդ ծուխի փոխարկեցին, ստէպ հըրացաններ, ու ատրճանակներ պարպելով։

Կէս օրը ժամ մ՚անցած էր, երբ Սաղմկայ մտան․ փոքր Ասիոյ մէջ ճամբորդողները բարեսիրտ չինականաց պատուասիրութեանն, ու հիւրասիրութեանը վրայ մեծաւ գովութեամբ խօսած են, մանաւանդ Ակնայ՝ և Արապկերի շրջակայ գիւղօրայք, իրենց քաղաքակրթութեամբն, ու նրբամտութեամբը նախանձելի օրինակներ հանդիսացած են ուրիշ գաւառներու ժողովրդեան . . . . . . ։ Ի՛նչ անափառութի՛ւն . . . . հայրենիքս պաշտպանելու համար ճշմարտութիւնը վտանգելո՞ւ է միթէ, ի՛նչ են այն բարեմասնութիւնները որոնցմով հայրենակիցքս օրինակ հանդիսացունել կը ճգնիմ—զո՛ւր ջան, խաւարի մէջ մնած բոյսերը ոչ հոտով ծաղիկ բանալ, և ոչ համով պըտուղ հասցնել կարող են․ ուր լոյս չկայ, աճում չը կայ։ Անողոքելի՛ խաւա՛ր․ թշուառութեան երկրաքարշ շղթաները, քո Սոփգսեան[1] ափանց վրայ կը դարբնի։

(1) Սոփգսեան կամ Սոփւգեան լիճը, Մօռայի ցամաքակղզւոյն մէջ է, որուն ջուրը սաստիկ պաղ և

Ըսինք թէ՛ կէս օրէն ժամ մը յետոյ հարսնուորք Սաղմկայ մտան, սակայն երեկոյեան մօտ հազիւ անտի մեկնեցան։— Ի՞նչ ըրին այնչափ ատեն հոն։ Ընթերցողն արդէն գուշակեց թէ, արիւն յուզելու, և ջիղ գրգռելու դերերը կ՚առնէին. ողորմելի՛ ցաւագարնե՛ր. ձեր խօթամտութիւնը բուժելու չափ ճարտար բժիշկ մ՚ըլլալու վկայագիրը չունենալուս, բարելաւութիւն կը մաղթեմ։

Ո՛ Սաղմկայ, ձորերու խրտուիլակ, չեմ գիտեր թէ մինչեւ յե՞րբ սպասելու է Սաղմ իր-գոյութիւն տալու, ի՛նչ խորհրդաւոր անուն, ուր Սաղմ կայ, հոն կեանքն յուսալի է. կարծեմ Սաղմկոյ ծանօթ եղողները պիտի քրքջեն յուսոյս վրայ, հոգ չէ, իմ՛ թէ քրքիջը նախանձնին յուզեր։ Քանի որ Սաղմկոյ մէջ ենք, համառօտ տեղեկութիւն մը տանք ընթերցողին։

Այս գիւղը երեսուն երեք տուն հայերէ կը բաղկանայ, հարիւր ինսուն և վեց բնակիչներով, որոնց եօթանասուն և վեցը արական, և հարիւր քսանը իգական սեռէ են, փոքր քարուկիր նորաշէն եկեղեցի մ՚ունին, որուն գաւիթը իբր վարժարան կը գործածուի։ Բնակչաց նիւթական վիճակը միջին է շնորհիւ

հանքային ըլլալով խմողը կը մեռցունէ. Կռապաշտ բանաստեղծք զարհուրելի առասպելաբանութեամբ դժոխոց գետ անուանած են.

պանդխտութեան, իսկ բարոյական վիճակնին «Ժամասէր» (եկեղեցի յաճախողներ) կանուանուին։ «Տէր քննէ զսիրտս և զերիկամունս» այս կէտը մեզի չը վերաբերիր։ Սաղմկայէն Մ... տասը վայրկեանի միջոց է, ժամ մը տեւած էր այս ճամբորդութիւնը։

Երբ Մ...ի աւերակները, դեռ կանգուն մնացած տուներուն ճերմակ պատերը, ցամքած աղբիւրները, չորցած պարտէզները, աւերած այգիները, սեղախճող անդաստանները, իրենց տխուր երեւոյթովը հարսնուորաց առջեւ պարզեցաւ, կարծես կուրծերը բորբոքող հուրը նոր ուժգնութեամբ մը բոցավառիլ սկսաւ։ Մարդս երբ ուրախ է, ամեն առարկայ բերկրալի կը թուի իրեն։ Ապականութիւնը չիթ առ չիթ իւր աւերումները գործելու ատեն, մարդոց ուշադրութիւնը գոգցես կը դիւթէ. անողոքելի դանդաղութեամբ կընտելացունէ զայն նկատող աչերը, որուն համար հարսնուորք Մ...ի թշուառութենէն չզգածուեցան, ուրախութեան աղաղակները կրկնապատկեցին, երգերով, պարերով, հրախաղութիւնով, Մ... մտան։

Ո՛ Մաչկե՛րտ, ո՛ աւաղկերտ գիւղաքաղաք, անչքացար քո փառքերէն, մերկացար քո բարօրութեան պատմուճանէն, կործանեցար, քանդեցար, թշուառացար, առակ նշաւակի

եղար . . . . :

Անագորոյն ճակատագի՛ր, դժխեմ բա՛ղդ: Դարձեալ անափառութի՛ւն, մարդերու յանցանքը ճակատագրի կը վերագրենք, անհատներէ արտադրուած չարիքները բաղդի հարուած կանուանենք, ո՞ւր տեսնուած է փուշէն խաղող քաղել, և տատասկէ թուզ, ե՞րբ տեսնուած է որ, անմտութիւնը բարիք ծնի, և ապիկարութիւնն երջանկութիւն:

Ի՞նչ ըրին քո նախկին հարուստները ապագայ բարեբաստութեանդ համար, քո՛ նախկին ամիրաները իրենց շքեղ պերճութեամբը սամորալու ատեն, ի՞նչ բարիքներ մատուցին ներկային և ապագային ի նպաստ: Բազմաթիւ կղերներդ, որոնք իրենց փառաւոր մօրուսներուն վրայ սիգալով, ժողովրդեան բաղդն ու խիղճը ի բուռին ունելով անսահման իշխանութեամբ կը կառավարէին, ի՞նչ տեսակ բարիքներ մատուցին քեզ և քոյոյդ: Բարոյականութեան այս մենավաճառները, ինչպէս որ զՍուրբ գիրքը վարշամակներու մէջ կը փաթթաթէին, նոյնպէս ալ ձեր միտքն ու բանականութիւնը նախապաշարումներու խաւարին մէջ շղթայեցին, տկարին սաստելով, զօրաւորին քծնելով, և հարուստին շողոքորթելով: Ի՞նչ ըրին կըսեմ այս մեծ մարդերը, որոնք արտօնութիւններով, առանձնաշնորհում-

ներով, հարստութիւնով, ազդեցութիւնով, բոլոր շրջակայից ահարկու հանդիսացած էին. միջոց, պատեհութիւն, առիթ չէր պակսէր թէ ներկային, և թէ ապագային համար, հիմնական բարիքներ մատակարարելով բարոյապէս, և նիւթապէս բարօրութեանց մէջ ապրելով, յաջորդ սերունդին ալ ժառանգ թողելով, ինչպէս ապրեցան խաւար դարուն այս փողփողուն արեգները. — փայլեցան անլոյս, շիջան անյոյս, ապրեցան անճաշակ, մեռան անյիշատակ, այո՛, ծնան ապրելու համար, և մեռան ոչնչանալու համար, բաւէ՛ . . . . :

Եղբայրք իմ, հայրենեաց թշուառութեան վրայ ողբալու, ձեր արգահատելի կացութեան վրայ հառաչելու ատեն, պահ մը կը խոկա՞ք անոնց պատճառներուն վրայ ալ, կը հետազօտէ՞ք թէ այս թշուառութիւնները ո՞ւստի ծընունդ կ'առնուն, կ'ուշաբերէ՞ք արդեօք այն բոլոր պարագաներուն վրայ, որոնք կաշկանդած են ձեր յառաջադիմութեան թեւերը. կանգնի՞լ կ'ուզէք՝ իրարու ձեռք կառկառեցէք, յառաջե՞լ կ'ուզէք, իրարու նեցուկ եղէք, բարեբա՞ստ ըլլալ կ'ուզէք ուսման լապտերն 'ի ձեռին ունեցէք. լոկ հարստութիւնը չի փրկեր, գիտութիւն ստացէք, արհեստներու հետեւեցէք, եթէ ըսածներուս չէք հաւատար, աչքերնիդ չորս կողմերնիդ դարձու-

ցէք , նախնեաց չիրիմներուն դիմեցէք , և պիտի համոզուիք :— Ի՞նչ մնաց այն հոյակապ գիւղաքաղաքէն , ի՞նչ մնաց այն երեւելի հարուստներու գանձերէն .— քանդեցան , սպառեցան , և ոչնչացան :

Ուր լոյս չկայ , կեանք չկայ · 'ի զուր կը ջանանք :

Ծրագիրս սկսելուս զղջացի , գրեթէ կը նահանջէ հայրենեացս վիճակագիրը տալու · դըժբա՛ղդ գրի՛չ , և սակայն հարկ է , ո՛ն , վայրիկ մը կասեցո՛ արտօսրդ , և գիջիր :

Մաշկերտ այժմ հարիւր երեք տուն հայ մնացած է · հինգ հարիւր քսան և մէկ բընակիչներով , որոնց երկու հարիւր վեցը արական , և երեքհարիւր տասնեւհինգը իգական սեռէ են : Նորաշէն քարուկիր եկեղեցի մը , և ընդարձակ ու կրկնայարկ դպրոց մը , երկու քահանայ . . . . . . :

Ներէ՛ ազնիւ ընթերցող , եթէ այս գլուխն հոս ընդհատի · վասն զի անշուշտ ախորժելի չպիտի ըլլայ քեզ , ինչպէս նաև ինձ :

ԳԼՈՒԽ ԺԲ·

ԲԱԺԱՆՈՒՄ

Ձմեռ է : Ինչպէս գարունը կանաչ , ամառը կապոյտ , աշունը դեղին , ձմեռն ալ ճերմակ ծածկութով մ'երկիրն սքօղած է ,

Բնութիւնը վերածննման պատանքին տակ կը ննջէ , երկիրն , արգանդը բեղմնաւորելու համար , բիւրեղեայ առագաստին մէջ ընկողմնած է : Աճողական զօրութիւնը , իւր կենսական ջերմութենէն զրկուած , երկրին ընդերայը մէջ կ'ապաստանի նոր զօրութեամբ ոգեւորելու , վերջապէս բոլոր առարկայք տխուր և թախծալից ալեւոր ծերունւոյ նման կը դողդոջեն :

Անցա՛ն զուարթ օրերը , ալ չ'կան պայծառ երկինք ու կանաչ մարգագետինք , ազազուն ծառոց մերկ ոստերը ցուրտ հովերէն շաչելով կը սուլեն , ալ չ'լսուիր Ֆիլօմէնի երգն , ու արտուտի աւաշը , թռչունք ծերպերու մէջ , և մարդիկք յարկերու տակ կ'ապաստանին :

Ո՛ ճեպնթաց չո՛ւ ժամանակի , ո՛ մարդկային կենաց սրարշաւ ժամե՛ր ,

Ո՛վ դուք , որ թշուառութեան ճիրաններուն տակ կը ճզմուիք , ինչպէս լորամարգին անգեղ մագլաց մէջ , դո՛ւք որ բնութիւնը ժը-

լաւ կը համարիք, կը ճանչնա՞ք արդեօք անոր պարգեւներուն ամենէն թանկագնի յարգը, գիտէ՞ք ժամանակի արժէքն ու նորա կարեւորութիւնը։ «Ով որ ժամանակն աղէկ կը գործածէ բարեբաղդ է»․ ըսած է հեղինակ մը, վասն զի բարոյական և նիւթական երջանկութիւնք անով կ՚ըստացուին, «Ամառուան մէջ երգելով կեանքն անցունող ճպուռը, ձըմեռուան մէջ անօթութենէ կը տուայտի»․ կ՚ըսէ առածը․ որչա՞փ կան արդեօք այս ողորմելի ճպուռն նմանող մարդեր․ որք իրենց կենաց անգին ժամերն ումպետս վատնելով թշուառութեան մէջ կը հեծեծեն։ Ո՛չ, բնութիւնը ժլատ չ՚է, մարդիկք շռայլ են, շռայլութենէ ծնունդ կ՚առնուն խեղճութիւնք, շռայլութեանց սոսկալին ժամանակի կորուստըն է․ ո՛վ որ ժամանակի յարգը չի ճանչնար, կենաց յարգն ալ չի ճանչնար, և ով որ կենաց յարգը չի ճանչնար, անարժան է իբրև մարդ ապրելու։

Ցունուարի մէջ ենք․ ձիւնն անընդհատ կը տեղայ, հիւսիսն ցասմնալից կը մռնչէ․ ձմեռը իւր սառնեայ գահոյից աստիճաններէն վեր բարձրանալու ատեն, իւր իշխանութեան գըժնեայ՝ զօրութիւնը կը ցուցնէ շնչաւորաց, որոնք սարսափահար նորա փոթորկալից աչերէն, ապաստան կը խնդրեն ցուրտէն ընդարմացեալ

մարմիննին պատսպարելու, հարուստ քաղաքացին տաքուկ վառարանին կը մօտի, աղքատ շինականը գոմը կը վազէ ցրտահար անդամները անասնոց շնչովը ջեռուցանելու։

Այս տխուր եղանակի գիշերներէն մին, սիրահարաց ամուսնութեան 28 դ. օրը, Մ . . . գիւղին վերի թաղի տուներէն միոյն մէջէն աղօտ լոյսի մը աժգոյն ճաճանչը պատուհանին ճեղքերէն դուրս սպրդելով, փողոցին մէջ դիզուած ձիւնին վրայ ադամանդէ գարգմանակի պէս կը փայլփլի։ Անցնինք այս լուսոյ հոսանուտին հետ ներս, իմանալու համար թէ՛ որո՞նք են արդեօք ասոնք, և ինչո՞ւ փոխանակ ննջելու կը հսկեն։

Փոքրիկ և մաքուր սենեակի մը մէջ, երկու սեռէն երկու մանկամարդներէն, թշուառութեան երկու զոհեր․ վիշտը ճակտից վերայ աղետաւոր փոթեր ակոսած է, ինչպէս որ այտից վերայ արտասուաց առուակներու խոնաւ հետքեր դրոշմուած է։ Երիտասարդին աջ ձեռնը ճղմուած նամակ մը կայ, ձախ ձեռն ալ վշտահար գլխուն նեցուկ ըրած խորին կը մտախոհէ․ երիտասարդուհին բացուած գիրք մ՚ունի ձեռքը, որուն թերթերը արցունքներէ թրջած է։ Բառորդ ժամ այս գիրքով մնալէ յետոյ, երիտասարդը ջղային ցնցմամբ իւր սիրուհւոյն դառնալով, — դեռ կուլա՞ս դու,

բաւ աղեդալար չեչոտով մ'ուձեռներումն աչերը գոցեց :

Նորատի կինը գիրքը գոցելով բարձին վրայ դրաւ , Թաշկինակով արտասուօք ողողած աչերը սրբելով ծանրաքայլ երիտասարդին մօտեցաւ , և անոր հրատապ ձեռնը բռնելով :

— Տե՛ս ա՛ւասիկ ալ չեմ լար բաւ սրտայոյզ քաղցրութեամբ մը , այո՛, չեմ լար սիրելիդ իմ դեռ հոս ես :

— Դե՛ռ հօ՛ս . մրմնջեց երիտասարդը վըշտաբեկ , սակայն պիտի մեռնիմ . ա՜հ Աստուած իմ , ի՛նչ սոսկալի բառ է այս որ շրթունքներս կայրէ , սիրտս կը վիրաւորէ , արիւնս կը Թունաւորէ . . . անէ՛ծք աղքատութեան , որ խոչընդոտն է երջանկութեան , անէ՛ծք մեր յոռի դրութեան , և անէծք անոնց որ՝ պանդխտութեան դժոխային սովորութիւնն հաստատեցին . . . . . բաժնուի՛լ , Թողո՛ւլ իւր մարմնոյն կէսն և մեռնի՛լ . ո՜հ , բաժնուիլը՝ յօշոտիլ է , անջատիլը՝ ջլատիլ է սիրելիդ իմ , ո՛ կարէ այս Թանթալեան տանջանաց տոկալ :

Խե՛ղճ կին , խոհականութեամբ զսպել ջանացած արտասուաց հրաբուխը , խորտակեց հառաջներու արգելանոցի նիգերն ու արտասուքներու հետ դուրս պեղան . պահ մը իրար սեղմած , իրարու բազկաց մէջ անբարբառ մնացին . արտասուքները տեսնելու , և հա-

ռաջները խօսելու անկարող ըրին զիրենք :

Տխո՜ւր , ու միանգամայն վսե՛մ տեսարան . սիրոյ և վշտի աղետաւոր խառնուրդ . չորս բազուկներ երկու անձ իրարու պրկած , շունչ շնչի խառնուած , սիրտ սրտի վերայ կը բաբախէ , արտասուք՝ արտասուաց , հառաչք՝ հառաչանաց միացած , մին յերկինք կը սլանայ , միւսն յերկիր կը ցօղէ :

Հէ՛գ արարածք , մին որբ , միւսն որբացեալ , կենաց ասպարէին վերայ իրարու գիպեցան , սիրոյ ելեքտրականութեամբ զգացումնին իրարու հաղորդեցին , որբազան տաճարին մէջ ձեռք ձեռքի տալով միացան , իրարու ընկեր , օգնական , պաշտպան ըլլալ ուխտեցին , նարօտը գլուխնին , սէրը սրտերնին պսակեց , և նուիրագործեցին . . . :

Անագորո՛յն ճիւա՛ղ . Թշուառութիւնը , ձեռքերն յետին կապած , անտարբեր ու լռին իրենց քայլից կը հետեւէր . հազիւ զիրար ճանչցան , հազիւ իրարու բնութեան ընտելացան , հազիւ իրարու զգացման ծանօԹացան , և հազիւ Թէ ամուսինք ըլլալնին գիտցան , ահա անգութն անմիջապէս հարուածն իջեցուց , « բաժանո՛ւմ » մռնչաց և Թագեաւ :

Թշուառութիւնը իւր ահարկու զօրութեան մէջ եԹէ յաղԹանակ մ'ունի , այն ալ երկու զուգորդ սրտերու իրարմէ անջատելն է .

Մուշեղ նիւթապէս աղքատ, կալինիկէ համեստութենէ ի զատ ոչինչ օժտած էր իւր ամուսնոյն. արգահատելի կացութեան մ'ենթարկուած են. ոչ քաղաքացի ըլլալու համար դրամագլուխ, և ոչ գիւղացի ըլլալու համար ափ մը հող ունին. ի՞նչպէս կարելի է ամուսիններու իրարմէ անբաժան մնալը, մինչդեռ բաղդն յօնքերը պռստելով խոժոռադէմ կըսպառնայ, ի՛նչպէս պիտի կարենան այս խախուտ հիման վերայ ընտանեկան բաղմահոգ շէնքը կառուցանել, ի՞նչպէս պիտի կարենան ընտանիք կազմել ու ծնողք ըլլալ . . . բարէ՛, անոնք ալ Հայաստանի թշուառ զաւակներուն անողորմ բաղդին դիպերյան, միանալ և անջատիլ, սիրել և լքանել, այս է իրենց ճակատագիրը:

Գրաստներու պարանոցը զարդարող այն տխրահնչիւն բոժոժը չէ այլ ինչ, եթէ ոչ կռան հարուածներ, որ բաղխեն անջատելոց սրտերուն. այն բիրտ մարդերն որք «ջորեպան» կանուանուին, չեն այլ ինչ՝ եթէ ոչ մեռելաթաղներ, որ կենդանւոյն կը խլեն սիրելիներն իրարու գրկէն. այն բաժանման լացն ու հառաչը չէ այլ ինչ՝ եթէ ոչ մտերմին կորուստն ողբացող սգաւորաց կոծեր, կերթան այրերը, կը թողուն արամբի այրիներ, կը մրմնջեն անոնց ականջին «հոգացէք ինքզինքնիդ, համբերեցէք որ դառնամք»: Է՛ր թէ դառնայիք ինչպէս որ կը մեկնիք, անմե՛ղ ու անարատ:

Այո՛, կը մեկնին արտասուաթոր աչերով, սիրաբուխ սրտով և անձնուէր զգացմամբ. ժամանակն ու մեկուսութիւնը ամեն ինչ կայլափոխէ. արտասուքները կամաց կամաց կը ցամքին, սէրն հետզհետէ կը ցնդի, և զգացումները անզգալապէս կը սառնուն իրենց որդեգրած սկզբունքէն, կըլլան ինչ որ չէին ուզեր ըլլալ, կընեն՝ ինչ որ սոսկմամբ կը խորշէին որ չընեն . . . անկման սկիզբն է այս, թշուառութեան հոսանքին առաջին յորդը:

Շինական անուս և պարզամիտ երիտասարդը, յանկարծ ինքզինքն Աստղկան տաճարին մէջ կը գտնէ: Առաջին անգամ տեսած իրերը նողկանք կը պատճառեն իրեն, սոսկմամբ աչերը կը գոցէ, ականջները կը խնու, կը հառաչէ անձկանօք իւր աղքատիկ հիւղակն ու սիրական հարսնուկն յիշելով: Սոսկումը հետզհետէ կը փարատի, երկիւղը կը ցրի, հայրենիքը կը մոռնայ և իւր սիրելեաց կաթոգին սէրն ալ չ՛յիշեր, դողդոջելով քայլերն յառաջ կը մղէ և պահ մ' ինքզինքն երջանիկ կը կարծէ:

Խիղճն՝ որ երբեմն հայրենիքէն տարած լոյս ազդեցութենէն կը թրթռայ, միշտ կը դրդէ մոլորեալը, և որով հեգը նորէն կը կա-

սի, տհաճութենէն գլուխը կորորէ, համեստութիւնը վիրաւորուած տեսնելով կը շառագունի, ու պահ մը վայրահակ կը մնայ։

Պատերազմ մը կը ծագի ներսը, երբեմն կ'ընկրկի, երբեմն կը խոյանայ, երբեմն կը խիզախէ, երբեմն կը նահանջէ, երբեմն կ'ոգեւորի, երբեմն կը վհատի․ հուսկ ուրեմն բնական լոյսը տակաւ առ տակաւ կը շիջի, թանձր մթութեամբ համակեալ, 'ի զուր կը ճգնի խաւարին մէջ որոնել այն փրկաւէտ գաղափարները, զորս կը յուսար զօրաւիգն ունենալ։ Ամէն ինչ չփոթ, ամէն ինչ աղջամղջին, չէ կարողացած ստանալ, կամ լաւ եւս ըսենք չեն շնորհած իմացականութեան զարգացման այն հրաշակերտ Եգիսը (1), որ պաշտպանէ իւր անձն, ու ապաստանի անոր։ Թշուառը կը լքանի, փանաքի բարոյական ուժը ալ սպառած է, մտաւորական լոյսը շիջելավառ կը հիւծէ, բարի յօժարութիւնները զինաթափ եղած, մարդկային զգացումները գրեթէ իրենց վեհութենէն ստորնացած են։ Աղետաւոր վհի մ'եզրը կը խարխափէ․ քանի մը քայլ եւս, քանի մը հարուած եւս, և ահա՛ կը գահավիժի մթութեան անյատակ անդունդին

(1) Աստուածուհոյն իմաստութեան, Աթենասայ վահանը։

մէջ․ կը տապալի անդ հեգ վիրաւորը, օգնութի՛ւն կաղաղակէ, լո՛յս կը մրմնջէ․ ինչպէս ֆիզիգապէս հալ և մաշ եղած հիւանդը «օ՛դ» կաղաղակէ, նոյնպէս ալ այս բարոյապէս հիւանդը «լոյս» կաղաղակէ․ սակայն ո՛չ ոք կը լսէ իւր ձայնը, ո՛չ ոք կը կարեկցի իրեն, ո՛չ ոք օգնութեան ձեռն կը կարկառէ․ հուսկ ուրեմն կը յուսահատի թշուառը, կը թողու ինքզինք ինչ որ ուզէ ըլլայ, ո՛հ, ահաւո՛ր վայրկեան, ահա հո՛ս, ամեն բան կը վերջանայ, կըլլայ դիակ մը, ո՞վ պիտի վերականգնէ զա՛յն։

ԳԼՈՒԽ ԺԹ.

ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾԸ

Գծուծ սրահի մը մէջ, գլուխնին մեծ, ուղեղնին փոքր մարդեր, սրունքնին ծալլած երկու կարգի վերայ շարուած, երկայն ծխափայտեր սենեակին կեդրոնն երկնցուցած կը ծխեն։ Երբեմն վիվլուկներով, գոռում գոչումներով սրահը կը դղրդի, և երբեմն ալ արձաններու նման անբարբառ մնալով ծխով կը լեցուի։ Իրարու խօսք լսելու խիստ յաջողակ, բայց հասկնալու, և հասկցնելու խիստ ապիկար ըլլալնուն՝ խօսքերը միշտ խօսք մնալով գործելու ձանձրութենէն ազատած են, միայն

նոյն խօսքերը այլ և այլ եղանակներով արտասանելու վարժութեանն զբաղած են, ինչ որ է, այս բարեկիրթ մարդերը չինականաց գործերը բարեկարգելու համար ընտրուած առաջակալներ են, որ 'ի ժողով գումարած են օգտակար տնօրինութիւններ ընելու ։

Սրահին մէջ տեղը ցնցոտիներով պատած կին մը կանգնած է, որուն տխուր ճակատն ու թօշնած դէմքը, ամօթէն ու պատկառանքէն թեթեւ կերպով մը շառագունած են ։ Մեծ գլուխներէն մին, ծուխը քթին ծակերէն դուրս վանելով, բերանը բաց, խոժոռադէմ դէպի կնոջ դառնալով ։

— Էյ, ի՞նչ կանգնած ես, ո՞ւր է նայինք ըսաւ բիրտ ձայնով մը, ստակ բերի՞ր ։

— Ո՛չ, Տէր իմ, չկրնացի ճարել ։

— Ի՞նչ, անամօթ կնիկ, առանց ստակի ի՞նչ ա[illegible] ուտելու եկած ես հոս, չո՛ւտ կորսուէ սա տեղէն, երեկոյ չեղած ստակները բերելու ես կը հասկնա՞ս, եթէ ո՛չ այս գիշեր էջուն գլխատը (ախոռը) պիտի պառկիս ։

— Ներեցէք տէր իմ կրկնեց խեղճ կինը աչքերը լեցուած, կ'աղաչեմ քանի մ'օր ևս համբերեցէք, թերեւս աղայէդ (երիկանը համար կ'ըսէ) լուր մ'առնեմ, և կամ . . . .

— Լռէ՛, մռնչեց առաջակալ պարոնը յօնքերը կնճռելով, լիրբ խօսքերով գլուխնիս մի՛

ցաւցներ, ստա՛կ, և կամ տանդ մէջ գտնուած բոլոր պղնձեղէններն ու բրդեղէնները հոս բերելու է որ աճուրդի հանեմ, իմացա՞ր, չուտ ուրեմն հալածէ սա տեղէն ։

— Գթութիւն տէր իմ ։

— Կորսո՛ւէ կ'ըսեմ ։

— Բայց տէր իմ ո՞ւստի բերեմ այդ ուզածներդ, ամէն բան առած էք արդէն, խոտէ խշտեակ մ'և հողէ պտուկ մ'ունիմ միայն, միթէ անո՞նք ալ առնել կուզէք, բայց ի՞նչ կարժեն անոնք ձեզի համար տէր իմ, մինչդեռ ինծի մեծ կարեւորութիւն ունին. խեղճ տղեկս այն խշտեակին վրայ կը քնացունեմ, և անժուր ձաւարնիս այն պտուկին մէջ կը խաշեմ . . . .

— Բա՛ւ է, լռէ՛ աղաղակեցին գթասիրտ առաջակալները ցասմամբ, այդ գանգատներըն երկանդ ըրէ որ ՝ ձեզ երեսի վրայ թողելով, անառակութեամբ իւր կեանքը կ'անցունէ, միթէ ձեզ խնամելու հոգը մեզի՞ յանձնուած է, մեզ ի՞նչ փոյթ թէ դուք ապուրնիդ ո՞ւր կ'եփէք և ո՞ւր կը ննջէք, մենք ստակ տուած ենք կըպահանջենք, միթէ մեր առնելիքը ողբ ու կոծո՞վ վճարել կուզէք. բայց ո՛չ. ձեր վրայ գթալ չըլլար, չուտ կորսուէ գնա ստակնիս բեր կը հասկնա՞ս, եթէ ո՛չ, վերջը ընելիքնիս գիտես ։

Աչքերը արցունքով, սիրտը արիւնով լեցուած ողորմելի կինը գողգոջելով դուրս ելաւ, հազիւ իր «բրշակ» (ինչպէս որ իրենք կ'անուանեն) տանը մօտեցած էր, ուր տարեկան դուռուզ մաղերով տղեկ մը դէպի կինը վազելով, — մայրի՛կ մայրիկ, անցեալ աւուր քուրթը դարձեալ եկած է ըսաւ։ Տարաբաղդ մայրը կսկծալի հառաչով մ'աչքերն ու ձեռքերն յերկինք բարձրացուց, կոպերուն տակ գոյացած վշտաց ցօղերը, գունատ այտերուն վրայէն սահելով յերկիր հոսեցան։

— Ա՜հ, դարձեալ կը լաս մայրիկ ըսաւ սիրուն տղեկը մօրը ծունդերուն փարելով, Աստուած ողորմած է, սիրելի մայրիկս, ան մեզ երբեք չէ ձգեր, ճար մը կը գտնուի հարկաւ։

— Այո՛, Աստուած ողորմած է տղաս. բայց մարդիկ անողորմ և անգութ են, ո՛չ իմ տկարութեանս, և ոչ քու մանկութեանդ կը խնայեն . . . ի՞նչ ընենք զաւակս տուած են կը պահանջեն, յանցաւորը մենք ենք։

— Ինչո՞ւ յանցաւոր ըլլանք մայր իմ, աղքատ ըլլալը յանցաւո՞ր ըլլալ է միթէ։

— Այո՛ տղաս, ոչ միայն յանցաւոր, այլ և մարդ չ'ըլլալ է, անոր համար թերևս զիս անասնոց հետ բանտարկել սպառնացան։

— Բանտարկե՛լ, զիս ալ քեզի հետ այնպէս չէ՞ մայրիկ։

Մայրը չ'պատասխանեց, և դուռնէն ներս մտան։

Բարձրահասակ քուրթ մը, վայրենի պատերազմականի մը պէս զինուած, չարագուշակ դէմքն ու դժնեա հայեցուածքը, բիրտ կերպարանքին հետ քստմնելի ճիւաղի մ'արհաւիրքը կ'ազդէր տեսնողին։ Այս սոսկալի մարդուն բարուցը վրայ գաղափար մ'ունենալու համար, բնագննական տեսութեամբ ընթերցողին կը ներկայացունեմ զայն։

Գլուխ՝ տափարակ, ճակատ՝ գիսալի, յօնք երկայնամազք և լայնադիրք, երես՝ փոսորակ, խաժակն՝ և խորանկեալ, ռունգ՝ սրածայր և բարակ, ականջ՝ փոքր և նուրբ, բերան՝ լայնաձիգ, շրթունք՝ հաստ և վայրահակ, լեզու՝ թանձր և երկայն, ծնօտ՝ երկայն և սուր, հերք չիկագոյն և խիտ, ձայն՝ խրոխտ և ռընգախօս, վիզ՝ վերամբարձ, թիկունք՝ լայն, լանջք՝ մազալիցք, ստինք՝ կախեալք 'ի կրծոց, որովայն՝ մեծ, բազուկ՝ կարճ, ձեռք՝ ստուար, մատունք՝ փոքր և հաստ, եղունգ՝ կոր և դար· սրունգ՝ ջղալից, ոտք՝ բարակ, և գոյն՝ հրային։

Ահա՛ այս յատկութեանց տէր մարդուն հետ ողորմելի կինը յարաբերութեան մտած՝ և պարտք ունեցած է։ Ձմեռուան մէջ այս թըշուառ ընտանիքը վերջին աստիճանի չքաւորութեամբ դրացեաց շնորհած օթեկ հացի կտոր-

ուանքներով չմեռնելու չափ ապրած՝ և գարուն եղած էին։ Գարնան սկիզբները Տէրսիմ լեռան քրդերը իրենց ապականած ցորենները ապառիկ աղքատ գիւղացիներու կը վաճառեն։ Այս ապառիկ ծախուած ցորենէն բարեսիրտ մայրը զաւակին սիրուն համար հինգ չափ առած էր, որ գրեթէ 70 դահեկան հազիւ կ'արժէր, 100 դահեկանի 61 օր պայմանաժամու պարտամուրհակ տուած էր։ Պայմանաժամը լրանալէ առաջ ցորենին տէրը արդէն երկու անգամ եկած՝ և բաւական նեղութիւն տուած էր։ Այս երրորդ անգամի գալն է՝ պայմանաժամին ալ քանի մ'օր անցած։

Երբ Քուրթը տուն մտած էր, տղեկը վախուն փախած մօրն ընդառաջ գնացած էր, Քուրթը տունը պարապ գտնելով՝ բոլոր յարկերը համարձակութեամբ պտըտած՝ բոլոր պահարանները, դղրոցները, սնտուկները բացած, և որոնած էր, մանր մունր ինչ որ աչքին հանդիպած, առած գրպանները լեցուցած էր. սընտուկին մէջ քանի մը լաչակ, և մօրմէն ընծայ ընդունած կապայ մը միայն կար՝ առած էր, պահարանին մէջ պղնձէ ափսէ մ'երկու ապակիէ գաւաթ, և երեք անպիտան պատառաքաղ գտած՝ առած էր. դղրոցին մէջ՝ արծաթէ օղիի բաժակ մը գտած էր, որ կնկան բոլոր հարստութիւնն էր, (15 դահեկան հազիւ

կարժէ) էրիկը իրմէն բաժնուելէ առաջ անով օղի խմած ըլլալուն՝ նուիրական մասունքի մը պէս կտաւներու մէջ ծրարած պահած էր. վերջապէս այս բոլոր կողոպուտը տեղաւորած, ծխախոտը վառած, կնկան գալուն կ'սպասէր։

Երբ ողորմելի կինը պարտատիրոջ դաժան դէմքը տեսաւ, խողխողիչ դահճի մը տապարէն տռկալու պէս մարմնովին դողդողջեց. ցուրտ սարսուռ մը բոլոր անդամները սարսեց, աղեխորով արցունքներով աչքերը լեցուեցան, բայց առ ահի անտեսանելի ճամբով մը զանոնք սրտին խրկեց ու ինքզինքն ամփոփած։

— Աղա՛ բարի եկած էք ըսաւ կակազելով։

— Բարեւդ քեզի ըլլայ մանչեց, վագրի նման կնոջ վրայ յարձակելով, տակս պատրաստեցի՞ր։

Խեղճ կնկան աչքերը մթագնեց։

— Ներեցէք տէր իմ . . .

— Ի՞նչ ք . . . կուտէ, ներեցէք ի՞նչ ըսել է, տակս կուզեմ, տակս ո՞ւր է։

— Ճարելու ետեւէ եմ տէր իմ։

— Ճարելդ ալ սատկի, դու ալ, մինչեւ հիմայ ո՞ր դժողքը գնացած էիր որ նոր ճարելու ետեւէ պիտի ըլլաս, ցորենս կերար ու մարսեցիր, կուշտ փորով պտտե՞լ գնացած էիր հէ՛, անպիտան զամբիկ։

— Ոչ տէր իմ, բանի մը համար դրացւոյս տունը գնացած էի։

— Դրացնիդ տունը մնաս, ինչո՞ւ համար անորմէ ստակ չառիր պարտքդ վճարելու։

— Ո՛հ տէր իմ, անոնք ալ ինծի նման աղքատ են, եթէ ունենային ամենայն սիրով կուտային։

— Հա՛, ըսել է թէ աղքատ ըլլալնուդ համար ստակս օժտելու եմ հէ՛։

— Ամենեւին տէր իմ, շահովս հանդերձ կը վճարեմ։

— Վճարած շահդ գլուխդ ուտէ, ես ստակս կուզեմ կիմանա՞ս, եթէ ոչ հիմայ զքեզ ոտքերուս տակը կառնեմ։

Խեղճ տղեկը, որ դողդղալով մօրը ձեռքէն բռնած կանգնած էր, երբ այս սպառնալիքը լսեց, բարձրաձայն լալ սկսաւ։ Տղային լացը անդութ քրթուն զայրոյթը գրգռեց, այս մուկն ի՞նչ կը ճուայ ըսաւ, ու բերնին ուժգին ապտակ մ'իջեցուց, տղան թաւալգլոր գետինն ինկաւ. ա՜յ, գետինն անցնի ստակդ ըսաւ ողորմելի մայրը սրտին կսկիծէն. անդութ մարդ տղուս ինչո՞ւ կը զարնես, ու դէպի գետին փռուած զաւկին դիակը վազեց։

— Ստակս գետին անցնելուն՝ դուք անցէք ըսաւ անագորոյն քուրթը, ու ահագին ոտքովը կնկան մէջքին քանի մը հարուածներ

տուաւ։ Թշուառ կինը զաւակը վերցնելու ատեն անոր վրայ փռուեցաւ....։

Դրան ետին 12 հոխայի ծանրութեամբ պղնձէ մեծ կաթսայ մը կար, որ լուացքի ջուր տաքցունելու համար դրացնէն փոխ առած էր. Քուրթը կաթսան ուսն առաւ, քանի մը հարուած ևս իջեցուց կնկան քամակին, և դուրս ելաւ։

Արդ՝ թող բարեհաճի ընթերցողը այս թշուառութեան զոհերը պահ մ'իրարու միացունել, մեծաւ զարմանօք պիտի տեսնէ, որ հայրը իր զաւակը և զաւակը իր հայրը չի ճանչնար...

Եթէ հարուածը խոր չէ ու շարժին, թերեւս կանգնին իրարու ձեռքէ բռնած, իսկ եթէ փռուած ու անշարժ մնան, գոցէ սև վարագուրը դիակնացած են արդէն։

Մուշեղ մեկնած է, Կալինիկէ սենեակի մը մէջ փակուած անմխիթար կկոծէ։ Բարի ճանապարհ կը մաղթեմ երկանդ, համբերութիւն կը մաղթեմ քեզ, երիկդ եղբայրներուդ ճամբան ուղղեցաւ, դու ալ քոյրերուդ ճակատագրին ենթարկուեցար։

Տոկացէ՛ք, մինչև երկինք ձեզ նորէն իրարու շնորհէ՛։

ԳԼՈՒԽ Ի.

ՎԵՐՋԱԲԱՆ

Ներկայ երկասիրութիւնս գրական ասպարէզին մէջ լոյս տեսնելու համար գրուած չէ, այլ ուսման ունեցած փափաքի ճաշակս զօրացունելու իբրև միջոց մը, պարապոյ ժամերուս զբաղմունքն է։

Գրուածքիս բուն նիւթը, ասոր նման պատահած հազարաւոր դէպքերէն մին է. ամեն տեղ, ամեն ժամանակ այսպիսի եղելութիւններ տեղի ունեցած է։

Միւս մասերը գաւառաց մէջ կատարուած խռովութիւններ, սովորութիւններու նկարագրեր, և քանի մը գիւղերու աշխարհագրական համառօտ տեղեկութիւններ են։

Գիրքս մամլոյ յանձնելու որոշումէս առաջ, քանի մը բարեկամներ անոր բնագիրը կարդացած ըլլալով, ի՛նչ ի՛նչ կէտերու նկատմամբ քննադատութիւններ ըրած էին, հաճութեամբ կը պատասխանեմ, ինչպէս որ իրենք ալ բարեմտութեամբ և անկեղծութեամբ առաջարկած են։

Ա. Կառարկեն թէ, վիպասանութեանս (ինչպէս որ իրենք կանուանեն). մէջ յիշուած

անձանց ամենքն ալ դեռ կենդանի են, անոնց վերաբերեալ հատուածները պարսաւանքի ոճով գրուած ըլլալով, թերևս վիրաւորէ անոնց սրտերը և թշնամանան ինձ հետ։

Բ. Քահանայներու նկատմամբ գրածներս, կարելի է յոռի ըմբռնմամբ իրենց պատուոյն նախատինք, և իրենց պաշտօնին անպատուութիւն համարելով, գիրքս բանադրեն, և զիս անիծեն։

Գ. Մուշեղ և Կալենիկէ, թէև անուննին փոխուած, բայց անոնց ո՛վ ըլլալը բոլոր իրենց ծանօթները կը ճանչնան. անոնց այնպիսի հանգամանքներ տրուած, այնպիսի ձիրքերով ներկայացուած են որ, մեծ հակասութիւն կայ անոնց բնականին, ու նկարագրութեան մէջ։

Դ. Կը հարցունեն թէ, Պ. Ռուբէնի արկածը ստո՞յգ է, և եթէ ստոյգ, իւր եղբայրը գըտա՞ծ է։

Ե. Պ. Մ...ի կրօնափոխութեան մասին սխալմունք եղած է կըսեն. անիկայ իւր կրօնքը արեւելեան պատերազմէն քանի տարիներ առաջ, Բերլիոյ մէջ փոխած է։

Ազնիւ բարեկամներուս պատասխանելէ առաջ շնորհակալութիւն կը մատուցանեմ որ, գիրքս հրատարակել յորդորելնուն հետ միանգամայն իրենց կարեկցութիւնը կը յայտնեն, խոհականութեամբ հեռատեսած ըլլալով՝ թըշ-

նամանքներու, բանադրանքներու, և բամբասանքներու ենթարկուելս։

Ա. Թող ներէն բարեկամներս որ, համարձակիմ ըսել թէ, իրենց կարծեացը մէջ չափազանցութիւն կը նշմարեմ։ Իմ գիրքս, ո՛չ պարսաւանքի ոճով գրուած, և ոչ նորա մէջ մէկումը անձնականին ուղղակի կամ անուղղակի ակնարկութիւն մ'եղած է։ Մասնաւոր գիտումով գրուած չէ գիրքս, այլ ինչպէս որ ըսի, պարապոյ ժամերուս զբաղանքն է։ Ձեմ կարծեր բնաւ, թէ գանուին այնպիսի անձինք որ, գրքիս թիւր մեկնութիւններ տալով թշնամիներ յարուցանեն ինձ դէմ, և բանադրանքներու շանթեր տեղան վրաս։ Ճշմարիտ է թէ՛ գրքիս մէջ յիշուած բոլոր անձերը կենդանի են, սակայն ի՞նչ կը հետեւի ասկէ, միթէ մարդս մեռնելէ՞ն յետոյ անոր արարքները քննադատելու են. այդ Եգիպտական սովորութիւնը կը մերժեմ. մեռեալք կարող չեն իրենք զիրենք արդարացունել, թէեւ անմեղ ալ եղած ըլլան։ Եւ միթէ իմ գրքիս մէջ յիշուած անձերուն վրայ զրպարտութիւննե՞ր եղած է, կամ անոնց բարի գործքերը չա՞ր մեկնուած է. քա՛ւ լիցի որ այսպիսի վատ գաղափար մը տածեմ. մանաւանդ կը խոստովանիմ թէ՝ եղելութիւնները խիստ համառօտած, և ո՛րչափ որ կարելի է ամենուն ալ պատույն խնայած եմ։ Ուրեմն

թող ապահով ըլլան բարեկամներս թէ ես թըշնամիներ ունենալէ ամենեւին երկիւղ չեմ կըրեր, եթէ հարկը պահանջէ, կարող եմ գըրուածքիս պատասխանատու ըլլալ, անոր բոլոր էջերը վաւերական փաստերով ապացուցանել։

Բ. Քահանայներու նկատմամբ եղած նկարագրերը, ո՛չ վիպական ձեւեր են, ո՛չ ենթադրութիւններ, ի բաց առեալ քանի մը պարագայները, ամենն ալ տեղի ունեցած իրողութիւններ են։ Մենք կրօնի պաշտօնեայները իրենց արժանաւորութեան համեմատ կը յարգենք. անարժան պաշտօնեաներն անգամ, իրենց պաշտօնէն ակնածելով կը պատուենք։

Գ. Մուշեղի և Կալինիկէի, վերացական հանգամանքներ տալս, և զանոնք իրենց բնական յատկութիւններէն օտար ձեւերով ներկայացունելս, գրքիս ոճոյն հետեւութիւնն է. և կարծեմ միմիայն ոճոյն, և ձեւերուն նկատմամբ է որ, բարեկամներս գրքիս «վիպասանութիւն» անունը կուտան. է՞ր ուրեմն վիպասանի մը սեթեւեթներով խօսիլը անտեղութիւն կը համարին, մինչդեռ իւր իրաւունքն, ունեցուկն է այն։

Դ. Պ. Ռուբէնի արկածը հաստատող դէպքեր ստէպ կը պատահին Հայաստանի խորերը. պարբերական թերթերը, շատ անգամ սոյն նկարագրութիւնը շօշափող եղելութիւններ

հրատարակած են։ Քանի մը տարիներ առաջ Զարամնճախի մէջ պատահած սոյն օրինակ դէպքի մը վրայ հիմնեալ է մեր նկարագրութիւնը։

Ե. Շնորհակալ եմ բարեկամներէս որ, բարեհաճած են սխալս ուղղել։

ՎԵՐՋ

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

Ա. Մօր մը խրատը 11
Բ. Նկրատայ ափանց վրայ հանդէս մը 20
Գ. Ժամադրութիւն 45
Դ. Ջերմուկայ ուրուականը 64
Ե. Գառնաղգեստ գայլ 85
Զ. Ծնողաց յիշատակը կը փրկէ մոլորեալ որդին. 96
Է. Փախուստ 110
Ը. Այցելուհին 121
Թ. Մօր մը գորովը 134
Ժ. Հօր մը զայրոյթը 143
ԺԱ. Հունձք բազումք են, եւ մշակք սակաւ . 154
ԺԲ. Անյաջող ելք 166
ԺԳ. Մօր մը աղօթքը զաւակը կը փրկէ . . . 177
ԺԴ. Անջրդի 190
ԺԵ. Հարսանեկան արարողութիւնք 199
ԺԶ. Պսակ 218
ԺԷ. Վերադարձ 'ի Մ 231
ԺԸ. Բաժանում 239
ԺԹ. Ողբերգութեան երկրորդ արարուածը . . 247
Ի. Վերջաբան 256

ԳՈՐԾՔ ՀԵՂԻՆԱԿԻՆ

ՏԱՂԵՐ

Ա.

ՊԱՆԴՈՒԽՏ

Ա.

Փառաց ծնունդ երջանկութեան որդի դո՛ւ,
Է՞ր հառաչես, ողբաս օրերդ իբր բու․
Այդ թանկագին կենաց օրերդ որ 'ի զուր,
Վատնես ումպէտ, ու թափառիս այլոց դուռ:

Հայրենակի՛ց, այլոց դուռներ քեզ չեն մուտ,
Այլոց սրտեր քեզի համար չունին գութ,
Կը վատնես ուժդ, կուտաս կեանքդ ապարդիւն,
Փոխան կենացդ ըստացե՞ր ես բարութիւն:

Փոխան բարեաց թշուառութիւնք բազմազեղ,
Կ'այեկոծեն կենաց նաւակդ իբր հեղեղ,
Փոխան վարձուց՝ վաստակոցդ տրխուր,
Կեանք մը հեք, եւ սիրտ խոցեալ, ձեռք թափուր:

Դարձուր քայլերդ, բա՛ւ թափառիս գլխիկոր,
Տե՛ս հառաչանք, եւ բխուր արկածք քո հեզ մօր,
Աչերն յարտօսր, ձեռն 'ի ծնօտ վշտալի՛,
Կայ եւ մնա՛ վերադարձիդ յուսալի:

Բ.

Դարձուր աչերդ հայրենիս ,
Տե՛ս այն վիճակ ներկայիս ,
Որ ենթակայ բռնութեանց ,
Մարեր արեւն իւր կենաց :

Հարստութիւն վատնուած ,
Թշուառութիւն ճարակած ,
Ոմանք տարագիր , կամ գաղթած ,
Ոմանք բնաւին փճացած :

Տկար կինդ , անմեղ մանկիկդ ,
Ո՞ւր թողուցիր անտէրունչ .
Ո՞վ նոցա տէր , ով զօրավիգ ,
— Ո՛հ , անպաշտպան լան անմռունչ :

Դաշտն անմշակ , արտն անհերկ ,
Պարտէզք մացառ բուսցունեն ,
Այգիք խոպանք , բլուրք լերկ ,
Գետակք , լռիկ ձորք կ'ողողեն :

Ճակատագիրն այս տխուր ,
Զ'է մեզ յերկնից տրիտուր ,
Այլ մեր ընթացք խեռ մոլոր ,
Գահավիժեց թաւալգլոր :

Դարձիր ուրեմն հայրենիք ,
Հրեշտակն Հայոց զօրավիգ ,

Արօրն 'ի ձեռդ , հերկէ դաշտ ,
Պիտի գտնես արդասիք :

Եղիր ճարտար , յարատեւ ,
Հսկէ հիւղիդ միշտ վերեւ ,
Եղիր մշակ ժրաջան ,
Որ բարւոքես ապագան :

Տգիտութիւնն հալածող
Ուսման եղիր հետեւող .
Ճանչցիր կենացդ արժանիք .
Անշուշտ կ'ըլլաս երջանիկ :

27 *Դեկտեմբեր* 1870 . *Կ. Պօլիս , Բերա* :
« Հորիզոն » լրագրոյ մէջ հրատարակուած :

Բ.

ԳԱՆԳԱՏ

Եօթերորդ տարին ահա՛ լրացաւ ,
կենացս գարունն հետն առաւ անցաւ ,
Գարունս անծաղիկ ամառս անարեւ ,
Թաղցրիկ յոյսերս ելին ի դերեւ :

Օրերս տխուր , աչերս պղտոր ,
Լամ ու հառաչեմ , հեծեմ գլխիկոր ,
Մարմինս հիւծեալ , սիրտս վիրաւոր :
Վա՛հ , թշուառ հէքիս ալ չունիմ անդորր :

Գացիր ու մոռցար սէրդ իմ պանդուխտ ,
Զը յիշե՞ս բնաւ սրբազան մեր ուխտ .
Զիս հոս թողուցիր խեղճ այրւոյ մը պէս ,
Ինչո՞ւ չես փութար գալ հիքոյս 'ի տես :

Կենսատու զեփիւռ հայրենի դաշտաց ·
Միթէ չի՞ զգածեր քու տխուր սիրտը ,
Երփներանգ ծաղկանց մեր բուրաստանաց ,
Ո՛հ ալ չէ՞ս յիշեր դու անոնց հոտը :

Զերթ զոյգ մ'աղաւնի թեւ թեւի տուած ,
Միշտ այց կ'ելլէինք յափանց Եփրատայ ,
Սիրոյ հեշտութեամբ սրտերնիս լեցուած
Անձկաւ կը ճեմէինք մարգերաց վերայ :

Քարտակոյ աղբերց պաղպաջուն ջուրեր
Ո՛հ ի՛նչ հաճութեամբ վազէինք խմել ,
Սաղարթոտ ուռեաց զովասուն շուքեր ,
'Քանի' բերկրութեամբ ճեպէինք հանգչել :

Այս մեր մանկական հրճուալի ներկան ,
Ի՞նչ շուտ քօղարկեց տխուր ապագան ·
Սուրբ ամուսնութեան վսեմ պսակը ,
Աղէ՞տք դրօշմեց մեր պարզ ճակատը :

Ա՛խ ի՛նչ կը բուեմ , աւա՛ղ եղկելոյս ,
Թռաւ իմ ընկեր մնացի անյոյս ,
Հազիւ հարս եղած , անա՛ պառաւցայ ,
Գեթ մայր ըլլալու բաղդն ալ չունեցայ :

Այդպէ՞ս էր դաշինք ո՛ իմ սիրական .
Մոռցա՞ր արդեօք ուխտ նուիրական ,
Սուրբ եկեղեցւոյ խորանին պատուանդան ,
Զը ուխտեցի՞ր դու , մնալ անբաժան :

Դարձիր կ'աղաչեմ ալ բաւ թափառիս ·
Փութա՛ սփոփել տխուր սիրտ հիքիս ,
Ո՛հ թէ չը լսես վշտալի ձայնիս ,
Աւար տ'ըլլամ ցուրտ գերեզմանիս :

Եւ արդ կ'աղերսեմ մարդասէր Փրկչին ,
Որ գութ շնորհէ քու կարծր սրտին ,
Յիշէիր զոնէ ամօթ մարդկային ,
Անհեղ դատաստանն 'ի յաւիտենին :

21 *Յունվար* , 1871 · *Կ. Պօլիս Բերա* .

« Օրագիր Կ. Պօլսոյ » ի մէջ հրատարակուած :

Գ.

ՀԱՅՐԵՆԱԿԻՑՔ Ի՞ՆՉ ԸՆԵՆՔ

Ա.

Հայրենիքէ զրկուած ենք ,
Օտար յերկիր թափառիմք ,
Տրտում տխուր սահին օրեր ,
Այսպէս կեանքն ի՞նչ ընենք :

Ընտանիքնիս եւ բարեկամք ,
Հառաչանօք կը յիշենք ,
Կարօտոյ իղձն յագեցունել ,
Անկարող ենք ի՞նչ ընենք :

Անոնք նօթի, ու մենք աղքատ ,
Ամենքնիս ալ թշուառ ենք ,
Այս ալ բաղդին մէկ գէշ խաղն է ,
Այսպէս սեւ բաղդն ի՞նչ ընենք :

Անոնք կուզեն ու մենք չունինք ,
Ի՞նչ պատասխան տալու ենք ,
Ունենալու անկարող ենք ,
Վաստակ չը կայ , ի՞նչ ընենք:

Մեր հայրերը մեզ չեն կրթած ,
Արհեստ , ուսմունք , սորված չենք ,
Ստակ չունինք որ գործածենք ,
Դատարկաձեռն ի՞նչ ընենք:

Հայրենիքնիս աւեր դարձած ,
Անգութ քրդաց գերի ենք ,
Ի զուր կողքանք եւ կաղերսենք ,
Լսող չկայ , ի՞նչ ընենք :

Վատ բռնութեանց եւ լլկանաց ,
Երկանին տակ կը հեծենք ,
Օգնութիւն մեզ ազգէն յուսանք ,
Անկարող ազգն ի՞նչ ընենք:

Հայեր զՀայն կողոպտեն ,
Ալ իրերաց օգնող չենք ,
Ոչ միութիւն , եւ ոչ սէր կայ ,
Ցամքած սրտերն ի՞նչ ընենք :

Բ.

Սրտեր ցամքած , ու աչեր թաց ,
Ալ բա՛ւ ողբանք վշտակաց ,
Պէտք է գիտնալ թէ , տկարաց ,
Յարգ ու պատիւ չը մնաց :

Ո՛հ զեր յիշենք թէ , թոռունք ենք ,
Հայ դիւցազանց զաւակաց ,
Մինչ անոնց քաջ արիւնէն ,
Կաթիլ մը երբէք չը մնա՞ց :

Մենք մեր անձին եւ մեր գործոց ,
Երբ տէր ըլլալ չենք ուզած ,
Տգէտ ու ծոյլ անհատներու ,
Բաղդ ու կեանք չը մնաց :

Օ՛ն սթափէ՛ հայրենակից ,
Ալ բաւ տոկանք լլկանաց ,
Թոյլ ու երկչոտ մարդիկներու ,
Օր ու արեւ չը մնաց :

10 *փետրուար* , 1872 . *Կ. Պօլիս* , *Բերա* .
« Մամուլ » հանդիսի մէջ հրատարակուած ։

ՎՐԻՊԱԿՔ

ԵՐԵՍ	ՏՈՂ	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
20	16	Մ . . .	Մ . . . ի
20	23	յեծած	յեցած
29	15	մարդիկ	մարտիկ
51	20	ե	եւ
52	3	այո	այո՛
58	11	յառաջելաւ	յառաջելու
61	5	ի՞նշ	ի՞նչ
63	2	ՉԸ	ՀԸ
69	22	երկաւ	երկու
84	19	դալարին	գալարին
85	1	դիշատիչ	գիշատիչ
125	4	դերադոյնը	գերագոյնը
130	11	թէ կապոյն և շարդերը	թէ կապոյն և թէ շարդերը
155	18	ճրակ	ճրագ
162	13	ժողովրդեանս	ժողովրդեանս
167	16	խօսակցու-թեան	խօսակցութեան
180	1	արօրադրելու	արօրագրելու
183	11	Վաղաթար-շամ	Վաղաթարշամ
185	13	պայդից	պայտից
191	14	միշա	միշտ
217	25	առարուածն	արարուածն
236	13	սամուրալու	սամնարելու
241	27	դեռ	դեռ

2013

12961